

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ. ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ



ОБОРОННЫЕ РЕФОРМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
ПРАВОВЫЕ АСПЕКТЫ

DEFENSE REFORMS
OF THE REPUBLIC OF ARMENIA:
LEGAL ASPECTS

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կոլեգիայի նիստը՝
նվիրված ՀՀ Ձինված ուժերում իրականացվող բարեփոխումների ընթացքի,
ազգային բանակի մարտունակության մակարդակի
չարունակական բարձրացման հարցերին

Երևան, 2008 թ. մայիսի 30



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2-3 (56-57). 2008

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոբանջյան Հ. Ս.

քաղաքական գիտությունների դոկտոր (Ռ.Գ.), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահարեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Գ. Ս.

(գլխավոր խմբագիր)

Այդինյան Ռ. Ա.

Ապրիամով Է. Ա.

Գասպարյան Վ. Ս.

Գասպարյան Տ. Շ.

Գավթյան Ա. Մ.

Իսախանյան Մ. Ռ.

Իսրայելյան Վ. Ս.

Խաչատուրով Յ. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Մաթևոսյան Ի. Ժ.

Մարգարյան Վ. Հ.

(գլխ. խմբ. տեղակալ)

Մարտիրոսյան Ս. Ս.

Մարտիրոսով Լ. Ա.

Միրզաբեկյան Ա. Ռ.

Նազարյան Ա. Ս.

Շադյան Պ. Ա.

Սեդրակյան Ս. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Փարսադանյան Ա. Մ.

Քոչունց Կ. Գ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս. Ս. Օհանյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ. ԻՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ

Ա. Ս. Նազարյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում 36

Ս. Գ. Սեդրակյան, Պաշտպանական բարեփոխումների իրավաբանական ապահովումը բանակաշինության համատեքստում 46

Ս. Օ. Աբրահամյան, Անվտանգության և պաշտպանության հարցերի իրավական ամրագրման որոշ առումներ 58

Տ. Տ. Քոչարյան, Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպաիրավական ապահովումը 67

Ա. Ռ. Ավետիսյան, Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ 76

Հ. Ի. Գևորգյան, ՀՀ Ձինված ուժերում բնակարանային ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգի ներդրման հեռանկարները 89

Լ. Ս. Հակոբյան, ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության ապահովման համատեքստում . . . 99

Ա. Ս. Սեդրակյան, Հայաստանի Հանրապետությունում զինվորական հանցավորության մակարդակի նվազեցմանն ուղղված հիմնական կանխարգելիչ միջոցառումների շուրջ 112

Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում 118

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռ. Վ. Ադուզումգյան, Քաղաքական առաջնորդ. քաղաքականության որոշ անձնային առումներ 139

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Է. Բաբուրյան, Ա. Ա. Մուրադյան, Տեղեկատվական համակարգի վրա խաթարիչ ազդեցությունների նույնականացման և չեզոքացման մի մոդել՝ նախատեսված այդ համակարգի օպտիմալ կառավարման համար 144

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թ. Ռ. Փարսադանյան, ՀՀ գյուղական բնակավայրերի սոցիալական ոլորտի բարելավման որոշ հիմնախնդիրներ 150

ԲՆԱԴԱՀՂԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կ. Ս. Դանիելյան, Ա. Պ. Նազարեթյան, Հասարակություն – բնություն փոխհարաբերություններ. Հայաստանի բնապահպանությունը ազգային անվտանգության ռազմավարության համատեքստում 161

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ. Ս. Միրզոյան, Արցախում կոլեկտիվացման շրջանում Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության հարցի շուրջ 176

ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ 185

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Գ. Ս. Զիլինգարյան, Համարի քառարան 188

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 2—3 (56—57). 2008
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айдинян Р. А., *Априамов Э. А.*, *Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*,
Исаханян М. Р., *Исраелян В. С.*, *Карапетян М. Н.*, *Кочунц К. Г.*,
Маргарян В. Г. (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*, *Мартirosян С. С.*,
Матевосян И. Ж., *Мирзабемян А. Р.*, *Назарян А. С.*, *Парсаганян А. М.*,
Седракян С. Г., *Тер-Григорьянц Н. Г.*, *Тоноян Д. Э.*, *Хачатуров Ю. Г.*, *Шагян П. А.*

СОДЕРЖАНИЕ

С. М. Оганян. Оборонные реформы Республики Армения:
второй этап 7 (17)*

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
ПРАВОВЫЕ АСПЕКТЫ**

А. С. Назарян. Основные направления законодательных реформ в оборонной сфере РА на современном этапе строительства Вооруженных сил 36 (44)

С. Г. Седракян. Юридическое обеспечение оборонных реформ в контексте строительства Вооруженных сил РА 46 (57)

С. О. Абрамян. Некоторые аспекты правового закрепления вопросов безопасности и обороны 58 (65)

Т. Т. Кочарян. Организационно-правовое обеспечение военной службы в Республике Армения 67 (74)

А. Р. Аветисян. К вопросу о гражданском контроле над Вооруженными силами 76 (87)

А. И. Геворкян. Перспективы внедрения в Вооруженных силах РА накопительно-ипотечной системы обеспечения жильем . . 89 (98)

Л. С. Акопян. Полномочия Конституционного суда РА в контексте обеспечения оборонной безопасности Республики Армения 99 (111)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

А. С. Сегракян. Об основных превентивных мероприятиях по снижению уровня военной преступности в Республике Армения 112 (117)

А. Г. Вагаршян. Полномочия и правовая деятельность правительства Первой Республики Армения в сфере обороны страны 118 (137)

ПОЛИТИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ

Р. В. Агузумцян. Политический лидер: некоторые личностные аспекты политики 139 (142)

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

А. Э. Бабурян, А. А. Мурадян. Модель идентификации и нейтрализации деструктивных воздействий на информационную систему, предназначенная для оптимального управления этой системой 144 (148)

СОЦИАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

Т. Р. Парсадзян. Некоторые основные проблемы улучшения социальной сферы в сельской местности РА 150 (159)

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

К. С. Даниелян, А. П. Назаретян. Взаимоотношения человека со средой: экология Армении в контексте Стратегии национальной безопасности 161 (174)

ИСТОРИЯ

М. С. Мирзоян. К вопросу об антиармянской политике азербайджанских властей в Арцахе в период коллективизации . 176 (183)

НОВОСТИ В ВОЕННОЙ ОБЛАСТИ 185

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян. Словарь номера 188 (190)

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC QUARTERLY,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 2—3 (56—57). 2008

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Apramov E. A.*, *Davtyan A. M.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Israelyan V. S., *Karapetyan M. N.*, *Khachatourov Y. G.*, *Kotchunts K. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*, *Martirossov L. A.*,
Matevosyan I. Zh., *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,
Sedrakyan S. G., *Shadyan P. A.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*

CONTENTS

S. M. Ohanyan. The defense reforms of the Republic of Armenia: second stage 7 (26)*

**THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA:
LEGAL ASPECTS**

A. S. Nazaryan. Basic directions of legislative reforms in the RA defense sphere at the contemporary stage of building the Armed Forces 36 (45)

S. G. Sedrakyan. The legal support of defense reforms in the context of building the RA Armed Forces 46 (57)

S. O. Abrahamyan. Some aspects of legal affirmation of security and defense issues 58 (66)

T. T. Kocharyan. Organization-legal support of the military service in the Republic of Armenia 67 (75)

A. R. Avetisyan. To the issue of civil control over the Armed Forces 76 (88)

H. I. Gevorgyan. Perspectives of the introduction of the savings and mortgage system for housing into the RA Armed Forces 89 (98)

L. S. Hakobyan. The plenary powers of the RA Constitutional Court in the context of ensuring defense security of the Republic of Armenia 99 (111)

* Numbers in brackets mean the page of the text in English.

<i>A. S. Sedrakyan.</i> On the main preventive measures on reducing the military crime rate in the Republic of Armenia	112 (117)
<i>A. G. Vagharshyan.</i> The plenary powers and legal activity of the Government of the First Republic of Armenia in the country's defense sphere	118 (138)

POLITICAL PSYCHOLOGY

<i>R. V. Aghouzoumstian.</i> Political leader: some personality aspects of politics	139 (142)
---	-----------

MILITARY INFORMATION SCIENCE

<i>A. E. Babourian, A. A. Muradian.</i> A model of identification and neutralization of destructive impacts on the information system, which is earmarked for optimal control of that system	144 (149)
--	-----------

SOCIAL SECURITY

<i>T. R. Parsadanyan.</i> Some main issues of improving social sphere in the RA rural area	150 (160)
--	-----------

ECOLOGICAL SECURITY

<i>K. S. Danielyan, A. P. Nazaretian.</i> The interrelation between society and the environment: Armenia's ecology in the context of the National Security Strategy	161 (175)
---	-----------

HISTORY

<i>M. S. Mirzoyan.</i> To the issue of the anti-Armenian policy by the Azerbaijani authorities in the collectivization period in Artsakh . . .	176 (184)
--	-----------

SOMETHING NEW IN MILITARY FIELD 185

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

<i>N. S. Mkrtchian, L. H. Papikian, D. S. Chilingarian.</i> Volume dictionary	188 (192)
---	-----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ.
ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Ս. Ս. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար



ՀՀ Զինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման դեռ սկզբնական փուլում բազմիցս խոսվել է դրանց ընթացքի, եղած խնդիրների և լուծման եղանակների մասին, հանգամանորեն քննարկվել են բարեփոխումների նպատակները: Ընդհանուր առմամբ, բարեփոխումների նպատակն է այնպիսի արդյունավետ պաշտպանական համակարգի ստեղծումը, որը ոչ թե ձևականորեն կրկնօրինակի որևէ գործող մոդել, այլ, օգտագործելով հայրենական ու միջազգային փորձը, լինի բնութագրված ազգային, քանի որ Հայաստանի Հանրապետության անվտանգության միջավայրը յուրահատուկ է. թեև կան այլ երկրների հետ նմանություններ, սակայն առկա են նաև հիմնարար տարբերություններ: ՌԻստի պաշտպանական համակարգի կառուցման չափանիշների օպտիմալ ընտրության կարևորությամբ հանդերձ անհրաժեշտ է, որ այդ համակարգը լիովին համապատասխանի Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համար արդիական մարտահրավերներին, լինի ճկուն, մարտունակ և ի գործո՝ չեզոքացնելու առկա բոլոր սպառնալիքները, ապահովելու Հայաստանի Հանրապետության և նրա ազգային անվտանգության հիմնարար արժեքների հուսալի պաշտպանությունը, կատարելու այդ բնագավառում ՀՀ միջազգային պարտավորությունները: Ռազմական անվտանգության միջավայրին համարժեք արձագանքելուց բացի, պաշտպանական համակարգը պետք է կարողանա նաև ըստ անհրաժեշտության ազդել այդ միջավայրի ձևավորման վրա:

Այստեղ հարկ են համարում անել հետևյալ դիտողությունը: Երբեմն հնչում է կարծիք, թե տարածաշրջանում տիրող հույժ ռազմականացված անվտանգային միջավայրի պայմաններում չի կարելի իրականացնել պաշտպանական համակարգի բարեփոխումներ, քանի որ դրանք կարող են հանգեցնել այդ համակարգի արդյունավետության ժամանակավոր նվազման: Ըստ իս՝ նման կարծիքն ընդունելի չէ, որովհետև հենց առկա ռազմական սպառնալիքներն են դրդել մեզ այդ համակարգի կատարելագործմանը՝ միտված ժամանակակից միազգային ստանդարտներին համապատասխանող, անընդհատ նորացվող, ՀՀ-ի դեմ ցանկացած զինված ագրեսիայի հետմղմանը մշտապես պատրաստ ու մարտունակ Զինված ուժերի կերտմանը:

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Այսօր ավարտվել է պաշտպանական բարեփոխումների առաջին՝ մեկնարկային, փուլը, և մենք անցնում ենք երկրորդ՝ վճռորոշ, փուլին: Այս փուլում անհրաժեշտ է կայացնել սկզբունքային որոշումներ, որոնք կկանխորոշեն պաշտպանության կազմակերպման բովանդակությունն ու ձևերը և բանակաշինության զարգացման ուղղություններն առաջիկա 10-15 տարվա համար: Ուստի հարկ է մեկ անգամ ևս գնահատել Հայաստանի Հանրապետության համար ծագած ռազմական սպառնալիքների և այդ համատեքստում՝ պաշտպանության ոլորտում առկա խնդիրների ամբողջ համախումբը, ցուցաբերել հիմնարար և համընդգրկուն մոտեցումներ, կատարել գիտական կանխատեսումների վրա հիմնվող հեռանկարային վերլուծություններ, ոլորտ առ ոլորտ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները և միջազգային առաջավոր փորձը, հմտորեն օգտագործել ՀՀ դաշնակիցների ու գործընկերների աջակցությունը: Ելնելով դրանից՝ բարեփոխումների երկրորդ փուլը կարող ենք անվանել ռազմական անվտանգության համակարգի (կամ պաշտպանության) ռազմավարական վերանայում:

Մինչ բարեփոխումների երկրորդ փուլին անցնելը հարկ է գնահատական տալ առաջին փուլում կատարված աշխատանքներին:

Պաշտպանական բարեփոխումների ակտիվ գործընթացն սկսվեց 2005 թվականին, ինչի համար խթան հանդիսացավ բարեփոխումների նկատմամբ համապետական մոտեցման ձևավորումը, հատկապես՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունները: Սակայն չի կարելի թերագնահատել բանակաշինության ուղղությամբ մինչ այդ կատարված աշխատանքը: Ձինված ուժերի կազմավորման այդ վճռորոշ և ծանր տարիներին ստեղծվեց մարտունակ բանակ, որը պատվով կատարեց իր առջև դրված խնդիրները՝ անառիկ պահելով Հայաստանի սահմանները թե՛ Ղարաբաղյան հակամարտության պատերազմական փուլում, թե՛ դրանից հետո: Մինևույն ժամանակ, բանակաշինությունը անընդհատ գործընթաց է, որը պահանջում է մշտական զարգացում. տարիներ շարունակ նույն մոտեցումների կիրառումը կարող է հանգեցնել լճացման և բացասաբար անդրադառնալ բանակի մարտունակության վրա: Սրանք են պաշտպանական բարեփոխումների իրականացման հիմնական նախադրյալներն ու դրդապատճառները:

Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունը, համապատասխան Ձինված ուժերի կատարելագործման պահանջներին, վերջին շրջանում վերընթաց զարգացում է ապրում: Ի դեպ, հակառակորդը քնած չէ և նպատակասլաց աշխատանք է տանում իր ռազմական կարողությունների մեծացման ուղղությամբ, զուգահեռաբար մեծանում են նաև նրանից բխող ռազմական սպառնալիքների մասշտաբները և դրանց իրականացման հավանականությունը: Ուստի Հայաստանի անվտանգության առավել իրական երաշխիքն է մարտունակ և արդիական բանակը: Ընդամին այդ երաշխիքն ունի միայն մեկ չափանիշ՝ **ՀՀ Ձինված ուժերն իրենց մարտունակությամբ մշտապես պետք է գերազանցեն հավանական հակառակորդի զինված ուժերը:**

Բարեփոխումների մեկնարկի համար հիմք ծառայեց նաև 2005 թ. դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի միջև ստորագրված «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը» (ԱԳԳԾ): Գաղտնիք չէ, որ մինչ այդ ՀՀ Ձինված ուժերի ստեղծման և զարգացման գործընթացում հիմնականում օգտագործվում էին նախկին խորհրդային ստանդարտները, ընդ որում, փորձ էր արվում դրանք համապատասխանեցնելու ազգային անվտանգության ապահովման առանձնահատկություններին ու ռազմական խնդիրներին: Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը» ստեղծեց լավ հնարավորություն՝ հիմնովին ուսումնասիրելու նաև հարուստ ավանդույթներ ունեցող արևմտյան փորձը, հասկանալու դրա առավելություններն ու թերություններն և, համադրելով մեր ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության ու ՀԱՊԿ-ի այլ անդամ երկրների զինված ուժերում գործող չափանիշների հետ, ՀՀ Ձինված ուժերի համար մշակելու առկա խնդիրներին համապատասխանող, մեր կարծիքով ՀՀ-ի համար առավել օպտիմալ ստանդարտները:

Պաշտպանական բարեփոխումների իրականացման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու համար առաջին հերթին պետք էր ունենալ երկրի անվտանգության ապահովման համակարգի, նրա կենսագործունեության և զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող փաստաթղթեր՝ «Ազգային անվտանգության ռազմավարություն» և «Ռազմական դոկտրին», ստեղծել համապատասխան օրենսդրական դաշտ, մշակել Ձինված ուժերի բարեփոխումների և զարգացման մեկնարկային ծրագրեր և այլն: Ահա սրանք էին բարեփոխումների առաջին փուլի հիմնական խնդիրները:

Այսօր կարող ենք փաստել, որ այդ փուլի խնդիրները լիովին կատարվեցին: Մասնավորապես՝ 2006 թ. ընթացքում մշակվեց և ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»: 2007 թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակվեց «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», որը հաստատվեց ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով: Սեր գերատեսչությունում մշակվեց և ՀՀ Նախագահի կողմից հաստատվեց նաև ՀՀ ՁՈՒ-ի պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թթ. ծրագիրը, որով սահմանվեցին դրանց ոլորտներն ու ժամկետները: Հարկ է նշել, որ արդեն զգալի աշխատանք է կատարվել օրենսդրական բարեփոխումների ոլորտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Պաշտպանական բարեփոխումների իրականացման ուղղությամբ գործնական քայլեր կատարելու համար հույժ կարևոր է անվտանգության միջավայրի վերլուծությունը, քանի որ նրանով են պայմանավորվում պաշտպանական բարեփոխումների բնույթն ու մասշտաբները: Հենց առկա ռազմական սպառնալիքներով է թելադրվում Ձինված ուժերում դրանց չեզոքացման հնարավորությունների զարգացման անհրա-

ժեշտությունը: Ուստի անվտանգության միջավայրի հիմնավորված վերլուծությունը՝ գուգակցված նրա զարգացման հեռանկարային կանխատեսումների հետ, հնարավորություն կտա որոշելու պաշտպանական բարեփոխումների ընթացքում թուլատրելի ռիսկերը:

Հայաստանի շուրջ ռազմական անվտանգության միջավայրը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության ազգային շահերին առնչվող աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհառազմավարական գործոնների ազդեցությամբ, որոնք պայմանավորված են տարածաշրջանում առկա ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների շահերի համընկնմամբ ու բախմամբ, այդ թվում՝ կապված ազգամիջյան հակամարտությունների հետ: Ընդ որում, տարածաշրջանի որոշ երկրների գործելակերպում նկատելի է ռազմական անվտանգության խնդիրները ուժի կիրառմամբ կամ դրա կիրառման սպառնալիքով լուծելու անթաքույց ձգտում:

Հայաստանի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված արտաքին և ներքին ռազմական սպառնալիքները ներկայացված են «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում» և «ՀՀ ռազմական դոկտրինում»: ՀՀ Զինված ուժերի գործունեությունն ուղղված է այդ սպառնալիքների չեզոքացմանը: Սակայն պաշտպանական բարեփոխումների վրա այդ սպառնալիքների ազդեցությունը որոշելու համար անհրաժեշտ է պարզել նաև վերջիններիս աղբյուրները:

Կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության համար՝

ա) անմիջական ռազմական սպառնալիքներ են.

– Ղարաբաղյան հակամարտության առկայությունը և հակամարտող կողմերի միջև հակամարտության կարգավորման փոխհամաձայնեցված քաղաքական-իրավական հիմքեր չլինելը,

– Ադրբեջանի կողմից վարվող ռազմականացման քաղաքականությունը, ռազմական գերակայության հասնելու և Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ուժի կիրառմամբ լուծելու ձգտումը,

– Հայաստանի Հանրապետության շրջափակումը և մեկուսացնելու ձգտումները, որոնք դիտվում են որպես ուժի կիրառում և նվազեցնում են տարածաշրջանային երկխոսության հնարավորությունը,

բ) ռազմական վտանգներ են.

– Հայաստանի Հանրապետության հարևան պետությունների և ընդհանրապես Հարավային Կովկասում անվտանգության միջավայրի ապակայունացումը, առկա կամ նոր հակամարտությունների հրահրումը,

– վերազգային հանցագործությունները, ինչպիսիք են միջազգային ահաբեկչությունը, զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրադեղերի ու հոգեմետ նյութերի անօրինական շրջանառությունը, մարդկանց առևտուրը,

– Հարավկովկասյան տարածաշրջանի պետություններում ընթացող բարեփո-

խումների խաթարումը, ժողովրդավարության ոչ բավարար մակարդակը և դրա հետևանքով Հայաստանի հարևանների համար «չկայացած պետությունների» շարքը դասվելու հեռանկարը, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրադրության ապակայունացման:

Միևնույն ժամանակ, կան նաև հնարավոր ներքին ռազմական սպառնալիքներ, ինչպիսիք են ներքաղաքական իրադրության ապակայունացումը, պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազումը, ժողովրդագրական բացասական միտումները, այնպիսի ճգնաժամները, որոնք կարող են հանգեցնել արտակարգ դրության հայտարարման, և այլն: Դրանք կարող են անմիջականորեն ազդել բանակի մարտունակության մակարդակի, իրականացվող պաշտպանական բարեփոխումների ընթացքի վրա: Օրինակ՝ ներքաղաքական իրադրության ապակայունացումը կարող է արհեստականորեն հրահրել բանակի ներգրավումը քաղաքականության մեջ, ինչն անթույլատրելի է: Կամ՝ պետական կառավարման համակարգի արդյունավետության նվազման հետևանքով կարող է խաթարվել պաշտպանական բարեփոխումների ընթացքը: Այս ամենը բնորոշ է ոչ միայն Հայաստանին կամ նրա հարևան պետություններին, այլև ընդհանրապես՝ անցումային փուլում գտնվող բոլոր պետություններին: Նման գործոնների ազդեցության սահմանափակումը և չեզոքացումը կապված են ժողովրդավարության ամրապնդման, բարեփոխումների հետևողական իրականացման և քաղաքացիական հասարակության կայացման հետ:

Ինչ վերաբերում է արտաքին գործոններին, ապա պաշտպանական բարեփոխումների վրա դրանց ազդեցությունը գտնվում է միանգամայն այլ հարթությունում: Օրինակ՝ տարածաշրջանում հակամարտությունների առկայությունը խաթարում է ինչպես ամբողջ տարածաշրջանի, այնպես էլ նրա առանձին երկրների զարգացումն ու ինտեգրումը միջազգային հանրությանը, նրանց միջև փոխվստահության մթնոլորտի հաստատումը, քանի որ իրադրության ռազմականացումը որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ոչ միայն սահմանափակում է ժողովրդավարական մեխանիզմների ստեղծումը, այլև ներգործում է այդ երկրներում ապրող ժողովուրդների աշխարհընկալման վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք ևս. տարածաշրջանում առկա հակամարտությունները, չնայած արտաքին նմանություններին, ունեն միանգամայն տարբեր պատմական և պատճառափրվական հիմքեր, ինչը պայմանավորում է դրանց կարգավորման ու լուծման յուրահատուկ ընթացակարգերի մշակման անհրաժեշտությունը:

Հայաստանի անվտանգության միջավայրի վրա ազդող արտաքին գործոնները կարող են փոփոխությունների ենթարկվել նաև տարածաշրջանային իրադրության փոփոխման հետևանքով: Մասնավորապես՝ առաջիկայում Վրաստանը ամենայն հավանականությամբ ՆԱՏՕ-ի հետ կձեռնարկի Անդամակցության գործողությունների ծրագիր, ինչը նշանակում է, որ այդ երկրի անդամությունը Հյուսիսատլանտյան դաշինքին սոսկ ժամանակի խնդիր է: Դրա հետևանքով Հարավային Կովկասում կհայտնվի մի նոր ուժ՝ ևս մեկ անվտանգային կազմակերպություն, ինչը կարող

է տարածաշրջանում ռազմաքաղաքական վերադասավորումների պատճառ դառնալ: Հաջորդ փոփոխությունը կարող է տեղի ունենալ Ադրբեջանի կողմից քաղաքական ուղեգծի փոփոխման դեպքում (ընդ որում՝ թե՛ դեպի ՆԱՏՕ, թե՛ դեպի Ռուսաստան):

Հայաստանի անվտանգության միջավայրի գնահատման ընթացքում պարտադիր կերպով պետք է հաշվի առնվի այս զարգացումների հավանականությունը: Այսօր Հարավային Կովկասը դեռ գտնվում է անցումային փուլում. Հայաստանը և նրա հարևան պետությունները որդեգրել են եվրոպական ինտեգրման ուղին և ձեռնամուխ են եղել բարեփոխումների իրականացմանը (այդ թվում նաև պաշտպանության բնագավառում): Բայց և այնպես, եթե փորձ արվի դիտարկելու, թե ինչ տիպի պետություն և հասարակություն են կառուցում այդ երկրները, ապա պարզ կդառնա, որ անվտանգության խնդիրների վերաբերյալ նրանց պատկերացումները ակնհայտորեն տարբեր են: Ամենևին էլ եվրոպական արժեքներից, ինտեգրման և գործընկերության ոգուց չեն բխում ո՛չ իր հասարակության մեջ հարևան պետության նկատմամբ թշնամանքի և անվստահության սերմանումը, ո՛չ էլ ռազմականացման ու պատերազմների հրահրման քաղաքականությունը: Ընդհակառակը, նման քաղաքականությունը սեփական շահերի արտացոլումն ընդհանուրի մեջ չտեսնելու կամ տեսնել չցանկանալու արդյունք է: Դրանով է պայմանավորված Հայաստանի պաշտպանական բարեփոխումների հավասարակշռվածությունը:

Որպես կանոն, բարեփոխումների իրականացման ընթացքում ռազմաանվտանգային ոլորտի գործունեության արդյունավետությունը կարող է ժամանակավորապես նվազել, քանի որ գործող մեխանիզմների վերափոխման կամ նոր մեխանիզմների ներդրման պարագայում ի հայտ են գալիս անճշտություններ, թերություններ, ընդհատումներ, որոնց վերացման համար ժամանակ է պահանջվում: Սակայն Հայաստանը, ելնելով առկա ռազմաքաղաքական իրադրությունից, իրավունք չունի կատարելու անհաշվեկատ քայլեր, որոնք թեկուզ ժամանակավորապես կարող են բացասաբար անդրադառնալ Ձինված ուժերի մարտունակության մակարդակի վրա: ՌԽտի պաշտպանական բարեփոխումները միտված են ՀՀ Ձինված ուժերում գործող ռազմական ստանդարտների կատարելագործմանը, մարտունակության մակարդակի բարձրացմանը: Միջնաժամկետ հեռանկարում դրանք ուղղված են նաև ՀՀ Ձինված ուժերի կառուցվածքի, թվաքանակի, դեկավարման ու կառավարման համակարգերի, ռազմակրթական ոլորտի տնտեսապես հիմնավորված օպտիմալացմանը:

Միևնույն ժամանակ, կան քաղաքական և ռազմաքաղաքական գործոններ, որոնք դրականորեն են ազդում պաշտպանական բարեփոխումների իրականացման վրա: Մասնավորապես՝

ա) տարածաշրջանային և միջազգային անվտանգության կառույցների հզորացումը, միջազգային սպառնալիքների դեմ համընդհանուր պայքարի անհրաժեշտությունը նվազեցրել են համաշխարհային դասական պատերազմների վտանգը,

բ) միջազգային ինտեգրման գործընթացները նպաստավոր պայմաններ են ստեղծել պաշտպանության բնագավառում համագործակցություն ծավալելու համար,

զ) Հարավային Կովկասի պետություններում ժողովրդավարության աստիճանական կայացումը, քաղաքացիական հասարակության կառուցումը և սոցիալական արդարության հաստատումը, ինչպես նաև այդ պետությունների միջազգային ինտեգրումը նրանց միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորման և խաղաղ երկխոսության ծավալման գործոններ են,

դ) Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, Եվրոպական Միությունը և մյուս միջազգային կազմակերպությունները, նրանց կողմից իրականացվող ծրագրերը, ինչպիսիք են Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը», «Եվրոպական հարևանություն» ծրագիրը և այլն, դրական դերակատարություն ունեն Հարավային Կովկասում կայունության մթնոլորտի ամրապնդման և ռազմական սպառնալիքների չեզոքացման գործում:

Այս գործոններն, անշուշտ, ստեղծում են բոլոր անհրաժեշտ նպաստավոր նախադրյալները, որպեսզի պաշտպանական բարեփոխումների քաղաքականությունն իրականացնելիս ՀՀ պաշտպանության նախարարությունը համագործակցի դաշնակիցների, գործընկերների և միջազգային անվտանգության շահագրգիռ համակարգերի ու կազմակերպությունների հետ:

Ուզմուսկան Անվտանգութեան Համապարփ (Պաշտպանութեան) Ուզմուսկան Անվտանգութեան Վերանայում

Բարեփոխումների առաջին փուլի հաջող ավարտը ՀՀ պաշտպանության նախարարությանը հնարավորություն է տալիս մշակված պլանի համաձայն երկրորդ փուլը՝ Ռազմական անվտանգության համակարգի (պաշտպանության) ռազմավարական վերանայման գործընթացի իրականացումը, սկսելու 2008 թ.: Ներկայումս այս գործընթացի վերաբերյալ պատկերացումները տարբեր են: Դա բնական է, քանի որ ռազմավարական վերանայումը ՀՀ Ձինված ուժերի համար նորություն է և պետք է իրականացվի առաջին անգամ: Ուստի և նշված գործընթացը լրացուցիչ պարզաբանումների կարիք ունի:

Պաշտպանության ռազմավարական վերանայումն առաջին հերթին անհրաժեշտ է ՀՀ Ձինված ուժերի պաշտպանական բարեփոխումները ճիշտ ուղղորդելու, արդիականացման և զարգացման հեռանկարը պլանավորելու համար: Այսինքն՝ պաշտպանության ռազմավարական վերանայման միջոցով պետք է ՀՀ զարգացման առաջնահերթությունների և պաշտպանական բարեփոխումների համատեքստում որոշվեն մեր երկրի ռազմական պաշտպանության համար Ձինված ուժերի առկա կարողություններն ու կարիքները և ըստ այդմ հստակեցվեն բարեփոխումների նպատակները:

ՀՀ Ձինված ուժերի առկա կարողությունները գնահատելուց ու վերանայելուց բացի, ռազմավարական վերանայումը պետք է օգտագործվի ներկա ռազմաքաղա-

քական միջավայրի և տեսանելի հեռանկարում նրա զարգացման դինամիկայի գնահատման համար՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռնելով հստակեցնելու սպառնալիքները:

Վերանայման գործընթացը կարևոր է նաև սպառնալիքներին դիմակայելու համար ՀՀ ՁՈՒ-ի կիրառման պլանների մշակման և ստորաբաժանումներից պահանջվող պատրաստության վիճակի սահմանման տեսանկյունից: Վերանայման արդյունքների հիման վրա տնտեսական, ֆինանսական, ռազմաքաղաքական, ժողովրդագրական և այլ գործոնների հաշվառմամբ երկարաժամկետ հեռանկարով կորոշվեն ու կալանավորվեն ռազմական կարիքները, ներառյալ՝ բյուջետային հատկացումները և սպառազինության ու ռազմական տեխնիկայի գնումները:

Այս ամենը կկիրառվի Ձինված ուժերի թվաքանակի, սպառազինության, ստորաբաժանումների, զորատեսակների և ընդհանրապես Ձինված ուժերի կառուցվածքի հետագա փոփոխություններ իրականացնելու համար: Ըստ անհրաժեշտության, ենթակառույցների օպտիմալացման նպատակով կվերանայվի և մեկ անգամ ևս կհիմնավորվի ՀՀ ՁՈՒ-ի ստորաբաժանումների տեղակայման աշխարհագրությունը, ինչը կհանգեցնի միմյանց կրկնող օղակների ու ծախսերի կրճատման, առկա ռեսուրսների առավել լիարժեք օգտագործման:

Ընդհանուր առմամբ, վերանայման արդյունքը պետք է լինի Ձինված ուժերի զարգացման հեռանկարային պլանի մշակումը: Ընդ որում, որպես պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունք կարող են ըստ անհրաժեշտության փոփոխությունների կամ ճշգրտումների ենթարկվել նաև ՀՀ ռազմական դոկտրինի դրույթները:

Պաշտպանության ռազմավարական վերանայման նպատակն է ստանալ հետևյալ հարցերի պատասխանները.

1. որն է Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրը ներկա և տեսանելի հեռանկարում (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ),
2. որոնք են ՀՀ Ձինված ուժերի դերն ու պարտականությունները Հայաստանի ազգային անվտանգության ապահովման գործում,
3. ինչ առաքելություններ պետք է կարողանան իրականացնել ՀՀ Ձինված ուժերը՝ իրենց նախանշված դերի ու պարտականությունների կատարման համար,
4. ինչ ռազմական կարողություններ և ռեսուրսներ են անհրաժեշտ այդ առաքելությունների իրականացման համար,
5. ինչ կարելի է կազմակերպել, ինչպես համալրել ու զինել ՀՀ Ձինված ուժերը՝ այդ ռազմական կարողությունները լիարժեք կերպով ապահովելու համար:

Քանի որ պաշտպանության ռազմավարական վերանայումը վերաբերում է ամբողջ Ձինված ուժերին, ապա այդ գործընթացում կներգրավվեն ՀՀ ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ գրեթե բոլոր ստորաբաժանումները: Ուստի անհրաժեշտ կլինի ստեղծել ղեկավարման, պլանավորման և իրականացման համապատասխան միջոցներ ու մեխանիզմներ: Այդ նպատակով պաշտպանության ռազմավարական վերանայման

գործընթացը կղեկավարեն ՀՀ պաշտպանության նախարարը՝ պաշտպանական քաղաքականության գծով և ՁՈՒ-ի ԳՇ պետը՝ գորային պլանավորման գծով: Բարեփոխումների և արդիականացման պահանջների որոշումը պետք է բխի նաև ռեսուրսների առկայությունից, ուստի այս ամենին զուգահեռ պետք է կատարվի ռեսուրսների պլանավորում, ընդ որում՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարով:

Պաշտպանության ռազմավարական վերանայումը նախատեսվում է իրականացնել 2008–2010 թվականների ընթացքում: Անհրաժեշտ բոլոր քայլերը մեթոդաբանության տեսանկյունից լիարժեք կերպով իրագործելու համար ՀՀ պաշտպանության նախարարությունը խորհրդակցում է գործընկեր պետությունների առաջատար մասնագիտական կենտրոնների հետ:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերխնդիրն է այնպիսի ստանդարտների մշակումն ու Ձինված ուժերում ներդրումը, որոնք լիովին համապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության գերակայություններին, լուծեն ռազմական անվտանգության ազգային խնդիրները՝ ստեղծելով դաշնակիցների և գործընկերների հետ փոխգործելիության բավարար հնարավորություններ, որպեսզի Հայաստանը կարողանա միջազգային անվտանգության ապահովման գործում որոշել իր աճող միջազգային վարկին համարժեք ու ռազմասանվտանգային շահերին համապատասխանող տեղն ու դերը: Դա օբյեկտիվ անհրաժեշտություն է, որն անմիջականորեն բխում է տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումներից և մեր հանրապետության ազգային անվտանգության շահերից: Մինևույն ժամանակ, տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական-անվտանգային իրադրությունը, որը ՀՀ-ի համար ստեղծում է լուրջ ռազմական սպառնալիքներ, հրամայաբար պարտադրում է մեզ լինել չափազանց հաշվենկատ, որպեսզի պաշտպանական համակարգի կատարելագործման, ժամանակակից մարտահրավերներին ու սպառնալիքներին համարժեքորեն դիմակայելու մշտապես պատրաստ Ձինված ուժերի կերտման ընթացքում մեր բանակի մարտունակության մակարդակը օր օրի անշեղորեն աճի:

Պաշտպանական բարեփոխումներն արդյունավետ կերպով իրականացնելու համար ՀՀ ՁՈՒ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում, յուրաքանչյուր զինմասայող պետք է իմաստավորի ու գիտակցի իր դերը և ակտիվորեն մասնակցի այդ կարևոր գործընթացին: Այս առումով խրախուսելի նախաձեռնություն է ՀՀ ՁՈՒ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների լուսաբանումը ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսում: Ընդ որում՝ հանդեսը բարեփոխումները ներկայացնում է ըստ ոլորտների, ինչը ՀՀ ՁՈՒ-ի առաջատար մասնագետների կողմից տիվներին հնարավորություն է տալիս պարզորոշելու բարեփոխումների բովանդակությունն ըստ կոնկրետ բաժինների և որպես ամբողջություն վերցված, առանձնացնելու տվյալ ասպարեզում ընթացող զարգացումներն ու մեխանիզմները, քննարկելու առկա խնդիրները և ուրվագծելու դրանց լուծման հեռանկարները: Հանդեսը շարու-

նակելու է ներկայացնել բարեփոխումների ընթացքը՝ իր հերթական համարները նվիրելով կոնկրետ պաշտպանական ոլորտների: Այսպես. «Հայկական բանակի» 2008 թ. առաջին համարը ներկայացնում էր պաշտպանական բարեփոխումների տեսլականը, ընթացքը և մեխանիզմները ռազմասարդյունաբերական ոլորտում:

Սույն համարում քննարկվում են իրավական բարեփոխումների հիմնարար գաղափարներն ու նպատակները, այդ ոլորտում առկա խնդիրները և առաջարկվում են համապատասխան լուծումներ: Կարևորում են այս հանգամանքը, քանի որ իրավական ոլորտի բարեփոխումների ներկայացումը հնարավորություն կընձեռի նշված խնդրով անմիջականորեն զբաղվող պատասխանատու օղակներին, ինչպես նաև բոլոր շահագրգիռ կողմերին՝ ավելի հստակ կերպով որոշելու իրենց անելիքը, պարտավորությունները, թերացումները: Դա իր հերթին հնարավորություն կտա վերացնելու բացթողումները և կիրառելիք չափանիշները համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին: Հարկ է շեշտել, որ պաշտպանական ոլորտում բարեփոխումների արդյունավետ իրականացման գրավականը իրավական ամուր հիմքի ստեղծումն է, ինչի շնորհիվ կապահովվի յուրաքանչյուր նոր քայլի օրինականությունը, դրա համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության և օրենսդրության պահանջներին ու նորմերին:

ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ВТОРОЙ ЭТАП

С. М. ОГАНЯН, Министр Обороны РА

Еще на начальном этапе оборонных реформ неоднократно говорилось о ходе их осуществления в Вооруженных силах РА, о насущных задачах и способах их разрешения, подробно обсуждались цели реформ. Общей целью реформ является создание такой эффективной оборонной системы, которая бы не дублировала формально какую-либо действующую модель, а, используя отечественный и международный опыт, была по своей сути сугубо национальной, так как безопасностная среда Республики Армения специфична: наряду со сходством с другими странами, есть и фундаментальные различия. Поэтому при всей важности оптимального выбора критериев построения оборонной системы необходимо, чтобы она полностью соответствовала современным вызовам военной безопасности Армении, была бы гибкой, боеспособной, в состоянии нейтрализовать все существующие угрозы и эффективно обеспечивать надежную защиту Республики Армения, фундаментальных ценностей ее национальной безопасности, выполнение международных обязательств РА в данной сфере. Кроме адекватного реагирования на среду военной безопасности, оборонная система при необходимости должна быть в состоянии влиять на ее формирование.

Считаю необходимым сделать следующее замечание. Нередко высказывается мнение, что в условиях чрезвычайно милитаризованной безопасностной среды в регионе нельзя в системе обороны осуществлять реформы, поскольку они могут привести к временному снижению ее эффективности. Не могу согласиться с таким мнением, потому что именно наличие военных угроз привело нас к усовершенствованию этой системы, нацеленному на создание постоянно обновляемых боеспособных Вооруженных сил, соответствующих современным международным стандартам и всегда готовых к отражению любой вооруженной агрессии против РА.

ОБЩАЯ ОЦЕНКА

Сегодня завершен первый—стартовый—этап оборонных реформ и мы переходим к их второму—решающему—этапу, когда должны быть приняты принципиальные решения, которые предопределят содержание, формы организации обороны и направления развития строительства Вооруженных сил на ближайшие 10-15 лет. Поэтому необходимо еще раз

оценить всю совокупность военных угроз Республике Армения и в этом контексте—существующие в оборонной сфере задачи, применить фундаментальные и всеобъемлющие подходы, осуществить основанный на научных прогнозах перспективный анализ, посферное изучение специфики Республики Армения и передового международного опыта, искусно использовать помощь союзников и партнеров РА.

С учетом вышесказанного, второй этап реформ можно назвать стратегическим пересмотром системы военной безопасности (или обороны). Прежде чем перейти ко второму этапу реформ, следует дать оценку выполненным на первом этапе работам.

Активный процесс оборонного реформирования в РА начался в 2005 году. Стимулом для этого явилось формирование общегосударственного подхода к реформам, в особенности—изменения в Конституции РА. Однако не следует недооценивать выполненные еще до этого работы в области военного строительства. Это были судьбоносные, трудные годы формирования Вооруженных сил, когда была создана боеспособная армия, с честью выполнявшая поставленные перед ней задачи по защите неприкосновенности границ Армении как в период военной фазы Карабахского конфликта, так и после нее. Вместе с тем строительство вооруженных сил—это непрерывный процесс, который требует постоянного развития: применение на протяжении лет одинаковых подходов привело бы к застою и негативно отразилось бы на боеспособности армии. Все это является основными предпосылками и мотивацией для осуществления оборонных реформ.

В то же время Республика Армения в соответствии с требованиями совершенствования Вооруженных сил в последнее время неуклонно развивается. К тому же, противник не дремлет и ведет целенаправленную работу по наращиванию своего военного потенциала, в связи с чем соответственно возрастают масштабы исходящих от него военных угроз и вероятность их реализации. Таким образом, наиболее реальной гарантией безопасности Армении является боеспособная и современная армия. Причем для этой гарантии существует лишь один критерий: **Вооруженные силы РА всегда должны по своей боеспособности превосходить вооруженные силы вероятного противника.**

Для старта реформ основой послужил также «План действий индивидуального партнерства» (ПДИП), подписанный Республикой Армения и НАТО 16 декабря 2005 года. Не секрет, что до этого в процессе создания и развития Вооруженных сил РА в основном применялись бывшие советские стандарты, причем делалась попытка приведения их в соответствие со спецификой обеспечения национальной безопасности и военными за-

дачами. «План действий индивидуального партнерства Армения—НАТО» предоставил хорошие возможности для досконального изучения имеющей богатые традиции западной практики, осознания ее преимуществ и недостатков и путем их синтеза с действующими в Вооруженных силах нашего стратегического партнера РФ и других государств-членов ОДКБ критериями—выработки для Вооруженных сил РА соответствующих существующим задачам стандартов, наиболее оптимальных для РА.

При осуществлении практических шагов по реализации оборонных реформ в первую очередь необходимы были как наличие документов, имеющих фундаментальное значение для системы обеспечения безопасности страны, ее жизнедеятельности и развития,—«Стратегии национальной безопасности» и «Военной доктрины», так и создание соответствующего законодательного поля, разработка стартовых программ реформирования и развития Вооруженных сил и т. д. Все это стало основной задачей первого этапа реформ.

Сегодня можно констатировать, что задачи этого этапа полностью выполнены. В частности, в течение 2006 года была разработана и Указом Президента РА ПП—37—Р от 7 февраля 2007 года утверждена «Стратегия национальной безопасности Республики Армения». В 2007 году Министерством обороны РА была разработана «Военная доктрина Республики Армения», утвержденная Указом Президента РА ПП—308—Р от 25 декабря 2007 года. Наше же ведомство разработало и Президент РА утвердил Программу оборонных реформ в ВС РА на 2007—2015 годы, которая определила их сферы и сроки выполнения. Следует отметить, что уже проделана существенная работа в сфере законодательных реформ.

БЕЗОПАСНОСТНАЯ СРЕДА АРМЕНИИ

Анализ безопасностной среды крайне важен для осуществления практических шагов по реализации оборонных реформ, так как этой средой обусловлены характер и масштабы реформирования. Именно существующие военные угрозы диктуют необходимость развития в Вооруженных силах потенциала, достаточного для их нейтрализации. Следовательно, обоснованный анализ безопасностной среды с прогнозами ее развития создаст возможности для определения рисков, допустимых в процессе осуществления оборонных реформ.

Военно-безопасностная среда вокруг Армении формируется под воздействием затрагивающих национальные интересы Республики Армения геополитических, геоэкономических и геостратегических факторов, обусловленных совпадением и столкновением интересов существующих в регионе внутрирегиональных и супрарегиональных акторов, в том числе

в отношении межнациональных конфликтов. При этом в действиях некоторых стран региона заметно откровенное стремление решать проблемы военной безопасности путем применения силы или угрозы ее применения.

Внешние и внутренние военные угрозы, направленные против безопасности Республики Армения, представлены в «Стратегии национальной безопасности РА» и «Военной доктрине РА». Деятельность Вооруженных сил РА направлена на парирование этих угроз. Однако для определения воздействия этих угроз на оборонные реформы необходимо также выявить их источники.

Можно констатировать, что для внешней безопасности Республики Армения:

а) непосредственными военными угрозами являются:

— существование Карабахского конфликта и отсутствие между его сторонами согласованной политико-правовой основы урегулирования;

— проводимая Азербайджаном политика милитаризации, его стремление достичь военного превосходства и разрешить Карабахский конфликт путем применения военной силы;

— блокада Республики Армения и попытки ее изоляции, рассматриваемые как применение силы и уменьшающие возможность регионального диалога;

б) военными опасностями являются:

— дестабилизация безопасной среды в соседних с Республикой Армения государствах и на Южном Кавказе в целом, активизация уже существующих конфликтов или инициирование новых;

— транснациональная преступность, каковыми являются международный терроризм, незаконный оборот оружия массового поражения и его составляющих, распространение наркотрафика и психотропных веществ, торговля людьми (трафикинг);

— подрыв реформ в государствах Южно-Кавказского региона, недостаточный уровень демократии и, как следствие, перспектива отнесения соседей Армении к числу «несостоявшихся государств», что может привести к дестабилизации военно-политической обстановки в регионе.

В то же время существуют и потенциальные внутренние военные угрозы, такие, как: дестабилизация внутривнутриполитической обстановки, снижение эффективности системы государственного управления, отрицательные демографические тенденции и кризисы, которые могут привести к объявлению чрезвычайного положения, и т. д. Это факторы, которые могут оказывать непосредственное воздействие на боеспособность армии и ход осуществляемых оборонных реформ. Например: дестабилизация внутривнутриполитической обстановки может спровоцировать вовлечение ар-

мии в политику, что не допустимо, или снижение эффективности системы государственного управления может привести к нарушению процесса реформирования оборонной сферы. Все это характерно не только для Армении или соседних с ней государств, но и для всех государств, находящихся на переходном этапе. Ограничение воздействия и нейтрализация подобных факторов связаны с укреплением демократии, последовательным осуществлением реформ и становлением гражданского общества.

Что касается внешних факторов, то их воздействие на оборонные реформы лежит в совершенно иной плоскости. Например: наличие в регионе конфликтов тормозит развитие и интегрирование в международное сообщество как всего региона, так и его отдельных государств, препятствует установлению атмосферы взаимного доверия, поскольку милитаризация обстановки по определенным объективным и субъективным причинам не только ограничивает возможности создания демократических механизмов, но и влияет на мировосприятие народов этих стран. Необходимо также учесть то важное обстоятельство, что существующие в регионе конфликты, несмотря на их внешнее сходство, имеют совершенно разные исторические и причинно-правовые основы, что обуславливает необходимость разработки специфических процедур их урегулирования и разрешения.

Внешние факторы, воздействующие на безопасностную среду Армении, могут также подвергаться изменениям вследствие изменения обстановки в регионе. В частности, весьма вероятно, что Грузия с НАТО в ближайшем будущем приступят к осуществлению «Программы действий по членству», а это значит, что вступление этой страны в Организацию Североатлантического Договора—лишь вопрос времени. В результате этого, на Южном Кавказе появится новый актер—еще одна безопасностная организация, что может привести к изменению военно-политической конфигурации региона. Другое изменение обстановки может произойти при изменении Азербайджаном своего политического курса (причем как в сторону НАТО, так и в сторону России).

При оценке безопасностной среды Армении безусловно надо принимать во внимание вероятность этих развитий. Сегодня Южный Кавказ пока еще находится на переходном этапе: Армения и соседние с ней государства избрали путь европейской интеграции и приступили к осуществлению реформ (в том числе и в сфере обороны). Тем не менее, если попробовать рассмотреть какого типа государства и общества строят эти страны, то со всей очевидностью станет ясно, что их представления в вопросах безопасности сильно различаются. Отнюдь не из европейских ценностей, духа интеграции и партнерства проистекают культивирование

в своем обществе вражды и недоверия к соседнему государству, политика милитаризации и разжигания войн. Наоборот, подобная политика является результатом того, что эти страны не видят или не хотят видеть в общих интересах отражение своих собственных. Именно эти факторы обуславливают сбалансированность оборонных реформ в Армении.

Как правило, эффективность деятельности военно-безопасностной сферы в процессе осуществления реформ может временно снижаться, так как в процессе преобразования действующих механизмов или внедрения новых возникают перебои, неточности, недостатки, для исправления которых требуется время. Однако Армения, исходя из существующей военно-политической обстановки, не вправе предпринимать неосмотрительные шаги, которые могут, хотя и временно, негативно отразиться на уровне боеспособности Вооруженных сил. Следовательно, оборонные реформы должны быть нацелены на совершенствование военных стандартов, действующих в Вооруженных силах, повышение уровня их боеспособности. В среднесрочной перспективе они также нацелены на экономически обоснованную оптимизацию структуры, численности, систем руководства и управления Вооруженными силами РА, военно-образовательной сферы.

В то же время существуют политические и военно-политические факторы, которые оказывают положительное воздействие на ход оборонных реформ. В частности:

а) укрепление структур региональной и международной безопасности, необходимость глобальной борьбы против международных угроз уменьшили опасность возникновения мировых классических войн;

б) процессы международной интеграции создали благоприятные условия для развития сотрудничества в оборонной сфере;

в) постепенное становление демократии, построение гражданского общества и утверждение социальной справедливости в государствах Южного Кавказа, а также их международная интеграция являются факторами формирования атмосферы взаимного доверия и развития мирного диалога между этими государствами;

г) Организация Договора о коллективной безопасности, Организация Североатлантического Договора, Организация по безопасности и сотрудничеству в Европе, Европейский Союз и другие международные организации, а также осуществляемые ими программы, такие, как «План действий индивидуального партнерства Армения—НАТО», Программа «Еврососедства» и другие, играют положительную роль в деле укрепления атмосферы стабильности и нейтрализации военных угроз на Южном Кавказе.

Эти факторы, бесспорно, создают все необходимые благоприятные предпосылки для того, чтобы при осуществлении политики оборонных реформ Министерство обороны РА сотрудничало с союзниками, партнерами и заинтересованными системами и организациями по международной безопасности.

СТРАТЕГИЧЕСКИЙ ПЕРЕСМОТР СИСТЕМЫ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ (ОБОРОНЫ)

Успешное завершение первого этапа реформ дает возможность Министерству обороны РА в 2008 году приступить согласно разработанному плану ко второму этапу—осуществлению процесса стратегического пересмотра Системы военной безопасности (обороны). В настоящее время существуют различные представления об этом процессе. Это естественно, так как стратегический пересмотр для Вооруженных сил РА является новинкой и осуществляется впервые. С учетом этого обстоятельства данный процесс нуждается в дополнительных разъяснениях.

Стратегический пересмотр обороны в первую очередь необходим для правильного ориентирования оборонных реформ в Вооруженных силах РА, планирования перспектив их модернизации и развития. То есть, посредством стратегического пересмотра обороны в контексте первоочередностей развития и оборонных реформ РА должны быть определены наличные возможности и нужды Вооруженных сил для военной защиты нашей страны и в соответствии с этим—уточнены цели реформ.

Стратегический пересмотр, кроме оценки и пересмотра реальных возможностей Вооруженных сил РА, должен быть использован для оценки военно-политической среды в настоящем и динамики ее трансформирования в видимой перспективе с вытекающим из этого уточнением угроз.

Процесс пересмотра важен также с точки зрения разработки планов применения ВС РА и определения требуемой от подразделений готовности для успешного противостояния угрозам. Результаты пересмотра станут основой для определения и планирования в долгосрочной перспективе военных нужд, включая бюджетные ассигнования и закупки вооружения и военной техники, с учетом экономических, финансовых, военно-политических, демографических и других факторов.

Все это будет использовано при осуществлении дальнейших изменений численности, вооружения, подразделений, родов войск и вообще структуры Вооруженных сил. В целях оптимизации инфраструктур по необходимости будет пересмотрена и вновь обоснована география дислокации подразделений ВС РА, что приведет к сокращению дублирующих

друг друга звеньев и снижению затрат, к более целесообразному использованию существующих ресурсов.

В целом, результатом пересмотра должна стать разработка перспективного плана развития Вооруженных сил. Причем, вследствие стратегического пересмотра обороны положения Военной доктрины РА могут быть при необходимости подвергнуты изменениям или корректировке.

Целью стратегического пересмотра обороны является получение ответа на следующие вопросы:

1. какова безопасностная среда Республики Армения в настоящем и в видимой (краткосрочной, среднесрочной и долгосрочной) перспективе;
2. каковы роль и обязанности Вооруженных сил РА в деле обеспечения национальной безопасности Армении;
3. какие миссии должны быть в состоянии осуществлять Вооруженные силы РА для выполнения отведенной им роли и обязанностей;
4. какие военные возможности и ресурсы необходимы для выполнения этих миссий;
5. как можно организовать, укомплектовать и чем вооружить Вооруженные силы РА для полноценного обеспечения необходимого военного потенциала.

Так как стратегический пересмотр обороны всецело охватывает Вооруженные силы, то в этот процесс будут вовлечены почти все подразделения МО и ГШ ВС РА. Поэтому необходимо создать соответствующие средства и механизмы руководства, планирования и реализации. С этой целью процессом стратегического пересмотра обороны будут руководить: Министр Обороны РА—по части оборонной политики, Начальник ГШ ВС—по части войскового планирования. Определение требований к реформам и модернизации должно вытекать также из наличия ресурсов, поэтому параллельно с этим нужно будет осуществить планирование этих ресурсов, причем—в среднесрочной и долгосрочной перспективе.

Намечается осуществление стратегического пересмотра обороны в течение 2008—2010 годов. Для полноценной с точки зрения методологии реализации всех необходимых шагов Министерство обороны РА проводит консультации с ведущими специализированными центрами государств-партнеров.

ЗАКЛЮЧЕНИЕ

Сверхзадачей оборонных реформ РА является разработка и внедрение в Вооруженных силах таких стандартов, которые полностью бы соответствовали приоритетам национальной безопасности Армении, решали бы национальные задачи военной безопасности, создавая

возможности, достаточные для интероперабельности с союзниками и партнерами, что позволит Армении в деле обеспечения международной безопасности лучше определить свое место и роль, эквивалентные ее растущему международному авторитету и соответствующие собственным военно-безопасным интересам. Это—объективная необходимость, непосредственно вытекающая из геополитических процессов в регионе и интересов национальной безопасности нашей республики. В то же время существующая в регионе военно-политическая-безопасная обстановка, создающая для РА военные угрозы, настоятельно требует от нас проявлять осмотрительность, чтобы уровень боеспособности нашей армии в процессе совершенствования системы обороны, строительства Вооруженных сил, находящихся в состоянии постоянной готовности к отражению современных вызовов и угроз, неуклонно возрастал.

Для обеспечения эффективности оборонных реформ необходимо, чтобы каждое подразделение, каждый военнослужащий ВС РА осмыслили и осознали свою роль и активно участвовали в этом важном процессе. В этом отношении знаковым начинанием представляется освещение в военно-научном журнале МО РА «Айкакан банак» оборонных реформ, проводимых в ВС РА. Причем журнал представляет реформы по отдельным сферам, что позволяет коллективам ведущих специалистов ВС РА определять содержание реформ в их целостности и в конкретных разделах, выделять процессы и механизмы их осуществления в данной области, обсуждать насущные задачи и очерчивать перспективы их решения. Журнал продолжит представление процесса реформирования, свои очередные номера посвящая конкретным сферам обороны. Так, в первом номере журнала за 2008 год были представлены видение, процесс и механизмы реформирования в военно-промышленной сфере.

В данном номере обсуждаются главные идеи и цели правовых реформ, существующие в данной области задачи и предлагаются соответствующие решения. Это обстоятельство считаю важным, так как представление реформ в правовой сфере даст возможность ответственным звеньям, непосредственно занимающимся данной проблемой, а также всем заинтересованным сторонам четче определить свои задачи, обязательства, а также выявлять упущения, что в свою очередь создаст возможности для их исправления и приведения внедряемых стандартов в соответствие с международными. Следует подчеркнуть, что гарантией эффективного осуществления реформ в оборонной сфере является создание прочной правовой основы, благодаря чему будут обеспечены законность каждого предпринимаемого шага, его соответствие требованиям и нормам Конституции и Законодательства РА.

THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: SECOND STAGE

S. M. OHANYAN, RA Defense Minister

Still in the initial stage of the process of implementing defense reforms in the RA Armed Forces, its status, current issues and possible solutions were much discussed; the goals of the reforms were discussed in detail. In general, the goal of the reforms is to develop such an efficient defense system that would not formally duplicate any working model, but rather applying domestic and international practice, be a strictly national one, since the RA security environment is unique; although there are many similarities, there are also fundamental differences in comparison with other countries. Though the optimal choice of criteria to build the defense system is important, first and foremost, it should fully comply with modern challenges to Armenia's military security, be flexible, efficient and capable of neutralizing all current threats and effectively ensuring the secure protection of the Republic of Armenia, fundamental values of its national security, and meeting international commitments of the RA in this sphere. Besides adequately addressing the military security environment, the defense system, if necessary, must also be able to impact on the creation of that environment.

I consider it necessary to make the following remark here. The idea that the reforms in the defense system cannot be implemented in terms of extremely militarized security environment in the region is frequent; while they may bring to a temporary reduction in its efficiency. I cannot take such an opinion as the existence of military threats did bring us to improve that system. This improvement is targeted at building efficient Armed Forces constantly undergoing modernization and complying with contemporary international standards and always ready to counter any armed aggression against the RA.

GENERAL ASSESSMENT

Today, when the first—initial stage of defense reforms is completed, and we proceed to their second—decisive stage, key decisions must be made which will predetermine the content, the methods of defense organization and the course of developing the building of the Armed Forces for the next 10-15 years. Thus, it is necessary to reassess the total military threats facing the Republic of Armenia and, within that context, the current issues in the defense sphere, adopt fundamental and comprehensive approaches, make a

long-term analysis based on scientific predictions, study the distinctive features and international progressive practice of the Republic of Armenia sphere by sphere, and skillfully use the support provided by RA allies and partners.

Taking into account what has been said above, the second stage of reforms can be called a strategic review of the military security system (or, the defense). But before proceeding to the second stage of reforms, we should evaluate the work done in the first one.

The active process of the RA defense reforms began in 2005, and was furthered by adopting state approach to reforms, and especially by RA constitutional amendments. However, the work carried out before that in the sphere of building the Armed Forces should not be underestimated. In those critical and difficult years of building the Armed Forces, an efficient army was created that accomplished its tasks with dignity both in the course of the war phase of the Karabakh conflict and, after it, in keeping the Armenian borders impregnable. Yet, building Armed Forces is a continuous process that requires constant development and does not tolerate using the same approaches year after year, which would result in stagnation and would directly influence the fighting efficiency of the army. All these are the basic prerequisites and motivation for implementing defense reforms.

Recently, the Republic of Armenia is undergoing progressive development that demands corresponding improvements in the Armed Forces at the same time. Besides, the enemy is not at a standstill and also is conducting targeted activities to enhance its military potential. In these terms the scale of military threats coming from the enemy and their realization probability simultaneously increase. Therefore, the most valid guarantee for Armenia's security is an efficient and modern army. Moreover, this guarantee has only one criterion—**the fighting efficiency of the RA Armed Forces should always exceed that of the Armed Forces of a potential enemy.**

The Individual Partnership Action Plan (IPAP), signed on December 16, 2005 between the Republic of Armenia and NATO, served as a basis for the start of the reforms. It is not a secret that before that former Soviet standards were chiefly being used in the process of building and developing the RA Armed Forces; attempts were being made to make them conform to the peculiarities of ensuring national security and military issues. The Armenia—NATO Individual Partnership Action Plan offered great opportunities to thoroughly study the western practice of rich traditions, understand its advantages and disadvantages, and through synthesizing them with the standards available in the Armed Forces of the RF, our strategic partner, and other CSTO member states, create more optimal standards for the RA Armed Forces, corresponding to the current issues.

However, to take practical steps in implementing defense reforms, first of all we needed documents of major significance for the security system of the country, its vital activity and development. These documents are the National Security Strategy and the Military Doctrine of the Republic of Armenia. We also had to create a relevant legislative field, prepare initial programs of reforms and development of the Armed Forces and so forth. These were the key issues of the first stage of the reforms.

Today, we can state that the tasks set forth during that stage have been fully accomplished. In particular, the National Security Strategy of the Republic of Armenia was developed during 2006 and approved by RA President Decree NH-37-N on February 7, 2007. In 2007, the Military Doctrine of the Republic of Armenia was also prepared by the Defense Ministry of the Republic of Armenia, and was approved by RA President Decree NH-308-N on December 25, 2007. Our agency developed and the RA President approved, the 2007—2015 Defense Reforms Program of the RA Armed Forces, which defined the areas and timetables of the reforms. It should be noted that a considerable amount of work was done relating legislative reforms implementation.

THE SECURITY ENVIRONMENT OF ARMENIA

To take practical measures connected with the implementation of defense reforms, the analysis of the security environment is very important because the nature and scales of the defense reforms are conditioned by it. After all, the current military threats facing Armenia dictate the necessity of developing opportunities to neutralize them in the Armed Forces. Thus, long-term forecasts and well-founded analyses of the security environment will create opportunities to determine permissible risks during the course of implementing defense reforms.

The military security environment surrounding Armenia is shaped by the impact of geopolitical, geoeconomic and geostrategic factors regarding the national interests of the Republic of Armenia. These factors are conditioned by the concurrence and collision of interests of intra- and supra-regional current actors, as well as in terms of international conflicts. In addition, openly striving to resolve military security related issues through the use of force, or the threat of using force, is quite apparent in the activities of some countries in the region.

The external and domestic military threats against the security of the Republic of Armenia are presented in the RA National Security Strategy and the RA Military Doctrine. The activities of the RA Armed Forces are targeted at countering these threats. However, to determine the impact of these threats on defense reforms, it is also necessary to reveal their sources.

Thus, we can state that to the external security of the Republic of Armenia

a) direct military threats are:

—the existence of the Karabakh conflict and the absence of a coordinated political-legal basis for the settlement of the conflict between the conflicting parties;

—the militarization policy pursued by Azerbaijan, [attempts to achieve] military supremacy, and desire to resolve the Karabakh conflict by use of military force;

—the blockades imposed on the Republic of Armenia and attempts to isolate it are regarded as a use of force and they decrease the possibility of regional dialogue;

b) military risks are:

—the destabilization of the security environment in the Republic of Armenia's neighboring states and generally in the South Caucasus, and the instigation of present or new conflicts;

—trans-national crimes, such as international terrorism, the illegal proliferation of weapons of mass destruction and their components, narcotics and psychotropic substances, and human trafficking;

—the failure of current reform efforts in the states of the South Caucasus region, the insufficient level of democracy, and, as a result, the prospects of Armenia's neighboring states joining the ranks of «failed states» which may bring to destabilization of military and political situation in the region.

At the same time, there are also domestic factors of potential military threats, such as the destabilization of the domestic political situation, deterioration in the efficiency of public administration, negative demographic trends and crises that may lead to declaring a state of emergency, and so on. These are factors capable of directly affecting the army's fighting efficiency and the course of current defense reforms. For instance, the destabilization of the domestic political situation may artificially provoke the army to engage in politics, which is impermissible. Or, deterioration in the efficacy of public administration can cause a failure in the defense reforms process, etc. In any case, similar domestic factors are specific not only to Armenia or Armenia's neighboring states, but in general to all states in transition. The impact restriction and neutralization of these factors are related to the consolidation of democratic values, consistent implementation of reforms, and the development of a civil society.

As to the external factors, their impact on defense reforms is on a completely different plane. For example, regional conflicts obstruct the development and integration of both the whole region and its individual countries

into the international community and the establishment of an atmosphere of mutual trust: militarization of situation, due to certain objective and subjective reasons, not only restricts the opportunities to establish democratic mechanisms, but also affects the global outlook of peoples living in these countries. It is necessary to take into consideration another important factor as well. The present regional conflicts, in spite of bearing external similarities, have completely different historic and causal legal base, thus, requiring unique settlement and resolution procedures.

The external factors influencing Armenia's security environment can undergo modifications also as a result of changes in the regional situation. In particular, Georgia is likely to assume a Membership Action Plan with NATO in the near future. This means that the membership of this country in the North Atlantic Alliance is merely a matter of time. As a result, a new actor will appear in the South Caucasus—one more security organization, which may become a reason for military and political rearrangements in the region. The next alteration may take place in case Azerbaijan changes its policy (both towards NATO or Russia).

Anyway, while assessing Armenia's security environment, the possibility of these developments should be undoubtedly taken into account. At present, the South Caucasus is still in a transition period: Armenia and its neighboring states have adopted the path of European integration and begun implementing reforms (including in the defense sphere). Nevertheless, if we try to consider what kind of state and society these countries build, then it will become clear that their conceptions of security related issues are evidently different. Neither cultivating enmity and distrust among its society against the neighboring state nor militarization and warmongering policies stem from European values, spirit of integration and partnership. On the contrary, such a policy is a consequence of not perceiving, or being reluctant to perceive the reflection of their own interests within the common interests. The balance of defense reforms in Armenia is conditioned by such an approach.

As a rule, the efficiency of the activities in the military security sphere suffers temporarily during the course of implementing reforms: when modifying the functioning mechanisms or introducing new ones, there appear delays, inaccuracies and imperfections, and correcting these takes time. But Armenia, taking into account the present military and political situation, does not have the right to take imprudent measures that may even temporarily have a negative impact on the level of fighting efficiency of the Armed Forces. Therefore, the defense reforms should be aimed at improving current military standards, and increasing the level of fighting efficiency in the RA Armed Forces. In the mid-term, defense reforms are also directed at the economically sound opti-

mization of the structure, strength, management and control systems of the RA Armed Forces and military educational sphere.

At the same time, there are political and military-political factors that positively influence the process of implementing defense reforms. In particular:

a) the enhancement of regional and international security structures, and the need for a unified struggle against international threats have decreased the danger of classic global wars;

b) international integration processes have created favorable conditions to cooperate in the defense sphere;

c) the gradual establishment of democracy, development of civil society, and affirmation of social justice in the South Caucasus states, as well as the international integration of these states, contribute to creating an atmosphere of mutual trust and peaceful dialogue among these states;

d) the Collective Security Treaty Organization, the North Atlantic Treaty Organization, the Organization for Security and Cooperation in Europe, the European Union and other international organizations, the programs they implement, such as Armenia—NATO Individual Partnership Action Plan, European Neighborhood Policy and the like, play a positive role in consolidating stability atmosphere and neutralizing military threats in the South Caucasus.

These factors, indisputably, create all the necessary favorable preconditions for the RA Defense Ministry to cooperate with allies, partners and international security systems stakeholders and organizations while implementing the defense reforms policy.

THE STRATEGIC REVIEW OF THE MILITARY SECURITY SYSTEM (THE DEFENSE)

The successful completion of the first stage of the reforms provides the RA Defense Ministry an opportunity to commence the second stage—implementation of the Strategic Review Process of the Military Security System (the defense)—in 2008, in accordance with the developed plan. At present, there are different perceptions of this process. It is natural, as the strategic review is a novelty for the RA Armed Forces and is to be conducted for the first time. Taking this into account, this process needs to be clarified.

The defense strategic review is, first of all, essential for the defense reforms of the RA Armed Forces to be correctly guided, modernized and for the development perspective to be planned. Consequently, the defense strategic review should determine the present capabilities and needs of the Armed Forces in the context of the RA development priorities and defense

reforms to protect our country, and accordingly clarify the goals of the reforms.

Besides evaluating and reviewing the real capabilities of the RA Armed Forces, the strategic review should be used to assess the military and political environment now and the dynamics of its transformation in the foreseeable future and accordingly clarify the threats.

The review process is also important from the perspective of developing applicable plans and determining the state of preparedness required from the sub-units of the RA Armed Forces to effectively counter the threats. The results of the review will serve as a basis to determine and plan military needs in a long-term perspective, including budget allotments and the purchase of armaments and defense technology, taking into account economic, financial, military-political, demographic, and other factors.

All these will be used to carry out further modifications of the strength, armament, sub-units, branches of service and generally, the structure of the Armed Forces. The geographic allocation of the sub-units of the RA Armed Forces will be reviewed and reaffirmed once again, if needed for optimizing infrastructure. This will lead to reducing links duplicating each other and expenditures, and making more purposeful use of the existing resources.

All in all, the result of the review should be the preparation of a long-term plan for the development of the Armed Forces. In addition, as a result of the defense strategic review, the provisions of the RA Military Doctrine may also be subject to changes or corrections if necessary.

The goal of the defense strategic review is to seek answers to the following questions:

1. What is the security environment of the Republic of Armenia now and in the foreseeable future (short-term, mid-term and long-term)?
2. Which are the role and commitments of the RA Armed Forces in the course of ensuring Armenia's national security?
3. What missions should the RA Armed Forces be able to accomplish for performing the role and meeting the commitments they are assigned?
4. What kind of military capabilities and resources are needed to carry out those missions?
5. How should the RA Armed Forces be organized, recruited and armed to completely ensure those military capabilities?

Since the defense strategic review includes the entire Armed Forces, nearly all the sub-units of the RA Defense Ministry and the Main Staff of the Armed Forces will be involved in that process. Therefore, it is necessary to create management, planning and implementation tools and mechanisms. For this reason, the defense strategic review process will be led by the RA

Defense Minister in the defense policy aspect, and by the Head of the Main Staff of the Armed Forces in the troops planning aspect. The determination of reforms and modernization requirements should also come from existing resources, so resource planning should be simultaneously conducted with mid- and long-term outlooks.

The defense strategic review is envisaged to be implemented in the period of 2008—2010. The RA Defense Ministry consults with the leading think-tanks of partner states to completely take all necessary steps from a methodological viewpoint.

CONCLUSION

The major goal of the RA defense reforms is the development and introduction in the Armed Forces of such standards, which would fully comply with Armenia's national security priorities. They should solve military-security related national issues and provide sufficient interoperability opportunities with allies and partners that will allow Armenia to better determine its place and role in ensuring international security, equivalent to its growing international reputation and corresponding to its own military security interests. This is an objective need directly stemming from geopolitical processes in the region and national security interests of our republic. At the same time, the military political security situation in the region, posing military threats to the RA, urges us to show prudence for the fighting efficiency level of our army to steadily increase day by day in the process of improving the defense system, building the Armed Forces which should be in the state of constant readiness to counter modern challenges and threats.

For the defense reforms to be implemented effectively, it is essential that each serviceman in each sub-unit of the RA Armed Forces realizes his role and takes an active part in the process of implementing reforms. In this respect, significant are the clarifications on the defense reforms carried out in the RA Armed Forces in the defense-academic quarterly Haikakan Banak (Armenian Army) of the MoD, RA. In addition, the quarterly presents the reforms according to separate spheres, providing an opportunity to the groups of the RA Armed Forces leading experts to determine the content of reforms in their integrity and concrete sections, distinguish between the processes and mechanisms of implementing them in the given sphere, discuss urgent issues, and outline their long-term solution outlooks. The quarterly will continue to present the course of the reforms, devoting its future issues to specific spheres of defense. So, the first issue of Haikakan Banak, 2008 described the vision, process and mechanisms of reforms in the military-industrial sphere.

The main ideas and goals of legal reforms, current problems in the given sphere are discussed and relevant solutions are offered in this issue. I consider this fact significant, as the presentation of the legal sphere's reforms will provide an opportunity for responsible bodies directly engaged in the problem, as well as for all concerned parties to more clearly realize their tasks, commitments and shortcomings. It will be a good opportunity to eliminate the shortcomings and to make the above-mentioned standards conform to international ones. It is important to stress that the pledge to productively implement reforms in the defense sphere is the creation of a strong legal foundation, due to which the legality of each new step and its conformity to the demands and norms of the RA Constitution and Legislation will be guaranteed.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ**

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
ПРАВОВЫЕ АСПЕКТЫ**

**THE DEFENSE REFORMS
OF THE REPUBLIC OF ARMENIA:
LEGAL ASPECTS**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ
ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԻ ՓՈՒԼՈՒՄ

Ա. Ա. ՆԱԶԱՐՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Խորհրդային հասարակարգի փլուզումից և Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո տեղի ունեցավ անցում հասարակական մի հարաբերություններից սկզբունքորեն տարբերվող այլ հասարակական հարաբերությունների, և բնական է, որ այդ անցումային շրջանը, որը շարունակվում է մինչ օրս, պետք է առաջ բերեր մի շարք հիմնարար իրավական խնդիրներ, որոնց լուծման ընթացքում հաջողությունների հետ մեկտեղ անխուսափելիորեն տեղ կգտնեին բացթողումներ և թերություններ:

Անցումային ժամանակաշրջանում իրավական զարգացումը Հայաստանի Հանրապետությունում բնութագրվում է ինչպես դրական, այնպես էլ հակասական միտումներով: Մի կողմից՝ հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները խթանեցին իրավաստեղծ գործունեությունը և, հետևաբար, նաև իրավական ակտերի քանակական աճը, մյուս կողմից՝ քանակական աճին զուգահեռ ընդգծվեցին իրավականի և իրականի տարբերությունը, ինչպես նաև հակասություններն ամբողջ օրենսդրական համակարգում: Այս առումով բացառություն չեն կազմել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Խնդիրն այն է, որ Խորհրդային Միությունից «ժառանգված» իրավական ակտերն արդեն իսկ կորցրել են իրենց արդիականությունը և արդյունավետ կերպով չեն կարգավորում Հայաստանի Հանրապետության Չինված ուժերում առաջացող որակապես նոր հասարակական հարաբերությունները: Պաշտպանական ոլորտը կարգավորող այն իրավական ակտերը, որոնք ստեղծվել են Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից ի վեր, հիմնականում հախտուն են և հետևանք են նորաստեղծ Չինված ուժերի ձևավորման գործընթացով պայմանավորված իրավաստեղծ գործունեության:

Այսօր, երբ հայ ժողովուրդն ամրապնդում է իր ազգային պետականությունը, պաշտպանական ոլորտում ծագող իրավահարաբերությունների պատշաճ կարգավորման անհրաժեշտությունը ձեռք է բերել առանձնահատուկ կարևորություն:

Պաշտպանական ոլորտի օրենսդրության շարունակական կատարելագործումը այսօր անվիճելիորեն համարվում է Հայաստանի Հանրապետության Չինված ուժերի բնականոն զարգացման, Չինված ուժերում զինվորական կարգապահության և օրինապահության ամրապնդման կարևորագույն նախապայմանը: Խնդիրն արդիական է դառնում հատկապես բանակաշինության ներկա փուլում, երբ Հայաստանի պաշտպանական համակարգը գտնվում է որակապես նոր վերա-

փոխումների ժամանակաշրջանում, ինչը պայմանավորված է ներքին և արտաքին մի շարք գործոնների առկայությամբ:

Մեր տեսակետից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրության ձևավորման համար հիմք հանդիսացավ 1990 թվականի օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որով ոչ միայն հայտարարվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, այլև ամրագրվեց Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ու սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով սեփական զինված ուժերի ստեղծման անհրաժեշտությունը: Հռչակագրով հստակորեն ամրագրվեց նաև, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները¹:

Հռչակագրի ընդունումից հետո՝ 1991 թվականի սեպտեմբերի 25-ին, ընդունվեց պաշտպանական ոլորտի օրենսդրության ձևավորման համար իր կարևորությամբ երկրորդ իրավական ակտը՝ «Անկախ պետականության հիմնադրությների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը պետության և ժողովրդի հիմնական խնդիրներից մեկն է և դրա իրականացման նպատակով կազմակերպվում են Ձինված ուժեր: Առաջին անգամ սահմանվեց նաև, որ Ձինված ուժերում ծառայելը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պարտքն է:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական զարգացման գործընթացը Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից ի վեր պայմանականորեն կարելի է բաժանել 3 ժամանակագրական փուլերի:

Առաջին փուլն ընդգրկում է 1990 թվականից մինչև 1997 թվականն ընկած ժամանակահատվածը, երբ ԽՍՀՄ որոշ իրավական ակտեր մեխանիկորեն արտացոլվեցին նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ինչպես նաև առաջին անգամ փորձ արվեց կարգավորելու Հայաստանի Հանրապետության նորաստեղծ Ձինված ուժերում ծագող զինվորական իրավահարաբերությունները: Մասնավորապես, մյան գործընթացի բոհով անցան «Ձինապարտության մասին» (1991 թ. դեկտեմբերի 9), «Ձինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» (1993 թ. հունվարի 7), «Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» (1996 թ. դեկտեմբերի 3), «Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» (1996 թ. դեկտեմբերի 3) Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը (1996 թ. օգոստոսի 12) և մի շարք այլ իրավական ակտեր:

Հարկ է նկատել, որ վերը նշված ժամանակաշրջանում տեղի էր ունենում ազգային

¹ Տես «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 2-րդ և 5-րդ կետերը: «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1990 թ., հմ. 16:

ազատագրական պայքար, որը մեծ ջանքերի շնորհիվ պսակվեց ԼՂՀ անկախությամբ: Այս առումով, կարծում ենք, որ նշված իրավական ակտերի ընդունումը՝ թեկուզև ԽՍՀՄ իրավական ակտերի ընդօրինակման ճանապարհով, պայմանավորված էր նորաստեղծ Ձինված ուժերում ծագող նոր հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հրատապությամբ:

Երկրորդ փուլը, մեր կարծիքով, սկսվում է 1997 թվականից և ավարտվում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով: Այս ժամանակահատվածում ընդունվել են ներկայումս պաշտպանական ոլորտում գործող այնպիսի կարևորագույն իրավական ակտեր, ինչպիսիք են «Պաշտպանության մասին» (1997 թ. մայիսի 29), «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» (2002 թ. հուլիսի 3), «Ձինծառայողների նյութական պատասխանատվության մասին» (2003 թ. դեկտեմբերի 17), «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» (2003 թ. դեկտեմբերի 17), «Այլընտրանքային ծառայության մասին» (2003 թ. դեկտեմբերի 17) Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» (1997 թ. մարտի 7), «Նախագորակոչային, գորակոչային տարիքի անձանց և պահեստագորայինների զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» (1997 թ. հուլիսի 17), «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու կարգը հաստատելու մասին» (2002 թ. օգոստոսի 29), «Ամհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» (2005 թ. հունիսի 9) ՀՀ կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր:

Որոշակի զարգացում ապրած պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունները այս փուլում կատարելագործման կարիք ունեին, որովհետև հետպատերազմյան իրավիճակում պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունների որակապես նոր կարգավորման անհրաժեշտություն էր առաջացել: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ վերը նշված երկրորդ փուլում վերընդունվեցին «Ձինապարտության մասին» (1998 թ. սեպտեմբերի 16) և «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» (1998 թ. հոկտեմբերի 27) Հայաստանի Հանրապետության օրենքները:

Երրորդ փուլն սկսվում է 2005 թվականի նոյեմբերի 27-ին և շարունակվում է մինչ օրս:

Հարկ է նկատել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները հիմք դարձան Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման համար: Իրավագիտության մեջ ընդունված է, որ օրենսդրության

գարգացման ռազմավարական ծրագրի հիմքը պետք է լինի Սահմանադրությունը, որը ոչ միայն երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմքն է, այլև դրա հետագա զարգացման և կատարելագործման ուղեցույց ծրագիրը, քանզի սահմանադրական նորմերը ելակետ ու խթան են օրենսդրության ամբողջ համակարգի և նրա առանձին ճյուղերի ձևավորման համար:

2005 թվականից մինչ օրս ընդունվել են իրենց կառուցվածքով և տրամաբանությամբ առանձնացող այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (2006 թ. դեկտեմբերի 5), «Ռազմական ոստիկանության մասին» (2006 թ. դեկտեմբերի 21) Հայաստանի Հանրապետության օրենքները: Անկասկած, երրորդ փուլի ձեռքբերումներից կարելի է համարել ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հրամանագրերը:

Օրենսդրական զարգացման ներկա՝ երրորդ փուլում, սահմանադրական փոփոխությունների հենքի վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանական հայեցակարգի մշակում.
2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման հիմքերի օրենսդրական կարգավորում, պաշտպանության բնագավառում ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատում, պաշտպանական ոլորտի պլանավորման թափանցիկության ապահովում,
3. Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացում և ամրապնդում,
4. պաշտպանական ոլորտում քաղաքացիական ծառայության ներդրում,
5. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության օրենսդրական հիմքերի վերանայում և կատարելագործում,
6. պաշտպանության բնագավառում հանրային իրազեկման հայեցակարգի արդյունավետ և թափանցիկ միջոցների մշակում,
7. Հայաստանի Հանրապետությունում զինապարտության, զինվորական ծառայություն անցնելու հետ կապված զինվորական իրավահարաբերությունների, Ջինված ուժերի ներքին ծառայության ու կայագորային և պահակային ծառայությունների կանոնադրերի, ինչպես նաև կարգապահական կանոնադրության դրույթների վերանայում:

Հայաստանի Հանրապետության անվտանգային հիմնարար փաստաթղթերի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում, ինչպես արդեն նշել ենք, մշակվել և Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության

ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը»: Նշված փաստաթղթերն ունեն ելակետային բնույթ և ուղենիշ են Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումների համար:

Հարկ է նկատել, որ ինչպես «Ազգային անվտանգության ռազմավարությունը», այնպես էլ «Ռ-ռազմական դոկտրինը» առանձնակի կարևորություն են տալիս Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտում շարունակական օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես, «Ազգային անվտանգության ռազմավարությունը» հռչակում է, որ Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության մեծացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում, ինչի անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը: Միաժամանակ, «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ շեշտվում է, որ նշված բարեփոխումներն արտահայտվում են ՀՀ Սահմանադրության դրույթների, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների և դրանցից բխող նորմատիվ ակտերի համալիրի միջոցով²: Հայաստանի Հանրապետության Ռ-ռազմական դոկտրինը, մասնավորեցնելով օրենսդրական բարեփոխումների վերը նշված գործընթացը, սահմանում է, որ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները պետք է ապահովեն ռազմական անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, Ձինված ուժերում օրինականության ամրապնդումը, ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով սահմանված ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորումը³:

Ազգային անվտանգության ռազմավարության իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի դերակատարության մասին անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրում: Ըստ այդ ծրագրի՝ ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղված է մեր երկրի ու տարածաշրջանի կայունության ապահովմանը և հակասությունների հաղթահարմանը, ինչն առաջին հերթին նշանակում է՝ անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն և միջազգային համագործակցություն, հայապահպանություն ու բարեկեցություն: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում է կարգաբերված արդյունավետ

² Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535)):

³ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591)):

պաշտպանության և անվտանգության համակարգ ունենալու անհրաժեշտություն: Այդ համակարգի գլխավոր օղակը բանակն է⁴:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման հիմքերի օրենսդրական կարգավորման և պաշտպանության ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մշակվել և ավարտուն տեսքի է բերվել «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը: Նշված նախագծով առավել հստակեցվել և կանոնակարգվել են պաշտպանական ոլորտի մի շարք հարցեր, որոնցից են՝

- պաշտպանության նպատակներով ՀՀ տարածքում օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումների տեղակայման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում ՀՀ տարածքից դուրս ՀՀ Ձինված ուժերի կողմից խաղաղապահական գործունեության իրականացման և ռազմական գործողությունների մասնակցության խնդիրները,

- Ձինված ուժերի կառուցվածքի վերաբերյալ դրույթները, ինչպես նաև առաջին անգամ համալիր եղանակով սահմանվել են Ձինված ուժերի գործառույթները,

- Ձինված ուժերի՝ քաղաքական հարցերում չեզոքության պահպանման և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու վերաբերյալ դրույթները,

- պաշտպանության բնագավառում ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Ձինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացման ու ամրապնդման ուղղությամբ պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների իրականացման համար հիմք հանդիսացան ՀՀ Սահմանադրության մեջ 2005 թվականին կատարված փոփոխությունները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.2 հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»⁵: Փաստորեն, նշված դրույթով առաջին անգամ սահմանվեց Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի՝ քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու սահմանադրաիրավական պահանջ, որի հենքի վրա համապատասխան դրույթներ սահմանվեցին «ՀՀ ռազմական դոկտրինում», «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում:

Քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացման և ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մշակվել և 2007 թվականի նոյեմբերի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է նաև «Քաղա-

⁴ Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի նախընտրական ծրագիրը» (<http://www.president.am/library/arm/?task=46>):

⁵ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 8.2: Ե., 2005:

քացիական հատուկ ծառայության մասին»⁶ Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրման, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրման նպատակն է նախարարության համակարգում կանոնակարգել և արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների ներհոսքը համակարգ, կիրառել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ, ինչպես նաև նպաստել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկության ապահովմանը: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության, ՀՀ Պաշտպանության նախարարի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են նաև «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքից բխող մեկ տասնյակից ավելի նորմատիվ ակտեր:

Ջինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության օրենսդրական հիմքերի վերանայման և կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ջինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում: Դրանք հիմնականում միտված են զինժառայողների՝ սոցիալապես առավել խոցելի շերտերի սոցիալական պայմանների բարելավմանը և նրանց որոշակի արտոնությունների տրամադրմանը: Այժմ նոր որակ է ստացել պաշտպանական ոլորտում իրականացվող բնակարանային քաղաքականությունը, որով և պայմանավորված է զինժառայողների բնակարանային ապահովության ոլորտի օրենսդրության կատարելագործման և փոփոխման անհրաժեշտությունը: Ներկայումս աշխատանքներ են տարվում զինժառայողներին և նրանց ընտանիքներին անդամներին սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ տրամադրելու կարգը կատարելագործելու և նախկինում եղած օրենսդրական բացերը լրացնելու ուղղությամբ:

Պաշտպանության բնագավառում հանրային իրազեկման ռազմավարության արդյունավետ և թափանցիկ միջոցների մշակման ուղղությամբ կատարված աշխատանքների շնորհիվ մշակվել և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը»⁷:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հան-

⁶ Տե՛ս «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-286-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտպանական տեղեկագիր», 2007 թ., հմ. 66 (590)):

⁷ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգ» (<http://www.mil.am/arm/index.php?page=111>):

րային իրազեկման հայեցակարգը» ՀՀ պաշտպանական գերատեսչության միասնական տեղեկատվական քաղաքականության իրագործմանն ուղղված հիմնարար դրույթների ամբողջությունն է, որը բխում է պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները սահմանող ուղեցույց փաստաթղթերի՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ ռազմական դոկտրինի պահանջներից: «ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի» հիմնական նպատակն է սահմանել պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի հանրային իրազեկման քաղաքականության առաջնահերթություններն ու նպատակները, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման մեթոդներն ու միջոցները՝ նպաստելով պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրվող բարեփոխումների վերաբերյալ տեղեկացված լինելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրացմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի կարգապահական, ներքին ծառայության ու կայազորային և պահակային ծառայությունների, զինվորական ծառայություն անցնելու, զինապարտության հետ կապված զինվորական իրավահարաբերությունների կանոնակարգմանը, ապա այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը որակապես նոր աստիճանի բարձրացնելու, ԽՍՀՄ օրենսդրական հնացած դրույթները վերանայելու ուղղությամբ:

Իրականում օրենսդրական բարեփոխումների իրականացումը Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերում բավական բարդ գործընթաց է, քանի որ ցանկացած իրավական ակտ, որպես կանոն, կարգավորվող հասարակական հարաբերության մեխանիկական արտացոլումը չէ, այլ դրա փոխակերպումն է իմացության մեջ, այն է՝ օբյեկտի սուբյեկտիվ պատկերը: Բացի այդ, մեր տեսակետից, պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումները պետք է ուղեկցվեն նաև համապատասխան կադրային և գաղափարախոսական քաղաքականությամբ: Հակառակ դեպքում նույնիսկ ամենակատարյալ օրենքը չի կարող լիարժեք գործել, եթե իրավական նորմերը կիրառողը չի պահպանում օրինականության սկզբունքը, չունի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և աշխատանքային ունակություններ: Այստեղ տեղին է հիշել մեծն հայրդղի Գարեգին Նժդեհի «Մեծ գաղափար» աշխատության մեջ տեղ գտած հետևյալ խոսքը. «Օրենքները փոխելուց առաջ անհրաժեշտ է փոխել մարդկանց»⁸: Տվյալ համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերում իրականացնել զինծառայողների իրավագիտակցության, բարոյահոգեբանական, ազգային գաղափարախոսական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծավալուն և համակարգված աշխատանք, ինչը կնպաստի Ձինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացմանը, զինվորական կարգապահության ու օրինականության ամրապնդմանը: Այս

⁸ *Գարեգին Նժդեհ*, Մեծ գաղափար (Նորահայտ մասունքներ): Ե., 2003, էջ 132:

առունով տեղին է հիշատակել նաև Ռ-ուդոլֆ Իերինգի խոսքը. «Յուրաքանչյուրը կոչված է և պարտավոր է ճնշել կամայականության և անօրինականության բունը, որտեղ էլ որ այն բարձրացնի իր գլուխը: Յուրաքանչյուրը, օգտվելով իրավունքի բարեգործությունից, պետք է իր հերթին և իր ուժերի չափով աջակցի օրենքի գորությանն ու հեղինակությանը, յուրաքանչյուրը բնածին մարտիկ է իրավունքի համար՝ հանուն հասարակության շահերի»⁹:

Հետևաբար, զինծառայողների իրավագիտակցության, բարոյահոգեբանական ու ազգային գաղափարախոսական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները կյանքի կոչելուն պետք է իրենց գործուն մասնակցությունը ցուցաբերեն բոլորը՝ Ձինված ուժերի հրամանատարական կազմից մինչև շարքային կազմի զինծառայողները:

Ամփոփելով վերը ասվածը՝ ևս մեկ անգամ շեշտենք, որ պաշտպանական ոլորտի օրենսդրության զարգացման շարունակականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերագնահատել պաշտպանական ոլորտի օրենսդրական համակարգը, վերլուծել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են ոլորտի իրավական կարգավորման արդյունավետության վրա: Միայն ամբողջական և համակողմանի վերլուծությունը հնարավորություն կընձեռի պարզելու պաշտպանական ոլորտի օրենսդրության իրական վիճակը, բացահայտելու օրենսդրության հսկասություններն ու բացերը, գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ ապահովելու քննարկվող ոլորտի օրենսդրական համակարգի սահուն, նպատակամղված և հետևողական զարգացումը:

⁹ P. Иеринг. Борьба за право. М., 1991, с. 37.

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ РЕФОРМ В ОБОРОННОЙ СФЕРЕ РА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ СТРОИТЕЛЬСТВА ВООРУЖЕННЫХ СИЛ

А. С. НАЗАРЯН, заместитель Министра Обороны РА

РЕЗЮМЕ

Непрерывное совершенствование законодательства в оборонной сфере является одним из важнейших условий обеспечения естественного развития ВС и соблюдения законности и дисциплины в вооруженных силах.

На данном этапе развития законодательства РА правовые реформы в оборонной сфере, основанные на конституциональном реформировании и созвучные основоположениям Стратегии национальной безопасности и Военной доктрины РА, осуществляются по следующим основным направлениям:

1. разработка оборонной концепции Республики Армения;
2. законодательное урегулирование основ организации обороны РА, разделение полномочий Президента, правительства, государственных и местных органов самоуправления РА в сфере обороны, обеспечение прозрачности планирования оборонной сферы;

3. развитие и укрепление механизмов гражданского контроля над Вооруженными силами;

4. внедрение института специальной гражданской службы в оборонной сфере;

5. пересмотр и совершенствование законодательных основ социального обеспечения военнослужащих и членов их семей;

6. разработка эффективных и прозрачных средств общественного информирования в сфере обороны;

7. пересмотр военно-правовых отношений, связанных с военнообязанностью, прохождением военной службы, требований Уставов внутренней, гарнизонной и караульной служб, а также «Дисциплинарного положения».

BASIC DIRECTIONS OF LEGISLATIVE REFORMS IN THE RA DEFENSE SPHERE AT THE CONTEMPORARY STAGE OF BUILDING THE ARMED FORCES

A. S. NAZARYAN, Deputy Minister of Defense of the RA

SUMMARY

Continuous improvement of the legislation in the defense sphere is one of the most important conditions of ensuring natural development of the Armed Forces and observing legality and discipline in the Armed Forces.

Legal reforms in the defense sphere, based on the constitutional reformation and which are concurrent with the fundamental principles of the RA National Security Strategy and Military Doctrine at the given stage of the RA legislation development are implemented in the following basic directions:

1. elaboration of the defense concept of the Republic of Armenia;

2. legislative regulation of the principles of the RA defense organization, division of plenary powers of the RA President, the Government, State and local self-governing bodies in the defense sphere, ensuring planning transparency in the defense sphere;

3. development and strengthening of mechanisms of civil control over the Armed Forces;

4. introduction of the special civil service institution into the defense sphere;

5. reviewing and improvement of legislative principles for the servicemen and their family members' social maintenance;

6. elaboration of efficient and transparent tools for public awareness in the defense sphere;

7. reviewing military-legal relations connected with the military duty, military service, requirements of Regulations of internal, garrison and patrol services, as well as «The Disciplinary provisions».

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ս. Գ. ՄԵԴԻՐԱԿՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության պետ

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», որով հայտարարվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը և ազգային բանակի ստեղծման համար բացվեցին նոր իրավական ու գործնական հեռանկարներ¹: Հայտնի է, որ անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանն անցել է պետականության կառուցման բարդ ուղի: Արցախյան ազատագրական պայքարից հետո, աստիճանաբար հաղթահարելով տնտեսական, սոցիալական և իրավական ճգնաժամը, արտաքաղաքական, ներքաղաքական և գաղափարախոսական հակասությունները, մեր երկիրը ընտրեց զարգացման նոր ուղի: Առանձնակի կարևորություն տրվեց պետականության ձևավորման և ազգային անվտանգության ապահովման հիմնարար երաշխիքներին, դրանց իրացման համար անհրաժեշտ մեխանիզմների սահմանմանն ու ստեղծմանը: Քանի որ հայոց պետականության և ազգային անվտանգության ապահովման առաջնային երաշխիքներից է մարտունակ ազգային բանակ ունենալը², ապա նրա հզորացմանը նպատակաուղղված միջոցառումները դառնում են պետական գործունեության գերակայություն: Դա շեշտվեց նաև 2007 թվականի փետրվարի 7-ին հանրապետության Նախագահի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ³:

Զինված ուժերի բարձր մակարդակի մարտունակության ապահովումը շարունակական գործընթաց է, ուստի և այդ նպատակով իրականացվող պաշտպանական բարեփոխումները պետք է ծրագրված լինեն ոչ միայն առկա, այլև հեռանկարում կանխատեսվող մարտահրավերների հաշվառմամբ: Արդեն մի քանի տարի իրականացվող պաշտպանական բարեփոխումները բխում են ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններից, «Ռազմական դոկտրինի» ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հայեցակետերից:

Հարկ է փաստել, որ իրականացվող պաշտպանական բարեփոխումները ենթադրում են նաև պաշտպանական ոլորտի օրենսդրության շարունակական վերանայում ու կատարելագործում, ինչը հնարավորություն կտա ապահովելու պաշտպանության բնագավառում ծագող, փոփոխվող ու դադարող «իրավահարաբերությունների

¹ Տես «Հայաստանի անկախության մասին հռչակագիր», Նախարան և կետ 5:

² Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

³ Տես նույն տեղում:

օրենսդրական կարգավորման պատշաճ մակարդակ, որը համահունչ կլինի մեր երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական զարգացումներին»⁴:

Զինվորական օրենսդրության կատարելագործմանը նպատակաուղղված և Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թվականների աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները պաշտպանական բարեփոխումների կազմակերպման և արդյունավետ իրագործման համար նախադրյալների ստեղծման հիմքն են: Դրանց մի մասն արդեն իրականացվել է, մյուս մասը ներկայումս իրականացման փուլում է կամ նախատեսվում է իրականացնել բանակաշինության շրջանակներում ծրագրված միջոցառումների ընթացքում:

1. *Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակում*: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», որը Հայաստանի Հանրապետության այդ ժամանակվա Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Պաշտպանության նախարար (ներկայումս՝ հանրապետության Նախագահ) Ս. Սարգսյանի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովի մեկ տարվա գործունեության արգասիքն է⁵: «Ռազմավարությունն» ըստ էության պետության գլխավոր քաղաքական փաստաթուղթն է և ունի ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային նշանակություն: Այն որակապես նոր մակարդակ տեղափոխեց Հայաստանի անվտանգության համակարգի կատարելագործումը և պաշտպանական ռազմավարության զարգացումը: Կարելի է ասել, որ այդ փաստաթուղթը, սահմանադրաիրավական բարեփոխումներից հետո, առաջին ակտն էր, որով հիմք դրվեց բանակաշինության գործում նոր որակի պաշտպանական բարեփոխումների կազմակերպման ու իրականացման համար: Առաջին անգամ սահմանվեցին ազգային անվտանգության հիմնական ռազմավարական ուղղությունները, և առաջին անգամ իշխանություններն իրենց առջև խնդիր դրեցին արդիականացնելու Զինված ուժերն ու բարձրացնելու դրանց մարտունակության և արդյունավետության մակարդակը⁶:

Այդ փաստաթուղթը նաև ռազմաքաղաքական հիմքեր ստեղծեց Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի մշակման համար⁷:

⁴ «Օրենսդրական բարեփոխումներ: Զրույց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի հետ»: «Հայ գինվոր», 2008 թ. օգոստոսի 9–16:

⁵ Տես «Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի հետ»: «ՀՀ ԱԱՌ», էջ 8:

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 15:

⁷ Այս մասին ավելի հանգամանորեն տես «ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետ, ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման գիտական ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր, գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի քաղցման խոսքը»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. *Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի մշակում*: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», որի նախաբանում սահմանվում է, որ դոկտրինը զարգացնում և մանրամասնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության՝ ռազմական ոլորտին վերաբերող դրույթները: Դոկտրինի նախագծի մշակման նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ստեղծվեց ներգերատեսչական հանձնաժողով, այնուհետև ձևավորվեց միջգերատեսչական հանձնաժողով՝ երկրի բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ռազմական դոկտրինն իր բնույթով բաց փաստաթուղթ է, ինչը հնարավորություն է տալիս այն քննարկելու բաց տեքստով: Կանգ չառնելով այդ փաստաթղթի նշանակության վրա՝ նշեմք, որ պաշտպանական բարեփոխումների անցումային այս փուլում չափազանց կարևորվում է հայեցակարգային մոտեցումների որդեգրումը: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում ազգային բանակի կայուն զարգացման և երկրի պաշտպանության նոր որակի ապահովումը⁸:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինն ունի պաշտպանողական բնույթ և նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների հետևողական պաշտպանությանը, ռազմական անվտանգության համակարգի հնարավորությունների, ինչպես նաև փոխգործության ընդլայնման միջոցով ռազմական անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդմանը:

Հարկ է նկատել, որ ռազմական դոկտրինն առանձնակի դեր է հատկացնում պաշտպանության բնագավառում օրենսդրական բարեփոխումներին: Դոկտրինի համաձայն՝ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները պետք է ապահովեն ռազմական անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, Զինված ուժերում օրինականության ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով ու օրենքներով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման խնդիրներին համապատասխան այլընտրանքային ծառայության իրավունքի երաշխավորումը⁹: Այդ ամենը դրական ազդեցություն է գործում կամ կարող է գործել պաշտպանական անվտանգության համակարգի ամրապնդման և քաղաքացիական վերահսկողության ներքո նրա զարգացման վրա:

3. *«Քաղաքացիական հարուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը*: Ինչպես հայտնի է, 2005 թվականի նոյեմբերին իրականացված

⁸ Տես «ՀՀ ռազմական դոկտրինի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Պաշտպանության նախարար Մ. Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի նախագիծը» զեկուցումը»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

⁹ Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 50:

սահմանադրական բարեփոխումների շնորհիվ Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո: Ի թիվս մյուս միջոցառումների՝ անհրաժեշտություն առաջացավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ներդրելու զինվորական ծառայությունից որակապես, այդ թվում՝ բովանդակությամբ, տարբերվող մեկ այլ՝ ոչ զինվորական բնույթի պետական ծառայություն: Խոսքը վերաբերում է քաղաքացիական հատուկ ծառայությանը, որն իր էությամբ տարբերվում է պետական մյուս մարմիններում իրականացվող քաղաքացիական ծառայությունից, թեև ներառում է քաղաքացիական վերահսկողության և հասարակայնության համար պաշտպանական ոլորտը թափանցիկ դարձնելու միտված սկզբունքներ: 2007 թվականի նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՕ-286-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կոչված է կարգավորելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրման, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները: Այս հաստատության ներդրման նպատակն է արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, կանոնակարգել նրանց աշխատանքը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների ներհոսքը բանակ, իրացնել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ և, իհարկե, ապահովել նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկությունը: Օրենքում սահմանվել են քաղաքացիական հատուկ ծառայության հասկացությունը և կարգավորման առարկան, գործունեության ոլորտն ու հիմնական սկզբունքները, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների դասակարգումը, դասային աստիճանները, պաշտոնին նշանակման և պաշտոնից ազատման կարգը, ինչպես նաև կարգավորման են ենթարկվել քաղաքացիական հատուկ ծառայության հետ կապված հիմնական հարաբերությունները:

Հատկանշական է, որ քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրման հետ կապված՝ համապատասխան լրացում կատարվեց նաև «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Դրանով քաղաքացիական ծառայողների կարգավիճակը հավասարեցվեց զինծառայողների կարգավիճակին և նրանց իրավունք վերապահվեց օգտվելու զինծառայողների համար սոցիալական ապահովության ոլորտի մի շարք իրավունքներից ու երաշխիքներից: Այս լրացման նպատակն էր լուծել երկու խնդիր. ա) բացառել ՁՈՒ-ում երկար տարիներ ծառայած քաղաքացիական ծառայողների սոցիալ-իրավական ու հոգեբանական բնույթի կերպավորումները, բ) բանակում խթանել քաղաքացիական հատուկ ծառայությունը և խրախուսել ոչ քաղաքացիական կադրերի ներհոսքը պաշտպանության ոլորտ:

«Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապե-

տության Պաշտպանության նախարարի 10 հրամաններով սահմանվում են քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթ անցկացնելու, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների խորացման և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով նրանց գործուղելու, քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու, ծառայողական քննություն անցկացնելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու, քաղաքացիական ծառայողների անձնական գործերը վարելու և ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգերը, քաղաքացիական ծառայողի վարքականոնները: Սահմանվում են նաև մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու, քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը¹⁰: Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի հմ. 320-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքացիական հատուկ ծառայության և զինվորական ծառայության հավասարագոր պաշտոնների ցանկը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2008 թվականի հունիսի 28-ի հմ. 528-Ն որոշմամբ հաստատվել է «Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը», որի հիման վրա մշակված փուլում են գտնվում նախատեսվող քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի (բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր) պաշտոնների անձնագրերը: Դրանցում հստակեցվում են քաղաքացիական ծառայողի կարգավիճակը, պահանջվող կրթական կամ աշխատանքային ցենզերը, հստակ սահմանվում են նրա խնդիրներն ու պարտականությունները, լիազորությունները:

Ըստ իս` քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրումը Ձինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո պահելու կարևոր նախադրյալներից է: Դրանով ապահովվում է զինված ուժեր – հասարակություն կապը, որի ամրությունը մեծապես պայմանավորված է փոխադարձ վստահությամբ և բանակի կենսագործունեության թափանցիկությամբ:

4. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի մշակում: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանական բնագավառի օրենսդրության ձևավորման առաջին իսկ տարիներից անհրաժեշտություն առաջացավ սահմանելու այնպիսի իրավական հիմունքներ, որոնցով հնարավոր լիներ ապահովել երկրի պաշտպանությունը, երաշխավորել պետության սահմանների անձեռնմխելիությունը: Այդ հիմունքներն իրենց արտացոլում են ստացել 1997 թվականի մայիսի 29-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պաշտպանության մասին» ՀՕ-120 Հայաստանի Հանրապետության օրենքում, որի գլխավոր նպատակն էր սահմանել հանրապետության պաշտպանության ապահով-

¹⁰ Տես «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», 2008, հմ. 20:

ման հիմնական ուղղությունները: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ օրենքի գործող դրույթների մի մասն այլևս չի համապատասխանում պահանջվող չափանիշներին, չի բխում պետության պաշտպանունակության ամրապնդման և բանակաշինության ու Ջինված ուժերի զարգացման պահանջներից: Ավելին. սահմանադրաիրավական վերջին բարեփոխումներից հետո է՛լ ավելի ակնհայտ դարձավ «Պաշտպանության մասին» գործող օրենքի կատարելագործման անհրաժեշտությունը¹¹:



Պաշտպանական ոլորտի իրավական բարեփոխումների հերթական քննարկումը ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչությունում

Այդ պատճառով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության ծրագրում դրվեց տվյալ օրենքը վերանայելու ու կատարելագործելու կոնկրետ պահանջ¹²: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում ստեղծվեց համապատասխան օրենքի նախագիծը մշակող հանձնաժողով, որի անդամների առջև խնդիր դրվեց առավել հստակ և ամբողջական կերպով կարգավորելու պաշտպանության ոլորտի հետ կապված հարաբերությունները, գործող օրենքի դրույթները համապատասխանեցնելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի առանձին սկզբունքներին:

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ունի իր տրամաբանությամբ առանձնացող նոր կառուցվածք ու բովանդակություն, ընդգրկում է պաշտպանության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների առավել համապարփակ համալիրը: Նոր օրենքի նախագծով առավել հստակեցվում և կանոնակարգվում են մի շարք հարցեր.

¹¹ Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի զեկուցումը Հայաստանի Հանրապետության Ջինված ուժերի պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀԲ», 2007, հմ. 1:

¹² Տես ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի հմ. 1440-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի» 44-րդ կետը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 66.1):

ա) առաջին անգամ օրենքում իրավական տեսանկյունից ամրագրվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «պաշտպանություն», «ռազմական անվտանգության համակարգ», «միացյալ զինված ուժեր», «այլ զորքեր», «տեղեկատվական անվտանգություն» և այլն (3-րդ հոդված),

բ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումների տեղակայման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում հանրապետության տարածքից դուրս զինված ուժերի կողմից խաղաղապահական գործունեության իրականացման և ռազմական գործողություններին մասնակցության խնդիրները (4-րդ հոդված),

գ) հստակեցվում և սահմանադրական իրավանորմների պահանջներին են համապատասխանեցվում պաշտպանական բնագավառում հանրապետության Նախագահի, կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, հիմնարկների, այլ կազմակերպությունների գործառույթները, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները (5–9-րդ հոդվածներ),

դ) սահմանվում են քաղաքական հարցերում Ձինված ուժերի՝ չեզոքություն պահպանելու և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու վերաբերյալ դրույթները, ամրագրվում է, որ Ձինված ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է հանրապետության Նախագահը՝ որպես Ձինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար (ընդ որում, խաղաղ ժամանակ՝ պաշտպանության նախարարի միջոցով, պատերազմի ժամանակ՝ Ձինված ուժերի Գլխավոր շտաբի, իսկ գլխավոր հրամանատար նշանակելու դեպքում՝ վերջինիս միջոցով): Ամրագրվում է նաև, որ Ձինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, որը կառավարում և վերահսկում է Ձինված ուժերի ու նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը, խաղաղ ժամանակ պատասխանատու է Ձինված ուժերի մարտական ու զորահավաքային պատրաստության համար (10-րդ և 11-րդ հոդվածներ),

ե) հստակեցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ձինված ուժերի Գլխավոր շտաբի գործառույթները: Ըստ նախատեսված դրույթի՝ Ձինված ուժերի Գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, իսկ Գլխավոր շտաբի պետը՝ խաղաղ ժամանակ Ձինված ուժերում զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը, որն անմիջականորեն պատասխանատու է Ձինված ուժերի մարտական ու զորահավաքային պատրաստության համար: Սահմանվում է, որ մեր ՁՈՒ-ի նեղ մասնագիտական կառավարումն այսուհետև իրագործվելու է Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից՝ պաշտպանության նախարարության ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական ու ռազմատեխնիկական վերահսկմամբ (12–14-րդ հոդվածներ):

Նոր օրենքի նախագիծն արդեն արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և ներկայացվել է օրենսդիր մարմնին: Նախքան օրենսդրի քննարկմանը ներկայացնելը՝ նախագիծը համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանական համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների, պետական բոլոր շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ հանրապետության Նախագահի աշխատակազմի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության հետ, ինչպես նաև պաշտոնական իրավական փորձաքննություն է անցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում: Նոր օրենքի կիրառմամբ հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ պաշտպանական քաղաքականություն, լուծել առաջադրված խնդիրները և երաշխավորել երկրի անվտանգության, տարածքային ամբողջականության ու նրա սահմանների անձեռնմխելիության ապահովումը:

5. *Համազորային կանոնագրքերի և կանոնադրությունների վերանայում:* 1995 թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը հիմք դարձավ երկրի ռազմաքաղաքական գործունեության օրենսդրական դաշտի ձևավորման համար: Հաջորդ երկու տարիների ընթացքում ընդունվեցին ոչ միայն «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության մասին», «Ձորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, այլև Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի «Ներքին ծառայության» և «Պահակային ու կայազորային ծառայությունների» կանոնագրքերը, ինչպես նաև «Կարգապահական» և «Մարտական» կանոնադրությունները, որոնց նպատակն էր բարձրացնել պետության ռազմական կազմակերպվածքի մարտունակության մակարդակը, գործերում արդյունավետ կերպով կազմակերպել ներքին, պահակային ու կայազորային, մարտական ծառայությունները, ամրապնդել զինվորական կարգապահությունը: Անշուշտ, տվյալ ժամանակահատվածում (1996–1997 թթ.) այդ ակտերով հնարավոր եղավ հասնել ցանկալի արդյունքի, բայց այսօր՝ ավելի քան 10 տարի անց, դրանք ի գործու չեն բավարարելու իրականացվող բարեփոխումների պահանջները, չափանիշները: Այդ պատճառով պաշտպանական բարեփոխումների իրավաբանական ապահովման կարևորագույն խնդիր է նաև համազորային կանոնագրքերի ու կանոնադրությունների վերանայումը, դրանց համապատասխանեցումը սահմանադրաիրավական պահանջներին:

Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) 83.5 հոդվածով հռչակվում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, պատասխանատվության տեսակները (1-ին կետ), ինչպես նաև քրեական, վարչական, տնտեսական (գույքային) և կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը (6-րդ կետ): Այսօր Ձինված ուժերում զինծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակումների, նրանց պարտականու-

յունների, պատասխանատվության տեսակների ու կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի «Կարգապահական կանոնադրության մասին», որն իր կարգավիճակով օրենք չէ, քանի որ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից*։ Այս առումով նախատեսվում է այդ կանոնադրությունը վերանայել, փոփոխել ու լրացնել այնպիսի դրույթներով, որոնք բխում են արդի պահանջներից։ Վերանայման կարիք են զգում նաև Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի «Ներքին ծառայության» և «Պահակային ու կայազորային ծառայությունների» կանոնագրերը։ Դրանք պետք է համապատասխանեցնել նոր՝ առաջադիմական, պահանջներին՝ որպես հիմք ընդունելով ազգային բանակի և հայ զինվորի առանձնահատկությունները։ Համագորային կանոնագրերի և կանոնադրությունների ոչ արդյունավետ իրացումը զինվորական կոլեկտիվում թուլացնում է կարգապահությունը, վնաս է հասցնում զորքերի մարտունակությանը, խախտում է օրինականության սկզբունքը՝ դառնալով իրավախախտումների, նաև՝ հանցագործությունների պատճառ։

6. *Ձինվորական կարգապահության ամրապնդմանը, զինծառայողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, զինվորական հանցավորության մակարդակի նվազեցմանը և զորքերում օրինականության ապահովմանն ուղղված կազմակերպարարական միջոցառումներ*։ Ինքնին հասկանալի է, որ զինվորական ծառայության և ընդհանրապես զինված ուժերի հետ կապված հասարակական հարաբերությունները պաշտպանական բարեփոխումների նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու ցանկացած փորձ կարող է ձախողվել, եթե չստեղծվեն զինվորական իրավակարգի ամրապնդման, զինծառայողների կարգապահության մակարդակի բարձրացման ամուր հիմքեր, բանակում չնվազեցվի հանցավորությունը, չլինեն զորքերի մարտունակության ապահովման հուսալի երաշխիքներ։ Ձինծառայողների կողմից կատարված իրավախախտումները, մասնավորապես՝ զինվորական հանցագործությունները, կազմակերպական, նյութական, ֆիզիկական և բարոյական վնաս են պատճառում (կամ կարող են պատճառել) զինվորական ծառայության շահերին։ Հետագայում դրանք նաև մեծ բացասական ազդեցություն են գործում զորքերի մարտունակության, բարոյահոգեբանական վիճակի վրա, ինչն էլ, իր հերթին, նվազեցնում է պետության պաշտպանունակությունը։ Իսկ եթե նկատի ունենանք, որ Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես երկրի պաշտպանական ռազմավարության հիմնական նպատակ նշվում է նաև պայքարը Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող հանցագործությունների դեմ¹³, ապա էլ ավելի են կարևորվում բանակում հանցավորության խնդրի վերլուծությունն ու լուծումը։

Հարկ է նկատել, որ իրավաբանական ապահովման առումով խնդրի լուծման

* ՀՀ ՋՈՒ-ի «Կարգապահական կանոնադրություն» ընդունվել է ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի հմ. 247 որոշմամբ։

¹³ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», էջ 37։

ուղղությամբ որոշակի քայլեր արդեն արվել են: Ընդունվել է «Ռազմական ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը¹⁴, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող ռազմական ոստիկանության խնդիրներն ու գործառույթները, ամրագրում է ռազմական ոստիկանի իրավունքներն ու պարտականությունները: Այդ օրենքով դրվեց կառույցի գործունեության իրավական հիմքը, և նախադրյալներ ստեղծվեցին գործերում օրինականության պահպանման նոր որակ ապահովելու համար: Կարևոր էին նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող այն օրինագծերի մշակումն ու ընդունումը¹⁵, որոնք իրավական հիմքեր են ստեղծել զինվորական քննիչներին Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգ տեղափոխելու համար: Այս որոշման կարևորությունը առաջին հերթին պայմանավորված է այն իրողությամբ, որ մինևույն մարմնին (տվյալ դեպքում՝ զինվորական դատախազությանը) արդեն արգելվում է իրականացնել թե՛ բանակում կատարվող հանցագործությունների վերաբերյալ նախաքննություն, թե՛ այդ քննության նկատմամբ հսկողություն:

Բանակում օրինականության ու զինվորական կարգապահության ամրապնդման, զինվորական հանցավորության մակարդակի նվազեցման հետ է առնչվում նաև 2007 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայագորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի հմ. 595 որոշման ընդունումը: Այս ակտերով կարգավորվում են կարգապահական գումարտակի և կայագորային կարգապահական մեկուսարաններում գտնվող անձանց (զինծառայողների) պահելու, հսկելու և պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերը, որոնք ունեն ոչ միայն կամ ոչ այնքան պատժիչ, որքան կանխարգելիչ նշանակություն: Կանխարգելիչ նշանակություն ունեցավ նաև 2008 թվականի հունվարի 5-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-275-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, որով խստացվեցին առանձին զինվորական հանցագոր-

¹⁴ Տես «Ռազմական ոստիկանության մասին» ՀՕ-13-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 6 (530)): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. դեկտեմբերի 21-ին:

¹⁵ Տես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-129-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 19 (543)): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թ. փետրվարի 22-ին:

ծությունների, մասնավորապես՝ դասալքության համար պատժաչափերը: Մինևույն ժամանակ համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև «Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Այդ փոփոխություններով բացառվեցին այն դեպքերը, երբ դասալքության համար պատիժ կրած քաղաքացին կրկին վերադառնում էր գորամաս (իրականում նման կատեգորիայի անձանց մուտքը գորամաս ունենում էր միայն բացասական հետևանքներ):

Ինչ վերաբերում է զինծառայողների իրավագիտակցությանը և նրանց բարոյա-ստեղծագրական վիճակին, ապա պաշտպանական բարեփոխումների շրջանակներում պետք է առավել մեծ ուշադրություն դարձվի զինծառայողների իրավական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը: Անչափ կարևոր է գիտական ու գործնական վերլուծության ենթարկել զինվորական ծառայությանն ու զինված ուժերին բնորոշ գործոնները, ուսումնասիրել այն քրեածին պայմանները (նրանց առաջացման պատճառները), որոնք անձի մեջ ձևավորում են օրենքի պահանջները չկատարելու, դրանց չենթարկվելու, իրավակարգը խախտելու, ուրիշների իրավունքները ոտնահարելու և այլ նմանատիպ հակաիրավական ցանկություններ: Այս առումով, կարծում եմ, որ էական դեր կարող են խաղալ երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումները: Ոչ պակաս կարևոր պետք է համարել զինվորական կանոնադրերի ու կանոնադրությունների արդյունավետ լրամշակումը, ինչպես նաև գործերում սպա-հոգեբանի հաստատության ստեղծումն ու հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական սպայի հաստիքների վերականգնումը:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների ընթացքում առաջնահերթ վերանայման անհրաժեշտություն ունեն «Ձինապարտության մասին», «Ձորահավաքային մախապատրաստության և գորահավաքի մասին», «Ձինվորական ծառայություն անցնելու մասին», «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնցով հնարավոր կլինի արդյունավետ կերպով կարգավորել համապատասխան ոլորտներում առաջացող հարաբերությունները:

Եվ քանի որ պաշտպանական բարեփոխումներն ունեն շարունակական բնույթ, շարունակական պետք է լինեն նաև դրանց իրավական ապահովման ուղղությամբ իրականացվող կազմակերպարավական միջոցառումները: Չպետք է սահմանափակվել միայն կատարվածով կամ նախատեսվածով, այլ պետք է միշտ առաջ նայել՝ կատարելագործելով հինը և ստեղծելով նորը: Այսօր բավական նախադրյալներ կան ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնվող Ձինված ուժերի զարգացումն ապահովելու համար, ուստի մեր ուշադրությունը առավելապես պետք է կենտրոնացնենք ապագայի վրա և հաշվի առնենք անցյալի բացթողումները: Մեր առջև դրված են խնդիրներ, որոնց լուծումը նպաստելու է պետության ռազմական անվտանգության ապահովմանն ու պաշտպանունակության ամրապնդմանը, ազգային բանակի մարտունակության մակարդակի բարձրացմանը:

ЮРИДИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ
В КОНТЕКСТЕ СТРОИТЕЛЬСТВА ВООРУЖЕННЫХ СИЛ РА

*С. Г. СЕДРАКЯН, полковник, начальник Юридического управления
Министерства обороны РА*

РЕЗЮМЕ

В деле организации и эффективного осуществления оборонных реформ в РА важную роль сыграли «Стратегия национальной безопасности РА» и жидущаяся на ее военно-политических положениях «Военная доктрина РА».

Осуществляемые оборонные реформы предполагают постоянный пересмотр и совершенствование законодательства в оборонной сфере для его приведения в соответствие с перманентно развивающимися правоотношениями. Часть положений действующих законов уже не отвечает современным реалиям и критериям и поэтому возникла необходимость в новых законах «Об обороне», «О специальной гражданской службе», во внесении поправок и дополнений в общевоинские уставы положениями, вытекающими из современных требований.

Существует также необходимость проведения организационно-правовых мероприятий, направленных на обеспечение законности в войсках, укрепление воинской дисциплины, повышение правосознания у военнослужащих.

Решение поставленных задач будет способствовать обеспечению военной безопасности, укреплению обороноспособности государства путем повышения боеспособности национальной армии.

THE LEGAL SUPPORT OF DEFENSE REFORMS
IN THE CONTEXT OF BUILDING THE RA ARMED FORCES

*S. G. SEDRAKYAN, Colonel, Head of the Board of Law
of the Ministry of Defense of the RA*

SUMMARY

«The RA National Security Strategy» and «The RA Military Doctrine» which is based on military-political provisions of the «Strategy» played an important role in the process of organization and efficient implementation of defense reforms in the RA.

The defense reforms being implemented assume a constant reviewing and improving the legislation in the defense sphere to bring it to conformity with permanently developing legal relations. A part of the provisions of standing laws no longer meets the contemporary realities and criteria. That's why a necessity arose to pass new laws «On Defense», «On Special Civil Service», to make amendments and supplements in general regulations through provisions resulting from contemporary requirements.

There is also a necessity to carry out organizational and legal measures targeted at ensuring legality in the troops, strengthening military discipline, increasing servicemen's legal conscience.

The solution to the tasks set will further ensuring military security, strengthening the state's defense capability through increasing fighting efficiency of the national army.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐ

Ս. Օ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, գնդապետ,

*ՀՀ ՊՆ Միջազգային ռազմական համագործակցության և պաշտպանական
ծրագրերի վարչության միջազգային ռազմական համագործակցության
բաժնի պետ – վարչության պետի տեղակալ*

Մենք ապրում ենք բարդ, բազմաչափ աշխարհում, որտեղ իրադրությունը մշտապես փոփոխվում է, իշխանությունը, լիազորությունները և պատասխանատվությունը հատվածական են, իսկ ռազմավարական առաջատարության հնարավորություններն զգալիորեն սահմանափակված են: Մեր աշխարհը բաժանված է գոտիների, որոնց բնորոշ են տարբեր աստիճանների կայունություն և անվտանգություն, խաղաղություն և պատերազմներ:

Անկայուն միջազգային իրադրությունը անվտանգության ոլորտի վերլուծաբանների և քաղաքագետների առջև դնում է հիմնարար հարցեր. ինչպե՞ս ընկալել անվտանգությունը, եթե հաշվի առնվի նրա ժամանակակից՝ ավելի ընդլայնված, իմաստը, ինչպե՞ս կարելի է վերլուծել և բացատրել անվտանգության զարգացման դինամիկայի բազմաչափ, բազմագործոն ու բազմավեկտորային բնույթը, որը ձևավորում է մեր անվտանգային միջավայրը, ի՞նչ ձեռնարկել ապագա մարտահրավերներն ու սպառնալիքները կանխելու կամ դրանք կատարելապես պատրաստված դիմավորելու համար:

«Սառը պատերազմի» ժամանակաշրջանից տարիներ հետո արմատապես փոխվել է միջազգային անվտանգության պրոբլեմների ըմբռնումը, և անհրաժեշտություն է առաջացել էական շտկումներ կատարելու անվտանգության ոլորտում քաղաքականության մշակման գործում: Մեպտեմբերի 11-ի իրադարձությունները, որոնք սկիզբ դրեցին «ահաբեկչության դեմ պատերազմին», բեկումնային ազդեցություն գործեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների և եվրոպական երկրների վրա՝ նրանց կողմից միջազգային անվտանգության պրոբլեմի ընկալման տեսակետից: Միջազգային իրավունքի կիրառման պրակտիկայում վերջերս որոշակի ճշգրտումներ մտցրեց Կոսովոյի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը: Այս խորքային փոփոխությունները նաև հրահրեցին միջազգային սուր բանավեճ այն հարցի շուրջ, թե ինչպես առավել արդյունավետ կերպով վերլուծել անվտանգության ոլորտում ձևավորվող նոր իրավիճակով պայմանավորված պրոբլեմները և գտնել դրանց լուծումները: Դրա պատճառով անվտանգության հարցերի գիտական հետազոտությունները ներկայումս դարձել են միջազգային հարաբերությունների բնագավառի ուսումնասիրությունների առավել դինամիկ և առաջնային ուղղություններին ցանց մեկը:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով՝ վերացել է լայնամասշտաբ միջբլոկային առճակատման սպառնալիքը՝ հղի միջուկային զենքի կիրառման ռեալ հնարավորությամբ: Ըստ նրանց՝ վերջին տարիներին Եվրոպայում, ինչպես նաև ամբողջ աշ-

խարհում կտրուկ նվազել է ավանդական զինված ագրեսիայի հավանականությունը, թեև Վրաստանի այսպես կոչված «հնգօրյա պատերազմը» հանգեցրեց այդ տեսակետում որոշակի ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության: Այդ համաչափ սպառնալիքին փոխարինելու են եկել անհամաչափ սպառնալիքները, որոնք ավելի ճապաղ, բազմավեկտոր ու բազմակողմ են, ուստի և ինչպես իրենց բնույթի, այնպես էլ հնարավոր ներգործության առումով ավելի դժվար բացահայտելի ու կանխատեսելի: Նոր մարտահրավերներն ու սպառնալիքները անտեսում են միջպետական սահմաններն ու ազգային շահերի շրջանակները: Անվտանգությունն այլևս պաշտպանության, զինված ուժերի հաշվեկշռի և միջուկային զենքի առկայության գծային ու քանակապես հեշտ հաշվելի ֆունկցիան չէ:

«Սառը պատերազմի» դարաշրջանի աշխարհակարգի փլուզման արդյունքը եղավ նաև ներքին և արտաքին անվտանգության միջև պարզ սահմանագատման վերացումը: Այն ուղեկցվեց միջազգային ասպարեզում բազմազան նոր, հիմնականում՝ ոչ պետական, դերակատարների ու մասնակիցների երևան գալով: Չսպասն ավանդական միջոցները, որոնք նախկինում դրանց նկատմամբ կիրառում էին պետությունները, այժմ, որպես կանոն, ցանկալի արդյունքներ չեն տալիս, անգամ երբեմն լինում են անարդյունավետ:

«Սառը պատերազմի» ավարտից հետո աշխարհում պաշտոնապես գրանցված 100-ից ավելի զինված հակամարտությունների ճնշող մեծամասնությունը դասվում է ներքին հակամարտությունների կատեգորիային: Շատ փորձագետներ հանգել են այն եզրակացության, որ պատերազմը միջպետական հարաբերությունների ոլորտից փոխադրվել է ներպետական հարաբերությունների ոլորտ: Սակայն դրա հետևանքով նոր հակամարտությունները չեն դարձել պակաս արյունահեղ:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ անվտանգության ոլորտում առկա իրավիճակի վրա ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ունենում զանազան նոր գործոններ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, շրջապատող միջավայրի վատթարացումը, չվերականգնվող բնական ռեսուրսների սպառումը, վարակիչ հիվանդությունների տարածումը, կիբերսպառնալիքները:

Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության համար լուրջ վտանգ են ներկայացնում Ղարաբաղյան հակամարտությունը ուժային մեթոդով լուծելու վերաբերյալ Ադրբեջանի քաղաքական ղեկավարության ռազմատենչ հայտարարությունները, նրանց անթաքույց ռազմական նախապատրաստությունները, որոնք դառնում են համաչափ և անհամաչափ սպառնալիքների աղբյուր:

ՀՀ պետականության դեմ ուղղված սպառնալիք է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը, որն ըստ էության ուժի կիրառման դրսևորումներից մեկն է¹: Մեր կարծիքով՝ վերը նշվածի հաշվառմամբ հրատապ է դառնում նոր կադրերով ՀՀ ազգային անվտանգության խորհրդի նպատակային համալրման աշխատանքների ակտիվացումը:

¹ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

Ըստ ձևավորված ավանդույթի՝ միջազգային անվտանգության համատեքստում կատարվող անվտանգային վերլուծության ժամանակ հիմնականում ուշադրություն էր դարձվում ռազմական քաղաքատարրին: Անվտանգության քաղաքականության մշակման ժամանակ դասական թեմաներ էին «հավասարակշռության պահպանման», «հաղթողների հետ միավորման» ռազմավարությունները, դաշնակիցների որոնումը, դաշնադրությունների ստեղծումը, սպառազինությունների մրցավազքը, պաշտպանության բնագավառում կատարվող ծախսերի ավելացումը:

Երկուսն էլ կեն հազար տարի առաջ հույն պատմաբան Թուկիդիդեսը, նկարագրելով երկու հունական քաղաք-պետությունների՝ Աթենքի և Մելոսի միջև ծագած հակամարտության վերաբերյալ բանակցությունները, գրել է. «...ավելի ուժեղը պահանջում է հնարավորը, իսկ թույլն ստիպված է ենթարկվելու»²: Դրան համահունչ է Մովսես Խորենացու հայտնի խոսքը. «Սահմանք քաջաց՝ գեճն իրեանց»: Մեր կարծիքով՝ այս դրույթներն այսօր էլ չեն հնացել:

Անվտանգության հասկացության ավելի լայն առումով դիտարկումը հնարավորություն է տալիս տվյալ քաղաքական ոլորտում գործարկելու նոր սուբյեկտներ և կառուցվածքներ: Ընդհանուր առմամբ շատ կարևոր է, որ հասարակությունը կարողանա անվտանգության ոլորտում քաղաքացիական քաղաքական կառույցների, զինված ուժերի և այլ գերատեսչությունների միջև պահպանել առողջ և արդյունավետ հարաբերություններ: Կառավարող և ուժային կառույցները պետք է ստեղծեն փոխհարաբերությունների կարգավորված, կառավարելի և հստակ կերպով սահմանազատված կառուցվածք: Ժողովրդավարական պետությունում զինված ուժերի (ինչպես նաև պետական անվտանգությամբ զբաղվող գերատեսչությունների ամբողջ սպեկտրի) դերն ու գործառույթը պետք է համապատասխանեն թափանցիկության և բացության ժողովրդավարական նորմերին, որոնց պահպանումը պետք է վերահսկվի քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ընտրությունների հիման վրա ստեղծված իշխանական մարմինների կողմից:

Ազգային քաղաքականության պլանավորման ժամանակ փոքր և միջին պետությունների համար ծագում են էական պրոբլեմներ: Նրանց տնօրինության տակ եղած ինչպես ռազմական, այնպես էլ ոչ ռազմական գործիքների հավաքակազմը խիստ սահմանափակ է: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին վերցրած այդ պետությունները չունեն բավարար ուժ, որպեսզի լիարժեք կերպով հակազդեն իրենց առջև ծառայող սպառնալիքներին ու մարտահրավերներին: Հետևաբար, նրանք զանազան դաշինքներին, միջազգային կազմակերպություններին իրենց մասնակցությունը դիտում են որպես անվտանգության ռազմավարության կարևոր տարր:

Տվյալ հանգամանքի հաշվառմամբ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշված է, որ «Գիտակցելով արդի մարտահրավերների նկատմամբ մեկ պետության կարողությունների սահմանափակ

² Фукидиг. История. Перевод Г. Стратановского. «Историки античности», т. 1. М., 1989, с. 396.

լինելը՝ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ակտիվ ռազմաքաղաքական համագործակցությունը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ արտատարածաշրջանային պետությունների հետ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մասնակցում են խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին»³:

Ազգային պետությունն իր ամբողջ պատմության ընթացքում գործնականում հենվել է ուժի օրինական կիրառման մենաշնորհի վրա: Բանակը պետք է ունենա հարկադրելու համար բավականաչափ ուժ, որպեսզի պետական կարգը պաշտպանի արտաքին թշնամիներից: «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ որպես բանակաշինության նպատակ ամրագրված է «պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով»:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունն ապահովում են մարտունակ, արտաքին սպառնալիքների հետմղման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերը»⁴:

Այս գործոնի հետ անմիջականորեն կապված է նաև այն վտանգը, որ կազմակերպված ուժի կառավարման միջոցով բանակը հնարավորություն է ստանում սպառնալու իր իսկ պաշտպանության տակ գտնվող ժողովրդավարական կարգին կամ այն արժեքներին, որոնց վրա այդ կարգը հիմնվում է: Զինվորականների միջամտության և ներգործության պակաս ակնհայտ ձևերն օգտագործելով՝ զինվորական ղեկավարությունը կարող է հետապնդել իր կազմակերպության նեղ գերատեսչական նպատակները կամ իր անձնական շահերը՝ ի վնաս հասարակական շահերի, որոնք որոշվում են իշխանության ժողովրդավարորեն ընտրված քաղաքացիական մարմինների կողմից:

Այդ իսկ պատճառով «Ազգային անվտանգության ռազմավարության» «Բանակաշինություն» ենթաբաժնում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում»⁵:

Հարկ է նշել, որ և՛ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության», և՛ «ՀՀ ռազմական դոկտրինի» մեջ հաշվի են առնված ընթացիկ համաշխարհային ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակն ու գործընթացները և դրանց զարգացման միտումները: Դա հնարավորություն է տվել ուրվագծելու տարբեր ոլորտներում պետական կառույցների գործունեությունը միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարով:

³ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24–25:

⁴ Նույն տեղում, էջ 24:

⁵ Նույն տեղում:

Միևնույն ժամանակ, պաշտպանական ոլորտում «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» ու «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի» հիմնադրույթների իրագործման համար անհրաժեշտ է օրենք, որը իրավաբանորեն ամրագրի դրանք և հստակեցնի իրագործման մեխանիզմը: Այդպիսի իրավական ակտ էր Հայաստանի Հանրապետության «Պաշտպանության մասին» օրենքը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997 թ. մայիսի 29-ին⁶: Սակայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների և ազգային անվտանգության ռազմավարության ընդունման հետ կապված՝ առաջացավ մնանատիպ նոր փաստաթղթի ընդունման անհրաժեշտություն, քանի որ նշված գործող օրենսդրական ակտը չէր համապատասխանում վերը նշված հիմնարար փաստաթղթերի նոր պահանջներին ու դրույթներին: Եվ 2008 թ. «Պաշտպանության մասին» նոր օրենքի նախագիծը ներկայացվեց Ազգային ժողովի քննարկման:

Անգամ այս մասնավոր օրինակը վկայում է, որ պաշտպանական բարեփոխումները, այդ թվում՝ իրավական դաշտում, անընդհատ առաջընթաց գործընթաց են՝ ուղղված ժամանակակից զինատեսակներով սպառազինված բանակի ստեղծմանը, նրա մարտական պատրաստության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը: Եվ այդ գործընթացը տեղի է ունենում անկախ այն բանից, թե դրանք փոքր, միջին, թե մեծ պետության զինված ուժեր են, քանի որ պաշտպանական քաղաքականության ձևավորման տեսակետից կարևոր են ոչ թե ինքնին զինված ուժերը, այլ պետության պաշտպանական նպատակների համատեքստում այն ներուժը, որ նրանք ունեն կամ կունենան: Ներուժ ասելով հասկանում ենք այն հնարավորությունները, որոնք կազմվում են առկա ռեսուրսների և պետության կողմից պահանջված չափերի արդյունքին հասնելու կարողության հանրագումարից:

Անհրաժեշտ է նշել, որ զինված ուժերի բարեփոխումների իրականացման և գործող նորմատիվաիրավական բազայում փոփոխությունների կատարման գործընթացներ նախաձեռնված են շատ պետություններում: Այսպես. Ռուսաստանի Դաշնությունը դեռ 2000 թ. ընդունեց պաշտպանական ոլորտում օրենսդրական բարեփոխման հայեցակարգ, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների կողմից ստեղծվեց ՆԱՏՕ-ի Միացյալ զինված ուժերի կերպավորման գծով Գերագույն գլխավոր հրամանատարություն, բարեփոխումներ են նախաձեռնվել Արևելյան Եվրոպայի, Մերձբալթիկայի պետություններում, Վրաստանում, Ադրբեջանում:

Վերլուծելով անցումային շրջանը հաղթահարած այլ (արևելաեվրոպական, մերձբալթյան) պետություններում իրականացված իրավական բարեփոխումների փորձը՝ կարելի է մեր երկրի առանձնահատկությունների հաշվառմամբ նախանշել ՀՀ-ում իրագործվող պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովմանը ներկայացվող հիմնական պահանջները, որոնք են՝

ա) ՀՀ Սահմանադրությանը խիստ համապատասխանությունը,

⁶ Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1997 թ., հմ. 15):

բ) բարեփոխումների գիտականությունը,

գ) Ձինված ուժերի իրական տնտեսական, ֆինանսական, քաղաքական, սոցիալական վիճակի հաշվառումը,

դ) շահագրգիռ պետական մարմինների, իրավաբան գիտնականների և հասարակական կազմակերպությունների մոտեցումների ու կարծիքների հաշվառումը,

ե) համակարգվածությունը:

Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են պաշտպանության բնագավառին վերաբերող տասնյակ նորմատիվ-իրավական ակտեր: Սակայն մեր երկրի պաշտպանական օրենսդրությունը դեռևս մի ամբողջական համակարգ չէ, քանի որ տարբեր իրավական ակտերի դրույթներով ամրագրված պահանջները երբեմն չեն համընկնում, ուղղակի ներգործության իրավական նորմերի թիվը բավարար չէ, առանձին օրենքների որոշ դրույթներ կրում են հայտարարական բնույթ, քանի որ մշակված չեն դրանց լիարժեք կիրառման արդյունավետ մեխանիզմներ:

Աշխարհի զարգացած երկրները վաղուց ընդունել են և դեռ շարունակում են ընդունել ու կատարելագործել պաշտպանության կազմակերպման օրենսդրական ապահովման հայեցակարգեր, օրենքներ և այլ նորմատիվ ակտեր ու փաստաթղթեր:

Ռուսաստանի Դաշնության վերը հիշատակված հայեցակարգում, մասնավորապես, նշված է, որ պաշտպանական օրենսդրությունը պետք է հիմնված լինի համապետական շահերի ապահովման վրա՝ նեղ գերատեսչական մոտեցումների բացառման պայմանով⁷: Այս փաստաթղթի մշակման համար հիմք է հանդիսացել 1999 թ. ՌԴ Պետական դումայի կողմից ընդունված «Պաշտպանական բարեփոխումների մասին» դաշնային օրենքը: Հայեցակարգում շեշտվել է բարեփոխումների առաջին փուլում Ձինված ուժերում իրավական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերանայման անհրաժեշտությունը:

Նման փաստաթուղթը հնարավորություն է տալիս համադրելու տարբեր գերատեսչությունների ռեսուրսները, համակարգելու օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները, ապահովելու օրենսդրության մշակման գիտական հիմնավորվածությունը: Հայաստանում ևս անհրաժեշտ է այս ուղղությամբ գործադրվող ջանքերը ուրվագծող ու համադասող փաստաթուղթ, որը հնարավորություն տար հստակեցնելու և նորովի իմաստավորելու անհրաժեշտ ձեռնարկումները, ամբողջացնելու տեսլականը:

Պաշտպանության բնագավառի օրենսդրության վերանայումը և կատարելագործումը պահանջում են մասնագիտական մոտեցում: Այդ գործին պետք է լծվեն ամբողջ Ձինված ուժերի և այլ գորբերի, ինչպես նաև քաղաքացիական ու ռազմաուսումնական հաստատությունների շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումները՝ դրանց մշակումների փորձաքննության համար համապատասխան կազմակերպությունների փորձագետների ներգրավմամբ: ՀՀ-ում կա նման կարևոր փաստաթղթերի մշակման ուսանելի փորձ, որը, մեր կարծիքով, պետք է հավուր պատշաճի օգտա-

⁷ Տես «Право в вооруженных силах». М., 2007, с. 2:

գործվի նաև այս դեպքում: Նման գործունեության վառ օրինակ է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակումը Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ ներկայիս Նախագահ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ: Մինչդեռ պաշտպանական ոլորտի օրենսդրական ու ենթօրենսդրական ակտերը մշակվում են ՊՆ վարչությունների ուժերով և համաձայնեցվում են շահագրգիռ պետական մարմինների հետ՝ հաճախ առանց նրանց լուրջ մասնակցության: Հարկ է նշել, որ պաշտպանության նախարարության համակարգում այս ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր, մասնավորապես՝ 2007 թ. հունիսի 6-ին ստեղծվել է ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողով⁸: Պաշտպանական բարեփոխումները, պաշտպանական օրենսդրության փոփոխությունները, ինչպես նաև այդ ոլորտի արդիականացման ծրագրերն ու զինձառայողների սոցիալ-իրավական կարգավիճակի հստակեցումը ներառված են 2007 թ. նոյեմբերի 13-ին հաստատված «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգի» առաջնահերթություններում⁹: Սակայն, ցավոք, այս բոլոր նախաձեռնություններն ունեն ավելի շատ ներգերատեսչական բնույթ:

Պետք է արձանագրել, որ բարեփոխումների ընթացքում ձեռք են բերվել զգալի հաջողություններ, սակայն, մեր կարծիքով, կան և հարցեր, որոնք դեռ պատշաճ լուծում չեն ստացել: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Զինձառայողի կարգավիճակը սահմանող դրույթներն ամրագրված են տարբեր օրենքներում և ենթօրենսդրական ակտերում, մինչդեռ նպատակահարմար կլիներ դրանք ամրագրել մեկ իրավական ակտում:

2. Պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնց կարծիքով անհրաժեշտ է ընդունել քննիչների, այդ թվում՝ զինվորական, կարգավիճակի մասին օրենք և հստակ կերպով սահմանել նրանց աշխատանքի ընդունելու պայմանները, կարգը, կարգապահական պատասխանատվության հիմքերը և այլն¹⁰: «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի առկայությունը արդեն իսկ վկայում է, որ տվյալ պետությունը չի նույնացնում դատավորի անձը այն հիմնարկի հետ, որտեղ նա աշխատում է: Սակայն դատախազի (նրա օգնականի, տեղակալի), այդ թվում՝ զինվորական, կարգավիճակի մասին օրենք չկա, ինչի հետևանքով նշված անձանց իրավական վիճակը ամբողջապես բխում է այն հիմնարկի իրավական վիճակից, որտեղ նրանք աշխատում են, այսինքն՝ դատախազն ու դատախազությունը նույնացվում են, ինչը հանգեցնում է օբյեկտի և սուբյեկտի նույնացման:

Կարգավիճակի մասին օրենքները պետք է կոչված լինեն երաշխավորելու այդ մարմինների աշխատողների անկախությունն իրենց գործունեության բոլոր իրավական, սոցիալական ու տնտեսական միջոցների ամբողջության մեջ, ինչպես նաև նրանց մասնագիտական հեղինակությունը, ամրագրելու իրավական պետության

⁸ Տես «ՀՀ պաշտպանության նախարարի 2007 թ. հունիսի 6-ի հմ. 665 հրամանը»:

⁹ Տես «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգը» (<http://www.mil.am/arm/index.php?page=111>):

¹⁰ Այս մասին հանգամանորեն տես *Գ. Ս. Կազնյան*. Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения. Е., 1999, сс. 163—179:

պետական ու հասարակական կյանքում նրանց արժանապատվությանը հարիր տեղն ու դերը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի խաղաղարարները աշխարհի տարբեր տարածաշրջաններում մասնակցում են խաղաղարարական օպերացիաներին, անհրաժեշտ ենք համարում խաղաղարարության մասին ՀՀ օրենքի ընդունումը: Այդ օրենքում այլ դրույթների հետ մեկտեղ պետք է ամրագրված լինեն քննչական ու հետաքննչական մարմինների, դատախազության ու դատարանների իրավասությունները խաղաղարար ուժերի անձնակազմի այն անդամների նկատմամբ, որոնք կատարել են իրավախախտում:

Մեր կարծիքով՝ հարկ է ճշգրտել նաև հետևյալ հարցերը.

– ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ լիազորությունների տարանջատման համար հիմնավորված չափանիշների սահմանում,

– ՊՆ համակարգում զինծառայողների և քաղաքացիական ծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգում,

– քաղաքացիական վերահսկողության համատեքստում ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ զինծառայողների ու քաղաքացիական ծառայողների իրավական կարգավիճակի հաստատում,

– զինծառայողին քաղծառայողի կամ քաղծառայողին զինծառայողի ենթակայության, ինչպես նաև ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ ղեկավարության (հրամանատարության) կարգապահական իրավասությունների շրջանակների հստակեցում:

Ավարտելով այս ուսումնասիրությունը՝ հարկ ենք համարում նշել, որ պետության պաշտպանական կազմակերպության գործունեության արդյունավետությունը էապես պայմանավորված է օրենքի գերակայությամբ: Պաշտպանական օրենսդրության բարեփոխումը թեպետ անհետաձգելի է, սակայն նախատեսված է երկար ժամանակահատվածի համար: Եվ որպեսզի այն չմնա թղթի վրա, պահանջվում են բովանդակային լրախմբագրումներ, լրացումներ, հստակեցումներ, որոնք հիմնված լինեն համալիր ռազմաիրավագիտական հետազոտությունների վրա¹¹:

¹¹ Տես *А. А. Тер-Акопов. Военно-научное обеспечение военно-правовой реформы. М., 1998, с. 23:*

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПРАВОВОГО ЗАКРЕПЛЕНИЯ ВОПРОСОВ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ

С. О. АБРАМЯН, полковник, начальник отдела международного военного сотрудничества — заместитель начальника Управления международного военного сотрудничества и оборонных программ МО РА

РЕЗЮМЕ

В статье анализируются изменения в геополитической-безопасностной среде после завершения эпохи «холодной войны» и связанные с ними новые несимметричные угрозы. Изменения во внешней среде определенным образом отражаются и на внутригосударственной среде, причем наличествует и

обратная связь, особенно, в случае держав. Эти изменения приводят к необходимости разработки новых методов и средств парирования существующих и потенциальных угроз. Поэтому вся деятельность государств по обеспечению своей безопасности и стабильного развития должна строиться с учетом новых реалий, что должно быть зафиксировано в основных политико-правовых и политико-безопасностных документах, таких, как Конституция государства, Стратегия национальной безопасности, Военная доктрина. Именно с этих позиций рассматривается процесс реформирования оборонной сферы в РА, стимулирующими факторами для которого явились конституциональные изменения, а также международные обязательства РА. Возникающие в ходе реформ новые правоотношения, а также сам процесс реформирования должны получить соответствующее закрепление в законодательных актах, из чего следует необходимость корректировки уже действующих и разработки и принятия новых нормативно-правовых актов.

SOME ASPECTS OF LEGAL AFFIRMATION OF SECURITY AND DEFENSE ISSUES

S. O. ABRAHAMYAN, Colonel, Head of the Department of International Military Cooperation—Deputy Head of the Board of the International Military Cooperation and Defense Programs, MoD, RA

SUMMARY

The changes in the geopolitical-security environment after the «Cold War» epoch and new asymmetric threats connected with them are analyzed in this article. The alterations in the external environment are somehow reflected in the intrastate environment as well, while a reverse connection also exists, especially in case of the powers. These changes necessitate elaborating new methods and means of countering the existing and potential threats. That's why the whole activity of states on ensuring their security and stable development should be built taking into account new realities, which must be fixed in the key political-legal and political-security documents such as the Constitution of the State, the National Security Strategy, the Military Doctrine. These are the positions that the process of reforming of the RA defense sphere is examined. The stimulating factors for that process are the Constitutional amendments, as well as the RA international commitments. New legal relationship arising in implementing reforms, and the process of reforming as well should be appropriately affirmed in legislative acts. That causes the necessity to correct already acting normative-legal acts and elaborate and adopt new ones.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

*S. S. ԶՈՇԱՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, իրավաբանական գիտությունների
թեկնածու, ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության սպա*

ՀՀ Սահմանադրությունը, որը երկրի պաշտպանությանը մասնակցությունը սահմանում է որպես քաղաքացիների սահմանադրական պարտականություն, նախատեսում է այդ մասնակցության տարբեր իրավական ձևեր: Դրանց թվում է զինվորական ծառայությունը՝ որպես հատուկ տեսակի պետական ծառայություն: Չինվորական ծառայության կազմակերպման և իրականացման ընթացքում ծագում են բազմաթիվ, նաև՝ իրավական բնույթի խնդիրներ, որոնց անհետաձգելի լուծումները նպաստում են Հայաստանի՝ որպես իրավական պետության և մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներին:

Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, պաշտպանական, սոցիալ-մշակութային բարեփոխումների ընթացքում իրականացվում են պետական կառավարման մեխանիզմների կատարելագործմանը նպատակաուղղված համալիր միջոցառումներ, այդ թվում նաև քաղաքացիների՝ զինվորական ծառայության անցնելուն առնչվող հարաբերությունների կարգավորում: Արդիական խնդիրներ են Չինված ուժերի և ռազմական այլ մարմինների կազմակերպաիրավական բարեփոխումները, որպեսզի նրանք կարողանան լիարժեք կերպով չեզոքացնել երկրի ռազմական անվտանգության դեմ ուղղված ներքին և արտաքին ապառնալիքները: Ուստի հարկավոր է հիմնավորված կերպով ուսումնասիրել երկրի պաշտպանական ոլորտում եղած խնդիրները և առաջարկել գործնականում կիրառելի լուծումներ՝ հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները և պետական ծառայության այդ տարատեսակին ներկայացվող պահանջները:

Վերլուծենք մեր երկրում զինվորական ծառայության կազմակերպաիրավական ապահովմանն ուղղված տեսական ու կիրառական նշանակություն ունեցող որոշ հիմնախնդիրներ:

Պաշտպանական բարեփոխումների գործընթացում կարևոր դեր ունի «զինվորական ծառայություն» հասկացության հետագա տեսական-իրավական զարգացումը՝ նրա առանձնահատկությունների հստակեցմամբ:

Միասնական պետական ծառայության գիտականորեն հիմնավորված և ներկայիս պայմաններին համապատասխանող հայեցակարգի ոչ կատարելությունը հանգեցնում է, մի կողմից, պետական ծառայության այլ տարատեսակների գործողության ոլորտների նեղացման, իսկ մյուս կողմից՝ զինվորական ծառայության կիրառման ոլորտների չափից ավելի ընդլայնման: Մասնավորապես՝ հասարակության մի մասը այն կարծիքին է, թե պետական ամեն մի խնդիր, այդ թվում՝ ոչ ռազմական

բնույթի, կարող են և պետք է լուծեն զինծառայողները, ինչը, սակայն, հակասում է զինվորական ծառայության էությանը: Նման դեպքում խնդիրը հետևյալն է. արդի զինվորական ծառայության առաքելությունը համապատասխանեցնել պետության ռազմական կազմակերպվածքի մեջ ընդգրկված մարմինների ու կազմակերպությունների՝ օրենսդրորեն ամրագրված խնդիրներին և իրականացվող գործառնություններին¹:

Պետության ռազմական կազմակերպվածքի բարեփոխումների գործընթացը պահանջում է երկրի անվտանգության ու պաշտպանության վերաբերյալ օրենսդրության հետագա զարգացում և կատարելագործում, ինչը կնպաստի զինվորական ծառայություն ներառող պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեության արդյունավետության մեծացմանը: Միևնույն ժամանակ, այդ ոլորտի հարաբերություններում ժողովրդավարության սկզբունքի գործնական կիրառումը կնպաստի նաև զինվորական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններում օրինակաճանության պահպանմանը, ինչպես նաև զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների անհատական իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը:

ՀՀ զինվորական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության վերլուծությունը որոշակիորեն հանգեցնում է այն կարծիքին, որ զինվորական-ծառայողական հարաբերություններում օրինակաճանության սկզբունքը ոչ բավարար կերպով է պահպանվում: Մասնավորապես՝ Ձինված ուժերում (նաև ռազմական կազմակերպվածքի այլ մարմիններում ու կազմակերպություններում) օրենքները չեն գործում այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հրապարակվում պաշտպանության նախարարի կամ զինվորական այլ պաշտոնատար անձանց հրամաններով, ինչը երբեմն հանգեցնում է զինծառայողների՝ Մահմանադրությամբ և այլ օրենքներով ամրագրված իրավունքների և օրինական շահերի խախտումների: Խոսքը վերաբերում է ենթաօրենսդրական ակտերի համեմատությամբ (նախարարի, փոխնախարարի հրամաններ, կարգադրություններ և այլն) օրենքների ավելի մեծ իրավաբանական ազդեցություն ունենալուն, ուստի դրանք պետք է սկսեն կիրառվել ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:

Վերոնշյալ հիմնախնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար նպատակահարմար է ընդունել զինվորական ծառայությանը վերաբերող այնպիսի կարևոր օրենքներ, ինչպիսիք են՝ «Ձինծառայողների իրավական կարգավիճակի մասին», «Ձինծառայողների մասնագիտացված միությունների մասին» (որը կնախատեսի զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ արտադատական համակարգ) և այլ օրենքներ: Ձինվորական ծառայության իրավական հաստատության կատարելագործման և արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է ընդունել նաև այլ օրենսդրական ակտեր (ինչը մի շարք ռազմական իրավագետների կողմից համարվում է գիտականորեն արդարացված), որոնք նպաստեն

¹ Տես *Գ. Բ. Атаманчук. Сущность государственной службы: история, теория, закон, практика. М., 2002, с. 200:*

ինչպես զինվորական ծառայության ապահովման իրավական ոլորտի, այնպես էլ այդ հաստատության կատարելագործմանը նպատակատղղված գործունեության հստակ իրավական կարգավորմանը: Այդպիսի օրենքներ են «Պաշտպանական բարեփոխումների մասին»², «Զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին»³, «Ռազմական կազմավորումների իրավական դրության և ֆինանսատնտեսական գործունեության մասին»⁴ օրենքները:

Զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովումը նաև նպաստում է զինծառայողների կադրային կազմի պահպանմանը: Կադրային կայուն քաղաքականության հիմքն են զինծառայողների ծառայողական-պաշտոնական առաջխաղացումներին վերաբերող հարցերը: Հարկ է օրենսդրորեն ամրագրել կադրային կայուն քաղաքականության սկզբունքը և սահմանել, որ պետությունը երաշխավորում է պայմանագրային հիմունքներով ծառայության անցնող զինծառայողների պաշտոնական առաջխաղացումը՝ ըստ նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների ու մասնագիտական որակավորման: Սակայն չի կարելի բավարար համարել այդ սկզբունքի միայն հռչակումն ու ամրագրումը: Որպեսզի ապահովվի նրա գործնական կիրառումը, անհրաժեշտ է մշակել զինծառայողների ծառայողական առաջխաղացման գիտականորեն հիմնավորված և մանրամասնորեն կարգավորվող համակարգ: Զինվորական ծառայությունը հռչակելով որպես մասնագիտական ծառայողական գործունեություն՝ անհրաժեշտ է մշակել և օրենսդրորեն սահմանել զինծառայողների բոլոր կատեգորիաների համապատասխան պատրաստման ու վերապատրաստման համակարգեր, որպեսզի նշվածը հայտարարական բնույթ չկրի և արտացոլի զինվորական ծառայության էությունը: Այսինքն՝ քաղաքացին իր զինվորական-ծառայողական պարտականությունների փաստացի կատարմանը պետք է անցնի միայն տվյալ մասնագիտությամբ համապատասխան պատրաստում անցնելուց հետո: Նման մոտեցում է կիրառվում ԱՄՆ-ի բանակում⁵:

Մյուս կողմից՝ դեռ լիարժեք չեն զինվորական ծառայության նկատմամբ քաղաքացիների հետաքրքրության խթանման թե՛ նյութական, թե՛ բարոյափոխանական առումները, ինչը պայմանավորված է նաև պետական ծառայության և, մասնավորապես, նրա առանձին տեսակների նորմատիվ-իրավական կարգավորման կատարելագործման անհրաժեշտությամբ: ՀՀ գործող օրենսդրությունը սահմանում է զինվորական ծառայության անցնելը միայն խաղաղ ժամանակ, մինչդեռ հարկավոր է օրենսդրորեն ամրագրել զինվորական ծառայության սկիզբը ռազմական դրության պայմաններում:

² Տես *В. А. Озеров*. Конституционно-правовые основы военной реформы в Российской Федерации. М., 2001, с. 10:

³ Տես *О. В. Шарыкина*. Юридическая ответственность военнослужащих в Российской Федерации: теоретико-правовое исследование. М., 2002, с. 9:

⁴ Տես *О. В. Дамаскин*. Криминологические аспекты противодействия преступности в Вооруженных силах России. М., 2002, с. 37:

⁵ Տես *В. Ф. Кужилин*. Кадровая политика военного руководства США по формированию офицерского корпуса вооруженных сил. «Военная мысль», 2001, № 3:

Ուսումնասիրելով զինծառայողների իրավական կարգավիճակի ներքին առումները՝ Ժ. Ռոբեպլոն այն համեմատում է պետական ծառայողի կարգավիճակի հետ և նշում, որ ինչպիսին էլ լինի ծառայության կամ զբաղեցրած պաշտոնի բնույթը, զինծառայողները (թե՛ պայմանագրային, թե՛ պարտադիր զինվորական ծառայության) պետական այլ կազմակերպությունների ու մարմինների ծառայողների համեմատությամբ նույն կարգավիճակում են: Որպես միակ տարբերություն նա առանձնացնում է այն հանգամանքը, որ զինծառայողները ժամկետային առումով համեմատաբար ավելի երկարատև են իրականացնում իրենց ծառայողական պարտականությունները⁶:

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպչ-իրավական հիմքերի զարգացման ուղղություններից է զինվորական ծառայություններառող պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի ստեղծումը: Որպես քաղաքացիական վերահսկողության տարրեր կարելի է դիտել Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից բարձրագույն սպայական կազմին կոչումների շնորհման ու պաշտոնների նշանակման ընթացակարգը, զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների իրավունքներին ու օրինական շահերին վերաբերող հարցերի համատեղ քննարկումները պետական իշխանության տարբեր մարմինների և հասարակական կառույցների միջև:

Սոցիալական հատուկ նշանակություն ունի քաղաքացիական վերահսկողությունը զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ու ազատությունների պահպանման և սոցիալ-իրավական պաշտպանվածության նկատմամբ: Քանի որ ՀՀ-ում առայսօր չի եղել տվյալ ոլորտի հասարակական հարաբերությունների քաղաքացիական վերահսկողության կայուն համակարգ, հարկ է այդ հաստատությունը ներդրելիս օգտագործել նաև այլ երկրներում կիրառվող սկզբունքները: Օրինակ՝ Գերմանիայում զինծառայողներին տրամադրվող բազմակողմանի իրավական և գերատեսչական օգնության պարտականությունը, որը ամրագրված է Հիմնական օրենքի 35-րդ հոդվածում, իրականացվում է համաձայն «Պաշտպանության բնագավառում Բունդեստագի լիազոր անձի մասին» օրենքի, ըստ որի՝ դաշնային, տարածքային և համայնքային միավորումները պարտավոր են աջակցություն ցուցաբերել Չինված ուժերի ներկայացուցիչներին: Հիշյալ լիազոր անձը կոչված է «պաշտպանելու զինվորական համագգեստով քաղաքացիների հիմնական իրավունքները» և համարվում է «խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու հարցում Բունդեստագին օժանդակող մարմին»⁷:

Պետական ծառայության համակարգի գործառության կարևոր սկզբունքներից են պետական ծառայության հրապարակայնությունն ու մատչելիությունը, որոնցով ապահովվում է նաև նրա նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Որպես

⁶ Stu J. S. *Roqeplo*. Le statut des militaires. Paris, 1979, P. 46:

⁷ Stu «Wehrbeantragte des Deutschen Bundestages und die Streitkräfte der BRD». Truppenraxis, 1994, № 12:

պետության պաշտպանական համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատություն կարելի է դիտել զինծառայողների մասնագիտական միությունները, որոնք արդեն ստեղծվում են Ռուսաստանի Դաշնությունում՝ «Զինծառայողների կարգավիճակի մասին» օրենքի հիման վրա: Զինծառայողների մասնագիտական միությունների ստեղծումը պետք է, բնականաբար, կանոնակարգվի համապատասխան օրենսդրական ակտերով: Հայաստանի Հանրապետությունում այլանավորվում է ստեղծել մի խորհրդակցական մարմին (հասարակական խորհուրդ), որը պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման ընթացքում ապահովելու է ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և պաշտպանության նախարարության համագործակցությունը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Այդ մարմինը նպատակ ունի ապահովելու ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակայնության փոխհամաձայնեցված գործունեությունը:

Զինվորական ծառայության կազմակերպման, զինված ուժերում օրինակականության ու կարգապահության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեն նաև զինծառայողների պատասխանատվության ենթարկման՝ որպես նրանց վրա իրավական ներգործության միջոցների հարցերը: Հարկ է նշել, որ ՀՀ-ում դրանք դեռ ոչ լիովին են համապատասխանում միջազգային իրավական ակտերին: Այսպես, ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը կարգապահական զանցանք կատարած զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս որպես տույժի տեսակ նախատեսում է արտադատական կարգով կալանատանը մինչև տասը օր պահելը: Մինչդեռ ըստ Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին համաձայնագրի՝ յուրաքանչյուր կալանավորված անձ երեք, առավելագույնը՝ չորս, օրվա ընթացքում բերվում է դատավորի կամ դատական իշխանությանը օժտված այլ պաշտոնյայի մոտ, և նա իրավունք ունի դատարանից պահանջելու իր նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերանայում և իրեն տեղում իսկ ազատ արձակում, եթե կալանավորելու կամ ձերբակալելու մասին որոշումը դատարանը ճանաչում է անօրինական⁸: Ռուսաստանի Դաշնությունում այս հարցը կարգավորվել է հետևյալ կերպ. Պետական դուման նշված Համաձայնագիրը վավերացրել է հետևյալ վերապահումով՝ ՌԴ Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունում ամրագրված նույն դրույթը (չնայած այդ մասով նշված Համաձայնագրին հակասելուն) շարունակելու է կիրառվել մինչև ներպետական օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարումը, և նախատեսել է «Ռուսաստանի Դաշնությունում զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքի ընդունում⁹: Նշված խնդրի

⁸ Տես «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա» (ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 5-ին), հոդ. 5:

⁹ Տես Օ. Վ. Շարիկինա, նշ. աշխ., էջ 8:

լուծման ռուսաստանյան տարբերակը կարելի է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում՝ նախատեսելով զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին համապատասխան օրենքի ընդունում:

Զինվորական ծառայության կազմակերպարավական ապահովման զարգացման ուղղությունների ու հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է համակարգել զինվորական գործող օրենսդրությունը: Զինվորական ծառայության մասին գործող օրենսդրությունը բաղկացած է տարբեր իրավաբանական ուժ ունեցող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերից, որոնց ոչ համակարգված լինելը հաճախ հանգեցնում է դրանց դրույթների կրկնությունների կամ անհամապատասխանությունների: Զինվորական ծառայության մասին օրենսդրության մեջ առկա են ոչ հստակ սահմանումներ, որոնց գործնական կիրառումը հանգեցնում է որոշակի բարդությունների (օրինակ՝ «զինվորական ծառայություն» հասկացության գործող օրենսդրական սահմանումը լիարժեքորեն չի արտացոլում այդ տեսակի ծառայության էությունը): Միավորման դեպքում զինվորական օրենսդրությունը համակարգվում է առանց որևէ էական փոփոխության՝ միայն օրենսդրական բաղկացուցիչ մասերի ներքին համակարգվածության մշակմամբ: Օրինակ՝ Վ. Օզերովն առաջարկում է հրատարակել «Զինվորական օրենքների ժողովածու»¹⁰: Նման համակարգված նորմատիվ-իրավական ակտը հնարավորություն կտա ավելի դյուրին դարձնելու օրենսդրության կիրառությունը, ինչպես նաև հայտնաբերելու օրենսդրական բացթողումներն ու անճշտությունները և արդյունավետ կերպով վերացնելու դրանք:

Ավելի լուրջ հարց է զինվորական ծառայության մասին օրենսդրության փոխհամաձայնեցումը: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրության բաղկացուցիչ տարրերի այնպիսի համակարգում, որը նպատակաուղղված լինի կրկնությունների, հակասությունների վերացմանը, բացերի լրացմանը, օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի արդյունավետ կիրառմանը:

Զինվորական-ծառայողական հարաբերություններին, օրինականությանն ու իրավակարգի պահպանմանը վերաբերող հարցերի կարգավորման պրակտիկական վկայում է, որ անհրաժեշտ է զինվորական օրենսդրության կողիֆիկացում: Կարելի է ընդունել «Զինվորական օրենսգիրք», որը ոչ միայն ներառի զինվորական ծառայությանը վերաբերող հարցերը, այլև կարգավորի պետության ռազմական կազմակերպվածքի մյուս հարցերը՝ պաշտպանության բնագավառում պետական իշխանության մարմինների լիազորությունները, զինված ուժերի կիրառման ոլորտները, զինվորական ծառայության նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և այլն:

Որոշ մասնագետներ առաջարկում են ընդունել «Պաշտպանական բարեփոխումների մասին» օրենք, որով կարգավորվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետության ռազմական կազմակերպվածքի վերակազմավորումը, զինծառայողների սոցիալ-իրավական պաշտպանվածության միջոցների կատարելագործումը, զինծառայողների նյութական ապահովվածության մակարդակի բարձրացումը, բյուրոկրա-

¹⁰ Տես Վ. Ա. Օզերով, նշ. աշխ., էջ 17:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ՝
ՀԱՍՏԱՏՈՒՆ ԸՆԹԱՅՔ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐ



ՀՀ Պաշտպանության նախարար Մեյրան Օհանյանի հանդիպումը ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ իր պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ.

Երևան, «Գոլդեն Փեյխ», 2008 թ. հուլիսի 23



«Ռուբեժ 2008» հրամանատարաշտաբային համատեղ զորավարժության
կազմակերպիչները զորավարժության սցենարը ներկայացնում են
ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին,
ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին,
ՀԱՊԿ-ի և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների.

2008 թ. օգոստոսի 21



Ն.Ս.Օ.Տ.Տ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս
Գարեգին Բ-ն Հայրապետական սրբատառ կոնդակ է հանձնում
ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին.

Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ. մայիսի 20



Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության
անդամ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի լիակազմ նիստ.

Երևան, ՀՀ Կառավարության ընդունելությունների տուն,
2008 թ. օգոստոսի 21



Խորհրդակցություն ՆԱՏՕ-ի ներկայացուցիչների հետ
«Համատեղ աղեղ— Համատեղ նիզակակիր 2008»
գորավարժությունների շրջանակներում.

Երևան, 2008 թ. սեպտեմբերի 28



Վարչապետ Տիգրան Սարգսյանի, Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և կառավարության այլ անդամների շրջայցը Տավուշի մարզի
Իջևանի պաշտպանական դիրքեր.

2008 թ. հուլիսի 12



ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը,
ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ – Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ,
գեներալ-գնդապետ Յու. Խաչատուրովը,
ՀԱՊԿ-ի անդամ երկրների մի խումբ ներկայացուցիչներ
«Ռուբեժ 2008» զորավարժության ժամանակ.

2008 թ. օգոստոսի 21

տիզմի, որոշ ժամկետային զինծառայողների տրված անօրինական արտոնությունների վերացումը, զինվորական ծառայությունից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում զինծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելը, պայմանագրի տեսակների տարբերակումն ըստ զինվորական մասնագիտության կամ համապատասխան զինվորական պաշտոնի և այլն:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների հարցերը վերլուծելիս կարելի է նկատել, որ անհրաժեշտ է գործող օրենսդրությամբ նախատեսել նաև կադրային զինվորական ծառայություն, այսինքն՝ ծառայություն կամավոր հիմունքներով, մեծ արտոնությունների համակարգով և զինվորական ծառայությունից վաղաժամկետ կամավոր արձակվելու հնարավորությամբ: Կադրային զինվորական ծառայությունը պետք է համարվի երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը կամովին կատարելու ձևերից մեկը, և այն անցնելու հնարավորություն ընձեռվի թե՛ սպայական կազմին, թե՛ սերժանտներին ու ավագներին:

Եվ այսպես. ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովմանն առնչվող երկու խումբ խնդիրներ:

Առաջին խումբը ներառում է զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովման կատարելագործումը պայմանավորող խնդիրներ, մասնավորապես՝

– զինվորական-ծառայողական հարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման հիմքերի իրավական նշանակության հստակեցում,

– զինծառայողների սոցիալական ապահովվածության հարցերի իրավական կարգավորման համակարգի կատարելագործում,

– զինվորական ծառայության կազմակերպչիրավական ոլորտի հեռանկարային զարգացում,

– պաշտպանական բարեփոխումների հիմնավորված իրավական ապահովման մշակում,

– Ձինված ուժերում և այլ գորքերում զինվորական կարգապահության մակարդակի բարձրացում,

– զինվորական ծառայության ու զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի զարգացում:

Երկրորդ խումբը ներառում է զինվորական ծառայության իրավական հիմունքների կատարելագործման խնդիրներ, մասնավորապես՝

– զինծառայողների իրավունքների ու պարտականությունների, իրավական պատասխանատվության նշանակության ու առանձնահատկությունների սահմանում,

– զինվորական պաշտոնների ու զինծառայողների կարգավիճակի իրավական բովանդակության ձևակերպում, զինծառայողների ծառայողական առաջխաղացման գործնականում կիրառելի համակարգի վերաբերյալ օրենսդրության զարգացում,

– «զինվորական ծառայություն» և «զինծառայող» հասկացությունների գիտականորեն հիմնավորված հստակ սահմանում,

– պետական ծառայության և զինվորական ծառայության վերաբերյալ օրենսդրական հիմունքների միջև առկա որոշ հակասությունների, դրանց պատճառների պարզում ու վերացում,

– զինվորական ծառայության մեջ կիրառվող բոլոր սկզբունքների հստակ համակարգում և դասակարգում,

– զինվորական ծառայության կարգավորման նորմատիվ-իրավական ակտերի համակարգի սահմանում ու հետագա կատարելագործում:

Այսօր Հայաստանի Հանրապետության պաշտպանական բնագավառում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ, մասնավորապես, մշակվում և ներդրվում է զինվորական ծառայության՝ որպես յուրահատուկ ձևի գործունեության և զինծառայողների կարգավիճակի հարցերի իրավական կարգավորման վերաբերյալ հստակորեն մշակված հայեցակարգը: Ջինծառայողներին առաջադրվող խնդիրների լուծման արդյունավետությունը պայմանավորված է նաև տվյալ ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրության գործնական կիրառելիությամբ ու կայունությամբ՝ եղած բացերն ու անճշտությունները հնարավորինս նվազագույնի հասցնելու պայմանով:

ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВОЕННОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*Т. Т. КОЧАРЯН, старший лейтенант, кандидат юридических наук,
офицер Юридического управления МО РА*

РЕЗЮМЕ

В статье с учетом перспектив развития и совершенствования организационно-правовой основы обеспечения военной службы, на основе анализа опыта развитых стран и практики военной деятельности в РА, в рамках оборонных реформ предлагаются теоретически обоснованные решения данных проблем.

В частности, в целях дальнейшего совершенствования систематизированного организационно-правового обеспечения военной службы в РА выдвигаются конкретные предложения в отношении как принятия в рамках оборонных реформ новых законодательных актов, регулирующих правовые отношения в оборонной сфере РА, так и внесения определенных поправок и дополнений в действующие нормативно-правовые акты, что позволит восполнить пока еще существующие в оборонном законодательстве пробелы и устранить противоречия в отдельных положениях законов.

ORGANIZATION-LEGAL SUPPORT OF THE MILITARY SERVICE
IN THE REPUBLIC OF ARMENIA

*T. T. KOCHARYAN, Senior Lieutenant,
Candidate of Law, Officer at the Law Board of the MoD, RA*

SUMMARY

In this article, taking into account the perspectives of developing and improving organization-legal principles of ensuring military service, within the framework of the defense reforms the theoretically grounded solutions to the given problems are introduced on the basis of the analysis of the developed countries experience and the military activities practice in the RA.

Particularly, in order to further the improvement of systematized organization-legal support of the military service in the RA, concrete motions are put forward. They concern both passing new legislative acts within the framework of the defense reforms, which regulate legal relations in the RA defense sphere, and introducing certain amendments and supplements to the normative-legal acts currently in force. That will allow to make up still existing deficiencies in the defense legislation and eliminate contradictions in separate legal provisions.

ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի
նազմական և զինծառայողների հարցերով խորհրդական

Ձինված ուժերը պետական կառույցների համակարգում ունեն առանձնահատուկ տեղ՝ շոշափելի ազդեցություն գործելով պետական իշխանության վրա, և ոչ արդյունավետ վերահսկման դեպքում կարող են դուրս գալ օրենքով սահմանվող շրջանակներից՝ հանգեցնելով պետական կյանքի գերազանականացմանը և խոչընդոտելով զանազան հասարակական երևույթների բնականոն զարգացմանը¹: Պետության քաղաքացիական ու ռազմական ոլորտների միջև հավասարակշռված հարաբերությունների կազմակերպումը պետութենաշինության կարևոր խնդիրներից է, որը կոչված է ապահովելու հասարակության բոլոր շերտերի կայունությունը: Խնդիրը բարդանում է զինված ուժերի հարաբերականորեն «փակ» բնույթի պատճառով: ՈՒՍԽԻ կարևորություն են ստանում զինված ուժերի գործունեության թույլատրելիության ապահովմանն ուղղված իրավական միջոցները: Այս միջոցների շարքում առավել գործունեներից է ՁՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը: Դա այն գործիքն է, որի կիրառմամբ հանրային կամքը պետական քաղաքականության միջոցով իրեն է ենթարկում զինված ուժերը: Ինչպես նշում է ԱՄՆ-ի Անկախության հռչակագիրն ստորագրողներից մեկը՝ Ս. Ադամսը, «Եթե նույնիսկ երկրում զգացվում է ռազմական իշխանության անհրաժեշտություն... իմաստուն և հեռատես ժողովուրդը այն միշտ կպահի իր սևեռուն և զգոն հսկողության տակ»²: Քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է ՁՈՒ-ի ենթակայություն քաղաքացիական իշխանությանը և թափանցիկություն նրա հետ հարաբերություններում: ՁՈՒ-ի պատասխանատվության ոլորտում պետք է լինեն միայն այն հարաբերությունները, որոնք առաջադրվում են քաղաքացիական իշխանության կողմից:

Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատության ստեղծմանը և ձևավորմանը վերաբերող հստակ ձևակերպումներ չկան: Առաջին օրենսդրական հիշատակումը կարելի է համարել 1787 թ. սեպտեմբերի 17-ին ընդունված ԱՄՆ-ի Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող դրույթը. «Նախագահը Միացյալ Նահանգների բանակի և նավատորմի գլխավոր հրամանատարն է, առանձին նահանգների միլիցիայի գլխավոր հրամանատարը, երբ այդ

¹ Իրավագիտության ոլորտի մի շարք հեղինակներ հատկապես կարևորում են պետության կառուցվածքում ՁՈՒ-ի դերը և զինված ուժերում իրավունքի հարցերը: Օրինակ՝ Խրոպանյուկը ուսումնասիրում է հետևյալ հարցերը. ՁՈՒ-ն պետության մեխանիզմում, երկրի պաշտպանության գործառույթը և նրա փոխադարձ կապը պետության մյուս գործառույթների հետ, ՁՈՒ-ում գործող սցիպակական նորմերի առանձնահատկությունները, իրավունքի դերը ՁՈՒ-ի շինարարության և գործունեության մեջ (տես Վ. Ն. *Խրոպանյուկ*, Պետության և իրավունքի տեսություն: Ե., 1997):

² Բերվում է ըստ՝ *Մ. Փ. Կայրո*. Гражданский контроль над вооруженными силами. «Материалы о демократии» (<http://4uth.gov.ua/usa/russian/government/dmpaper12.htm>):

նահանգների միլիցիան զորակոչվում է Միացյալ Նահանգների իսկական ծառայության»³: Հաշվի առնելով այդ փաստաթղթի ընդունման պատմական ժամանակաշրջանը՝ պետք է համաձայնվել, որ նույնիսկ այս ոչ ամբողջական ձևակերպումն ուներ հեղափոխական նշանակություն: Բացի այդ, պետք է հաշվի առնել ԱՄՆ-ի Սահմանադրության ընդհանուր տրամաբանությունը՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանումը, որն ըստ էության հիմք է ծառայել ժողովրդավարության, այդ թվում և քաղաքացիական վերահսկողության հաստատության, գաղափարի զարգացման համար: Ինչպես գրում է Հ. Խաչատրյանը, «ԱՄՆ-ի Սահմանադրությունը, ներառելով ժամանակի առաջադեմ մտածողների և լուսավորիչների (Ջ. Լոք, Թ. Հոբս, Հ. Գրոտիոս, Վոլտեր, Շ. Մոնտեսքյո, Ժ. Ժ. Ռուսո, Գ. Դիդրո) պետաիրավական հայացքները, կարողացավ հաստատել նոր ապրելակերպ, մարդկանց նոր փոխհարաբերություններ, նոր պետականություն, որի հիմքում դրվեցին ժողովրդի սուվերենության, իրավական պետության, իշխանությունների տարանջատման, մարդու բնական և անբնական իրավունքների ու ազատությունների հիմնականգծի սկզբունքները»⁴: Հարց է ծագում, թե որոնք էին ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ այս հաստատության սահմանման պատճառները: Ըստ Մ. Ֆ. Քայրոյի՝ մեծաթիվ զինված ուժերը դիտվում էին որպես ԱՄՆ-ի ազատության և ժողովրդավարության համար սպառնալիք, քանի որ դրանց առկայությունը կհանգեցներ զինվորական ազնվականության կամ ավտոկրատիայի ձևավորմանը: Բացի այդ, դրանք սպառնում էին տնտեսական զարգացմանը, ինչպես նաև խաղաղության հաստատմանը, քանի որ «հիմնադիր հայրերը»^{*} այն կարծիքին էին, թե սպառազինությունների մրցավազքը հանգեցնում է պատերազմի⁵:

Իրավաբանական կամ քաղաքագիտական աղբյուրներում «քաղաքացիական վերահսկողություն» տերմինի փոխարեն հաճախ օգտագործվում են «ժողովրդավարական» կամ «ժողովրդավարական-քաղաքացիական վերահսկողություն» տերմինները⁶: Անշուշտ, նման մոտեցումը սխալ համարել չի կարելի, քանի որ քաղաքացիական վերահսկողության հիմնական նպատակը ժողովրդավարական արժեքների ամրապնդումն է: Սակայն վերահսկողության քաղաքացիական լինելն ինքնին չի ենթադրում, որ այն նաև ժողովրդավարական է: Օրինակ՝ թեև ֆաշիստական Գերմանիայում Ձինված ուժերը գտնվում էին կուսակցական, նույնն է, թե քաղաքացիական, վերահսկողության ներքո, սակայն այն չէր կարող համարվել ժողովրդավարական:

Մեր կարծիքով՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝ պետական և հասարակական, կամ արտապետական:

³ «United States Constitution». Cornell University Law School (www.law.cornell.edu/constitution/).

⁴ Հ. Խաչատրյան, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը: Ե., 1991, էջ 16:

^{*} ԱՄՆ-ի Սահմանադրական կոնվենտի մասնակիցներին ամերիկացիները հարգալից անվանում էին «հիմնադիր հայրեր»:

⁵ Տես Մ. Ֆ. Քայրո, նշ. աշխ.:

⁶ Տես «Democratic control over Armed Forces» (<http://www.mod.gov.lv/layouts/>):

Պետական վերահսկողությունն իրականացվում է պետական իշխանության բարձրագույն մարմինների կողմից ինչպես անմիջականորեն, այնպես էլ նրանց ստեղծած մշտապես գործող վերահսկիչ (հսկողական) մարմինների միջոցով (տեսչություններ, գործադիր իշխանության որոշ կենտրոնական մարմիններ (նախարարություններ, պետկոմիտեներ), ինչպես նաև զինվորական կառավարման մարմիններ): Այս վերահսկողական գործունեությունը կարելի է բաժանել վերգերատեսչական ու ներգերատեսչական պետական վերահսկողությունների⁷:

Պետական վերգերատեսչական վերահսկողություն են իրականացնում երկրի բարձրագույն ղեկավար հաստատությունները: Մասնավորապես՝ նախագահի կողմից այդ գործունեությունը կարող է իրականացվել զինված ուժերի ընդհանուր կառավարման, պաշտպանության կարևոր հարցերի լուծման և այլ եղանակներով: Նախագահը վերահսկողություն կարող է իրականացնել նաև իրեն առընթեր վերահսկողական կամ խորհրդակցական մարմինների, օրինակ, գլխավոր ռազմական տեսչության, կամ ազգային անվտանգության խորհրդի միջոցով^{*}: Վերջինիս կազմի մեջ սովորաբար ընդգրկվում են երկրի ուժային կառույցների ղեկավարները^{**}: Կառավարության կողմից վերգերատեսչական վերահսկողությունն իրականացվում է պաշտպանության ոլորտում գործադիր իշխանությանը տրված լիազորությունների կատարմամբ:

Դատական իշխանության վերահսկողությունն ընդհանուր բնույթի է: Պետական իշխանությունների համակարգում դատական իշխանությունը հանդես է գալիս որպես հավասարակշռող մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս օրենսդիր և գործադիր իշխանությունների գործողությունները պահպանելու իրավական շրջանակներում: Լինելով մյուս իշխանություններից անկախ՝ դատական իշխանությունը (դատարանները) հիմնվում է միայն օրենքի վրա և ենթարկվում է միայն օրենքին⁸: Դատական իշխանության մարմինները կոչված են ապահովելու, մի կողմից, պետության և անհատի, մյուս կողմից՝ պետական իշխանության մարմինների միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունը⁹:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ոլորտում կարևոր դեր ունի դատախազական հսկողությունը՝ հանձնի զինվորական դատախազության, այդ հսկողության նպատակն է Զինված ուժերում օրենքների ճիշտ ու միօրինակ կատարման, օրենքների խախտումների վերացման, զինձառաջողների ու

⁷ Տես «Военное право». Учебник для военно-учебных заведений ВС РФ. М., 1996:

^{*} ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ՀՀ Նախագահը կազմավորում է անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է ստեղծել խորհրդակցական այլ մարմիններ ևս:

^{**} ԳԴՀ-ում Զինված ուժերի քաղաքացիական ղեկավարման կարևոր օղակ է Ազգային անվտանգության խորհուրդը, որի կազմի մեջ են մտնում պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի նախարարները և ազգային հետախուզության ղեկավարը (տես Վ. Ն. *Խրոպակյուկ*, նշ. աշխ.):

⁸ Տես Վ. Ն. *Խրոպակյուկ*, նշ. աշխ., էջ 178:

⁹ Տես Վ. *Այվազյան*, Մարդու իրավունքներ. ուսումնական ձեռնարկ: Ե., 2002, էջ 226:

նրանց ընտանիքների անդամների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ապահովումը:

Հիմք ընդունելով այն տարածված տեսակետը, որ իշխանությունների տարանջատման սկզբունքի համաձայն օրենսդրական իշխանությունը համարվում է ավելի կարևոր¹⁰, պետական վերգերատեսչական վերահսկողության կարևորագույն բաղկացուցիչ մաս պետք է համարել խորհրդարանական վերահսկողությունը: Այսպես. Գերմանիայի ՋՈՒ-ի ներքին կառավարման հայեցակարգում սահմանված է. «Բունդետները՝ որպես ազատ, ժողովրդավարական, իրավական պետության բանակ, կազմում է գործադիր իշխանության մաս և ենթարկվում է քաղաքականության առաջնայնությանը*, հետևաբար նաև՝ խորհրդարանական վերահսկողությանը»¹¹:

Խորհրդարանական վերահսկողության հարցերը հանգամանորեն լուսաբանվել են Ձինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության կենտրոնի և Միջխորհրդարանական միության օժանդակությամբ հրատարակված խորհրդարանական ձեռնարկում¹²: Խորհրդարանը՝ որպես պետության օրենսդիր ներկայացուցչական մարմին, ժողովրդի իշխանության անմիջական կրողն է: Իշխանությունների տարանջատման սկզբունքի համաձայն՝ օրենսդիր իշխանությունը վերահսկում է գործադիր իշխանության գործունեությունը: Խորհրդարանական վերահսկողության ձևերն են՝ համապատասխան օրենքների ընդունումը, պաշտպանական բյուջեի հաստատումը, խորհրդարանական հարցումները, հարցապնդումները, այս կամ այն հարցի վերաբերյալ խորհրդարանական կամ արտախորհրդարանական լուսմները և այլն: Անշուշտ, մնան դեպքերում կարևորվում են քաղաքական կուսակցությունների դերը և քաղաքացիական վերահսկողության գործընթացներին մասնակցելու նրանց կամքը: Քաղաքական կուսակցությունների նպատակներից մեկն է ժողովրդավարական համակարգի մեջ անձանց ու խմբերի ներառումը և ժողովրդավարական գործընթացներում նրանց ներգրավումը¹³: Որոշ երկրներ չեն բավարարվել խորհրդարանի դասական գործառնություններով և ստեղծել են խորհրդարաններին կից կամ ենթահաշվետու՝ վերահսկողության այլ ժողովրդավարական հաստատություններ, ինչպիսիք են

¹⁰ Տես, օրինակ, Վ. Ն. *Խրոպանյուկ*, նշ. աշխ., էջ 168:

* Ինչպես նշում է գերմանական գեներալ Յ. Զյուբարտը, Գ-Ղ-ում «քաղաքացիական վերահսկողություն» տերմինի փոխարեն հաճախ օգտագործվում է «քաղաքականության առաջնայնություն» (*Primat de Politik*) տերմինը, որը զինձառայողների համար օրենքի նշանակություն ունի: Տվյալ պարագայում շեշտվում է այն սկզբունքը, որ Գ-Ղ-ն անվերապահորեն ենթարկվում է պետական ընդհանուր քաղաքականությանը, որը ՋՈՒ-ի գործունեության հիմնական ուղեցույցն է:

¹¹ «Konzeption der Inneren Führung» (http://www.innerefuhrung.bundeswehr.de/portal/a/zinfue/kcxml/04_Sj9SPykssy0xPLMnMz0vM0Y_QjzKLNzSON_cMAs1B2B5pFw0aCUVH1fj_zcVH1v_QD9gtyIckdHRUUA5ijPrw!!/delta/base64xml/L3dJdyEvd0ZNQUFzQUMvNEIVRS82XzEzXzdKOQ!!).

¹² Տես «Անվտանգության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն. սկզբունքներ, լծակներ և գործունեությունը: Խորհրդարանականների ձեռնարկ»: Լոզան, 2003, հմ. 5:

¹³ Տես «The role of democratic parties in the building of democracy». «Forum for the future of democracy—Moscow, 2006». Council of Europe, 2007:

օմբուդսմենի (այդ թվում՝ զինվորական հարցերով) հաստատությունը, մարդու իրավունքների պաշտպանության հարցերով մասնագիտացված հանձնաժողովները և այլն:

Օմբուդսմենի հաստատության առավելությունն այն է, որ նա իր գործողություններում ազատ է: Օրինակ՝ ի տարբերություն վերահսկողություն իրականացնող այլ մարմիններից, օմբուդսմենն իր նախաձեռնությամբ՝ առանց նախազգուշացման, կարող է այցելել յուրաքանչյուր զինվորական ստորաբաժանում, պահանջել անհրաժեշտ տեղեկույթ և այլն¹⁴: Իսկ մասնագիտացված հանձնաժողովի լավագույն օրինակը Բուլղեստագի՝ բողոքների հարցերով հանձնաժողովն է, եթե հաշվի առնենք, որ ԳԳՀ-ում դաշնային մակարդակով ընդհանուր իրավասության օմբուդսմենի հաստատություն գոյություն չունի: Հանձնաժողովի լիազորությունները մասամբ համընկնում են զինվորական օմբուդսմենի լիազորությունների հետ, այն է՝ պահանջել և ստանալ տեղեկույթ, փաստաթղթեր և դաշնային կառավարություն, դրան ենթակա վարչական մարմիններ ու այլ հանրային մարմիններ մուտք գործելու թույլտվություն: Այդ հանձնաժողովը կարող է լսել նրանց, ովքեր բողոք են ներկայացրել, ինչպես նաև վկաների ու փորձագետների և պահանջել դատարանների աջակցությունը: Հանձնաժողովը ամեն ամիս Բուլղեստագին ներկայացնում է զեկույց՝ դրանում ներառելով ինչպես բողոքների, այնպես էլ օրենսդրական միջոցների հետ կապված առաջարկությունների վերաբերյալ այն տեղեկությունները, որոնք պետք է քննարկվեն խորհրդարանում¹⁵: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ժողովրդավարական երկրներում գործադիր իշխանության մարմինները (այդ թվում նաև դրա մաս կազմող զինված ուժերը) իրենց գործունեության համար պատասխանատվություն են կրում խորհրդարանի և դրան առընթեր կառույցների առջև: Չինված ուժերի խորհրդարանական վերահսկողությունը նախատեսված է, որպեսզի օրենսդիրը տեղեկացված լինի զինված ուժերի կառավարման քաղաքականության մասին և օրենսդրական լծակներով ապահովի դրանց հասարակական օգտավետությունն ու ժողովրդավարական արժեքներին ենթակայությունը:

Պետական ներգերատեսչական վերահսկողությունը կարելի է ըստ այդ գործընթացում ներգրավված մարմինների հսկողական լիազորությունների բաժանել ընդհանուր և մասնագիտական հսկողության¹⁶: Այն իրականացվում է զինված ուժերի կառավարման պետական լիազոր մարմիններում ընդգրկված քաղաքացիական պաշտոնատար անձանց և ստորաբաժանումների միջոցով: Այսպես, ըստ Ջ. Մարշալի անվան անվտանգային հետազոտությունների եվրոպական կենտրոնի տնօրենի նախկին տեղակալ գեներալ Յ. Քյուբարտի՝ «գործադիր իշխանությունը քաղաքացիական պաշտպանության նախարարի միջոցով ղեկավարում է ՋՌԻ-ն և իրա-

¹⁴ Պաշտպանական ոլորտում Օմբուդսմենի հաստատության գործունեության մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Ավիսիյան*, Չինվորական օմբուդսմենի հաստատություն. դերն ու գործունեության առանձնահատկությունները: «ՀԲ», 2007, հմ. 4:

¹⁵ Տես «Center for the Study of Democracy» (<http://www.csd.bg/>):

¹⁶ Տես «Военное право». Учебник для военно-учебных заведений ВС РФ. М., 1996:

կանացնում ռազմական քաղաքականություն: Նրա (պաշտպանության նախարարի) ենթակայության տակ է գտնվում այն քաղաքացիական ծառայողների ապարատը, որոնք ունեն ռազմական ոլորտում աշխատելու համար համապատասխան գիտելիքներ և փորձ»¹⁷:

Բաց ժողովրդավարական արժեքային համակարգում որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ միջոց կարելի է դիտել «հասարակական, կամ արտապետական, վերահսկողությունը»: Օգտագործելով «արտապետական վերահսկողություն» պայմանական տերմինը՝ մենք նկատի ունենք այն հաստատությունները, որոնք պետական իշխանության մաս չեն կազմում, սակայն ակտիվ կերպով մասնակցում են երկրի պետական քաղաքականության իրականացմանը: Դրանք են՝ մամուլը, հասարակական կազմակերպությունները, եկեղեցին, նաև՝ երկրի քաղաքացիները:

Ազատ մամուլը, որը երբեմն անվանում են «չորրորդ իշխանություն», հասարակության հայելին է. այն արտացոլում է երկրում առկա դրական ու բացասական միտումները, վեր հանում դրանց ծագման պատճառները: Անցումային հասարակություններում մամուլի ուշադրությունը սովորաբար սևեռվում է ՋՈՒ-ի գործունեության վրա: Հաճախ հենց մամուլի հրապարակումների միջոցով են պետական մարմինները և հասարակությունը տեղեկանում ՋՈՒ-ում տեղի ունեցած բացասական դեպքերի մասին*:

Հարկ է նկատել, որ մամուլի վերահսկողությունը սերտորեն փոխկապված է հասարակական կազմակերպությունների՝ այդ ուղղությամբ վարած գործունեության հետ: Այս երկու հաստատությունները համատեղ հանդես են գալիս որպես քաղաքացիական հասարակության կայացման երաշխավոր: Հասարակական կազմակերպությունները գործունեություն են ծավալում հետևյալ ուղղություններով՝ տեղեկույթի հավաքում և վերլուծություն, իրավական օգնության տրամադրում և ուսուցում, համագործակցություն ՋԼՄ-ների հետ, պետական իշխանության հետ կապերի հաստատում¹⁸: Վերը նշված հաստատությունների շարքում այնքան էլ մեծ չէ հոգևոր իշխանության դերը: Սակայն ճիշտ ուղղորդման դեպքում այն կարող է կարևոր դեր խաղալ զինված ուժերի գործունեության վերահսկման գործում, մասնավորապես՝ զինծառայողների շրջանում մարդասիրական գաղափարների տարածման առումով: Շատ կարևոր է նաև զինված ուժերում հոգևոր սպասավորությունը, որը լայն տարածում ունի մի շարք երկրների զինված ուժերում**:

¹⁷ Տես «Гражданский контроль над вооруженными силами — улица с двухсторонним движением». «Зеркало недели», 20—26 июня 1998 г.:

* ՀՀ-ում մամուլի ազատության և տեղեկատվության հարցերը կարգավորվում են 2003 թ. սեպտեմբերի 23-ի «Տեղեկատվության ազատության մասին» և 2003 թ. դեկտեմբերի 13-ի «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներով:

¹⁸ Տես *С. Сабанов*. Внесудебные механизмы защиты прав человека (www.hro.org/ngo/articles/2006):

** Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի հետ 2008 թ. մայիսի 21-ին կայացած հանդիպման ժամանակ հոգևոր սպասավորների դերը հատուկ կարևորել է նաև ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը (<http://www.mil.am/arm/index.php?page=2&p=12&id=488&y=2008&m=08&d=22>):

նկատմամբ վերահսկողության գործում հոգևոր իշխանության և կրոնի ներգրավվածությունը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ: Այսպես, իսլամն ուսումնասիրող մի շարք գիտնականներ ժողովրդավարությունը և իսլամը համարում են անհամատեղելի երևույթներ: Բացի այդ, իսլամի պատգամներով են առաջնորդվում համաշխարհային ահաբեկչական ցանցերից շատերը: Իսլամական քաղաքագետ Ք. Սիդիքուին ժողովրդավարությունը բնորոշել է որպես «քաղաքական անհավատության» արդի գաղափարախոսություններից մեկը: Նրա կարծիքով՝ «Ժամանակակից աշխարհի քաղաքական ամենամեծ անհավատությունը ազգայնականությունն է, որին անմիջականորեն հետևում է ժողովրդավարությունը»¹⁹:

Քաղաքացիական հասարակության պարագայում զինված ուժերի նկատմամբ արտապետական վերահսկողության արդյունավետ միջոց կարող է լինել այդ գործընթացում նաև քաղաքացիների (անհատ անձանց) ներգրավվածությունը: Անշուշտ, քաղաքացիներն իրենց ընդհանուր սահմանադրական իրավունքներն իրականացնելիս ակամա հանդես են գալիս քաղաքացիական վերահսկողություն իրականացնող սուբյեկտի դերում: Դա կարող է արտահայտվել թե՛ ընտրելու ակտիվ կամ պասիվ իրավունք իրականացնելու, թե՛ իրավապաշտպան կազմակերպություններին անդամակցելու, թե՛ ՋԼՄ-ների միջոցով տեղեկույթ ստանալու ձևով: Սակայն որոշ երկրներ սահմանում են անմիջական վերահսկողության այլ մեխանիզմներ: Օրինակ՝ Լատվիայի ՋՈՒ-ի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության շրջանակներում քաղաքացիները համապատասխան կարգով իրավունք ունեն այցելելու զորամասեր, ծանոթանալու զինծառայողների կյանքի պայմաններին²⁰:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն իր ծագման վաղ փուլից սկսած համարվում է զինված ուժերի կառավարմանը քաղաքացիական հաստատությունների (պետական և ոչ պետական) մասնակցությունն ապահովող մեխանիզմների ամբողջություն, որի նպատակներն են՝ պետության քաղաքականությանը զինված ուժերի մասնակցության սահմանափակումը, հասարակության մեջ զինված ուժերի նկատմամբ վստահության մթնոլորտի ստեղծումը, զինված ուժերի գործառույթների իրականացման օրինականության ապահովումը, ինչպես նաև զինծառայողների իրավունքների պաշտպանությունը: Գեներալ Յ. Քյուբարտը բերում է Գերմանիայի օրինակը. «քաղաքացիական իշխանության և զինծառայողների միջև փոխհարաբերությունները հիմնվում են հաշվետու լինելու և թափանցիկության, ինչպես նաև ազգային պաշտպանության համար ընդհանուր պատասխանատվության սկզբունքների վրա: Դա նշանակում է, որ երկրի կառավարությունը սահմանում է պաշտպանական խնդիրները և համապատասխան ռեսուրսներով ապահովում դրանց իրականացումը, իսկ զինծառայողները, համապատասխան նպատակների հասնելու համար, զինված ուժերի մարտունակությունը պահում են բարձր մակարդակի վրա»²¹: Պատահական չէ նաև, որ 2004 թ. Դաշնային

¹⁹ Տես *Մ. Մարգարյան*, Իսլամը նոր աշխարհակարգում: «ՀԲ», 2007, հմ. 4:

²⁰ Տես «Democratic control over Armed Forces» (<http://www.mod.gov.lv/layouts/>):

²¹ «Гражданский контроль над вооруженными силами—улица с двухсторонним движением».

ժողովին Ռ-Գ Նախագահի հղած ուղերձում պաշտպանական բարեփոխումների մասով նշվում էր. «Բարեփոխումների համար ծախսվելիք միջոցների, երկրի պաշտպանունակության շահերի, ինչպես նաև սոցիալական չափանիշների ծավալները պարտադիր են դարձնում բանակում իրականացվող վերափոխումների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առկայությունը»²²:

Անշուշտ, ժողովրդավարացման տարբեր մակարդակներում քաղաքացիական վերահսկողությունը միատեսակ ընդունելության չի կարող արժանանալ, ինչը հատկապես ցայտունորեն արտահայտվեց նախկին սոցիալիստական երկրներում: Բեռլինյան պատի և «երկաթե վարագույրի» փլուզմանը հաջորդեց ժողովրդավարական արժեքային համակարգի ներթափանցումը սոցիալիստական ճամբարի երկրներ: Մակայն ժողովրդավարական նոր հաստատությունների, այդ թվում նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, տեղայնացումը այդ երկրներում ընթացավ տարբեր կերպ: Արևելաեվրոպական և մերձբալթյան երկրները, աշխարհագրական առումով, նաև՝ գաղափարապես մոտ լինելով Արևմտյան Եվրոպային, շատ արագ ընդունեցին նոր մոտեցումները և ժամանակի ընթացքում դարձան դրանց լիակատար կրողներ: Հենց այդ հանգամանքի հաշվառմամբ ժողովրդավարական միջազգային կառույցները այս երկրների միջոցով և օրինակով են ժողովրդավարական փորձը փոխանցում նախկին ԽՍՀՄ երկրների մի մասին*:

Ժողովրդավարացման նման խնդիրներ առկա էին նաև որոշ լատինաամերիկյան երկրներում, որոնք այս կամ այն չափով կրում էին ԽՍՀՄ ազդեցությունը: 1995 թ. պաշտպանության նախարարությունների ղեկավարների առաջին համաամերիկյան հանդիպման ժամանակ ներկաները վերահաստատեցին քաղաքացիական իշխանությունների ենթակայության տակ մնալու, սահմանադրության շրջանակներում գործելու և մարդու իրավունքները հարգելու Ձինված ուժերի պարտականությունը²³:

Իսկ ի՞նչ ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարացման գործընթացը Ձինված ուժերի բարեփոխումների վրա: Մեր երկրում այդ զարգացումներն ունեն իրենց առանձնահատկությունները: Վարաբաղյան հակամարտության ռազմական փուլին զուգահեռ և դրանից անմիջապես հետո Ձինված ուժերի կազմավորման գործընթացը բնականաբար չէր կարող հարթ ընթանալ: Փաստորեն, ՀՀ իշխանությունները պետք է միաժամանակ լուծեին երկու խնդիր. նախ՝

²² «Предпринимательское право, портал правовой поддержки предпринимательской деятельности» (<http://www.businesspravo.ru>).

* Մերձբալթյան պետությունները տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում ուսումնամեթոդական օժանդակություն են ցուցաբերում միջազգային անվտանգության և տարբեր ժողովրդավարական հաստատությունների կայացման գործում՝ կազմակերպում են սեմինարներ, համաժողովներ և այլն: Որպես նման համագործակցության օրինակ կարելի է դիտել նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն համուն խաղաղության» ծրագրի շրջանակներում անդրկովկասյան (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան) և մերձբալթյան (Լիտվա, Լատվիա, Էստոնիա) պետությունների 3+3 ձևաչափով համագործակցության վերաբերյալ առաջարկությունը, որը, սակայն, չկայացավ կողմերի՝ քաղաքական կամք չդրսևորելու պատճառով:

²³ Stu G. R. Vickers. Human rights and military conduct. A progress report (http://www.dtic.mil/doctrine/jel/jfq_pubs/1126.pdf):

փորձելին Չինված ուժերը համարել հնարավորինս որակյալ ու գիտակից կադրերով, ապա՝ ստեղծել «փոխզիջումային կառավարման համակարգ», որի շրջանակներում հնարավոր լիներ ղեկավարել հասարակության մեջ մեծ հեղինակություն վայելող հաղթանակած բանակի հրամանատարական կազմին, քանի որ պատերազմի ավարտից հետո վերջինս դժվարությամբ էր համակերպվում իր պասիվ դերին և ռազմական անգործությունը փորձում էր համակշռել հասարակական ակտիվությամբ՝ առավելապես միտված լինելով ինքնակառավարման: Այս ամենին գումարվում էր նաև այն, որ ԽՍՀՄ գոյության ընթացքում քաղաքացիական վերահսկողության հարցերը դուրս էին մնացել գիտական ուսումնասիրությունների շրջանակից: Անշուշտ, նման իրավիճակը հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Քաղաքացիական վերահսկողության յուրաքանչյուր դրսևորում կարող էր Չինված ուժերի ղեկավարության կողմից արժանանալ ոչ համարժեք վերաբերմունքի, դիտվել որպես անհարկի միջամտություն ՁՈՒ-ի գործունեությանը և խոչընդոտվել: Իսկ քաղաքացիական վերահսկողության ոչ բավարար մակարդակն ի վերջո հանգեցնում է Չինված ուժերի անսահմանափակ ազատության, ինչի հետևանքով անխուսափելի է դառնում բանակի ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Նման իրավիճակը բնորոշ է ամբողջատիրությունից ժողովրդավարությանն անցում կատարող բոլոր հասարակություններին:

Այս անբարենպաստ պայմաններում Հայաստանում (այդ թվում՝ Չինված ուժերում) սկիզբ առան ժողովրդավարական բարեփոխումները, որոնք պետք է ուրվագծելին Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ուղենիշները:

Բարեփոխումների սկզբնական փուլը հիմնականում միտված էր համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորմանը: 1995 թ. հանրաքվեով ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, այնուհետև՝ պաշտպանական ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ՝ «Չինապարտության մասին»*, «Պաշտպանության մասին», «Չինվորական ծառայություն անցնելու մասին» և այլն: Սահմանադրությամբ ամրագրվեցին Չինված ուժերի գործունեության ոլորտում ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության հիմնական գործառույթները, որոնք մասնաամսնվեցին «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներով: «Չինապարտության մասին» և «Չինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքներով սահմանվեցին Չինվորական ծառայություն անցնելու պայմանները, ժամկետները և առանձնահատկությունները: «Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքով սահմանվեց երաշխիքների և արտոնությունների համակարգը:

* «Չինապարտության մասին» ՀՀ օրենքն ընդունվեց 1991 թ. դեկտեմբերի 9-ին: Սակայն հետագա տարիներին օրենքում կատարվեցին այնքան էական փոփոխություններ, որ առաջացավ նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն: Բացի այդ, 1991 թ. դեկտեմբերի 9-ի օրենքի հիմքը կազմում էր նախկին ԽՍՀՄ նույնանուն օրենքը, որը բնականաբար հնացել էր և չէր կարող կարգավորել այդ բնագավառում ծագած նոր հասարակական հարաբերությունները (այդ մասին ավելի հանգամանորեն տես Հ. Ս. Պալյան, Ս. Գ. Մեդրակյան, Չինապարտության մասին ՀՀ նոր օրենքի նախագիծը՝ ներկայացված պաշտպանության նախարարության կողմից: «ՀԲ», 1997 թ., հմ. 1-2): ՈՒստի և 1998 թ. սեպտեմբերի 16-ին ընդունվեց «Չինապարտության մասին» ՀՀ նոր օրենքը:

Կարևոր նշանակություն ունեցավ նաև զինվորական կանոնագրերի ընդունումը, որոնք կարգավորիչի դեր խաղացին Զինված ուժերում իրավահարաբերությունների զարգացման գործում:

Հաջորդ փուլն ուղղված է Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործմանն ու նոր՝ գործուն, մեխանիզմների ստեղծմանը: Այս փուլում հասկապես կարևորվում է միջազգային օժանդակության դերը: Հարկ է նկատել, որ հենց միջազգային ժողովրդավարական կառույցների հետ ՀՀ համագործակցության ակտիվացումն ազդակ դարձավ Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատության զարգացման համար: Միջազգային կառույցների հետ հարաբերությունների զարգացման նախապայման համարվող տարբեր համագործակցային ծրագրերում ամրագրվել են Զինված ուժերում ժողովրդավարական արժեքների արմատավորման, մասնավորապես՝ դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինձառայողների իրավունքների պաշտպանության պահանջները²⁴: Օրինակ՝ «ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրում» (ԱԳ-ԳԾ) նշվում է, որ Հայաստանը ձգտում է զարգացնելու և ամրապնդելու ԶՈՒ-ի ժողովրդավարական ու քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, նպաստելու պաշտպանական (ռազմական) քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների ու հասարակական շրջանների ներգրավմանը²⁵:

Հարկ է նշել, որ համագործակցության զարգացումն ու նման ծրագրերի ընդունումն ազդեցություն ունեցան նաև ազգային օրենսդրության կատարելագործման նախաձեռնությունների խթանման վրա: Այսպես, 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության մեջ: Սահմանադրությամբ ամրագրվեց, որ «զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»²⁶: Սահմանադրությամբ նախատեսվեց, որ ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են քաղաքական կամ ռազմական բնույթի միջազգային պայմանագրերը²⁷, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, պատասխանատվության տեսակները, չափը, պատասխանատվության ենթարկելու ու հարկադրանքի միջոցները և դրանք կիրառելու կարգը²⁸: Սահմանադրությամբ նախատեսվեցին նաև

²⁴ Տես «ՀՀ-ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր», «ՀՀ-ՆԱՏՕ Պլանավորման և վերանայման գործընթաց» և այլ փաստաթղթեր:

²⁵ Տես «ՀՀ-ՆԱՏՕ ԱԳ-ԳԾ», կետ 1.6:

²⁶ «ՀՀ Սահմանադրություն», հոդ. 8.2: Ե., 2005:

²⁷ Տես նույն տեղում:

²⁸ Տես «ՀՀ Սահմանադրություն», հոդ. 83.5: Նշենք, որ սահմանադրական այս պահանջի կատարման նպատակով պետք է փոխվեր նաև ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնադրությունը, որն ընդունվել էր ՀՀ կառավարության որոշմամբ: Սակայն այն մինչ օրս համապատասխան փոփոխությունների չի ենթարկվել, այսինքն՝ ստեղծվել է մի արտառոց իրավիճակ, երբ ՀՀ ԶՈՒ-ում կարգապահական կանոնադրություն փաստորեն գոյություն չունի:

դրույթներ այնպիսի ժողովրդավարական հաստատության վերաբերյալ, ինչպիսին է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը²⁹:

Այս գործընթացի շրջանակներում ՀՀ ՁՈՒ-ում ստեղծվեց քաղաքացիական ծառայություն³⁰, ընդունվեց «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքը³¹: Մեր կարծիքով՝ այս օրենքի ընդունման հիմքում դրված է այն գաղափարը, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ենթադրում է ոչ միայն զինված ուժերի առօրյա գործունեության վերահսկում քաղաքացիական տարաբնույթ մեխանիզմներով, այլև քաղաքացիական մասնակցություն նրանց կառավարմանը: Պաշտպանության ոլորտի կառավարման օղակների քաղաքականացման նպատակն առաջին հերթին զինված ուժերի կառավարմանը քաղաքացիական անձանց առավել լայն մասնակցության ապահովումն է:

«ՀՀ-ՆԱՏՕ ԱԳ-ԳԾ» շրջանակներում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդակցականի հաստիք, ինչի նպատակը Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերում մասնագիտական մոտեցման ապահովումն է: Անշուշտ, սա ևս առաջընթաց քայլ էր, սակայն կարող է արդյունավետ լինել միայն համապատասխան գործնական հնարավորությունների և վարչական ռեսուրսի տրամադրման պարագայում³²:

Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատության նշանակությունը չէր կարող անտեսվել նաև երկրի անվտանգության ապահովման համար կենսական նշանակություն ունեցող փաստաթղթի՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» հեղինակների կողմից՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն» հասկացության սահմանման համաձայն՝ այն «պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով»: Ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքների թվում նշվում են նաև իրավունքի գերակայության ապահովումը և ժողովրդավարական արժեքների արմատավորումը: Եվ վերջապես՝ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» 2-րդ բաժնի «Բանակաշինություն» գլխում սահմանվում է, որ «Հայաստանի Հանրապետությունը հետևողական է Ձինված ուժերի նկատմամբ քաղա-

²⁹ Տես «ՀՀ Սահմանադրություն», հոդ. 83.1:

³⁰ Տես «ՀՀ-ՆԱՏՕ ԱԳ-ԳԾ», կետ 2.1.1:

³¹ Տես «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՕ-286-Ն ՀՀ օրենք, հոդ. 1339 («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 66 (590)):

³² Տես *Ա. Ավետիսյան*, նշ. աշխ.:

* ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում և հաստատվել ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:

քացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում»³³:

Այսպիսով՝ պետք է փաստել, որ մեր երկրում Ջինվաժ ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներն ստեղծված են: Կարծում ենք, որ առկա է նաև քաղաքական կամք՝ դրանց պատշաճ կենսագործունեությունն ապահովելու համար: Ընդ որում, մեր պարագայում այս հաստատության դերը կարևորվում է որպես զինծառայողների իրավունքների պաշտպանության նախապայման: Ուստի Ջինվաժ ուժերի առօրյա գործունեության կազմակերպման հարցերում քաղաքացիական հաստատությունների ակտիվ դերակատարությունը զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության գրավականն է: Հետևաբար, քաղաքացիական վերահսկողություն իրականացնող յուրաքանչյուր հաստատության կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի բոլոր հնարավորությունների օգտագործումը ժողովրդավարական արժեքների ամրապնդման, Ջինվաժ ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեթոդների կատարելագործման ու իրավագիտակցության աստիճանի բարձրացման համար:

³³ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13, 24:

К ВОПРОСУ О ГРАЖДАНСКОМ КОНТРОЛЕ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

*А. Р. АВЕТИСЯН, советник Защитника прав человека РА
по военным вопросам и вопросам военнослужащих*

РЕЗЮМЕ

Одним из наиболее важных правовых средств обеспечения законности деятельности вооруженных сил является гражданский контроль. Это инструмент, посредством которого общественная воля через государственную политику подчиняет себе вооруженные силы.

Гражданский контроль включает как государственную, так и общественную (внегосударственную) составляющие. Важнейшим компонентом государственного контроля является парламентский контроль, осуществляемый путем принятия законодательных актов, регулирующих отношения в сфере обороны, а также выделения финансовых средств при утверждении бюджета. В некоторых странах созданы подотчетные парламентам демократические учреждения гражданского контроля, такие, как институт омбудсмена, специализированные комиссии по защите прав человека в вооруженных силах и т. д.

Эффективными средствами общественной составляющей гражданского контроля являются пресса, различные общественные организации, церковь, а также вовлеченность отдельных индивидов.

Демократическими реформами в оборонной сфере РА предусматривается введение системы гражданского контроля над Вооруженными силами. Реформы включают принятие соответствующих законодательных актов, ре-

гулирующих отношения в оборонной сфере, создание института советника Защитника прав человека по военным вопросам и вопросам военнослужащих, гражданизацию штатов, не требующих специальной военной квалификации, а также совершенствование механизмов осуществления гражданского контроля. Часть запланированных работ уже осуществлена, остальные находятся в стадии окончательной разработки и внедрения.

TO THE ISSUE OF CIVIL CONTROL OVER THE ARMED FORCES

*A. R. AVETISYAN, Adviser to the Human Rights Defender of the RA
on military and military servicemen's issues*

SUMMARY

Civil control is one of the most important legal means ensuring the lawfulness of activities of the Armed Forces. That is the tool by means of which the public will subjects the Armed Forces to itself through the state policy.

Civil control includes both the State and public (extra-state) components. Parliamentary control is the most important component of the State control, which is implemented through passing legislative acts regulating relations in the defense sphere, as well as through allocation of funds when approving the budget. In some countries democratic institutions of civil control are formed which are accountable to parliaments such as the ombudsman institution, specialized commissions on human rights protection in the Armed Forces, etc.

The press, various non-governmental organizations and the Church as well as the involvement of separate individuals are efficient means of the public component of civil control.

Democratic reforms in the defense sphere of the RA envisage the introduction of the system of civil control over the Armed Forces. The reforms include passing the corresponding legislative acts regulating relations in the defense sphere, creating the institution of an adviser to the Human Rights Defender on military and military servicemen's issues, making the staff civil, that doesn't require special military qualification, as well as improving mechanisms of implementation of civil control. A part of the planned work is completed, and the rest is at the stage of elaboration and introduction.

ՆՈՐԱՍՈՒՏ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 17-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ

2008 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21



ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Ծայրագույն Պատրիարք
և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն
ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրի
բացման հանդիսավոր արարողության ժամանակ

2008 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ անկախության 17-ամյակին նվիրված տոնական միջոցառումների շրջանակներում ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը, ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանը, ՀՀ Կառավարության անդամներ, ՀՀ ՋՈՒ-ի բարձրաստիճան սպայակազմը, ՀՀ-ում դիվանագիտական առաքելություն իրականացնող ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք, հյուրեր այցելեցին Եռաբլուր պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու արցախյան ազատամարտում զոհված մարտիկների հիշատակին, ծաղկեպսակներ դնելու Ջորավար Անդրանիկի և Սպարապետ Վազգեն Սարգսյանի շիրիմներին: Այնուհետև միջոցառման մասնակիցները մեկնեցին Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ ներկա գտնվելու ՀՀ անկախության 17-րդ տարեդարձի առթիվ մատուցվող տուրք պատարագին՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Պատարագից հետո մասնակիցները ներկա եղան ՀՀ պաշտպանության նախարարության նորակառույց վարչական համալիրի բացման հանդիսավոր արարողությանը և օժմանը:



Պաշտպանության նախարարության նորակառույց համալիրը



Դրվագ համալիրի հանդիսավոր բացման արարողությունից.
աջից՝ Պաշտպանության նախարար Մեյրան Օհանյան



Ջորահանդես ՀՀ պաշտպանության նախարարության
նորակառույց համալիրի բացման կապակցությամբ



ՀՀ պաշտպանության նախարարության կոլեգիայի առաջին նիստը
նորակառույց համալիրում.
2008 թ. սեպտեմբերի 26



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը
նորակառույց համալիրում ընդունեց ԱՄՆ-ի «Խոշոր ձեռնարկությունների
վարչական ապարատի ղեկավարները ազգային անվտանգության համար»
(BENS) կազմակերպության պատվիրակությանը.

2008 թ. հոկտեմբերի 21

ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԿՈՒՏԱԿԱՅԻՆ-ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հ. Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ Կադրերի և ռազմական կրթության վարչության ավագ սպա-իրավաբան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀՀ Ձինված ուժերում իրականացվող բարեփոխումների գործընթացում կարևոր տեղ են գրավում այն խնդիրները, որոնք կապված են զինվորական ծառայություն անցնող անձանց ու նրանց ընտանիքների անդամների նյութական ապահովման և դրա իրավական հիմքերի ստեղծման հետ:

Այսօր ամենահրատապ և վիճահարույց խնդիրներից մեկը նշված կատեգորիայի անձանց բնակարանային ապահովման հարցն է: Դրա լուծված չլինելը բացասաբար է անդրադառնում պետության ռազմական կազմակերպվածքի վրա և հանգեցնում է Ձինված ուժերից զգալի թվով մասնագետների արտահոսքի:

Բնակարանային խնդիրը ցանկացած երկրի կարևոր սոցիալական հարցերից մեկն է: Բնակարանը մարդու կյանքի ու գործունեության համար նույնքան կարևոր է, որքան կարևոր են սնունդը, խմելու ջուրը, հագուստը: Դրա համար էլ բոլոր ժամանակներում հոգ է տարվել մարդկանց բնակարանային կարիքների բավարարման համար:

Շուկայական տնտեսավարմանն անցնելուց հետո, երբ Հայաստանի Հանրապետությունում գրեթե դադարեց պետական միջոցներով բնակարանային շինարարությունը, կատարվեց պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների մասնավորեցում, այսինքն՝ ապապետականացում: Դրա հետևանքով քաղաքացիների բնակարանային պահանջմունքները պետք է բավարարվեին ոչ թե սպառման հանրային ֆոնդի, այլ իրենց իսկ սեփականություն համարվող բնակելի տարածությունների հաշվին¹:

Սկզբունքորեն փոխվեց նաև քաղաքացիների բնակարանային իրավունքի նկատմամբ պետության վերաբերմունքը: Եթե Հայկական ԽՍՀ Սահմանադրության մեջ ամրագրված էր, որ քաղաքացիներն ունեն բնակարանի իրավունք, և նրանց տրվում էին այդ կարևոր սոցիալ-տնտեսական իրավունքի իրականացման երաշխիքներ², ապա Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրության մեջ այդ մասին խոսվում է միայն թռուցիկ կերպով:

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք»: Եվ միայն

¹ Տես Տ. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս: Ե., 2001, էջ 176:

² Տես «Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրություն», հոդ. 42:

վերջում ավելացված է, որ «Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»³: Իսկ Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-րդ կետով պետության առջև խնդիր է դրվում խթանելու բնակարանային շինարարությունը, նպաստելու յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական հնարավորությունների սղության պատճառով պետությունը չի կարող բոլորին երաշխավորել բնակարանների անհատույց տրամադրում: Սակայն, ինչ վերաբերում է զինձառայողներին, ապա այստեղ գործում է և պետք է գործի «բնակարանի մատչելիության սկզբունքը», այսինքն՝ այն պետք է հատկացվի անհատույց կամ մատչելի գնով:

Այսօր Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի զինձառայողների բնակարանային հարաբերությունները կարգավորվում են «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինձառայողների բնակարանային ապահովության մասին» ՀՀ կառավարության, համապատասխանաբար, 2005 թ. հունիսի 9-ի հմ. 947 և 2007 թ. մարտի 7-ի հմ. 384 որոշումներով հաստատված կարգերով, որոնք հիմնվում են «Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի վրա: Առաջին որոշմամբ սահմանվում է գոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինձառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը: Ըստ այդ կարգի՝ աջակցություն ստանալու իրավունք ունեն ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ գոհված (մահացած) զինձառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքների անդամները, զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինձառայողները, որոնց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրվել է գոհվածի (մահացածի) ընտանիքի անդամի կամ հաշմանդամի կարգավիճակը հավաստող տեղեկանք: Երկրորդ որոշմամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինձառայողներին բնակարանային հաշվառման վերցնելու, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները զինձառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասի կամ բնակարանի ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու պայմանները:

³ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 34: Ե., 2005:

Անշուշտ, իրենց սոցիալական պետություն հռչակած երկրներում միշտ էլ պետական մակարդակով նախատեսվել և իրականացվել են զինծառայողների բնակարանի իրավունքի՝ որպես սահմանադրական կարևորագույն սոցիալ-տնտեսական իրավունքներից մեկի արդյունավետ կենսագործումն ապահովող միջոցառումներ: Նշվածի վառ ապացույցն է զինծառայողների բնակարանային կարիքների բավարարման նոր համակարգը, որը 2005 թվականից հաջողությամբ կիրառվում է Ռուսաստանի Դաշնության Ջինված ուժերում⁴: Մինչ նոր համակարգին անցնելը ՌԴ-ում տվյալ խնդրի կարգավորման նպատակով կիրառվում էին ինչպես սոցիալական օգտագործման⁵ բնակարանային ֆոնդերի հաշվին բնակելի տարածություն հատկացնելու, այնպես էլ բնակարանների ձեռքբերման համար տարբեր տեսակի սուբսիդիաների ձևով դրամական միջոցներ տրամադրելու մեխանիզմներ, որոնցից էր, օրինակ, «Պետական բնակարանային սերտիֆիկատներ» ենթածրագիրը, որը գործում է մինչ օրս⁴: Երկար տարիների քննարկումներից հետո ընդունվեց այս կատեգորիայի անձանց բնակարանային պահանջարկները բավարարելու նոր համակարգի հայեցակարգ, որն սկզբնական շրջանում կոչվում էր «Կուտակային համակարգ»⁵, իսկ հետագայում վերանվանվեց «Կուտակային-հիպոտեկային համակարգ»: Անհրաժեշտ է նշել, որ համապատասխան իրավական ակտ չլինելու պայմաններում չէր կարելի խոսել նոր համակարգի շրջանակներում բնակարանով ապահովման հստակ մեխանիզմների մասին: Այդ իսկ պատճառով էլ ընդունվեց «Ջինվածառայողներին բնակարանով ապահովելու կուտակային-հիպոտեկային համակարգի մասին» օրենք, որով սահմանվում են բնակարանով զինծառայողների

⁴ Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության համար առավել իրատեսական է վերոնշյալ հարցի կարգավորման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնության որոշեցրած քաղաքականությունը:

⁵ ՌԴ-ում բնակարանի կարիք ունեցող քաղաքացիների խնդիրները լուծվում են պետական և հանրային սեփականություն հանդիսացող բնակարանային ֆոնդի օբյեկտների հաշվին, որոնք դասվում են սոցիալական օգտագործման բնակարանային ֆոնդերի թվին:

ՀՀ-ում իրավասու մարմիններն ընդունել են մի շարք նորմատիվային ակտեր, մասնավորապես, ՀՀ կառավարության 1998 թ. փետրվարի 18-ի հմ. 95 որոշմամբ ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների տնօրինության տակ գտնվող շենքերն ու շինությունները սեփականության իրավունքով հանձնվել են համապատասխան համայնքներին՝ բնակելի ֆոնդի վերածելու նպատակով, ինչի հետևանքով ՀՀ-ում փաստորեն ձևավորվել է բնակարանային նոր՝ համայնքային, բնակարանային ֆոնդ: Այսպիսով՝ ներկայումս ՀՀ ամբողջ բնակելի տարածությունը բաժանվում է երկու հիմնական ֆոնդերի՝ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող (համայնքային) բնակարանային ֆոնդի և քաղաքացիների սեփականությունը կազմող (անհատական) բնակարանային ֆոնդի:

⁴ Стu «О подпрограмме «Государственные жилищные сертификаты» на 2004—2010 годы, входящей в состав федеральной целевой программы «Жилище» на 2002—2010 годы: Постановление Правительства Российской Федерации от 20 ноября 2003 года № 700» СЗ РФ. 2003, № 48, с. 4676:

⁵ Стu З. X. Акчурин. Переход к накопительной системе обеспечения жильем военнослужащих: миф или реальность. «Право в Вооруженных Силах» (вкладка в журнал), 2003, № 8:

ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգի իրավական, կազմակերպական, տնտեսական և սոցիալական հիմունքները* :

Իսկ ո՞վ կարող է լինել կուտակային-հիպոտեկային համակարգի մասնակից: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ սույն համակարգը տարածվում է՝

- այն զինծառայողների վրա, որոնք 2005 թ. հունվարի 1-ից հետո ավարտել են բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններ և ստացել առաջին սպայական կոչումներ, ընդ որում, ցանկության դեպքում նշված համակարգի մասնակիցներ կարող են դառնալ նաև տվյալ կատեգորիայի այն անձինք, որոնք զինվորական ծառայության են անցել մինչև 2005 թ. հունվարի 1-ը,

- այն զինծառայողների վրա, որոնք 2005 թ. հունվարի 1-ից հետո գորակոչվել են զինվորական ծառայության պահեստագործից և կնքել զինվորական ծառայության անցման առաջին պայմանագրերը,

- այն ենթասպաների վրա, որոնց զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը, հաշվված 2005 թ. հունվարի 1-ից, կազմում է երեք տարի, ընդ որում, ցանկության դեպքում նշված համակարգի մասնակիցներ կարող են դառնալ նաև այն ենթասպաները, որոնք զինծառայության են անցել մինչև 2005 թ. հունվարի 1-ը,

- այն շարքայինների, սերժանտների, ավագների վրա, որոնք զինվորական ծառայության անցման երկրորդ պայմանագրերը կնքել են 2005 թ. հունվարի 1-ից ոչ շուտ և ցանկություն են հայտնել դառնալու կուտակային-հիպոտեկային համակարգի մասնակիցներ:

Կուտակային-հիպոտեկային համակարգի էությունն այն է, որ դրա մասնակից զինծառայողների համար երաշխավորվում է սեփականության իրավունքով մշտական բնակարան ձեռք բերելու համար անձնական հաշիվների վրա համապատասխան միջոցների հաշվանցում՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք մինչև ծառայության անցնելն ապահովված եղել են բնակարանով, թե ոչ: Ամեն տարի զինծառայողի անձնական հաշվին ավելանում է որոշակի գումար, որը համարժեք է մոտավորապես 3 մ² բնակատարածության արժեքին: Այսպիսով՝ ծառայության քսան տարիների ընթացքում կուտակված գումարը համակարգի յուրաքանչյուր մասնակցին հնարավորություն է տալիս զորացրվելուց հետո սեփականության իրավունքով ձեռք բերելու բնակարան⁶:

Եթե զինծառայողը զորացրվում է մինչև ծառայության 10 տարին լրանալը, ապա նա զրկվում է կուտակված միջոցներն ստանալու հնարավորությունից: Իսկ եթե զորացրումը տեղի է ունենում ծառայության 10–20-րդ տարում և այն էլ հարգելի (կազմակերպական-հաստիքային միջոցառումների, առողջական վիճակի և այլ)

* Ընդունվել է Ռ-Գ Պետական դումայի կողմից 2004 թ. օգոստոսի 5-ին:

⁶ Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Александров. Что рядовым ждать от генералов? «Российская газета», 9 мая 2002 г.; Б. Талов. Именная квартира к дембелю. «Российская газета», 8 июня 2001 г.; В. Сокирко. Армия с человеческим лицом. «Московский комсомолец», 10 июня 2001 г.; М. Янович. Жилье для военных: копить или нет? «Российская газета», 28 мая 2002 г., և այլն:*

պատճառով, զինծառայողն ստանում է կուտակված միջոցները և դրանք կարող է օգտագործել իր բնակարանային հարցի ինքնուրույն կարգավորման համար: Եթե զինծառայողի ծառայության ժամկետը 20 տարուց ավելի է, նա կարող է երկարատև ծառայության շնորհիվ կուտակված լրացուցիչ միջոցների հաշվին սեփականության իրավունքով ձեռք բերել ավելի հարմարավետ բնակարան, ինչն էլ նպաստում է, որ զինծառայողը շահագրգռված լինի ծառայելու ավելի երկար ժամանակ:

Կուտակային համակարգին ոչ պակաս, քան երեք տարվա մասնակցությունից հետո զինծառայողը ձեռք է բերում արդեն իսկ կուտակված միջոցների օգտագործմամբ հիպոտեկային վարկ ստանալու իրավունք: Հետագայում հիպոտեկային վարկի պարտքի հիմնական մասը պետք է մարի պետությունը: Այսպիսով՝ զինծառայողները բնակարան ձեռք բերելու հնարավորություն են ստանում իրենց կարիերայի սկզբնական փուլում:

Եթե զինծառայողը սեփականության իրավունքով ձեռք է բերում բնակարան, սակայն չի բնակվում այնտեղ, նա կարող է այն հանձնել վարձակալության և բնակարանի օգտագործման դիմաց ստանալ համապատասխան եկամուտ:

Հարկ ենք համարում նշել, որ կուտակային-հիպոտեկային համակարգի պայմաններում զինծառայողը շահագրգռված է ծառայելու որքան հնարավոր է երկար, քանի որ պետության կողմից փոխանցվող միջոցների գումարն ուղիղ համեմատական է ծառայության ժամկետի տևողությանը: Իսկ սեփական նախաձեռնությամբ պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում զինծառայողն ստիպված է լինում մարելու հիպոտեկային վարկի գումարը սեփական միջոցների հաշվին: Միևնույն ժամանակ, նա պետությանը պետք է վերադարձնի պետբյուջեից իր անձնական հաշվին փոխանցված միջոցները:

Ինչպես իրավացիորեն նշում են մասնագետները, վերոնշյալ համակարգն այսօր առավել քան հրատապ է մեծ վարչական կենտրոնների համար, որտեղ չկա ծառայողական բնակարանային ֆոնդ: Հիպոտեկային վարկի միջոցով ձեռք բերված բնակարանը շարունակում է մնալ որպես զինծառայողի սեփականություն անգամ այն դեպքում, երբ նա տեղափոխվում է ծառայության նոր վայր՝ պահպանելով ծառայողական բնակարան ստանալու իրավունքը⁷:

Այսպիսով՝ բնակարանով զինծառայողների ապահովման նոր համակարգի խնդիրներն են.

- զինծառայողներին պետության հաշվին առանձին բնակարաններով ապահովելու համակարգից անցում ըստ բնակության վայրի սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար դրամական միջոցների կուտակման համակարգին,
- կուտակային-հիպոտեկային համակարգին առնվազն երեք տարի մասնակցությունից հետո հիպոտեկային վարկի միջոցով բնակարանի ձեռքբերման հնարավորություն,

⁷ Տես *И. Иванов. Сколько ждать офицерского новоселья? (Для лейтенантов 2004 года уже начали копить квартирные деньги). «Российская газета», 16 августа 2002 г.:*

- զինվորական ծառայությունն անընդմեջ (երկարատև) շարունակելու հարցում շահագրգռվածության շարժառիթի հիման վրա զինվորական կադրերի (առաջին հերթին՝ սպայական կազմի) պահպանում:

Բնակարանով զինծառայողներին ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգին անցումը ենթադրում է մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես՝

- բնակարան ձեռք բերելու համար զինծառայողների անձնական հաշիվներին պետական միջոցների ամենամյա փոխանցում,



ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինծառայողներին հատկացվող ծառայողական բնակարանների բաշխման և նորակառույց բնակչների հանդիսավոր բացման արարողությունը.

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը կտրում է ժապավենը, Երևան, Աջափնյակ թաղամաս, 2008 թ. օգոստոս

- դրամական միջոցների կուտակում՝ զինծառայողի անվանական կուտակային հաշվին պետական հատկացումների ամենամյա փոխանցման ճանապարհով,

- կուտակային-հիպոտեկային համակարգին մասնակցության երեք տարին լրանալուց հետո համակարգի մասնակիցները սեփական նախաձեռնությամբ կարող են օգտագործել անվանական հաշվի վրա գտնվող կուտակված միջոցները՝ հիպոտեկային վարկի օգտագործմամբ սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար: Տվյալ դեպքում վարկը տրամադրվում է բանկի կողմից՝ ձեռք բերվող բնակարանի գրավի դիմաց:

Ընդ որում, միջոցների կուտակման գործընթացը շարունակվում է նաև հիպոտեկային վարկի օգտագործմամբ սեփականության իրավունքով բնակարան ձեռք

բերելուց հետո, ինչը հնարավորություն է տալիս հետագայում բարելավելու բնակարանային պայմանները:

«Ջինժառայողներին բնակարանով ապահովելու կուտակային-հիպոտեկային համակարգի մասին» օրենքի ընդունումից հետո ամեն տարի պետբյուջեում նախատեսվում են հատկացումներ, որոնք օգտագործվում են համակարգի մասնակիցների անվանական կուտակային հաշիվների վրա փոխանցումներ կատարելու համար: Այդ միջոցները տնօրինում են գործադիր իշխանության այն մարմինները, որտեղ օրենքով նախատեսված է զինվորական ծառայություն: Վերջիններիս հայտի հիման վրա դրամական միջոցները պետբյուջեից փոխանցվում են համակարգի ղեկավարման նպատակով ստեղծված մարմնի առանձին հաշվին: Այդ դրամական միջոցները հավատարմագրային կառավարմամբ հանձնվում են ղեկավար կազմակերպությանը (կազմակերպություններին), որպեսզի կուտակային միջոցները բազմապատկվեն ներդրումային ճանապարհով եկամուտ ստանալու շնորհիվ: Այնուհետև զինժառայողի ցանկությամբ դրամական միջոցներն ուղղվում են ձեռք բերվող բնակարանի գնմանը կամ հիպոտեկային վարկի նախնական վճարի մուծմանը⁸:

Կուտակային-հիպոտեկային համակարգը զինժառայողին ընձեռում է ընտրության հնարավորություն. կա՛ն ամբողջ ծառայության ընթացքում կուտակել միջոցներ, կա՛ն հիպոտեկային վարկի միջոցով բնակարան ձեռք բերել դեռ ծառայության ընթացքում:

Կուտակային-հիպոտեկային համակարգի առավելությունն այն է, որ դրա շնորհիվ զինժառայողը բնակարանը ձեռք է բերում սեփականության իրավունքով: Եթե զինժառայողը որոշում է զինված ուժերից գորացրվել, ապա պետության կողմից չմարված մնացած վճարումները կատարվում են զինժառայողի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Հիպոտեկի օգտագործման հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս սեփականության իրավունքով գնելու բնակարան ցանկացած պահի՝ չսպասելով ծառայության ժամկետի ավարտին: Այն ընձեռում է նաև բնակարանի գտնվելու վայրի և չափերի ընտրության հնարավորություն՝ ըստ զինժառայողի ցանկության և հնարավորության: Բացի այդ, հիպոտեկի դեպքում վերանում է ծառայության ամբողջ ընթացքում հավաքված միջոցների արժեքազրկման ռիսկի գործոնը: Ընդ որում, հիպոտեկային վարկավորման և կուտակային համակարգի միջև ընտրության հիմնական չափանիշն է բնակարանի գնաճի և քաղաքացու եկամուտների արժեքազրկման աճման տեմպերի հարաբերությունը: Որպես կանոն, այսօր բնակարանի պահանջարկի գործոնը հանգեցնում է այն բանին, որ բնակարանի գնաճի տեմպերը գերազանցում են արժեքազրկման տեմպերը: Այդ իսկ պատճառով ձեռնադրում է բնակարան գնել ավելի վաղ շրջանում:

⁸ Այս մասին ավելի հանգամանորեն տես «Федеральный закон Российской Федерации от 20 августа 2004 года № 117-ФЗ «О накопительно-ипотечной системе жилищного обеспечения военнослужащих» (принят Государственной Думой 5 августа 2004 года, одобрен Советом Федерации 8 августа 2004 года)», гл. 2—4:

Ինչպես շեշտում են մասնագետները, առաջարկվող կուտակային-հիպոտեկային համակարգի շրջանակներում հիպոտեկային վարկավորման օգտին կատարված ընտրությունը տնտեսապես արդարացված է, քանի որ հիպոտեկային վարկային դրույքն ավելի փոքր է կամ առնվազն հավասար բնակարանի գնի աճման տեմպերին, մինչդեռ կուտակային համակարգի շնորհիվ կուտակված միջոցները ժամանակի ընթացքում բնակարանի արժեքի համեմատությամբ արժեքազրկվում են: Բացի այդ, հիպոտեկի օգտագործումը հնարավորություն է տալիս հաստատագրելու բնակարանի գինն ու մակերեսը և այդպիսով խուսափելու բնակարանի գնաճի նկատմամբ կուտակային միջոցների նվազ աճման ռիսկի հավանականությունից:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել այն հանգամանքը, որ սույն ծրագրի մասնակիցներն են միայն զինվորական ծառայություն անցնող անձինք:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է ուրվագծել հիպոտեկային վարկավորման հետևյալ սխեման. զինծառայողը՝ որպես քաղաքացի, կարող է բնակարան ձեռք բերելու նպատակով ցանկացած ժամանակ բանկից վարկ վերցնել՝ որպես կանխավճար վճարելով բնակարանի գնի որոշակի գումարը (հիմնականում՝ 15–30 %-ը): Պետությունը կուտակային-հիպոտեկային վարկավորման համակարգի մասնակցին օգնություն է ցուցաբերում սկզբնական վճարը մուծելու համար անհրաժեշտ գումար հավաքելու (կուտակելու) հարցում: Որպես կանոն, բնակարանի գնման կանխավճարը ֆինանսավորվում է առաջին տարիներին (3 տարուց ոչ պակաս) զինծառայողի անձնական հաշվին գտնվող կուտակված միջոցների հաշվին: Հետագա ամենամյա կուտակային միջոցները զինծառայողն օգտագործում է հիպոտեկային վարկը մարելու համար:

Անձնական հավելյալ խնայողությունների աճման դեպքում (պաշտոնի, կոչման բարձրացում) զինծառայողի ցանկությամբ կարելի է կա՛ն կրճատել բնակարանի գնման ժամկետները, կա՛ն ընդարձակել ձեռք բերվող բնակարանի մակերեսը: Աստիճանաբար աճող դրամական բավարարման դեպքում հիպոտեկային վարկավորման մարման վճարումների ժամանակացույցը կարելի է կազմել այնպես, որ առաջին տարիներին զինծառայողի անձնական բյուջեի հաշվին կատարվող վճարումները լինեն որքան հնարավոր է փոքր, բայց ունենան հետագայում աճման միտում՝ դրամական բավարարման ինդեքսավորման, ինչպես նաև զինծառայողի ծառայողական առաջխաղացման հաշվառմամբ:

Փաստորեն, նոր մեխանիզմի էությունն այն է, որ յուրաքանչյուր զինծառայողի անձնական հաշվին պետությունը բնակարան ձեռք բերելու նպատակով հաշվանցում է որոշակի քանակությամբ դրամական միջոցներ: Առնվազն երեք տարի ծառայելուց հետո զինծառայողը այդ միջոցների օգտագործմամբ կարող է հիպոտեկային համակարգի միջոցով սեփականության իրավունքով ձեռք բերել բնակարան: Որպես արդյունք՝ զինծառայողը բնակարանն ստանում է ապառիկ կարգով, որի մարումը ծառայության ամբողջ ընթացքում նրա փոխարեն կատարում է պետությունը:

Խոսելով կուտակային-հիպոտեկային համակարգի ներդրման մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր պետության տնտեսական ոլորտի առկա հարա-

ճուն զարգացումը, ինչպես նաև այսօր ՀՀ բանկային համակարգում հիպոտեկային վարկավորման ինտենսիվ քաղաքականության իրականացումը, հնարավորություն են տալիս տվյալ համակարգը կիրառելու նաև հայկական բանկում՝ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բացի այդ, մեր կարծիքով, կուտակային-հիպոտեկային համակարգի կենսագործումը հնարավորություն կընձեռի՝

- բարելավելու զինծառայողների կոլեկտիվներում և նրանց ընտանիքներում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը,

- զինծառայողների մեջ վստահություն ձևավորելու իրենց ընտանիքներին քնակարանով ապահովելու հարցում,

- փոխհատուցելու այն սահմանափակումները, որոնք կապված են զինվորական ծառայության՝ որպես կյանքի համար վտանգավոր հատուկ պետական ծառայության հետ,

- վերականգնելու սոցիալական արդարությունը,

- հաստատելու և ամրապնդելու զինծառայողների՝ որպես պետության առանձնահատուկ պաշտպանության ներքո գտնվող քաղաքացիների կարգավիճակը:

Ավարտելով այս համառոտ քննարկումը՝ հարկ ենք համարում նշել, որ զինծառայողների բնակարանային խնդիրները, հատկապես՝ վերջին տարիներին, եղել են Հայաստանի Հանրապետության կառավարության և պաշտպանության նախարարության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ասվածի վառ ապացույցն այն է, որ վերջերս ՀՀ Պաշտպանության նախարարը հերթական անգամ մասնակցեց պաշտպանության նախարարության կողմից զինծառայողներին հատկացվող ծառայողական բնակարանների բաշխման և բնակչների հանդիսավոր բացման արարողությանը: Հավաքվածներին շնորհավորանքի խոսքեր հղելով՝ Նախարարը խոսեց նաև զինծառայողներին բնակարանով ապահովելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին՝ նշելով, որ այս տարի Երևանում և սահմանամերձ շրջաններում նախատեսվում է կառուցել և շահագործման հանձնել շուրջ 450 բնակարան: Վերջում նա ավելացրեց, որ մշակվում է նաև հիպոտեկային վարկի հայեցակարգ՝ ինչպես հիմնական, այնպես էլ ծառայողական բնակարանների կառուցման համար: Գործընթացն անմիջականորեն հսկվում և իրականացվում է ՀՀ վարչապետի կողմից. կարճ ժամկետներում լուծվելու է նաև այդ խնդիրը⁹: Հուսով ենք, որ սույն վերլուծությունը կօգնի ՀՀ-ի համար նման համակարգի մշակմամբ զբաղվող մասնագետներին՝ ծանոթանալու արտասահմանյան փորձին և ստեղծելու մեր պայմանների համար ավելի կատարյալ համակարգ:

⁹ Տես «Հայ զինվոր», 2008 թ. հունիսի 26 – օգոստոսի 2, հմ. 29 (742):

ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА
НАКОПИТЕЛЬНО-ИПОТЕЧНОЙ СИСТЕМЫ
ОБЕСПЕЧЕНИЯ ЖИЛЬЕМ

*А. И. ГЕВОРКЯН, старший лейтенант, старший офицер-юрист
Управления кадров и военного образования МО РА,
соискатель кафедры гражданского права юридического факультета ЕГУ*

РЕЗЮМЕ

Вопрос квартирного обеспечения военнослужащих и членов их семей является одной из актуальнейших проблем их социально-правовой защиты.

Республика Армения, исходя из своих экономических возможностей, не в состоянии гарантировать безвозмездное предоставление квартир. В связи с этим были разработаны различные механизмы обеспечения военнослужащих и их семей жильем.

Одним из перспективных механизмов является концепция ипотечного кредита, которая уже внедряется в РФ. Концепция включает накопительно-ипотечную систему квартирного обеспечения, которая предоставляет военнослужащим возможность выбора: накопить за время службы средства для приобретения квартиры после демобилизации или же по ипотечному кредиту приобрести жилье в начальный период с погашением задолженности в течение дальнейшей службы.

PERSPECTIVES OF THE INTRODUCTION OF THE SAVINGS
AND MORTGAGE SYSTEM FOR HOUSING
INTO THE RA ARMED FORCES

*H. I. GEVORGYAN, Senior Lieutenant, Senior Officer-legal expert
in the Personnel and military education Department of the MoD, RA,
Applicant at the Chair of Civil Law of the Law faculty, YSU*

SUMMARY

Servicemen and their family members' housing issue is one of the most actual problems of their social and legal protection.

Owing to its economic opportunities the Republic of Armenia is unable to guarantee free apartment provision. In this respect various mechanisms of servicemen and their families' housing were elaborated.

One of the perspective mechanisms is the concept of mortgage loan, which is already being introduced in the RF. The concept includes the savings and mortgage system of housing, which gives servicemen an opportunity for choice: to accumulate funds during the period of service for apartment purchasing after demobilization or to buy accommodation on mortgage loan in the initial period, paying off in the course of further service.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

*Լ. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Սահմանադրական դատարանի զլխավոր մասնագետ*

Ցանկացած պետության հիմնական գործառույթն է ազգային անվտանգության ապահովումը արտաքին և ներքին սպառնալիքներից: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ազգային անվտանգության հիմնական սուբյեկտ, այդ ոլորտում իր գործառույթները կատարում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության և պետական այլ իրավասու մարմինների միջոցով՝ անհատի, հասարակության և պետության անվտանգությունը երաշխավորելու և ապահովելու նպատակով: Հարավային Կովկասի տարածաշրջանում տիրող բարդ ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանից պահանջում է մեծ ուշադրություն դարձնել անվտանգության ապահովման պաշտպանական բաղադրիչին՝ ռազմական անվտանգությանը: Ռազմական անվտանգության ապահովման ասպարեգում Հայաստանի Հանրապետությունը գերակա է համարում բարեփոխումների միջոցով իր պաշտպանական համակարգի հզորացումը և միջազգային ինտեգրմամբ արտաքին անվտանգության ապահովման միջազգային երաշխիքների ձեռքբերումը¹:

Անվտանգության միջազգային երաշխիքներ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, ԱՊՀ-ին, Եվրոպայի խորհրդին և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, կնքել է մեր երկրի պաշտպանությանը և պաշտպանունակության մեծացմանն ուղղված տասնյակ երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրեր, որոնք կարգավորում են ինչպես անմիջականորեն ռազմական, ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական համագործակցության և գործընկեր պետությունների կողեկտիվ պաշտպանության կազմակերպման հարցերը, այնպես էլ այդ գործառույթներից բխող այլ հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրով են կարգավորվում «այլ պետությունների հետ քաղաքական կամ ռազմական, բարեկամության և համագործակցության, պաշտպանության, ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից փոխադարձաբար հրաժարվելու, խաղաղության կամ հաշտության, պետական սահմանի փոփոխություն կատարելու, միջպետական կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու, հյուպատոսական հարաբերություններ հաստատելու, Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերն օտարերկրյա պետություններ խաղաղապահ կամ այլ նպատակներով ուղարկելու, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների կամ միջազգային

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, նաև՝ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր» 2007, հմ. 4:

կազմակերպությունների ռազմական բազաներ ստեղծելու կամ օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների զինված ուժեր Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունելու, տեղակայելու, միջազգային վեճեր լուծելու, զինաթափման, ռազմական պարտավորություններ ստանձնելու, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության հարցեր շոշափող այլ հարաբերություններ»²:

Միևնույն ժամանակ, ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» համաձայն՝ «Որպես պետության սահմանադրական կարգի պահպանության, իրավունքի գերակայության, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովման հիմնարար խնդիր՝ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է իրավապահպանության բնագավառի ռազմավարական բարեփոխումները: Գրանք ուղղված են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովմանը, հակաիրավական ոտնձգություններից պետության, հասարակության և անհատի պաշտպանությանը»³:

Անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովմանը, պաշտպանական ոլորտի կարգավորմանը, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների երաշխավորմանն ու պաշտպանությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգություններից Հայաստանի Հանրապետության, հասարակության և անհատի պաշտպանությանն ուղղված՝ իրավապահպանության բնագավառի ռազմավարական բարեփոխումների իրագործման և դրա երաշխիքների ապահովման գործում 1996 թվականից կարևոր դերակատարություն ունեցավ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը: Այն սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է և ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

«ՀՀ Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարանը՝

«որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին» և այլն⁴:

² «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» 2007 թ. փետրվարի 22-ի ՀՀ օրենքը, հոդված 7:

³ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24:

⁴ «ՀՀ Սահմանադրություն», հոդված 100, 2005:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման գործում կարևորվում է Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերի սահմանադրականության հարցի որոշումը Սահմանադրական դատարանի կողմից: Սահմանադրության համաձայն՝ մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրերի վավերացումը դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար Սահմանադրական դատարան է դիմում ՀՀ Նախագահը:

ՀՀ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 72-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,

2) միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելու մասին»⁵:

Հայաստանի ազգային անվտանգության ապահովման և պաշտպանության իրականացման նպատակով Սահմանադրական դատարանի կողմից կնքված երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ոչ միայն դրանց դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար, այլև ՀՀ ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, անկախությունը, սահմանների անձեռնմխելիությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքն ու դրանց պաշտպանությունը երաշխավորելու, Հայաստանի ներքին գործերին օտարերկրյա միջամտությունը բացառելու, Հայաստանի նկատմամբ ուժի և ուժի սպառնալիքի կիրառումն արգելելու նպատակով: ՀՀ Սահմանադրական դատարանը վերը նշված իր լիազորություններն իրականացնում է՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության բոլոր դրույթներով և հատկապես՝ դրանում հռչակված հետևյալ նորմակարգերով:

– Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է,

– պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան,

– պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք,

– Հայաստանի Հանրապետությունում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր

⁵ «ՀՀ Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. օրենքի 72-րդ հոդվածը (<http://www.concourt.am/armenian/law-cc/index.htm>):

և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա, – Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով⁶:

Իր գործունեության ընթացքում Սահմանադրական դատարանը քննության է առել Հայաստանի արտաքին անվտանգության և պաշտպանության ապահովման վերաբերյալ տանյակ միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցը (պայմանագրերի ցանկը բերված է հավելվածներում):

Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995 թվականի մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» Սահմանադրական դատարանը նշել է, որ այդ պայմանագիրն ստորագրվել է երկու պետությունների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը պաշտպանելու նպատակով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան զորակայանի գտնվելը համապատասխանում է տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանման խնդիրներին: Այսպես. պայմանագրով սահմանվում է զորակայանի տեղակայման վայրի ընտրության, դրա շարժական և անշարժ գույքի տնօրինման, զենքի գործադրման և զորակայանի կառավարման, անվտանգության ապահովման, ինչպես նաև մարտական պատրաստության և զորակայանին առնչվող թռչող սարքերի թռիչքների իրականացման կարգը: Պայմանագրով սահմանվում են նաև Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությամբ և պայմանագրի կողմերի միջև առանձին համաձայնագրերով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը, զորակայանի ֆինանսական ապահովման կարգը: Պայմանագրի անբաժանելի մասն են թվով 3 արձանագրությունները, որոնք համապատասխանաբար սահմանում են զորակայանի կարգավիճակը, կապի կազմակերպման, ինչպես նաև զորակայանում առկա սպառազինության առավելագույն մակարդակների վերաբաշխման կարգը: Սույն գործի քննության արդյունքներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը որոշել է, որ նշված պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը⁷:

ՀԱՊԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահ-

⁶ Տես «ՀՀ Սահմանադրություն», հոդված 1–9:

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 1996 թ. նոյեմբերի 27-ի ՍԴ-Ռ-27 որոշումը» (<http://www.concourt.am/armenian/decisions/common/1996/sdv-27.htm>):

մանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանը քննել է ՀԱՊԿ-ի կանոնադրությամբ ՀԱՊԿ-ի մասնակից պետությունների կողմից ստանձնած հետևյալ հիմնական պարտավորությունների սահմանադրականության հարցը.

– «հիմնադրել Հավաքական անվտանգության մասին պայմանագրի միջազգային տարածաշրջանային կազմակերպություն.

– համատեղ միջոցներ ձեռնարկել Կազմակերպության շրջանակներում հավաքական անվտանգության գործուն համակարգի կազմավորման ուղղությամբ,

– համակարգել և միավորել ջանքերը միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության, թմրանյութերի և հոգեմերգործող նյութերի, զենքի ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության, անօրինական միգրացիայի և անդամ պետությունների անվտանգությանն այլ սպառնալիքների դեմ պայքարում,

– համաձայնեցնել և համակարգել արտաքին քաղաքական դիրքորոշումներն անվտանգության միջազգային և տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ.

– միջոցներ ձեռնարկել հավաքական անվտանգության համակարգի գործունեությունը կանոնակարգող իրավապայմանագրային բազայի զարգացման, պաշտպանության, ռազմական շինարարության և անվտանգության հարցերով ազգային օրենսդրության ներդաշնակեցման ուղղությամբ»⁸:

Ելնելով այն բանից, որ ՀԱՊԿ-ը «գործում է անդամ պետությունների անկախության, հարգանքի, մասնակցության կամավորության, իրավունքների և պարտականությունների հավասարության հիմունքների վրա: Կանոնադրությունը չի շոշափում անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերով ձեռք բերված իրավունքները և պարտականությունները», Սահմանադրական դատարանը որոշեց, որ Կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը⁹:

Չանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2001 թ. հունվարի 10-ի ՍԳՈ-277 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ այդ համաձայնագիրն ստորագրվել է «Կողմերի միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը, ինչպես նաև այդպիսի զենքի հետ անմիջականորեն կապված տեխնոլոգիաների, նյութերի, գիտելիքների ու փորձի տարածմանը հակազդելու, միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի, ինչպես նաև այդպիսի զենքերին անմիջականորեն վերաբերող հումքի

⁸ «ՀԱՊԿ կանոնադրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2003 թ. ապրիլի 22-ի ՍԳՈ-415 որոշումը» (<http://www.concourt.am/armenian/decisions/common/2003/sdv-415.htm>):

⁹ Տես նույն տեղում:

չարտոնված փոխանցումը, տարանցումը, փոխադրումը կանխելու նպատակով»¹⁰: Կողմերը պայմանավորվել են համագործակցել զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու համար. «Մասնավորապես՝ ԱՄՆ-ի կառավարությունը պարտավորվում է ՀՀ կառավարությանը, վերջինիս հայտերի հիման վրա, անհատույց տրամադրել զանգվածային ոչնչացման զենքի տարածումը կանխարգելող սարքավորումներ, նյութեր, տեխնոլոգիաներ, իրականացնել անձնակազմի ուսուցում



և այլն»¹¹: ՀՀ կառավարությունն իր կողմից պարտավորվում է նախատեսվող գործողությունները կատարելու համար հեշտացնել ՀՀ տարածք ԱՄՆ-ի կառավարության համապատասխան ներկայացուցիչների մուտքն ու ելքը, սահմանվում են նաև նախատեսվող միջոցների փոխադրման կարգն ու պայմանները:

«Յուրաքանչյուր Կողմ նշանակում է Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու գործադիր գերատեսչություններ, որոնց միջոցով Կողմերը կկնքեն առանձին պայմանագրեր կամ ձեռք կբերեն գրավոր պայմանավորվածություններ»¹²: Հայաստանի Հանրապետության այդ գերատեսչություններն են, մասնավորապես, ՀՀ արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունները, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

¹⁰ «ՀՀ կառավարության և ԱՄՆ-ի կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին 2000 թ. հուլիսի 24-ի Վաշինգտոնի համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2001 թ. հունվարի 10-ի ՍԳՈ-277 որոշումը» (<http://www.concourt.am/armenian/decisions/common/2001/sdv-277.htm>):

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

«Համաձայնագրով ՀՀ կառավարությունը նաև պարտավորվում է.

– առանց ԱՄՆ-ի կառավարության նախօրոք գրավոր համաձայնության չփոխանցել ԱՄՆ-ի կառավարության կողմից տրամադրված սարքավորումների, նյութերի, տեխնոլոգիաների, ուսուցման և ծառայությունների սեփականության կամ տիրապետման իրավունքը որևէ այլ անձի, թույլ չտալ դրանց օգտագործումն այլ նպատակներով, ապահովել դրանց անվտանգությունը, դրանք պաշտպանել յուրացումից կամ փոխակերպումից,

– ազատել ԱՄՆ-ի կառավարությունը, բացառությամբ համապատասխան պայմանագրերով նախատեսված հայցերի, դատական պատասխանատվությունից և հայցերից՝ համաձայնագրի կատարման հետ կապված գործողությունների իրականացման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում որևէ անձի սեփականությանը հասցված կորստի կամ վնասի համար, և չպահանջել ԱՄՆ-ի կառավարությունից, նրա աշխատակիցներից, կապալառուներից և նրանց ծառայողներից ցանկացած անձի մահվան կամ վիրավորվելու հետ կապված փոխհատուցում:

Համաձայնագրին համապատասխան՝ մման փոխհատուցում Կողմերը կարող են իրականացնել իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով»¹³:

Այս համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը նախադրյալներ է ստեղծում զանգվածային ոչնչացման զենքի չտարածման և երկակի նախանշանակման հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների և ծառայությունների արտահանման վերահսկման ոլորտներում իր միջազգային, այդ թվում՝ ԱՊՀ շրջանակներում ստանձնած, մի շարք պարտավորությունների կատարման համար:

Գործի քննության արդյունքներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը որոշել է, որ Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը¹⁴:

Ազգային անվտանգության ու պաշտպանության ոլորտում Սահմանադրական դատարանի կողմից քննության առնված՝ Հայաստանի մասնակցությամբ միջազգային պայմանագրերի համապարփակ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

– պայմանագրեր ազգային անվտանգության ապահովման, ռազմական, ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական համագործակցության մասին (տես *Հավելվածներ 1, 2, 3, 4*),

– պայմանագրեր ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտի աշխատողների սոցիալական և իրավական երաշխիքների վերաբերյալ (տես *Հավելվածներ 1, 3*),

– պայմանագրեր միջազգային և միջազգային բնույթի հանցագործությունների կանխման և դրանց դեմ պայքարի մասին (տես *Հավելված 5*):

Այդ միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ Սահմանադրա-

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տես նույն տեղում:

կան դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտում Սահմանադրական դատարանի՝ որպես Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայության ապահովման երաշխավորի դերը հատկապես կարևորվում է այն բանով, որ նա իրավասու է հակասահմանադրական ճանաչել Հայաստանի անունից կնքված երկկողմ կամ բազմակողմ այն միջազգային պայմանագրերը, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված ազգային անվտանգության հիմնարար արժեքներին: Միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշումն էական նշանակություն ունի նաև այն առումով, որ ՀՀ Սահմանադրությանը հակասելու դեպքում դրանք ՀՀ Ազգային ժողովի կողմից չեն կարող վավերացվել: Մինչդեռ Սահմանադրական դատարանի կողմից տվյալ միջազգային պայմանագիրը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքում ՀՀ Նախագահն այն ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը: Վավերացումից հետո այդ փաստաթուղթը ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն դառնում է ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս, ընդ որում, ՀՀ օրենքների հետ հակասության դեպքում գերակա է միջազգային պայմանագիրը:

Սահմանադրական դատարանի որոշումների վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ ոչ բոլոր միջազգային պայմանագրերն են ճանաչվում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Այսպես, ըստ Սահմանադրական դատարանի 2004 թ. օգոստոսի 13-ի ՍԳՌ-502 որոշման՝ 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված «Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ)* ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի՝ Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածներին, իսկ Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց (այդ թվում նաև ՀՀ բարձրագույն պաշտոնատար անձանց և երկրի պաշտպանության ոլորտում ներառված անձանց) ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում

* 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության նպատակն է նրան ընդդատյա հանցագործություններ (ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ և ագրեսիա) կատարած անձանց անպատժելիությունը բացառելու և դրանով իսկ այդպիսի հանցագործությունների կանխմանը նպաստելու համար ներպետական քրեական իրավագործության մարմիններին լրացնող և մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը: Այն միջազգային իրավասուրբեկտությամբ օժտված անկախ միջազգային դատարան է, որը կոչված է քրեական արդարադատություն իրականացնելու միջազգային ամբողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների համար պատասխանատու ֆիզիկական անձանց նկատմամբ:

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին¹⁵:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը, առաջնորդվելով ՀՀ իրավակարգում ՀՀ Սահմանադրության դրույթների գերակայությամբ և ազգային անվտանգության շահերով, ելնելով ռազմաքաղաքական ռազմավարության նկատառումներից, կարող է կայացնել որոշումներ, որոնցով միջազգային պայմանագրերի դրույթները կճանաչվեն հակասահմանադրական:

Ինչպես նշվեց, «եթե ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել հայկական կողմի ստորագրած միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին, ապա այդ պայմանագիրն Ազգային ժողովի վավերացմանը չի ներկայացվում»¹⁶, սակայն նախատեսվում են բացառություններ: Մասնավորապես՝ ՀՀ Նախագահը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրի կարևորությունը, կարող է հանձնարարել երկկողմ պայմանագրի մյուս կողմի հետ բանակցություններ վարել՝ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման մեջ նշված հակասությունները վերացնելու շուրջ: Ընդ որում՝ նման գործողություններ կարող է նախաձեռնել նաև իրավասու գերատեսչությունը կամ արտաքին գործերի նախարարությունը՝ «միմյանց հետ համաձայնեցմամբ»: Իսկ միջազգային պայմանագրի համապատասխան դրույթը վերացնելու կամ այլ դրույթով փոխարինելու շուրջ բանակցություններում փոխհամաձայնություն ձեռք բերվելու դեպքում այն ամրագրվում է տվյալ միջազգային պայմանագրի փոփոխված տեքստի կամ այդ պայմանագրի անբաժանելի մաս կազմող արձանագրության ստորագրմամբ: «Վերջինում հստակ նշվում է, թե պայմանագրի որ հոդվածը կամ դրույթն է հանվում տեքստից կամ փոխարինվում այլ դրույթով: Պայմանագրի նորացված տեքստը կամ դրա անբաժանելի մաս կազմող արձանագրությունը հայկական կողմից ստորագրում է միջազգային պայմանագիր ստորագրելու իրավասություն կամ հատուկ լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը»¹⁷: Դրանից հետո միջազգային պայմանագիրը ներպետական օրենսդրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ կրկին ներկայացվում է վավերացման կամ հաստատման:

Այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող պարտավորություններ ներառող բազմակողմ միջազգային պայմանագիրը հնարավորություն է տալիս այն վավերացնելու Սահմանադրությանը չհամապատասխանող պարտավորություններ նախատեսող դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից չկատարվելու

¹⁵ Տես «1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կառուցողության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2004 թ. օգոստոսի 13-ի ՍԳՈ-502 որոշումը» (<http://www.concourt.am/armenian/decisions/common/2004/sdv-502.htm>):

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՀ օրենքը, հոդված 29:

կամ պարտադիր չլինելու մասին վերապահումով կամ հայտարարությամբ, ապա Հայաստանի Հանրապետության Նախագահն այդ պայմանագիրը կարող է համապատասխան վերապահումով կամ հայտարարությունով ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի վավերացմանը¹⁸:

Հայաստանի կնքած միջազգային պայմանագրերի նկատմամբ Սահմանադրական դատարանի կողմից նախնական սահմանադրական վերահսկողության իրականացումը մինչև դրանց վավերացումը երաշխիք է այն բանի, որ վավերացված միջազգային պայմանագիրը Հայաստանի համար պարտադիր դառնալուց հետո Հայաստանի կողմից պայմանագրով ստանձնած միջազգային պարտավորությունները բարեխղճորեն կկատարվեն: Հարկ է նշել, որ Հայաստանը չի կարող չկատարել վավերացված միջազգային պայմանագրով նախատեսվող պարտավորությունները՝ իր հրաժարումը հիմնավորելով այն հանգամանքով, որ դրանք հակասում են իր ներպետական օրենսդրությանը: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի Համաձայնագրի 27-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրի մասնակիցը որպես պայմանագիրը կատարելուց հրաժարման պատճառաբանություն չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները, իսկ 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից կատարվի ամենայն բարեխղճությամբ (*pacta sunt servanda*):

Սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի գործողությունը կոչված է երաշխավորելու սահմանադրական կայունությունը և բացառելու հասարակական համադեմոնները՝ հենվելով, առաջին հերթին, այնպիսի սահմանադրական սկզբունքների վրա, ինչպիսիք են ժողովրդահիշխանությունը, իրավունքի գերակայությունը, իշխանությունների տարանջատումը, պետական ինքնիշխանությունը, Սահմանադրության գերակայությունը և այլն: Հետևաբար, «սահմանադրական դատարաններն իրենց իրավական դիրքորոշումներով կոչված են իրական բովանդակություն հաղորդելու ազգային և վերազգային արժեքների ներդաշնակմանը՝ սահմանադրաիրավական յուրաքանչյուր լուծում փնտրելիս համադրելով ինչպես միջազգային փորձն ու երկրի միջազգային պարտավորությունները, այնպես էլ հասարակական պրակտիկայի կողմից առաջադրված խնդիրները: Նման մոտեցմամբ է միայն հնարավոր երաշխավորել ժողովրդավարական երկրի Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որը նաև 21-րդ դարի սահմանադրական մշակույթի բնորոշ առանձնահատկությունն է»¹⁹:

¹⁸ Տես նույն տեղում:

¹⁹ Գ. Գ. Հարությունյան, Իրավական գորալացումը և ազգային-պետական առանձնահատկությունները XXI դարի սահմանադրական մշակույթում: Ջեկուցում 2008 թ. սեպտեմբերի 2–5-ը Սեուլում (Հարավային Կորեա) կայացած միջազգային գիտաժողովում (http://www.concourt.am/armenian/structure/president/articles/korea_sep2008.pdf):

Հավելված 1

ՌՈՒՄԱՍԱՏԱՆԻ ՀԵՏ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ՀՀ և ՌԳ- միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997 թ. օգոստոսի 29-ի Մոսկվայի պայմանագիր
ՀՀ և ՌԳ- միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիր
ՀՀ կառավարության և ՌԳ- կառավարության միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի ֆինանսական ապահովման մասին 1996 թ. սեպտեմբերի 27-ի Մոսկվայի համաձայնագիր
ՀՀ և ՌԳ-ի միջև ՀՀ տարածքում ռուսական ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ 1997 թ. օգոստոսի 29-ի Մոսկվայի համաձայնագիր
Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին բնակման կետեր ստեղծելու և օգտագործելու կարգի մասին 1996 թ. հունվարի 26-ի Մոսկվայի համաձայնագիր
ՀՀ և ՌԳ- միջև ռազմական ենթակառուցյի օբյեկտների համատեղ օգտագործման մասին 2002 թ. հոկտեմբերի 1-ի Մոսկվայի համաձայնագիր
ՀՀ և ՌԳ- միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995 թ. մարտի 16-ի պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին 2003 թ. նոյեմբերի 11-ի Երևանի թիվ 4 արձանագրություն և տասնյակ այլ երկկողմ պայմանագրեր

Հավելված 2

ԱՄՆ-Ի ՀԵՏ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակադրելու բնագավառում համագործակցության մասին 2000 թ. հուլիսի 24-ի Վաշինգտոնի համաձայնագիր
Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև անձանց միջազգային դատարաններ փոխանցելու վերաբերյալ 2004 թ. հոկտեմբերի 16-ի Երևանի համաձայնագիր

Հավելված 3

ՀՎԱԸՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳՎՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ՀԱՊԿ կանոնադրություն (2002 թ. հոկտեմբերի 7, Քիշնև)
ՀԱՊԿ-ի իրավական կարգավիճակի մասին 2002 թ. հոկտեմբերի 7-ի Քիշնևի համաձայնագիր
ՀԱՊԿ-ի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի նպատակային օգտագործման համար հսկողության իրականացման կարգի մասին 2002 թ. փետրվարի 26-ի արձանագրություն

Հավելված 3-ի շարունակություն

ՀԱՊԿ անդամ պետությունների երկաթուղիների տեխնիկական պատասպարման միասնական համակարգի ստեղծման մասին 2003 թ. ապրիլի 28-ի Դուշանբեի համաձայնագիր
ՀԱՊԿ-ի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2003 թ. հուլիսի 21-ի արձանագրություն
ՀԱՊԿ անդամ պետությունների ռազմական ենթակառուցիչ օբյեկտների համատեղ օգտագործման, տարածքի օպերատիվ սարքավորման մասին 2004 թ. հունիսի 18-ի Աստանայի համաձայնագիր
ՀԱՊԿ շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին 2004 թ. հունիսի 18-ի Աստանայի համաձայնագիր
ԱՊՀ-ում խաղաղության պահպանման հավաքական ուժերի անձնակազմի սոցիալական և իրավական երաշխիքների մասին 2007 թ. հոկտեմբերի 5-ի Դուշանբեի համաձայնագիր

Հավելված 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՌԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ՝
 ՀՅՈՒՄԻՍԻԱԼԱՆՏՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՆԱՏՕ) ՀԵՏ
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ՀՀ կառավարության և Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության միջև 1995 թ. հունվարի 13-ին Բրյուսելում ստորագրված անվտանգության համաձայնագիր
1995 թ. հունիսի 19-ին Բրյուսելում ստորագրված՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի մասնակից պետությունների և «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին մասնակցող այլ պետությունների միջև իրենց զինված ուժերի կարգավիճակի մասին համաձայնագրում և դրան կից լրացուցիչ արձանագրություն

Հավելված 5

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման 1996 թ. սեպտեմբերի 10-ի Ժնևի պայմանագիր և դրան կից արձանագրություն
Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին ՀՀ և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջև համաձայնագիր և դրան կից լրացուցիչ արձանագրություն
ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված 12-ից ավելի հակահաբեկչական համընդգրկուն կոնվենցիաներ՝ Օդանավերի անօրինական զավթումը կանխելու մասին 1970 թ. կոնվենցիա, Պատանդներ վերցնելու դեմ 1979 թ. կոնվենցիա, Ահաբեկչության ֆինանսավորումը կանխելու մասին 1999 թ. կոնվենցիա և այլն
Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 2005 թ. մայիսի 16-ի Վարշավայի Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (կից հայտարարություններով)

ПОЛНОМОЧИЯ КОНСТИТУЦИОННОГО СУДА РА
В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ОБОРОННОЙ БЕЗОПАСНОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*Ա. Ս. ԱԿՕՍՅԱՆ, քանդատ յուրիզիկական գիտությունների թեզիսների հատուկ քննադատ
Конституционного суда РА*

РЕЗЮМЕ

В статье рассмотрены полномочия и функции Конституционного суда РА в контексте обеспечения оборонной безопасности государства. Подчеркивается его роль в правовом регулировании оборонной сферы как во внутригосударственном, так и международном измерениях, в гарантировании и защите конституционных прав человека и гражданина, в том числе—военнослужащего, в осуществлении стратегических реформ в правозащитной сфере. Анализируются подходы и механизмы предварительного конституционного контроля со стороны Конституционного суда РА при решении вопросов о соответствии или полном или частичном несоответствии основоположениям и нормам Конституции РА обязательств, закрепленных в международных договорах в области обеспечения национальной безопасности и обороны Армении до их предъявления на ратификацию Национальным Собранием РА.

THE PLENARY POWERS OF THE RA CONSTITUTIONAL COURT
IN THE CONTEXT OF ENSURING DEFENSE SECURITY
OF THE REPUBLIC OF ARMENIA

L. S. HAKOBYAN, Candidate of Law, Chief Specialist at the RA Constitutional Court

SUMMARY

In this article the plenary powers and functions of the RA Constitutional Court are examined in the context of ensuring state's defense security. Its role is outlined in the legal regulation of the defense sphere both in intrastate and international dimensions, in guaranteeing and protecting constitutional human and citizen rights, including servicemen's rights, and in implementing strategic reforms in the field of human rights. The approaches and mechanisms of preliminary constitutional review by the RA Constitutional Court while solving issues on complete or partial conformity or inconsistency of liabilities with fundamental principles and standards of the RA Constitution are analysed. Those liabilities are fixed in the international treaties in the sphere of ensuring Armenia's national security and defense before being ratified by the National Assembly.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

*Ա. Ս. ՍԵՂՐԱԿՅԱՆ, կապիտան, իրավաբանական գիտությունների
թեկնածու, ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության ավագ սպա, ՀՀ ԳԱԱ
Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի դասախոս*

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պաշտպանական բարեփոխումների գլխավոր նպատակներից է բանակի մարտունակության մակարդակի բարձրացումը: Ինքնին հասկանալի է, որ դրան նպատակաուղղված ցանկացած միջոցառում չի կարող արդյունավետ լինել, եթե չամրապնդվի զինվորական կարգապահությունը և չնվազեցվի հանցավորության մակարդակը:

Ձինձառայողների կողմից կատարված, հատկապես՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված, յուրաքանչյուր հանցագործություն ֆիզիկական, նյութական, կազմակերպական և բարոյական վնաս է պատճառում կամ կարող է պատճառել զինվորական ծառայության շահերին՝ բացասական ազդեցություն գործելով գործերի մարտունակության, հետևաբար և երկրի ռազմական անվտանգության վրա¹: Այդ հանգամանքի գիտակցմամբ ՀՀ-ում բանակաշինության առաջին իսկ օրերից զգալի ուշադրություն է դարձվել գործերում հանցավորության նկատմամբ վերահսկողության համակարգի մշակմանը և հանցավորության դեմ պայքարին: Որպես արդյունք, վերջին տարիներին բանակում զգալիորեն նվազել է մահվան ելքով դեպքերի ու պատահարների թիվը: Դրան էապես նպաստել է այն հանգամանքը, որ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության և ՀՀ զինվորական դատախազության համատեղ ջանքերով մահվան ելքով դեպքերը (պատահարները) բացահայտվել են գրեթե 100 %-ով²: Բացահայտումն ինքնին յուրատեսակ կանխարգելում է, քանի որ հանցանքի միտված զինվորը, ենթասպան կամ սպան սկսում են գիտակցել, որ չեն կարող խուսափել պատժից և պատասխան կտան իրենց անօրինական արարքի համար:

Ձինձառայողների հանցավորության պատճառները պետք է փնտրել և՛ հասարակության մեջ, և՛ բանակում: Այսպես, երկրում առկա հանցավորության ընդհանուր պատճառներն իրենց ազդեցությունն են թողնում զինձառայողների հանցավորության պատճառների վրա՝ բանակում ենթարկվելով որոշակի ձևափոխությունների:

¹ Տես Օ. Ա. Կոսովան. Общие правила криминализации воинских общественно опасных деяний. «Военное право» (эл. период. изд.), вып. 3, 2004, նաև՝ Ա. Ա. Тер-Акопов. Безопасность человека (теоретические основы социально-правовой концепции). М., 1998, с. 196:

² Տես Գ. Պողոսյան, Ձինվորը երկրի ուժն ու պատիվն է: «Հայ զինվոր», 2004 թ. փետրվարի 7–14:

ՈՒՍՏԻ նպատակահարմար է կիրառել համալիր միջոցներ՝ ուղղված այդ պատճառների ու պայմանների վերացմանը: Միևնույն ժամանակ ՁՈՒ-ում պետք է ակտիվացնել այս ուղղությամբ տարվող աշխատանքը՝ այն դնելով գիտական հիմքերի վրա³:

Ձինվորական հանցավորության մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է մշակել և հետևողականորեն իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, որոնք համահունչ լինեն պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումների նպատակներին ու բխեն գործերում առկա իրավիճակից: Չորքերում կանխարգելիչ աշխատանքների հիմնական ուղղությունների բովանդակությունը և կառուցվածքը պետք է համապատասխանեն ՁՈՒ-ում հանցավորության պատճառների և պայմանների բովանդակությանն ու կառուցվածքին⁴:

Այս սկզբունքից ելնելով՝ կարելի է առանձնացնել բանակում կատարվող հանցագործությունների կանխարգելման չորս հիմնական ուղղություն. ա) սոցիալ-տնտեսական, բ) բարոյահոգեբանական-դաստիարակչական, գ) կազմակերպակառավարչական, դ) քրեաիրավական:

Սոցիալ-տնտեսական կանխարգելիչ միջոցառումներն իրագործվում են զուտ համապետական, ավելի կոնկրետ՝ համասոցիալական, մակարդակով: Դրանց միջոցով պետք է լուծվի ամենակարևոր խնդիրը, այն է՝ զինծառայողը պետք է նվիրումով վերաբերվի իր Հայրենիքին ու ծառայությանը, իսկ մյուս (հատկապես՝ սոցիալական բնույթի) հարցերի մասին պետք է հոգ տանի պետությունը: Թեև վերջին տարիներին զինծառայողների սոցիալական պայմանները որոշ չափով բարելավվել են (վարձատրության բարձրացում, բնակարանային ապահովում և այլն), այդուհանդերձ այս հարցի հրատապ լուծումը մնում է և մտ ապագայում կմնա կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

Բարոյահոգեբանական-դաստիարակչական, կամ գաղափարախոսական բնույթի, կանխարգելիչ միջոցառումները ենթադրում են գործողությունների համակցում, ինչի շնորհիվ հնարավոր է լինում ազդել անձի գիտակցության վրա՝ պահպանելով նրա սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Այսօր այդ առումով գործերում ակտիվ աշխատանքներ են տարվում, սակայն դրանք դեռևս բավարար չեն, որ շարքային զինվորը պատրաստ լինի անձնվիրաբար ծառայելու Հայրենիքին: Գաղափարախոսական բնույթի կանխարգելիչ միջոցառումներից է նաև մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների գործունեությունը, որոնց շնորհիվ կարելի է ճիշտ ներկայացնել բանակում տիրող իրավիճակը և համապատասխան մեթոդներով գովազդել զինվորական կոլեկտիվի առօրյան⁵: Դ-ա, անշուշտ,

³ Այդ մասին տես «Преступность в армии». «Криминология», учебник под науч. ред. Н. Ф. Кузнецовой и Г. М. Миньковского. М., 1998, Глава XVII, с. 427:

⁴ Տես նույն տեղում, էջ 436:

⁵ Տես *Н. С. Бардыго*. Методика рекламы военной службы. «Воспитательная работа в военных организациях» (вкладка в «Право в Вооруженных Силах—Военно-правовое обозрение», 2005, № 9):

կոգեչնչի զինձառայողներին ու հրամանատարությանը և կվերացնի հասարակության մեջ շրջանառող տարաբնույթ ասեկոսեները:

Չինվորական հանցագործությունների կանխարգելման գործում կարևոր են **կազմակերպակառավարչական միջոցառումները**: Չորքերում զինվորական կանոնագրքային և կանոնադրական պահանջների խստիվ պահպանումը կարևորագույն նախապայման է իրավախախտումների, այդ թվում՝ հանցագործությունների, բացառման համար: Կարևոր է, որ հրամանատարները (պետերը) գործեն միայն օրենքների և կանոնագրքերի ու կանոնադրությունների պահանջներին խիստ համապատասխան: Կազմակերպակառավարչական միջոցառումների շարքը պետք է դասել կադրային ճիշտ ու ճկուն քաղաքականությունը: Չորամասերում կատարված ստուգայցերի ժամանակ հայտնաբերվել է, որ երբեմն ջոկի կամ դասակի շարքայինը, որը հուզակամային հատկանիշներով, կազմակերպչական նախաձեռնությամբ, ղեկավարելու ձիրքով գերազանցում է իր անմիջական հրամանատարին, ստիպված է ենթարկվելու իրենից շատ ավելի թույլ ու անդեմ անձնավորության: Նման հակասությունն ստեղծում է երկուստեք հոգեբանական անհարմարություն ու լարվածություն: Ըստ զինվորական հոգեբան Վ. Մարգարյանի՝ անհրաժեշտ է «զինվորական կոլեկտիվ ղեկավարելու իրավունք վերապահել հրամանատարական հատկանիշներով ու համապատասխան գիտելիքներով օժտված անձին և որպես սերժանտական ուսադիրներ կրելու նախապայման՝ կարևորել զինձառայողի հոգեբանական բնութագիրը»⁶:

Կանխարգելման կազմակերպակառավարչական միջոցների ու միջոցառումների ընտրության և ճիշտ կիրառման գործում մեծ է ստորաբաժանման (գումարտակի, դիվիզիոնի, վաշտի, մարտկոցի) հրամանատարի դերը: Ստորաբաժանման հրամանատարի աշխատանքը ուսումնասիրելիս մենք եկել ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է մշակել ու հետևողականորեն կիրառել այնպիսի մեթոդների համախումբ, որոնք կնպաստեն բանակում հանցավորության հաղթահարմանը: Մեր կարծիքով՝ այդ մեթոդները կարելի է բաժանել հետևյալ պայմանական խմբերի:

Առաջին խումբը կազմում են այն մեթոդները, որոնք կապված են մարտական պատրաստման հետ: Քանի որ զորքերի անձնակազմի բարձր մարտական պատրաստականությունը բանակի մարտունակության գրավականն է, ուստի հրամանատարը պետք է հնարավորինս շատ զինձառայողների ներգրավի այս կամ այն հանձնարարության, վարժանքի կամ այլ գործողությունների կատարման մեջ: Փորձը ցույց է տալիս, որքան շատ են ծառայության բերումով շփվում տարբեր շերտերի զինձառայողները (կոչումով ավագ և կրտսեր, հին և նոր ծառայողներ), այնքան քիչ է այն բանի հավանականությունը, որ նրանք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ միմյանց նկատմամբ բռնություն կգործադրեն: Դժվար է նաև պատկերացնել, որ, օրինակ, կոնկրետ միջոցառման ժամանակ պայմանական հակառա-

⁶ Տես «Չինվորական միջանձնային հարաբերություններ (զորայն զինվորական հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու, մայր Վ. Մարգարյանի հետ)»: «Հայ զինվոր», 2003 թ. ապրիլի 19–26:

կորդի նկատմամբ հաղթանակ տարած ստորաբաժանման զինծառայողները վարժանքից հետո փորձեն վիրավորել իրենց զինակցի արժանապատվությունը:

Երկրորդ խումբը ներառում է այն մեթոդները, որոնցով հնարավոր է մշտապես վերահսկել ստորաբաժանման կենսագործունեությունը: Ընդամին կարևոր են թե՛ անձնակազմի անդամներից յուրաքանչյուրի հետ տարվող անհատական աշխատանքը (գրույցներ, առօրյա խնդիրների հնարավոր լուծումներ), թե՛ կարգապահական իրավասությունների ճիշտ կիրառումը: Անհրաժեշտ է կիրառել ենթակայի անձի ուսումնասիրության մեթոդը, ըստ որի այդ ուսումնասիրությունը պետք է կատարվի ոչ միայն նրա հետ շփվելու, այլև նրա անձնական գործը, կենսագրությունը, ընկերական շրջապատը և ընտանիքն ուսումնասիրելու, ծառայության ընթացքում տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու նրա ընդունակությունները վերլուծելու միջոցով:

Երրորդ խմբում այն մեթոդներն են, որոնք կապված են զինծառայողների առօրյա ճիշտ կազմակերպման հետ: Գաղտնիք չէ, որ բանակում հանցագործությունների մեծ մասը կատարվում է հանգստի ժամանակ, երբ անձնակազմի նկատմամբ հսկողությունը թուլանում է: Ուստի կարևոր է ճիշտ կազմակերպել անձնակազմի առօրյան, ստորաբաժանումն ապահովել զբաղվածության համար անհրաժեշտ պարագաներով (հեռուստացույց, ռադիո, մամուլ, պատի թերթ, զանազան խաղեր և այլն): Ջինվորներից շատերը սիրում են շախմատ, ֆուտբոլ, վոլեյբոլ խաղալ, զբաղվել ձեռնամարտով, հետևաբար անհրաժեշտ է նրանց համար ստեղծել համապատասխան պայմաններ, ստորաբաժանման համար կազմակերպել տարբեր մարզական միջոցառումներ: Դա նպաստում է կոլեկտիվի անդամների մտերմացմանը, առանձին զինծառայողների միջև սերտ ընկերական կապերի ձևավորմանը, նյարդային լիցքաթափմանը:

Կանխարգելիչ միջոցառումների շարքում առանձնանում են **քրեաիրավական** միջոցառումները: Բանակում կատարված հանցագործության համար պատասխանատվություն պետք է կրեն միայն մեղավորները և միայն իրենց կատարած արարքների համար: Այսօր ՀՀ ՁՈՒ-ում նախորդ տարիների համեմատությամբ հանցագործությունների, հատկապես՝ մահվան ելքով դեպքերի ու պատահարների թվի նվազումը, ինչպես նաև առանձին տեսակի գրեթե բոլոր հանցանքների բացահայտումը առաջին հերթին պայմանավորված են ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների արդյունավետ իրացմամբ, իրավակիրառ մարմինների, հրամանատարների (պետերի) լավ աշխատանքով և հատկապես՝ զինվորական դատախազության ու ռազմական ոստիկանության աշխատողների, զինվորական քննիչների, ինչպես նաև դատարանների նպատակաուղղված գործունեությամբ: Ջինհանցավորության մակարդակի նվազմանը կարող է նպաստել նաև վերջերս քրեադատավարական ոլորտում կատարված փոփոխությունը⁷, ըստ որի՝ մինևույն մարմինը չի կարող միաժամանակ կատարել և՛ նախաքննություն, և՛ իր կատարած քննության նկատմամբ հսկողություն:

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-129-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 19 (543)):

Չնայած այս ամենին՝ հարկ է նշել, որ տվյալ ոլորտում դեռևս կան շատ անելիքներ: Անհրաժեշտ է կատարելագործել ՀՀ քրեական օրենսգրքի՝ զինվորական հանցագործություններին վերաբերող բաժինը, ապահովել քրեական ու զինվորական օրենսդրությունների համապարփակ ու միասնական գործողությունը, բարձրացնել զինվորական դատախազության կադրերի, զինվորական քննիչների մասնագիտական պատրաստականության մակարդակը:

Կարևոր է նաև՝

– հատուկ ուշադրություն դարձնել հսկողության ենթակա այն զորամասերի վրա, որտեղ հանցավորության մակարդակը համեմատաբար բարձր է,

– մեծ ուշադրություն դարձնել հանցավորության ավելի բարձր մակարդակ ունեցող զորամասերում հրամանատարների կողմից օրենքների, կառավարության որոշումների, զինվորական կանոնագրքերի ու կանոնադրությունների, պետական համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի, նրա տեղակալների հրամանների, ՉՈՒ-ի ԳՇ պետի հրամանների ու հրահանգների պահանջների կատարման նկատմամբ հսկողության վրա,

– բարելավել անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, զինծառայողների իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու նպատակով ապահովել դատավորների, զինվորական դատախազների, քննիչների ու ստիկանների և զորամասի հրամանատարության համատեղ ակտիվ մասնակցությունը դասախոսություններին, գրույցներին, հարց ու պատասխանների կազմակերպմանն ու անցկացմանը,

– հաճախակիացնել զինծառայողներին, հրամկազմին, զինարդարադատության ներկայացուցչներին հուզող հարցերի լուսաբանումը մամուլում, ռադիոյով, զանգվածային լրատվության այլ միջոցներով, դրանց լուծման համար ձեռնարկել հետևողական արդյունավետ քայլեր,

– շարունակել և ավանդական դարձնել զորամասերում արտագնա դատական նիստերի կազմակերպումն ու անցկացումը, ինչը նույնպես մեծ նշանակություն ունի բանակում հանցագործությունների կանխարգելման համար (ցավոք, վերջին տարիներից նկատվում է նիստերի քանակի նվազման միտում*):

Այսպիսով՝ ներկայումս ռազմական շինարարությունը թեև կոխել է նոր փուլ, և այդ համատեքստում վերը քննարկված միջոցառումների հետևողական իրականացումը կնպաստի բանակում օրինականության ամրապնդմանը, զինվորական հանցավորության մակարդակի նվազմանը և զորքերի մարտունակության մակարդակի բարձրացմանը: Միայն կոնկրետ և նպատակաուղղված համալիր միջոցառումների շնորհիվ է հնարավոր բանակում կատարվող հանցագործությունների կանխարգելման գործում հասնել շոշափելի հաջողությունների:

* Ըստ ՀՀ զինվորական դատախազության և ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության՝ եթե 2003 թվականին զորամասերում արտագնա քննվել է 89 քրեական գործ, 2004 թվականին՝ 104, ապա 2005 թվականին քննվել է 76, իսկ 2006 թվականին՝ 67 քրեական գործ, այսինքն՝ նախորդ տարիների համեմատությամբ մոտ 10–25 գործով պակաս:

ОБ ОСНОВНЫХ ПРЕВЕНТИВНЫХ МЕРОПРИЯТИЯХ
ПО СНИЖЕНИЮ УРОВНЯ ВОЕННОЙ ПРЕСТУПНОСТИ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*А. С. СЕДРАКЯН, капитан, кандидат юридических наук,
старший офицер Юридического управления МО РА, лектор магистратуры
в Научно-образовательном международном центре НАН РА*

РЕЗЮМЕ

В контексте осуществляемых в Армении оборонных реформ одной из первоочередных задач в ВС является укрепление дисциплины и снижение уровня преступности путем профилактики и раскрытия таких уголовно наказуемых действий, которые оказывают негативное влияние на боеспособность войск, а в итоге—и на обороноспособность государства.

В статье анализируются причины и условия совершения военных преступлений и предлагаются превентивные меры по снижению уровня военной преступности. В частности, предлагается содержание и структуру основных направлений предотвращения преступности в войсках привести в соответствие с содержанием и структурой причин и условий военной преступности. Поскольку причины и условия преступности в войсках и в обществе в целом взаимосвязаны, предлагается решение данной задачи в следующих четырех направлениях: социально-экономическом, морально-психологическом (идеологическом), организационно-управленческом и уголовно-юридическом.

ON THE MAIN PREVENTIVE MEASURES
ON REDUCING THE MILITARY CRIME RATE
IN THE REPUBLIC OF ARMENIA

*A. S. SEDRAKYAN, Captain, Candidate of Law, Senior Officer at the Law Board
of the MoD, RA, lecturer at the Master's Course at the International Scientific
Educational Centre of the NAS, RA*

SUMMARY

One of the priority problems in the AF in the context of the defense reforms, being implemented in Armenia, is to strengthen discipline and reduce the crime rate through preventive measures and solution to such penal actions, which exert a negative impact on the troops fighting efficiency. As a result, it affects the state's defense capability.

The causes and conditions of committing military crimes are analysed and preventive measures on reducing the military crime rate are proposed in this article. Particularly, it is proposed to bring the content and structure of the main directions in preventing criminality in the troops to conformity with the content and structure of causes and conditions of the military crime. And, since, the causes and conditions of criminality in the troops and in the society are correlated on the whole, the solution to the given problem in the following four directions is proposed: social-economic, moral-psychological (ideological), organizational-administrative and criminal-legal.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

*Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ*

Ժողովրդի գոյատևման հիմնական գրավականը անկախ, ինքնիշխան, գորեղ պետություն ունենալն է: Անկախության հռչակման պահից պետությունը կարիք ունի ոչ միայն տեսագաղափարական հիմնավորումներով ամրապնդման, այլև՝ արյան գնով պաշտպանության: Իր հերթին նորաստեղծ պետությունը պետք է գործնական քաղաքականության և խելամիտ քայլերի միջոցով «արդարացնի» իրեն՝ հաջողությամբ լուծելով իր առջև դրված խնդիրները:

Անկախ պետականության շինարարության և կայացման գործընթացում որպես նախապայման կարևորվում են ինչպես պետական իշխանության, այնպես էլ ժողովրդի պետական մտածողությունը և կամքը, պետականություն ստեղծելու կարողությունը: Ուստի ազգային պետականության ամրապնդման, նրա անվտանգության ապահովման, պատշաճ պաշտպանության պայմաններից մեկը պետական իշխանության գործունեությունն է, մյուսը՝ բնակչության անվերապահ, անձնագոհ նվիրվածությունը անկախության գաղափարին, երկրի պաշտպանությանը: Պատահական չէ, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը «բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը» դիտում է որպես ազգային անվտանգության համար ներքին սպառնալիք¹: Այդ սպառնալիքի չեզոքացման կարևոր նախապայման է ժողովրդի սոցիալական և իրավական պաշտպանվածությունը, որը դիտվում է որպես պետության անվտանգությանը քաղաքացու նվիրվածության էական գործոն²: Ըստ ռազմական դոկտրինի՝ Հայաստանի Հանրապետությունն իր ռազմական անվտանգության ապահովումը տեսնում է ժողովրդավարական, իրավական, մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման ու պաշտպանության վրա հիմնվող պետության կառուցման, սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման և քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում³:

Այսպիսով՝ այս երկու հույժ կարևոր անվտանգային փաստաթղթերում շեշտվում է պետական իշխանությունների նպատակային գործունեության և ժողովրդի բարձր

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21 – 22:

² Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «ՀԲ», 2006, հմ. 2:

³ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4, էջ 36:

հայրենասիրական ոգու դաստիարակության՝ որպես պետության անվտանգության ապահովման, նրա պաշտպանության գործոնների համադրման անհրաժեշտությունը: Այս երկու գործոնները և դրանց արդյունավետության հարաբերակցությունը հետազոտենք Հայաստանի առաջին հանրապետության օրինակով: «Անցյալը, ներկան և ապագան հաղորդակցվող երակներ են, և ինչքան շատ ենք դիմում պատմությանը, այնքան ավելի շատ ենք հասկանում, թե ինչ պետք է արվի և՛ այսօր, և՛ վաղը»⁴: Արդի իրականությունը սահմանազատված չէ անցյալից և ապագայից: Ներկան անցյալի՝ պատմության շարունակությունն է, բայց նաև՝ ապագայի նախադրյալը: Հետևաբար, Առաջին հանրապետության պաշտպանական համակարգի ձևավորման (կամ ռազմական շինարարության) փորձը, նրա գործունեության փաստական արդյունքներն արդի պայմաններում ձեռք են բերում նաև մեծ գործնական նշանակություն այն իմաստով, որ այդ փորձը կարելի է օգտագործել արդի պետականության կատարելագործման ուղիները որոշելիս, Երրորդ հանրապետության պաշտպանական հիմնախնդիրները մշակելիս, քանի որ «ենթարկվելով սոցիալական զարգացման օրենքներին՝ արդիականությունը վերածվում է անցյալի, իսկ անցյալն իշխանաբար ներխուժում է արդիականության սահմանները: Ահա թե ինչու պետական և քաղաքական գործիչների համար պատմության իմացությունը կազմում է պետական իմաստության և քաղաքական խորաթափանցության անփոխարինելի տարրը»⁵:

Հայաստանի առաջին հանրապետության՝ որպես նորահռչակ պետության համար առաջնային խնդիր էր ազգային պետականության պաշտպանությունը, ինչը պայմանավորված էր բազմաթիվ պատմաքաղաքական գործոններով: Այդ խնդրի հաջող լուծումը նորանկախ պետության համար պետք է նախապայմաններ ստեղծեր ներքին գործառնությունների արդյունավետ իրականացման համար: Ներքին խնդիրների հաջող լուծումն իր հերթին հնարավորություն կտար ստեղծելու ազգային պետականության համար այդքան անհրաժեշտ սոցիալական և իրավական հիմքեր, լուծելու երկրի պաշտպանունակության ամրապնդման խնդիրները, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի համար ապահովելու բարենպաստ ներքին և արտաքին պայմաններ: Մենք առանձնակի կարևորություն ենք տալիս Առաջին հանրապետության ռազմական շինարարության իրավական ապահովման փորձի ուսումնասիրությանը, որովհետև այսօր էլ մենք նույն խնդիրների լուծման ճանապարհին ենք:

Երկրի պաշտպանությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համակարգ է, որի գործունեությունն ուղղված է երկիրը պաշտպանությանը նախապատրաստելուն, ինչպես նաև պետության, նրա տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության զինված պաշտպանությանը (բուն ռազմական գործողություններ): Այս համակարգի կառուցման ու կայացման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ամբողջ համակարգը:

⁴ «Истина... И только Истина! Пять бесед о судебно-правовой реформе». М., 1990, с. 21.

⁵ А. И. Ракутов. Историческое познание. М., 1982, с. 3.

Այսպես. բոլոր երկրներում խորհրդարանները մեծ դեր են կատարում այս ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման և կառավարման գործում: Սակայն Առաջին հանրապետությունում այս հարցում ամբողջ պատասխանատվություն ընկած էր գործադիր իշխանության՝ կառավարության վրա, ինչը պայմանավորված էր պետական կառուցակարգի յուրահատկություններով: *Առաջին* յուրահատկությունն այն էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ, 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը, իսկ այնուհետև՝ 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտեմբերի 2-ը, օրենսդրական լիազորություններով օժտված գործադիր մարմին էր: Այս ժամանակահատվածներում երկու խորհրդարաններն էլ չեն գործել: Հատուկ օրենքներով «խորհրդարանի բոլոր իրավունքները հանձնվում էին կառավարությանը»: Հետևաբար՝ Նախարարների խորհուրդ մտցված օրինագծերը նախարարների կողմից հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ⁶: *Երկրորդ* յուրահատկությունն այն էր, որ նույնիսկ այն ժամանակամիջոցներում, երբ կառավարությունն օժտված չէր օրենսդրական լիազորություններով, խորհրդարանի հայ խմբակցությունները նրան օժտում էին երկրի պաշտպանության ոլորտում արտակարգ լիազորություններով, ինչը կառավարությանը հնարավորություն էր տալիս, շրջանցելով խորհրդարանը, ձեռնարկելու երկրի պաշտպանության իրավակազմակերպական միջոցառումներ⁷:

Առաջին հանրապետության պետական մեխանիզմի մշված երկու առանձնահատկություններով էր պայմանավորված այն հանգամանքը, որ երկրի պաշտպանության ոլորտում գործադիր իշխանության մարմինները օժտված էին լայն առարկայական և գործառնության իրավասությամբ: Համաձայն դասական պետաիրավական դոկտրինի՝ «կառավարությունը կոչված է ապահովելու գոյություն ունեցող հանրային կարգը, երաշխավորելու մարդու իրավունքներն ու ազատությունները, պաշտպանելու պետության արտաքին շահերը: Նրա վրա է դրված պետական կառավարման ոլորտում տնտեսական, սոցիալական և այլ գործառնությունների իրականացու-

⁶ Հանրապետության քաղաքական ղեկավարության այդպիսի քայլերը՝ ուղղված օրենսդրական լիազորությունների փոխանցմանը, պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Մի կողմից՝ օրենսդիր մարմնում կառավարող կուսակցությունը, մյուս կուսակցությունների ընդդիմադիր դիրքորոշման պատճառով հանդիպելով որոշակի դժվարությունների, այսինքն՝ չկարողանալով անկաշկանդ իրագործել իր քաղաքականությունը, իր պատգամավորական մեծամասնության միջոցով կարողանում էր հասնել օրենսդրական լիազորությունների այդպիսի փոխանցման և դրանով իսկ ազատվում ավելորդ «գլխացավանքից»: Մյուս կողմից՝ կառավարող ուժերի կամքից անկախ ճգնաժամը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, պատերազմները, հակապետական խռովությունները և անցումային շրջանը հրամայաբար պահանջում էին իշխանության կենտրոնացում, օպերատիվություն, և ակնհայտ էր դառնում, որ այդպիսի արտակարգ իրադրությունում պետական կառավարման եղանակը՝ «պառլամենտական դանդաղաշարժ ձևով», չէր կարող ձեռնարկել կտրուկ միջոցներ, ունենալ արագաշարժ պետական իշխանություն (այդ մասին ավելի հանգամանորեն տես Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918–1920): Ե., 2006, էջ 18–23):

⁷ Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, քթ. 149–150: Այդ մասին նաև հանգամանորեն տես Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր: Ե., 2003, էջ 22–26:

մը»⁸: Առաջին հանրապետության կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի, կառավարության ու գործադիր իշխանության այլ մարմինների հարաբերակցության հիմնահարցերը ենթարկվում էին մասնակի իրավական կարգավորման: Բայց կառավարության իրավասությունը չունեի իրավական ամրագրում: Ակնհայտ է, որ կառավարության իշխանությունն իր բնույթով ուներ գործադիր-կարգադրիչ, ենթաօրենսդրական նշանակություն⁹: Կառավարության իրավասությունն ընդհանուր գծերով կարելի է արտածել՝ ուսումնասիրելով Առաջին հանրապետության պետաիրավական շինարարության փորձը: Արխիվային նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Առաջին հանրապետության կառավարությունը բնութագրելու որպես երկրի ընթացիկ կառավարումն իրականացնող ընդհանուր իրավասության գործադիր-կարգադրիչ մարմին: Նրա իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցերը, որքանով որ դրանք վերապահված չէին խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը: Երկրի պաշտպանության ոլորտում կառավարության իրավասությունը դրսևորվում էր հետևյալ գործառնությունների և լիազորությունների ձևով:

1. Կառավարությունը պատասխանատու էր երկրի պաշտպանության համար և դրան էր նպատակաուղղում իր ներքին և արտաքին քաղաքականությունը: Նոր ձևավորվող կառավարությունը, բացի այդ ընդհանուր քաղաքական ծրագրից, ներկայացնում էր նաև նեղ իմաստով երկրի պաշտպանության իր քաղաքական ծրագիրը: Ծրագիրը վերաբերում էր երկրի զինված ուժերի շինարարությանը, վերակառուցմանը, հայոց բանակի կազմակերպմանն ու կայացմանն ուղղված այլևայլ միջոցառումների իրականացմանը:

Առաջին կառավարության հայտարարագրում (1918 թ. օգոստոս) հատուկ կետ էր հատկացված այսպես կոչված զինվորական գործերին. «վերակազմել երկրի զինվորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ»¹⁰: Եթե այս դրույթները համեմատենք հասարակական

⁸ «Конституционное право зарубежных стран». Под ред. М. В. Баглая, Ю. И. Леиба, Л. М. Энтина. М., 2005, с. 348.

⁹ Պետք է նկատի ունենալ, որ կառավարության իրավասության սահմանադրական ամրագրումը բացառիկ երևույթ է սահմանադրական իրավական պրակտիկայում նույնիսկ արդի պայմաններում: «Արտասահմանյան երկրների սահմանադրությունները շատ հազվադեպ են պարունակում կառավարության իրավասությունն ամրագրող ծավալուն դրույթներ: Որքան մեծ է քաղաքականություն կենսագործելուն և պետության շահերի պաշտպանություն ապահովելուն կոչված մարմնի կարևորությունը, այնքան լայն են նրա հայեցողական լիազորությունները և հազվադեպ՝ սահմանադրական կարգավորումը: Ինչևէ, նորագույն սահմանադրությունների մեծ մասում նկատվում է կառավարության լիազորությունների ընդլայնման միտում: Դա իր դրսևորումն է ստանում այնպիսի բանաձևի օգտագործմամբ, ըստ որի կառավարության և նրա ղեկավարի վրա դրվում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսագործումը» (տես «Конституционное право зарубежных стран», с. 349):

¹⁰ «Հայաստանի կառավարության 1918 թ. օգոստոսի ղեկլարացիան» (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Ե., 1993, էջ 196):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱՇՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՐԼԱՄԵՆՏԻ

Օ Ր Է Ն Ք

45. Գործող զորարանակի մէջ մտնող կամուրների պատգամաւորի կոչումը պահելու և ձայնաւարտութեան իրաւունքից օգտուելու մասին.

Հաստատւած է 1919 թ. Հոկտեմբերի 31-ին.

Գործող զորարանակի մէջ մտնող կամուրք, եթէ պատգամաւոր է, պահում է իր պատգամաւորութեան կոչումը, սակայն Պարլամենտի նիստերում քվարկութեան չի մտնակցում:

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ս. Տիգրանեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակոբյան

1919 թ. Նոյեմբերի 1

Երևան

Օ Ր Է Ն Ք

84. Հաշմանդամ զինւորականների համար սահմանած նպաստի չափը 100% աւելացնելու մասին

Հաստատւած է 1919 թ. Դեկտեմբերի 10-ին

Աւելացնել հարիւր տոկոսով հաշմանդամ զինւորների համար 1919 թ. Փետրւարի 11-ի օրէնքով սահմանւած նպաստի չափը, սկսելով 1919 թ. Հոկտեմբերի 1-ից:

Փոխ-Նախագահ Պարլամենտի Լեւոն Շանի

Ի. ա. աւագ քարտուղարի Ա. Սաճուսեան

1919 թ. Դեկտեմբերի 11

Երևան

Հայաստանի առաջին հանրապետության օրենքների մտուցներ (հեղինակի արխիվից).
Երևան, 1919 թ.

կյանքի ներքին և արտաքին այլ ոլորտներին վերաբերող ծրագրային դրույթների հետ, ապա պարզ կդառնա, որ «զինվորական գործերի» ծրագիրը շատ ընդհանուր էր: Դ-ա, անշուշտ, պայմանավորված էր այս ոլորտում կառավարության ի սկզբանե որդեգրած գործելաճով, այն է՝ երկրի պաշտպանական քաղաքականությունն իրականացնել որքան հնարավոր է ոչ հրապարակավ: Դ-րա վառ ապացույցը երկու խորհրդարանների զինվորական հանձնաժողովների կազմակերպման և գործունեության կարգն էր: Պաշտպանության ոլորտում կառավարության քաղաքականության ծրագրային դրույթներին և, իհարկե, Բաթումի պայմանագրից բխող պարտավորություններին համապատասխան՝ 1918 թ. ձեռնարկվեց բանակի վերակառուցում, ներառյալ՝ կրճատում* : Հայաստանի անկախության հռչակման պահից զինուժը բաղկացած էր առանձին հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներով օժտված հատուկ ջոկատից: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդից ստացած համաձայնությամբ բանակի ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր հայկական կորպուսի հրամանատարը¹¹: 1918 թ. գարնան ճակատամարտերից հետո գորքերի վիճակը ծանր էր «ինչպես նրանց ընդհանուր կացության, այնպես էլ մատակարարման տեսանկյունից, քանի որ գույքի բոլոր պահեստները անցել էին թուրքերի ձեռքը»¹²: Հայկական կորպուսի հիմնական գործառնները նահանջել էին դեպի Երևան: Որոշ գործառններ անգամ նահանջեցին Թիֆլիսի ուղղությամբ:

Ի տարբերություն այլ նախարարություններից, զինվորական նախարարությունն իրականում սկսել է գործել արդեն 1918 թ. հունիսի 15-ին՝ զինվորական նախարարի նշանակմամբ, իսկ հուլիսի 5-ին Թիֆլիսում զինվորական նախարար գեներալ-մայոր Հախվերդյանն իր հրամանով հաստատել է նախարարության ժամանակավոր կառուցվածքը և հաստիքները¹³: Համաձայն այդ հրամանի՝ զինվորական նախարարության կազմի մեջ մտնում էին նախարարը և նրան կից զինվորական շտաբը (ներառյալ՝ շտաբի գրասենյակը, շարային և գորահավաքային բաժինները, տեսչական բաժինը, ռազմադատական բաժինը), մատակարարման, ռազմատեխնիկական, վերահսկողական վարչությունները¹⁴: Մնացած բոլոր առումներով գորքերի կառավարումը իրականացնում էր առանձին հայկական կորպուսի հրամանատարը, որն օժտված էր նաև գլխավոր հրամանատարի իրավունքներով¹⁵: Ռազմական նախարարի՝ բանակի վերակառուցման ուղղությամբ բուն գործունեությունն սկսվեց միայն 1918 թ. հուլիսի 20-ին, երբ կառավարությունը տեղավորվեց Երևան:

* Բաթումի պայմանագրով նախատեսվում էր, որ Հայաստանը կարող է կորպուսի փոխարեն ունենալ միայն մեկ դիվիզիա:

¹¹ Տես ՀԱԱ, ֆ. 296, ց. 1, գ. 79, ք. 46:

¹² Նույն տեղում:

¹³ Ըստ հրամանի՝ այդ կառուցվածքը և հաստիքները հաստատվել էին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից 1918 թ. հուլիսի 3-ին (տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, ք. 8):

¹⁴ Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, ք. 8:

¹⁵ Տես ՀԱԱ, ֆ. 296, ց. 1, գ. 79, ք. 46:

Արդեն հուլիսի 26-ին Հայկական կորպուսի հրամանատարի (գեներալ-լեյտենանտ Նազարբեկյան) հմ. 99 հրամանով կատարվեց զորքերի նոր վերակազմակերպում: Առանձին հայկական կորպուսը վերակառուցվեց առանձին հայկական դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Սիլիկյանը¹⁶: Նշանակվելով հայկական դիվիզիայի հրամանատար՝ Սիլիկյանը 1918 թ. օգոստոսի 1-ի հմ. 2 հրամանով սկսեց ձևավորել դիվիզիայի շտաբը: Այդ շտաբը լրացնում էր նախարարության զինվորական շտաբին, քանի որ այնտեղ էին կենտրոնացված զորքերի կազմակերպման ու կառավարման անմիջական աշխատանքները¹⁷: Ըստ զինվորական նախարարի 1918 թ. օգոստոսի 15-ի հրամանի՝ հայկական առանձին դիվիզիան ուղղակիորեն ենթարկվում էր զինվորական նախարարին¹⁸:

Հայաստանի խորհրդի ձևավորումից ու նրանից վստահության քվե ստանալուց հետո կառավարությունը ևս ձեռնամուխ եղավ բանակի վերակառուցման աշխատանքների կազմակերպմանը: Այդ գործընթացը դրանով չավարտվեց, քանի որ հետագայում տարածքի ընդարձակումը և դաշնակիցների առաջխաղացումը հայկական բանակի առջև դրեցին նոր խնդիրներ: Զինվորական նախարարի 1919 թ. հունվարի 12-ի հրամանով հայկական դիվիզիան վերակառուցվեց երեք բրիգադների, յուրաքանչյուրում՝ երեք գունդ¹⁹:

1919 թ. մարտի 27-ին զինվորական նախարար դարձավ գեներալ-մայոր Արարատյանը²⁰: Նա նախարարի օգնականներ նշանակեց հայկական դիվիզիայի հրամանատար Սիլիկյանին և Երևանի ջոկատի պետ Դրաստամատ Կանայանին, որոնք միաժամանակ շարունակելու էին կատարել իրենց անմիջական հրամանատարական պարտականությունները²¹: Նախարարի 1919 թ. ապրիլի 4-ի հրամանով իրականացվեց հայկական բանակի և զինվորական նախարարության երկրորդ մեծ վերակառուցումը: Կազմավորվեցին երեք առանձին հայկական հետևակագորային բրիգադներ, որոնցից յուրաքանչյուրը ներառում էր երկու հետևակագորային գունդ և մեկ հրամանային դիվիզիոն²²:

¹⁶ Վերակառուցման վերջնական ժամկետը օգոստոսի 15-ն էր: Ըստ այդ հրամանի՝ բոլոր հայազգի սպաները, պաշտոնյաները, զինվորները պարտավոր էին մնալ ծառայության մեջ մինչև ծառայությունից նրանց ազատելու մասին կառավարական որոշման ընդունումը: Թույլ էր տրվում այն այլազգիներին, որոնք չէին ցանկանում շարունակել ծառայությունը ՀՀ բանակում, զորացրել և ազատել ծառայությունից զորամասերի հրամանատարների հայեցողությամբ՝ կամ նրանց վերաձևակերպելով որպես պահեստի զինապարտ, կամ ուղարկելով Կովկասյան ճակատի շտաբի տրամադրության տակ: Կորպուսի դատարանը վերակառուցվում էր ռազմական դատարանի՝ պահպանելով նույն կազմը և կորպուսային դատարանի իրավասությունը (տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 47, թ. 2):

¹⁷ Տես ՀԱԱ, ֆ. 296, ց. 1, գ. 79, թ. 47:

¹⁸ Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 18:

¹⁹ Տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 109, թ. 43:

²⁰ Տես նույն տեղում, թ. 87:

²¹ Տես նույն տեղում:

²² Տես «Приказ по Военному Ведомству Республики Армения № 13. 14 апреля 1918 г. Эривань, Секретно» (ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 109, թ. 81):

Երրորդ կառավարության հայտարարագիրը (1919 թ. օգոստոս) ևս պարունակում էր ծրագրային դրույթներ երկրի պաշտպանության և բանակի վերաբերյալ*։ Համաձայն այդ հայտարարագրի՝ «Երկրի արտաքին թշնամուց պաշտպանելու գործը պիտի հենվի պարտադիր և ընդհանուր զինվորական ծառայության վրա։ Որոշ տարիքից սկսած պիտի հիմնել պահակագործ։ Ժողովրդական միլիցիա մշտական գործի փոխարեն։ Բանակը պետք է ազգայնացվի։ Միջոցներ պետք է ձեռք առնվեն զորանոցների, գործի և առողջապահական պայմանների համար»²³։

Կառավարության հայտարարագրի՝ պաշտպանական ոլորտին վերաբերող ծրագրերում նորություն էին «գորական միլիցիայի» վերաբերյալ դրույթները։ Ջորական միլիցիայի, կամ պահակագործի, սկզբունքն առաջին անգամ կիրառվել էր 1918 թ. ուշ աշնանը։ Կառավարությունն այդպիսի քայլի դիմեց Դիլիջանի շրջանի արևելյան մասի անվտանգությունն ապահովելու նպատակով։ Անհրաժեշտ ֆինանսավորում ստանալու համար նա Հայաստանի Խորհրդում հանդես եկավ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ, և 1918 թ. դեկտեմբերի 6-ին ընդունվեց «Ջորական միլիցիա կազմակերպելու մասին» օրենք²⁴։ Ջորական միլիցիան, որն ստեղծվում էր Դիլիջանի շրջանի անվտանգությունն ապահովելու համար, ենթարկվելու էր զինվորական նախարարությանը։ Պաշտպանության նախարարի 1919 թ. հունվարի 28-ի հմ. 26 հրամանով ստեղծվել է նաև Ջանգեզուրի միլիցիական գումղը՝ կազմված երեք գումարտակից²⁵։

Միլիցիական զնդերի, կամ պահակագործի, առանձնահատկությունն այն էր, որ այդ զնդերում հրամանատար, սպաներ և պաշտոնյաներ նշանակվում էին կադրային զինվորականներ։ Շարային զինվորական պետերը հավաքագրվում էին տեղի պահեստագործի զինվորներից և գտնվում էին իսկական զինվորական ծառայության մեջ։ Շարքային զինվորական կազմը ևս հավաքագրվում էր տեղի բնակչությունից, սակայն՝ միլիցիոնների կարգավիճակով, այսինքն՝ նրանք ապրում էին իրենց տներում, սեփական միջոցներով և հավաքագրվում էին միայն անհրաժեշտության դեպքում։ Բնակչության համար հարմարավետության ապահովման նկատառումով գումղը և նրա գումարտակները կազմակերպվում էին տարածքային տեղակայման սկզբունքով։ Հավաքին չներկայանալու, ծառայության ժամանակ պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարելու կամ զանցանք գործելու համար միլիցիոներները պատասխանատվություն էին կրում որպես զինծառայողներ։ Ձեները զինվոր-

* Երկրորդ կառավարությունը, որը կռալիցիոն էր, ձևավորվել է 1918 թ. նոյեմբերին, և հայտարարագիր չի հրապարակել։

²³ «Հայաստանի կառավարության 1919 թ. օգոստոսի դեկլարացիան»։ «Հայաստանի աշխատավոր», 1919, օգոստոս, հմ. 121։

²⁴ Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները»։ Ե., 1918, հոդ. 47, էջ 26։

²⁵ Գնդի ստեղծման իրավական հիմքը կառավարության որոշումն էր։ Գումղն անմիջապես ենթարկվելու էր Ջանգեզուրի կառավարական կոմիսարին։ Գնդի հրամանատար էր փոխգնդապետ Կոնդախյանը։ Գնդում պետք է ծառայեին միայն 20-25 տարեկան անձինք (տես ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 109, ք. 57)։

ների սեփականությունն էր: Մշտական գորահավաքի մեջ էր գտնվում միայն գնդի 1/4 մասը²⁶:

Վերջին՝ Ս. Վրացյանի կառավարության հայտարարագրում, որը մնաց չկենսագործված, ասվում էր. «Այսուհանդերձ մենք գիտակցում ենք, որ հասարակական ներկա կարգերում տարաբախտաբար իշխողը դեռ ոչ թե արդարությունն է, այլ ուժը: Եվ պետական ամեն մի կազմավորում իր գոյությունը և արդար իրավունքները ապահովելու համար ստիպված է ունենալ կազմակերպված համառ ռազմական ուժ: ՌԻստի և կառավարության գլխավոր հոգսերից մեկը պիտի լինի երկրի ուժերի հավաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը: Այդ նպատակով մենք աշխատելու ենք առողջացնել զորքի շարքերը և ուժեղացնել պետական գիտակցությունը և անձնագոհության զգացումը բանակի մեջ: Նույն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակը անվարժ ու հոգնած տարրերից՝ զորացրում կատարելով բարձր հասակի զինվորների, որով ավելի բնականոն ընթացքի մեջ կմտնի թիկունքի կյանքը և զարկ կտրվի երկրի տնտեսական զարգացմանը»²⁷: Այս հայտարարագիրն ամփոփում էր հայկական բանակի ստեղծման և զարգացման երկուսուկես տարվա փորձը՝ հաստատելով, որ պաշտպանական համակարգի հիմնական թերությունը և բացթողումը զորքի բարոյալքումն էր:

2. Առաջին հանրապետության կառավարությունը զինվորական նախարարի միջոցով իրականացնում էր բանակային շինարարության ընդհանուր ղեկավարությունը, այդ թվում նաև բանակի սպայական և շարքային կազմի ընդհանուր կառավարումը: Կառավարությունը նշանակում էր մի շարք զինվորական պաշտոնյաների, շնորհում էր զինվորական կոչումներ: Այսպես. 1918 թ. օգոստոսին հայկական դիվիզիայի կազմավորումից անմիջապես հետո զինվորական նախարարի հրամանով անցկացվեց բանակի սպայական կազմի և բոլոր պաշտոնյաների ատեստավորում: Ատեստավորում անցկացնելու հրամանի համար նախարարը հիմք համարեց 1918 թ. օգոստոսի 10-ին կառավարության ընդունած որոշումը: Ատեստավորման նպատակը «բանակի առողջացումն էր և նրա շարքերից վնասակար և անօգտակար տարրերին հեռացնելը»: Ատեստավորման կարգը սահմանող հրամանը զորամասերի պետերին պարտադրում էր ատեստավորել բոլոր սպաներին և զինվորական պաշտոնյաներին: Այն անձանց փաստաթղթերը, որոնց հետագա ծառայությունը ճանաչվում էր վնասակար և անօգուտ, ներկայացվելու էին դիվիզիայի շտաբ: Այդ փաստաթղթերի հիման վրա դիվիզիայի որակավորման հանձնաժողովը ատեստավորման ենթարկված անձանց բաժանեց երեք կատեգորիաների. ա) անձինք, որոնց արարքներում առկա են զինվորական օրենքներով պատժելի հանցագործությունների հատկանիշներ, բ) անձինք, որոնք ծառայության համար վնասակար են կամ անօգուտ, գ) անձինք, որոնց ծառայությանը պիտանիության հարցը անորոշ է:

²⁶ Տես «Положение о формировании милиционного полка» (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 109, թ. 58 շրջերես):

²⁷ «Ս. Վրացյանի կառավարության 1920 թ. նոյեմբերի ղեկարացիան» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 487, թ. 121):

Առաջին կատեգորիայի անձանց գործերը հանձնվում էին դատարան: Երկրորդ կատեգորիայի անձինք հեռացվում էին բանակից որպես «անարժաններ»՝ ծառայողական փաստաթղթերում կատարված համապատասխան նշումով և առանց արձակման նպաստների: Երրորդ կատեգորիայի անձինք տեղափոխվում էին այլ զորամասեր՝ որոշակի ժամկետով փորձաշրջան անցնելու համար: Բանակից հեռացված բոլոր «անարժանների» վերաբերյալ տեղեկությունները անպայմանորեն պետք է հաղորդվեին նրանց բնակավայրի զինվորական պետերին և վարչական իշխանություններին: Ազգությամբ հայ այն բոլոր սպաները, բժիշկները և դասային աստիճանավորները, որոնք ատեստավորում էին անցել, պարտավոր էին մնալ ծառայության մեջ՝ մինչև իրավիճակը հնարավորություն տար կատարելու մասնակի գորացրում:

Ատեստավորման հետևանքով դուրս մնացած, ինչպես նաև Հայաստանից կամավոր հեռացած զինվորականներին նոր կադրերով փոխարինելու համար զինվորական նախարարությունը ձեռնամուխ եղավ կադրերի պատրաստմանը: Արդեն 1918 թ. օգոստոսի 15-ին զինվորական նախարարին գեկուցվեց, որ «Հայկական ուսումնական կոմանդան» ձևավորված է²⁸: Նույն թվականի հոկտեմբերին նախարարը հաստատեց ուսումնական խմբի կանոնադրությունը և հաստիքները²⁹: Ուսումնական խմբի խնդիրն էր՝ պատրաստել զիտակ, կարգապահ, ընդհանուր զարգացում ունեցող կրտսեր սպայական կազմ³⁰:

Հայկական դիվիզիայի հրամանատարի 1918 թ. սեպտեմբերի 14-ի հրամանով ստեղծվեց զինվորականներից կազմված հանձնաժողով՝ գեներալ-մայոր Դուրյախանովի գլխավորությամբ: Հանձնաժողովի առջև դրվեց բանակային կանոնադրությունները վերանայելու խնդիր՝ հայկական բանակի պայմաններին դրանց համապատասխանեցմամբ: 1918 թ. դեկտեմբերի 25-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց «Աստիճանաբաշխման մասին ՀՀ զինվորական վարչության մեջ» օրենքը³¹: Այդ օրենքով սահմանվեց, որ ՀՀ զինվորական վարչությունում ժամանակավորապես պահպանվում են սպայական և դասական այն աստիճանները, որոնք գոյություն ունեին ռուսական բանակում: Սպաներն ու դասական աստիճանավորներն ընդունվում էին ՀՀ զինվորական հիմնարկություններ ու «զորաշարք» այն աստիճաններով, որոնք նրանք ունեցել են ռուսական բանակում: Սպաների և դասական աստիճանավորների աստիճանաբաշխումը կատարվելու էր համաձայն ռուսական բանակում գործող կանոնների: Սպաների և դասական աստիճանավորների աստիճանաբաշխման իրավունքը զինվորական նախարարի առաջարկով վերապահվում էր կառավարությանը³²:

²⁸ Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 50:

²⁹ Տես նույն տեղում, գ. 41, թ. 72:

³⁰ Տես «Положение объ Армянской учебной командѣ» (ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 41, թ. 74):

³¹ Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդ. 57, էջ 32–33:

³² Հետագայում կառավարությունը զինվորական նախարարի գեկուցմամբ ըստ ներկայացված հրամանի պարբերաբար շնորհում էր զինվորական կոչումներ (տես, օրինակ, Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 23-ի նիստի հմ. 28 օրագիրը (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 108)):

Որպես 1919 թ. ապրիլին բանակում իրականացված վերակառուցումների արդյունք՝ ստեղծվեցին Հայաստանի գորքերի հրամանատարի պաշտոն և զինվորական խորհուրդ՝ բաղկացած նախագահից ու երկու անդամից: Կառավարությունն իր 1919 թ. ապրիլի 24-ի նիստում նշանակեց «Հայկական գորքերի հրամանատարին» և Հայաստանի զինվորական խորհրդի անդամներին³³:

Բանակի կազմակերպման ոլորտում օրենսդիր և գործադիր մարմինների գործունեության հատուկ ուղղությունն էր օրենսդրական ճանապարհով զինծառայողների (սպայական ու շարքային կազմ, պաշտոնյաներ, զինապարտներ և կամավորներ) աշխատավարձերի ու վճարումների իրավական կարգավորումը: Իհարկե, գործընթացի նախաձեռնողը զինվորական նախարարությունն էր, իսկ օրենսդրական նախաձեռնության հեղինակը՝ կառավարությունը: Ընդհանրապես պաշտպանության ոլորտում ընդունված օրենքների ուսումնասիրությունից պարզվում է, որ գերակշռում էին հենց վճարումների, նպաստների և աշխատավարձերի վերաբերյալ օրենքները: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ նման օրենքները չէին շրջանցում խորհրդարանը, մինչդեռ մյուս պաշտպանական օրենքները անցնում էին միայն նրա համապատասխան հանձնաժողովով: Հայաստանի խորհրդի 1918–1919 թթ. գործունեության ընթացքում՝ մինչև նրա լիազորությունների փոխանցումը կառավարությանը, զինվորական նախարարության և զինծառայության վերաբերյալ ընդունված տասն օրենքներից չորսը վերաբերում են զինվորականներին տրվող նպաստներին և ռոճիկներին*:

³³ Տես «Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 24-ի նիստի հմ. 64 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, ք. 72): Հայկական գորքերի հրամանատար էր նշանակվել գեներալ Նազարբեկյանը: Զինվորական խորհրդի նախագահը ևս Նազարբեկյանն էր, իսկ անդամներն էին գեներալներ Հ. Հախվերդյանը և Հ. Ս. Բաղրամյանը (Իվան Սերգեյի Բաղրամովը):

* Նույն գործելաճոճը բնորոշ էր նաև Հայաստանի խորհրդարանին: 1919 թ. օգոստոս–1920 թ. ապրիլ ամիսներին պաշտպանական ոլորտին առնչվող նրա ընդունած 14 օրենքներից ութը վերաբերում էին սպաների և զինվորական այլ պաշտոնյաների, ինչպես նաև զինվորների ռոճիկների, նպաստների համակարգի կարգավորմանը կամ ավելացմանը: Այդ օրենքներից են՝ «ՀՀ զինվորական վարչության սպաներին, աստիճանավորներին և կամավարծություններին լիկվիդացիոն նպաստ տալու մասին» (1919 թ. սեպտեմբերի 16), «Զինվորական և քաղաքացիական մասերի պաշտոնյաներին, նախարարներին, նրանց օգնականներին և պառլամենտի պատգամավորներին ի հաշիվ ապագա ռոճիկի հավելումների 1500 ռ. նպաստ տալու մասին» (1919 թ. հոկտեմբերի 24), «1919 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում զինվորների օրական պարենի և անասունների կերի գների բարձրացման պատճառով գորական նախարարության նախահաշվի 3-րդ պրակից 9.371.600 ռուբ.՝ 2-րդ պրակի 2-րդ հոդվածի ա և բ կետերը փոխադրելու մասին» (1919 թ. դեկտեմբերի 12), «Զինվորների ռոճիկի մասին» (1919 թ. դեկտեմբերի 30), «Ձորական մասի պետական պաշտոնյաների ռոճիկի, օրապահիկի, բնակարանի, վառելիքի և լույսի վճարի մասին» (1919 թ. դեկտեմբերի 29), «Հաշմանդամ զինվորականների համար սահմանած նպաստի չափը 100 % ավելացնելու մասին» (1919 թ. դեկտեմբերի 10), «Հայաստանի ազատագրության ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար զոհվածների զավակներին ձրի դասական պիտույք մատակարարելու մասին» (1920 թ. հունվարի 5), «Հայաստանի ազատագրության ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար զոհվածների դպրոցական զավակներին 1919-1920 ուսումնական տարում ձրի դասական պիտույք մատակարարելու համար 100.000 ռ. վարկ բանալու մասին» (1920 թ. հունվարի 5):

Այսպես, 1919 թ. հունվարի 13-ին ընդունվեցին «Սպաների և զինվորական վարչության դասական աստիճանավորների ռոճիկների ավելացման մասին» և «Զինվորականների ռոճիկների ավելացման մասին» օրենքները³⁴: Առաջին օրենքով սպաների, զինվորական վարչության դասական աստիճանավորների, «ազատ հրավիրված» գրագիրների, գթության քույրերի նախկին դրամական վարձատրությունների փոխարեն սահմանվում էին նոր ռոճիկներ՝ օրենքին կցված երեք ցուցակներին համապատասխան: Վճարման նոր կարգը կիրառվելու էր 1919 թ. հունվարի 1-ից: Մինևույն ժամանակ թանկության պատճառով նախատեսվում էր մինչև 1918 թ. սեպտեմբերի 1-ը և դրանից հետո ծառայության անցածներին տարբերակված ձևով հատկացնել միանվագ նպաստ: Զինվորների բոլոր հիմնական ռոճիկներն ավելացվում էին ամսական 10 ռուբլով: Օրենսդիրը, կառավարությունը և զինվորական նախարարությունը մտահոգված էին նաև ռազմական գործողությունների ընթացքում վիրավորված և հաշմանդամ դարձած զինվորականներին նպաստներ հատկացնելու հարցով³⁵:

3. Շատ երկրների կառավարության իրավասությանը պատկանող հարցերից է համընդհանուր կամ մասնակի զորացրման կամ զորահավաքի վերաբերյալ որոշում ընդունելը³⁶: Մակայն Հայաստանի առաջին հանրապետությունում նման լիազորություն ունեին ոչ թե գործադիր իշխանությունը կամ պետության ղեկավարը, այլ օրենսդիր իշխանությունը: Զորացրման կամ զորահավաքի վերաբերյալ բոլոր որոշումներն ընդունվել են օրենսդրական իշխանության կողմից: Ալեհայտ է, որ բոլոր դեպքերում էլ օրենսդրական նախաձեռնության հեղինակը եղել է կառավարությունը, քանի որ

³⁴ Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1919, հոդ. 68, 69, էջ 40:

³⁵ Հայաստանի խորհուրդը 1918 թ. հոկտեմբերի 1-ին ընդունել է օրենք «Հաշմանդամ զինվորների միության վարչությանը տարբեր հավաք ռուբլի միանվագ նպաստ տալու մասին» (տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդ. 20, էջ 12): Մեկ այլ օրենքով՝ «Առժամյա օրենք հայ բանակի հաշմանդամ զորականներին նպաստ տալու մասին», որն ընդունվել է 1919 թ. փետրվարի 11-ին, նախատեսվում էր մինչև կենսաթոշակի վերաբերյալ ընդհանուր կանոնադրության մշակումը խնամատարության նախարարությանը հատկացնել վարկ՝ 85 հաշմանդամ սպաների, բժիշկների, աստիճանավորների և գթության քույրերի, ինչպես նաև 415 հաշմանդամ զինվորների նպաստներ նշանակելու և վեց ամիս հատկացնելու համար (տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները»: 1919, հոդ. 88, էջ 52): Այս հարցին անդրադարձել է նաև Հայաստանի խորհրդարանը: 1919 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հաշմանդամ զինվորականների համար սահմանված նպաստի չափը 100 %-ով ավելացնելու մասին» օրենքով այդ նպաստի չափը ավելացվեց 1919 թ. հոկտեմբերի 1-ից (տես «Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու»: Ե., 1919 թ. դեկտեմբերի 17, հմ. 8, հոդ. 84, էջ 59): Իսկ 1920 թ. հունվարի 5-ին ընդունված՝ «Հայաստանի ազատագրության ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար զոհվածների զավակներին ձրի դասական պիտույք մատակարարելու մասին» օրենքով նախատեսվում էր պետության հաշվին ձրի դպրոցական պիտույք մատակարարել ՀՀ դպրոցներում սովորող բոլոր այն չքավոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհվել էին Հայաստանի պաշտպանության համար մղված կռիվներում (տես «Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու»: Ե., 1920 թ. հունվարի 7, թիվ 1, հոդ. 8, էջ 6, հոդ. 9, էջ 7):

³⁶ Տես «Конституционное право зарубежных стран», с. 355:

խորհրդարանն ամենայն հավանականությամբ իր նախաձեռնությամբ նման օրենսդրական միջոցների չէր դիմի³⁷:

4. Լիազորությունների հաջորդ խումբը, որը մեր կարծիքով հետազոտման, համակարգման ու լուսաբանման կարիք ունի, զինվորական դրություն հայտարարելու և այն վերացնելու, ռազմադաշտային դատարանների գործունեությունը թույլատրելու հարցերն են: Անշուշտ, օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև այս լիազորությունների վերաբաշխումը կախված է պետական կառավարման ձևից: Խորհրդարանական հանրապետություններում այդ լիազորությունները սովորաբար վերապահված են լինում գործադիր իշխանությանը: Սակայն Առաջին հանրապետությունում այս հարցերի իրավական կարգավորումը շատ բարդ ու խրթին խնդիր էր: Այս ոլորտում գործում էր և՛ կայսերական, և՛ Ժամանակավոր կառավարության օրենսդրությունը: Հանրապետությունում չի ընդունվել որևէ իրավական ակտ, որը վերը թվարկված հարցերում ինչ-որ կերպ սահմանազատեր խորհրդարանի ու կառավարության իրավասությունները: Ինչպես և մնացած լիազորությունների դեպքում, այս հիմնահարցերի պարզաբանման համար ստիպված ենք դիմելու Հայաստանի խորհրդի, Հայաստանի խորհրդարանի, բոլոր հինգ կառավարությունների փաստական գործունեությանը: Ուսումնասիրելով և՛ Հայաստանի խորհրդի, և՛ Հայաստանի խորհրդարանի օրենսդրական գործունեությունը, ընդունված օրենքների արխիվային տարբերակները, կարելի է եզրակացնել, որ օրենսդիր մարմիններն իրենց գործունեության ընթացքում չեն զբաղվել այս պրոբլեմով: Իսկ դա նշանակում է, որ գործադիր իշխանությունն այդ իրավունքներն ի սկզբանե վերապահել էր իրեն:

Հստակության համար փորձենք առանձին-առանձին ուսումնասիրել հանրապետության ամբողջ տարածքում կամ նրա մի մասում ռազմական դրություն հայտարարելու, ռազմադաշտային դատարանների գործունեությունը թույլ տալու հարցերը:

³⁷ Հայաստանի խորհուրդն իր գործունեության ընթացքում գորահավաքի վերաբերյալ օրենքներ չի ընդունել: Սակայն ընդունել է երկու օրենք գորացրման և ծառայության հետաձգման վերաբերյալ: Առաջինը «Միջնակարգ դպրոցների աշակերտների զինվորական պարտադիր ծառայությունը հետաձգելու մասին» օրենքն է (1918 թ. հոկտեմբերի 26), որով միջնակարգ դպրոցների՝ գորակոչի ենթարկված աշակերտներին իրավունք էր տրվում դպրոցն ավարտելու համար ժամանակավորապես ազատվելու զինվորական ծառայությունից: Այդ արտոնությունից օգտվում էին մինչև 25 տարեկան երիտասարդները: 25 տարին լրացածները ենթարկվում էին գորակոչի, նույնիսկ եթե միջնակարգ դպրոցը չէին ավարտել (տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1918, հոդ. 30, էջ 18–19): Մյուս՝ «ՀՀ բանակի մասնակի գորացրման մասին» օրենքը (1919 թ. հունվարի 17), նախատեսում էր բանակի կազմի մասնակի գորացրում՝ իսկական զինվորական ծառայության մեջ թողնելով միայն 20-25 տարեկան զինվորականներին (տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները»: 1919, հոդ. 76, էջ 46–47):

Հայաստանի խորհրդարանն ընդունել է օրենքներ և՛ գորահավաքի, և՛ գորացրման վերաբերյալ: 1919 թ. սեպտեմբերի 9-ին ընդունվեց օրենք «29, 30, 31 և 32 տարեկան քաղաքացիներին գորակոչի ենթարկելու մասին» (տես «Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու»: Ե., 1919 թ. նոյեմբերի 7, հմ. 2, հոդ. 14, էջ 11–12): 1919 թ. հոկտեմբերի 21-ին ընդունվեց օրենք «25 տարեկանից վեր հասակ ունեցող դպրոցական պաշտոնյաներին զինվորական պարտականությունից ժամանակավորապես ազատելու մասին» (տես «Հայաստանի պառլամենտի օրենքների հավաքածու»: Ե., 1919 թ. նոյեմբերի 21, հմ. 4, հոդ. 36, էջ 26–27):

1918 թ. կառավարությունում երկու անգամ են քննարկվել ռազմական դրության հետ կապված հարցեր: Առաջին անգամ դա արվել է 1918 թ. օգոստոսի 14-ին, երբ կառավարությունը որոշում է կայացրել Դիլիջանի շրջանում ռազմական դրությունը վերացնելու և վարչական իշխանությունը ռազմական իշխանությունից սահմանազատելու վերաբերյալ³⁸: Այս դեպքում, իհարկե, ռազմական դրություն հայտարարողը կառավարությունը չէր. այն հայտարարված էր նախքան հանրապետության հռչակումը: Ուստի միանշանակ կարող ենք եզրակացնել, որ կառավարությունը իրավունք ուներ վերացնելու հայտարարված ռազմական դրությունը: 1918 թ. սեպտեմբերի 5-ին կառավարությունը նորից է անդրադարձել այս հարցին³⁹: Ջեկուցողը զինվորական նախարարն էր: Նա առաջարկել է ընդունել ռազմական և քաղաքացիական իշխանությունների փոխհարաբերությունների վերաբերյալ կանոնադրություն: Նախարարների խորհուրդը, լսելով զեկուցումը, որոշել է հաստատել այդ կանոնադրությունը: Նույն օրը կառավարությունը ի պատասխան զինվորական նախարարի այն հարցման, թե Հայաստանի տարածքի ո՞ր մասը պետք է համարվի զինվորական շրջան և որը՝ թիկունքային, որպեսզի որոշվեն քրեական գործերի ենթակայությունը և ընդդատությունը, ընդունել է հետևյալ որոշումը. «Հայաստանի ամբողջ տարածքը, բացի Դիլիջանի շրջանից, որի սահմանը նշված է ստորև, համարվում է ռազմական գործողությունների թատերաբեմ, ընդամենը Ելենովկա–Ն. Ախտա–Քանաքեռ խճուղուց և Նորք արվարձանն ու Բաշ-Գառնի–Գել-Այսորիա–Ջիրմանիս գյուղերը միացնող պայմանական գծից դեպի արևմուտք ու հարավ գտնվող տարածքը, ներառյալ այդ գյուղերը, կազմում է գորային շրջան, իսկ նշված գծից դեպի հարավ գտնվող տեղանքը՝ թիկունքային շրջան»⁴⁰: Ըստ այդ որոշման՝ կառավարությունը ընդհուպ մինչև 1918 թ. սեպտեմբեր Հայաստանի ամբողջ տարածքը դիտում էր որպես ռազմական գործողությունների շրջան և այնտեղ հայտարարել էր ռազմական դրություն: Բացառություն էր արված Դիլիջանի շրջանի և նրան հարակից մի շարք այլ տարածքների համար. այստեղ գործում էր ոչ թե ռազմական դրության ռեժիմը, այլ քաղաքացիական և ռազմական իշխանությունների փոխհարաբերության հատուկ կարգը:

1918 թ. ընթացքում որևէ այլ դեպքի կապակցությամբ ռազմական դրություն հայտարարելու որոշում չի ընդունվել: Նման որոշում չընդունվեց նույնիսկ հայ-վրացական ընդհարման շրջանում, որն սկսվեց 1919 թ. աշնանը և տևեց մինչև 1919 թ. դեկտեմբերի 31-ի գիշերվա ժամը 12-ը, երբ ուժի մեջ մտավ զինադադարի համաձայնագիրը⁴¹: Այստեղից հարց է ծագում. ինչպես էին պատերազմական գործողությունների շրջանում կառավարվում Դիլիջանի և Դարաքիլիսայի գավառները: Ակնհայտ է, որ երբ 1918 թ. օգոստոսին կառավարությունը հանրապետության տարածքի մի մասում,

³⁸ Տես «Նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 14-ի նիստի թիվ 15 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 12):

³⁹ Տես «Նախարարների խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 5-ի նիստի թիվ 30 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 32):

⁴⁰ Տես նույն տեղում:

⁴¹ Տես *Ս. Վրացյան*, Հայաստանի Հանրապետություն: Ե., 1993, էջ 235–240:

այդ թվում՝ Գիլիջանի շրջանում, վերացրեց ռազմական դրությունը, ապա չէր կարող ընդամենը մեկ և կես ամիս հետո նորից ռազմական դրություն հայտարարել, նույնիսկ եթե ունենար նման իրավունք: Սակայն արդեն աշնանը ակնհայտ էր, որ այդտեղ կենտրոնացվում են որոշակի ուժեր, և այդ իրավիճակից կառավարությունը ելք գտավ՝ ավելորդ աղմուկ չբարձրացնելու և այդ կապակցությամբ խորհրդարանի ընդդիմադիր խմբակցությունների բողոքի ալիքից խուսափելու համար:

Վրացական կողմից մոտալուտ վտանգ զգալով՝ կառավարությունը 1918 թ. հոկտեմբերի 7-ին կայացրեց հետևյալ որոշումը. «Գիլիջանի և Ղարաբաղի սահմանները ժամանակավորապես միացնել և վերածել մի զինվորական շրջանի՝ ենթարկելով այդ շրջանը շրջանային զինվորական կառավարչին»: Կառավարության նիստի օրագրում հարցը ձևակերպված է այսպես. «Լսեցին ՀՀ-ին վերադարձված Ղարաբաղի սահման և Լոռիի շրջանները դյուրին և շուտով կազմակերպելու համար՝ Գիլիջանի և Ղարաբաղի սահմանների միացման և մի շրջանի վերածման հարցը»: Ակնհայտ է, որ նոր ազատագրված տարածքները Գիլիջանին միացնելը քաղաքացիական կառավարման տեսանկյունից ոչինչ չէր տալիս, սակայն ռազմական տեսանկյունից ուներ առավելություններ: Գիլիջանի շրջանում տեղակայված զորքերը շարժվում էին առաջ՝ դեպի ազատագրված տարածքներ: Ռազմական բախումների ժամանակ թիկունքն ապահովելու նպատակով Գիլիջանը, որտեղ ռազմական դրությունը վերացված էր, միացվում էր Ղարաբաղի սահմանի հետ մեկ շրջանի մեջ և փաստորեն ենթարկվում ռազմական դրության ռեժիմին, որը նոր ազատագրված տարածքներում վերացված չէր: Այս կապակցությամբ ընդունված որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարությունը չուներ ռազմական դրություն հայտարարելու իրավունք, այլ այն պատկանում էր խորհրդարանին: Խորհրդարանում նման հարցի բարձրացումից խուսափելու համար կառավարությունը դիմեց ռազմական շրջանի ստեղծման քայլին: Այդ է վկայում վարչապետի զեկուցման հիման վրա 1919 թ. փետրվարի 28-ին կառավարության կայացրած որոշումը՝ «Գիլիջան-Ղարաբաղի սահմանի շրջանը 1919 թ. փետրվարի 28-ից վերացնելու մասին»⁴²: Նույնիսկ այս խորամանկ քայլն առաջ բերեց ընդդիմադիր մամուլի բողոքը: Հայ ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ» թերթի 1918 թ. հոկտեմբերի 25-ի համարում հրապարակվեց «Ի՞նչ է զինվորական դրությունը» հոդվածը, որում հեղինակը, քննելով իրավիճակը, հանգեց հետևյալ եզրակացության. «Պարզ է, որ մեզ մոտ երբ տեղական իշխանությունների իրավունքները սահմանափակվում են և նրա լիազորություններից մի քանիսը տրվում են զինվորական անձի, այսպիսի կարգադրություն կարող է անել միայն երկրի գերագույն իշխանությունը, այսինքն՝ Հայաստանի խորհուրդը: Այս հիմունքներով կառավարությունն իրավունք չուներ զորաբաժանի հրամանատար Դրոյին հատկացնելու նոր իրավունքներ, առանց պառլամենտի»:

⁴² Տես «Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 28-ի նիստի թիվ 28 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 31): Այդ պահին այն արդեն աննպատակահարմար էր, որովհետև զինադադարը գործում էր, հայ-վրացական կոնֆերանսն սկսել էր իր աշխատանքները (տես Ս. Վրացյան, նշ. աշխ., էջ 196):

1919 թ. ընթացքում, որքան մեզ հայտնի է, կառավարությունը ռազմական դրությամբ հարցերով զբաղվել է երեք անգամ. առաջինը՝ 1919 թ. հունվարի 14-ին, երկրորդը՝ 1919 թ. հունիսի 6-ին, երրորդը՝ 1919 թ. նոյեմբերի 14-ին:

1919 թ. հունվարի 14-ին ներքին գործերի նախարարը գեկուցեց Ալեքսանդրապոլի քաղաքացիական իշխանությունների խնդրանքի մասին՝ վերացնել պատերազմական դրությունը: Կառավարությունը չվերացրեց այդ դրությունը, սակայն հանձնարարեց զինվորական նախարարին գեկուցում «ներկայացնել առհասարակ պատերազմական դրությունը վերացնելու մասին, ուր որ այդ դրությունը մտցված է»⁴³: Այսպիսով՝ կառավարությունը չվերացրեց ռազմական դրությունը հանրապետության կազմում նոր ընդգրկված Ալեքսանդրապոլում: Երկրորդ անգամ կառավարությունում զինվորական (կամ ռազմական) դրության հարցը քննարկվեց 1919 թ. հունիսի 6-ին: Ջինվորական նախարարի գեկուցման հիման վրա կառավարությունը կայացրեց որոշում. «Հայտարարել զինվորական դրություն Ղազախ-Գիլիջան շրջանում՝ սույն թվի հունիսի 6-ից իրավունք տալով Գիլիջանի գորամասի պետին հիմնել զինվորական դաշտային դասարաններ (դասալիքների և քոչվորների միջև անախորժությունները կանխելու համար)»⁴⁴:

Այս որոշումից կարող է պատկերացում ստեղծվել, թե ռազմական դրությունը հայտարարում էր կառավարությունը: Իհարկե, դա այդպես չէր, քանի որ այդ պահին կառավարությունը, համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի, օժտված էր օրենսդրի «բոլոր իրավունքներով»⁴⁵: Այն, որ կառավարությունը չուներ ռազմական դրություն հայտարարելու իրավունք, ակնհայտորեն վկայում է 1919 թ. նոյեմբերի 14-ին ներքին գործերի նախարարի «Ջինվորական դրության մասին» գեկուցման կապակցությամբ նախարարների խորհրդի տված պարզաբանումը. «համաձայն ազգային խորհրդի որոշման՝ հանրապետության բոլոր շրջանները գտնվում են զինվորական դրության մեջ»⁴⁶: Այսպիսով՝ կառավարությունը, գործադիր իշխանությանը հատուկ մղումով և, անշուշտ, սպառնալից վիճակը նկատի ունենալով, անհրաժեշտ էր համարում հանրապետության տարածքում պահպանել ռազմական դրությունը: Եվ որպես իրավական կռվան վկայակոչում էր մինչհանրապետական շրջանի Ազգային խորհրդի (ամենայն հավանականությամբ՝ Թիֆլիսի) որոշումը, ըստ որի՝ Հայաստանի բոլոր շրջաններում հայտարարված էր ռազմական դրություն: Ակնհայտ է, որ ռազմական դրություն հայտարարելու իրավունքը Առաջին հանրապետությունում պատկանում էր խորհրդարանին, որը կարող էր նաև վերացնել այդ դրությունը: Սակայն ռազմական դրությունը, որը հայտարարված էր խորհրդարանի կողմից, փաստական հիմքերի չեզոքացման պայմաններում կարող էր վերացվել նաև կառավարության կողմից: Այդ

⁴³ «Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 14-ի երեկոյան նիստի թիվ 8 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, ք. 8–9):

⁴⁴ «Նախարարների խորհրդի 1919 թ. հունիսի 6-ի նիստի թիվ 97 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, ք. 123):

⁴⁵ «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», 1919, հոդ. 115, էջ 61:

⁴⁶ Տես «Նախարարների խորհրդի 1919 թ. նոյեմբերի 14-ի նիստի թիվ 183 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, ք. 102):

են հաստատում 1920 թ. ընթացքում ռազմական դրություն հայտարարելու կառավարական ձևակերպումները, որոնցից մի քանիսը հստակորեն ունեն օրենքի կարգավիճակ⁴⁷: Օրինակ՝ «Օրենք Վանանդի նահանգը զինվորական դրության մեջ հայտարարելու մասին» (1920 թ. սեպտեմբերի 14)⁴⁸:

Այսպիսով՝ այս դեպքերի հետազոտությունը ևս հիմք է տալիս պնդելու, որ ռազմական դրության հայտարարումը խորհրդարանի իրավունքն էր, սակայն այն կարող էր վերացվել կառավարության կողմից:

5. Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունն իրավունք ուներ արտոնելու ռազմական իշխանություններին՝ հիմնելու ռազմադաշտային դատարաններ: Կառավարության գործունեության ամբողջ պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հայտնաբերելու չորս նման ակտ: *Առաջինը*՝ զինվորական նախարարի գեկուցման հիման վրա 1919 թ. մարտի 22-ին ընդունված որոշումով Նոր Բայազետի շրջանում ռազմադաշտային դատարանի հիմնադրումն էր⁴⁹: Ուշագրավ է, որ այդ պահին, այսինքն՝ մարտի 22-ին, կառավարությունը դեռ չուներ օրենսդիր լիազորություններ, որոնք առաջին անգամ ստացավ ավելի ուշ՝ 1919 թ. ապրիլի 27-ին: Սակայն Նախարարների խորհրդի մարտի 22-ի նիստի օրագրում եզրափակիչ մասը

⁴⁷ 1920 թ. ընթացքում կառավարությունը ռազմական դրություն հայտարարելու կամ վերացնելու վերաբերյալ ընդունել է 7 ակտ: Դրանք են՝ 1) «Նոր Բայազետի շրջանում պատերազմական դրություն հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. մայիսի 4-ին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 74): Ուշադրություն դարձրեք, որ այդ պահին կառավարությունը չուներ օրենսդրական իրավունքներ, 2) «Յուվայից մինչև ռազմական գործողության ճակատը զինվորական դրության մեջ հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. հուլիսի 17-ին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 154, թ. 194), 3) «Երևան Գևանարյու և Երևան Սարդարաբադ հեռախոսի և հեռագրաթելի զոնան զինվորական դրության մեջ հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. սեպտեմբերի 9-ին (ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 152), 4) «Վանանդի նահանգում զինվորական դրություն հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. սեպտեմբերի 14-ին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 185, թ. 100), 5) «Նոր Բայազետի շրջանում զինվորական դրությունը վերացված հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. սեպտեմբերի 27-ին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 18, 2-րդ մաս, թ. 214), 6) «Ալեքսանդրապոլ քաղաքում և Շիրակի ամբողջ նահանգում զինվորական դրություն հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. սեպտեմբերի 28-ին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 215), 7) «Հայաստանի ամբողջ տարածքը ռազմական դրության մեջ հայտարարելու մասին»՝ ընդունված 1920 թ. սեպտեմբերի 30-ին (ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 196):

⁴⁸ Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 185, թ. 100: Նախարարների խորհրդի 1920 թ. սեպտեմբերի 14-ի նիստի հմ. 330 օրագրից պարզ չէ, թե զինվորական նախարարի առաջարկով Վանանդի նահանգը զինվորական դրության մեջ հայտարարելու և քաղաքացիական ու զինվորական իշխանությունները Ալեքսանդրապոլի գորախմբի պետ ավագ գորավար Փիրումյանի ձեռքում կենտրոնացնելու ակտն ինչ կարգավիճակ ունի՝ կառավարության որոշման, թե՛ օրենքի, քանի որ այդ պահին կառավարությունն ուներ օրենսդրական լիազորություններ (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 204): Սակայն այդ փաստաթղթում այս ակտն ուղակիորեն վերնագրված է «Օրենք Վանանդի նահանգը զինվորական դրության մեջ հայտարարելու մասին»: Այդ է վկայում նաև կառավարության սեպտեմբերի 28-ի նիստի հմ. 337 օրագիրը, որում Ալեքսանդրապոլ քաղաքում և Շիրակի ամբողջ նահանգում զինվորական դրություն հայտարարելու մասին զինվորական նախարարի գեկուցումը արձանագրության մեջ ամրագրված է. «Հաստատել օրինագիծը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 215):

⁴⁹ Տես «Նախարարների խորհրդի 1919 թ. մարտի 22-ի նիստի թիվ 43 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 50):

արձանագրված է հետևյալ կերպ. «Բացառությամբ մահվան պատժի, օրինագիծը հաստատել և ի կատար ածել»: Ակնհայտ է, որ հաստատվող ակտը չի կարող լինել օրինագիծ: Բացի այդ, պարզվում է, որ զինվորական նախարարը ցանկանում էր ռազմադաշտային դատարաններին օժտել նաև մահապատժի կիրառման իրավունքով, սակայն Նախարարների խորհուրդը դա չի հաստատել:

Երկրորդ ակտը 1919 թ. հունիսի 6-ին «Ղազախ–Գլխիջան շրջանում զինվորական դրություն հայտարարելու և Գլխիջանի գորամասի պետին զինվորական դաշտային դատարան հիմնելու իրավունք տալու մասին» որոշումն է⁵⁰:

Ուազմադաշտային դատարաններ հիմնելու հարցը Նախարարների խորհուրդը *երրորդ* անգամ քննարկել է 1919 թ. հոկտեմբերի 9-ին: Այդ օրը զինվորական նախարարը կրկին զեկուցել է «մի քանի վայրերում զինվորական դաշտային դատարաններ հիմնելու մասին»: Կառավարությունը որոշում է ընդունել. «Մատնանշված շրջանում տարածել զինվորական դաշտային դատարանի գործունեությունը, խնդրել զինվորական մինիստրին մշակված նախագիծ ներկայացնելու զինվորական դաշտային դատարաններ մտցնելու մասին՝ որոշելով նրանց իրավասությունը և գործողության ենթակա շրջանները»⁵¹: Որքանով մեզ հայտնի է, կառավարությունում այլևս այդպիսի նախագիծ չի քննարկվել: Այն չի անցել նաև խորհրդարանական ընթացակարգերով: Գուցե հաստատվել է «Ապահովության կոմիտեի» կողմից կամ խորհրդարանի զինվորական հանձնաժողովի և կառավարության խառը նիստում, սակայն դրանց գործունեության վերաբերյալ նյութեր մեզ չեն հասել:

Վերջին անգամ՝ 1920 թ. օգոստոսի 9-ին, կառավարությունը զինվորական իշխանություններին արտոնել է հիմնել ռազմադաշտային դատարաններ այն բոլոր վայրերում, որտեղ հայտարարված է ռազմական դրություն⁵²:

Այսպիսով՝ Առաջին հանրապետության կարևորագույն գործառնություններից էր երկրի պաշտպանությունը, որն իրականացվում էր հատուկ պետաիրավական հաստատությունների համակարգի միջոցով: Այդ գործառնության իրականացումը ենթադրում էր երկրի պաշտպանական բնագավառի կառուցում և կառավարում, նպատակաուղղված էր հատուկ կառուցվածքային կազմավորման՝ հայկական բանակի կայացմանը: Պաշտպանական համակարգի գործառնությունները կատարվում էր ռուսական և հանրապետական իրավական ակտերի հիման վրա, որոնց արխիվային հավաքածուի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Առաջին հանրապետության պետական մեխանիզմում օրենսդիր մարմիններն ունեցել են հետևյալ լիազորությունները. պաշտպանական բյուջեի հաստատման միջոցով բանակի կառուցման և կազմակերպման հիմքերի սահմանում, պաշտպանական ոլորտի վերաբերյալ օրենքների ընդունում, պատերազմի և խաղաղության

⁵⁰ Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 123:

⁵¹ «Նախարարների խորհրդի 1919 թ. հոկտեմբերի 3-ի նիստի թիվ 163 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 77):

⁵² Տես «Նախարարների խորհրդի 1920 թ. օգոստոսի 9-ի նիստի թիվ 320 օրագիրը» (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 118, 2-րդ մաս, թ. 182):

հարցերով որոշումների ընդունում, խորհրդարանական լիազորությունների և ընթացակարգերի միջոցով քաղաքական հսկողություն զինված ուժերի գործառույթների նկատմամբ:

Պաշտպանական համակարգի կառավարման ենթադրվող լիազորությունների և պատասխանատվության մեծագույն մասը կենտրոնացված էր գործադիր իշխանության համակարգում՝ ի դեմս կառավարության, զինվորական նախարարության և այլ մարմինների: Կառավարությունն իրականացնում էր երկրի պաշտպանության իրավական և կազմակերպական միջոցառումները և պատասխանատվություն էր կրում Ջինված ուժերի վիճակի, ամեն կարգի ապահովման համար: Այդ խնդրի կենսագործման համար նա օժտված էր համապատասխան լիազորություններով:

Կառավարության նպատակաուղղված գործունեության շնորհիվ 1920 թ. ամռան դրությամբ հայկական բանակում կային 25 հազարանոց կանոնավոր մարտական և մոտ 9 հազարանոց թիկունքային ուժեր և սպասարկող անձնակազմ, ինչպես նաև մոտ 6 հազարանոց կամավորական խմբեր⁵³: Թշնամական ուժերի թվաքանակը բոլոր ուղղություններով կազմում էր մոտավորապես 30 հազար հոգի՝ գումարած 10 հազարանոց ավագակային խաժամուժը: Ըստ մոտավոր տվյալների՝ Կարս–Ալեքսանդրապոլ ուղղության վրա թուրքերը կենտրոնացրել էին 4 դիվիզիա՝ ընդամենը 12 հազար զինվոր: Նույն ուղղության վրա հայկական կողմն ուներ մոտ 9 հազար զինվոր: Ինչպես տեսնում ենք, թվային գերակշռությունն այնքան էլ մեծ չէր: Բացի այդ, պետք է նկատի ունենալ մեր առավելությունն այն առումով, որ թուրքերը գտնվում էին կանոնավոր և դիքավորված պաշտպանական վիճակում: Ե՛վ ականատեսները, և՛ կառավարության գործունեությունը լուսաբանող փաստաթղթերը վկայում են, որ հայկական բանակը լավ զինված և ապահովված էր: Սակայն հայ-թուրքական պատերազմում մենք պարտություն կրեցինք: Հարց է առաջանում. ինչո՞ւ: Չէ՞ որ մոտ երկու տարվա ընթացքում, կարծես, ամեն ինչ արվել էր երկրի պաշտպանական համակարգի կայացման ու ամրապնդման համար:

Մեր մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ կառավարությունը, ամբողջ ուժերը կենտրոնացնելով կազմակերպակառուցվածքային շինարարության վրա, անտեսել էր բարոյահոգեբանական, դաստիարակչական աշխատանքը: Իսկ ցանկացած կազմակերպություն, որքան էլ կուռ լինի, առանց բարձր մակարդակի բարոյահոգեբանական ոգու և անձնագոհության, առանց գիտակցված նվիրվածության ու հայրենասիրության ի սկզբանե «մեռած» է, դատապարտված պարտության: Պատմության դասերը հուշում են, որ ազգային անվտանգության և պաշտպանության համակարգում կարևոր բաղադրիչ են բնակչության և զորքի իրավահոգեբանական-բարոյական որակները: Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ դաստիարակության պետական քաղաքականություն: Փոքրաթիվ ժողովրդի գոյատևման գրավականը առանձնահատուկ ազգային-հայրենասիրական ոգին է: Այդ առանձնահատուկ ոգին և կազմակերպական կառուցվածքը միասին կտան այն արդյունքը, որը մենք ակնկալում ենք պատմությունից: Ուխտի բոլոր

⁵³ Տես *Ս. Վրացյան*, նշ. աշխ., էջ 514:

տեսակի բարեփոխումները, այդ թվում՝ պաշտպանական ոլորտի, և իհարկե, հասարակական դաստիարակության ու կրթության համակարգը, ուղղակիորեն պետք է խարսխվեն այս ճշմարտության վրա: Կարծում ենք, որ ազգային հիմքով բարոյահոգեբանական, հայրենասիրական դաստիարակությունն ու կրթությունը պետք է դառնան բարեփոխումների գերակա նպատակներից մեկը: Միայն այդ դեպքում պաշտպանական ոլորտի բարեփոխումների միջոցով կստեղծվեն այնպիսի Չինված ուժեր, որոնք «երաշխավորված կերպով ապահովեն երկրի անվտանգ զարգացումը, բնակչության ֆիզիկական գոյությունը, սահմանների անձեռնմխելիությունը, ի գործու լինեն զապելու հակառակորդին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հասցնելու նրան անդառնալի կորուստներ, կարողանան լիարժեք կերպով մասնակցել միջազգային խաղաղարարական օպերացիաներին»⁵⁴:

⁵⁴ Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի բացման խոսքը»: «ՀԲ», 2008, հմ. 1:

ПОЛНОМОЧИЯ И ПРАВОВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ПРАВИТЕЛЬСТВА ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СФЕРЕ ОБОРОНЫ СТРАНЫ

*А. Г. ВАГАРШЯН, кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой
теории и истории государства и права ЕГУ*

РЕЗЮМЕ

В третьей Республике Армения в настоящее время осуществляются демократические реформы, охватывающие все сферы жизнедеятельности государства, в том числе оборонную сферу. В этом аспекте интерес представляет исторический опыт армянского народа по созданию Вооруженных сил первой Республики Армения. В данном ключе в статье, на основе систематизации архивного материала, исследуются полномочия и правовая деятельность Правительства Первой Республики Армения (1918—1920 гг.), поскольку в ее государственном механизме полномочия и ответственность по формированию, управлению и правовому регулированию оборонной системой в основном лежали на правительстве. Однако, правительство, фокусируя все внимание на организационно-структурных преобразованиях и совершенствовании ВС, упустило из виду другую составляющую боевой готовности войск—обеспечение необходимого уровня морально-психологического и патриотического воспитания личного состава войск и всего населения, что привело к потере боеспособности войск.

Уроки истории показывают, что в системе национальной безопасности и обороны духовно-нравственные качества личного состава ВС являются важнейшей структурной составляющей их боеготовности. Соответственно, в современный период очень важно иметь государственную программу, нацеленную на обеспечение должного уровня этой составляющей (причем не только в ВС, но всего населения), без которой малочисленные народы не имеют будущего.

THE PLENARY POWERS AND LEGAL ACTIVITY
OF THE GOVERNMENT OF THE FIRST REPUBLIC
OF ARMENIA IN THE COUNTRY'S DEFENSE SPHERE

*A. G. VAGHARSHYAN, Candidate of Law, Docent, Head of the Chair
of Theory and History of State and Law, YSU*

SUMMARY

Covering all the spheres of the State's vital activity including the defense sphere the democratic reforms are being implemented at present in the Third Republic of Armenia. In this aspect the Armenians' historical experience on building the Armed Forces of the First Republic of Armenia is of interest. In this context based upon the archive material systematization, the plenary powers and legal activity of the Government of the First Republic of Armenia (1918—1920) are examined in this article; while the plenary powers and responsibility on formation, administration and legal regulation of the defense system in its state mechanism mainly lay with the Government. However, the Government focusing all its attention to the organization-structural transformation and improvement of the Armed Forces, neglected another component of troops combat readiness—to ensure a necessary level of moral psychological and patriotic training of troops personnel and all the population, which resulted in fighting efficiency loss of troops.

The lessons of history show that moral-spiritual qualities of the Armed Forces personnel in the system of national security and defense are the most important structural constituent for their combat readiness. Accordingly, it is very important in the modern period to have a state program targeted at ensuring a proper level of that constituent (and not only in the Armed Forces, but of the entire population) without which small peoples do not have future.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐ

Ռ. Վ. ԱՂՈՒՉՈՒՄՅՅԱՆ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Բոլոր ժամանակներում հասարակության կենսագործունեության մեջ քաղաքական գործչի անձի պրոբլեմն զբաղեցրել է հատուկ տեղ և եղել է սևեռուն հասարակական ուշադրության օբյեկտ: Մարդկանց միշտ հետաքրքրել են քաղաքականությունը ձևավորող առաջնորդների կյանքի և գործունեության մանրամասները: Կախված հասարակության քաղաքական գիտակցության մակարդակից՝ մի մասին ավելի շատ հետաքրքրում են նրա անձնական կյանքի մանրամասները, մյուսներին՝ պրոֆեսիոնալ քաղաքական պիտանիությունը, ոմանց էլ՝ նրա շրջապատը և թիմը: Կայուն ժողովրդավարական սկզբունքներ ունեցող հասարակության մեջ, որտեղ գերակայում են բացությունն ու թափանցիկությունը, քաղաքական առաջնորդի մասին կազմվում է ավելի օբյեկտիվ և ամբողջական պատկերացում: Այստեղ կարևոր են ինչպես նրա անձնային բնութագրերը, այնպես էլ դրանց ներկայացումը բնակչությանը, որը պետք է կատարի ընտրություն: ՈՒստի զարգացած պետություններում կան առաջնորդի «կերպարի ստեղծմամբ» զբաղվող տարբեր «հաստատություններ»: Ջարգացող, հատկապես՝ փոքրաթիվ բնակչություն ունեցող պետություններում, որտեղ գոյություն ունեն քիչ թե շատ սերտ միջանձնային հարաբերություններ, որտեղ ժողովրդավարությունը միայն առաջին քայլերն է անում, ամբողջական օբյեկտիվ տեղեկույթ չի լինում: Այնուամենայնիվ, քանի որ դրա պահանջմունքը կա, այն լրացվում է տարբեր լուրերով ու ասեկոսեներով: Հաճախ դա մատուցվում է որպես միանգամայն ճշմարտացի իրողություն և տվյալ անձնավորության մասին սխալ պատկերացումներ է ստեղծում:

Իհարկե, անհրաժեշտ է օբյեկտիվ և բազմակողմանի պատկերացում ունենալ, որպեսզի հնարավոր լինի ճիշտ ընտրություն կատարել, այլապես կրկին կտիրեն հիասթափություն ու անվստահություն, որոնք անշուշտ կխոչընդոտեն հասարակության ժողովրդավարացմանը:

Քաղաքագիտության մեջ ձևավորվել է առաջնորդի պրոբլեմի մեկնաբանության երկու ավանդույթ: Ըստ առաջինի՝ կարևորվում է անձի դերը քաղաքական զարգացումների ուղղության որոշման հարցում: Այս դիրքորոշման կողմնակիցները քաղաքականությունը հաճախ պայմանավորում են առաջատարների, առաջնորդների, հեղինակությունների անձով: Երկրորդն ավելի հակված է քաղաքականության մեջ հաշվի առնելու անձի դերը: Դա կապված է օբյեկտիվություն ստեղծելու ձգտման հետ, երբ սուբյեկտիվ գործոնի դերը հասցված է նվազագույնի: Ինչպես հաճախ է լինում, մենք, մի ծայրահեղությունից անցնելով մյուսին, մոռանում ենք «ուսկե միջինի» օրենքը:

Ըստ էության՝ կարևոր են առաջնորդի և՛ անհատական, անձնային հատկությունները, և՛ նրա «ենթակայությունը» պետության շահերին:

Ժամանակակից գիտական գրականության մեջ առանձնացվում են անձնավորության կառուցվածքի հետևյալ երեք հիմնական մակարդակները՝ կենսաբանական, հոգեբանական և սոցիալական: Մենք նախ կենսաբանական տարրերից անցնում ենք հոգեբանական, ապա՝ սոցիալական տարրերին: Մարդու՝ որպես անհատի հատկությունները մտնում են անձնավորության կառուցվածքի մեջ, ընդամին նրանք ենթարկվում են սոցիալականացման: Ժամանակակից գիտության մեջ գոյություն ունի մի առանձին բաժին՝ կենսաբաղադրագիտություն, որը ուսումնասիրում է քաղաքականության մեջ այլասիրության, բռնության, ագրեսիայի, պաշտպանական հակազդումների, գերակայության և մարդու այլ հիմնական հատկանիշների դրսևորումները: Ոչ պակաս կարևոր է պարզել, թե քաղաքականության մեջ ինչ տեղ կարող են զբաղեցնել անձնավորության այնպիսի կենսաբանական բաղադրատարրեր, ինչպիսիք են ժառանգականությունը, խառնվածքը, սեռն ու տարիքը, առողջական վիճակը: Դրանք կարող են լինել վարքի որոշիչներ և պետք է հաշվի առնվեն այն մարդկանց ընտրագատման դեպքում, որոնք քաղաքականության մեջ խաղալու են ակտիվ առաջատար դեր:

Անձնավորության հոգեբանական մակարդակը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են հույզերը, կամքը, հիշողությունը, ունակությունները, մտածողությունը և ընդհանրապես բնավորությունը: Դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին և միասին վերցրած կարող են ազդել քաղաքական վարքի վրա և հաճախ դառնում են նրա շարժիչ ուժը: Առանձնահատուկ դեր ունի անձնավորության առավել գիտակցված հոգեբանական տարրը՝ կամքը, առանց որի հնարավոր չէ հասնել նպատակին գործունեության ցանկացած ոլորտում: Քաղաքականության մեջ կամքը ոչ միայն նպատակին հասնելու համառությունն է, այլև ենթադրում է ազգային շահերի համար անձնական կամ խմբային շահերից վեր կանգնելու ունակություն: Առանց քաղաքական կամքի հնարավոր չէ դուրս գալ ժամանակավրեպ քաղաքական կարծրատիպերի շրջանակներից և հաղթահարել մտածողության իներցիան: Քաղաքականության մեջ հիշողությունը ևս ունի էական նշանակություն: Նախ. լավ հիշողությունը առաջնորդի կարևոր անձնային հատկություններից է, քանի որ նրան անհրաժեշտ է լինում իր գիտակցության միջով անցկացնել հսկայական քանակությամբ տեղեկույթ: Երկրորդ. քաղաքական հոգեբանությանը հետաքրքրում է ժողովրդի, մարդկանց առանձին խմբերի պատմական հիշողության երևույթը: Ընդամին անհրաժեշտ է հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում որոշ իրադարձություններ մոռացվում են, իսկ մյուսները չեն կորցնում իրենց քաղաքական արդիականությունը և կարող են հասարակության քաղաքական կյանքում դառնալ գործուն մեխանիզմ:

Անձնավորության սոցիալական մակարդակը ներկայացված է առավել բարդ անձնային կառուցվածքներով՝ դիրքորոշումներով, արժեքներով, նպատակներով, աշխարհայացքով: Անձնավորության քաղաքական կառուցվածքի վերլուծությունը հնարավոր չէ առանց պարզելու նրա շահերը, պահանջումները և շարժառիթները,

որոնք էլ նրա սոցիալական կառուցվածքի մասն են: Անձի ու քաղաքականության փոխազդեցությունը ենթարկվում է տարբեր մակարդակի օրինաչափությունների, որոնք, վրադրվելով միմյանց, մի կողմից, ձևավորում են անձնավորության զարգացման որոշակի իրավիճակ, մյուս կողմից՝ ազդում են քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա:

Այսօր Հայաստանում միջավայրը խիստ քաղաքականացված է: Միևնույն ժամանակ քաղաքականությունը կարիք ունի նոր տիպի անձի՝ ակտիվ քաղաքացու, որն ունակ է ինքնուրույն որոշումներ կայացնելու և ունի բարձր աստիճանի պատասխանատվության զգացում: Նման անձ ձևավորվում է արդի քաղաքականության մեջ առկա հակասական միտումների պայքարում. մի կողմից՝ քաղաքականության ոլորտում անձի ակտիվացումը ժամանակակից աշխարհում դառնում է հասարակական պահանջարկ, մյուս կողմից՝ առկա են քաղաքական օտարման գործընթացներ, որոնք կապված են քաղաքականության՝ որպես կարևոր մարդկային պրոբլեմների լուծման միջոցի նկատմամբ անվստահության աճման հետ: Այդ միտումների պայքարն ունի ընդհանուր օրինաչափություն. տեղի է ունենում մարդու վարքի կանոնավորիչների փոփոխություն: Պետության և նրա հաստատությունների կողմից իրագործվող արտաքին խիստ վերահսկմանը փոխարինում են ներքին անձնային կարգավորիչները՝ խիղճը, համոզմունքները, արժեքները:

Քաղաքական առաջնորդ ընտրելիս անհրաժեշտ է իմանալ և հաշվի առնել տվյալ անձնավորության բաղադրատարրերը: Եվ մեզինչ յուրաքանչյուրը պետք է ամենայն պատասխանատվությամբ, օբյեկտիվ ու ակտիվ կերպով վերաբերվի ընտրությանը, հակառակ դեպքում կրկին տեղ կգտնեն հիասթափությունը, անվստահությունը, փուչ խոսակցությունները, որոնք ամենևին էլ չեն նպաստում մեր երիտասարդ պետության ժողովրդավարական զարգացմանը և մեր ձևավորմանը որպես ժամանակակից քաղաքացիական հասարակության անդամների:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Е. Б. Шестопал.* Политическая психология. М., 2007.
2. *В. Г. Крысько.* Социальная психология. М., 2004.
3. *И. Ларин, М. Беловодская.* Современные техники влияния: азбука лидерства. СПб, 2001.
4. *А. Хьелл, Д. Зиглер.* Теории личности. СПб, 2007.
5. «Хрестоматия. Психология лидерства». Минск, 2004.
6. *Г. А. Саркисянц.* Власть и спецслужбы. Е., 2005.

ПОЛИТИЧЕСКАЯ ПСИХОЛОГИЯ

**ПОЛИТИЧЕСКИЙ ЛИДЕР:
НЕКОТОРЫЕ ЛИЧНОСТНЫЕ АСПЕКТЫ ПОЛИТИКИ**

Ր. Վ. ԱԳՄՍՄՑՅԱՆ, քանդիդատ քսիհոլոգիքսկի սայնս, ցոցենտ

РЕЗЮМЕ

Во все времена проблема личности политика-лидера занимала в жизнедеятельности общества особое место. В развитых демократических странах, где приоритетными являются транспарентность и открытость, важное значение имеют как собственно личностные качества лидера, так и их преподнесение населению, поэтому там существуют особые «институты» по созданию имиджа лидера. В развивающихся государствах, в особенности—с небольшим населением, недостаточность информации подчас восполняется слухами, сплетнями.

В политической науке есть две традиции трактовки проблемы лидера. По первой—личность играет определяющую роль в развитии политических процессов, во второй—она функционирует в рамках общих закономерностей. В сущности, важны как индивидуальные характеристики личности лидера, так и его «подчиненность» интересам государства.

Выделяются три ведущих уровня структуры личности, подверженные социализации,—биологический (наследственность, темперамент, пол, возраст, здоровье), психологический (эмоциональность, воля, память, способности, характер в целом) и социальный (установки, ценности, цели, мировоззрения). Анализ политической структуры личности невозможен без выявления ее интересов, потребностей, мотивов.

В сильно политизированных средах политика нуждается в личности нового типа—активного гражданина, способного к самостоятельному принятию решений и обладающего чувством высокой ответственности перед нацией и государством. С учетом того, что на смену внешнего жесткого контроля со стороны государства и его институтов приходят внутриличностные регуляторы—совесть, убеждения, ценности,—каждый из членов электората должен осознанно и осмысленно производить выбор, основываясь на анализе личностных качеств политического лидера.

POLITICAL PSYCHOLOGY

**POLITICAL LEADER:
SOME PERSONALITY ASPECTS OF POLITICS**

R. V. AGHOZOUMTSIAN, Candidate of Psychological Sciences, Docent

SUMMARY

The personality problem of a politician-leader has held a special place in the vital activity of the society in all times. Both strictly personality traits of a leader and their presentation to the population are significant in the developed democratic

countries, where the transparency and openness are a priority. Thus, in those countries there exist special «institutions» on creating a leader's image. Insufficiency of information in developing countries, especially in those with small population, is at times compensated with rumours, gossips.

There are two traditions of interpreting the problem of a leader in the political science. A person plays a determining role in the progress of political processes according to the first one, and he functions in the framework of common regularities in the second tradition. Both individual characteristics of a leader's personality and his «submission» to the State's interests are important as a matter of fact.

Three leading levels of the personality structure, subject to the socialization,—biological (heredity, temperament, sex, age, health), psychological (emotion, will, memory, abilities, character as a whole) and social (orientations, values, goals, world-outlooks) are singled out. The analysis of a personality's political structure is impossible without revealing his interests, needs, motives.

In highly politicized environments the politics needs a personality of a new type—an active citizen, capable of making decisions on his own and possessing a sense of high responsibility towards the nation and the State. Each of the members of the electorate should make a reasonable and comprehensive choice upon the analysis of personality traits of a political leader, taking into account that external strict control by the State and its institutions is changed with the interpersonal regulators—conscience, believes, values.

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԽԱԹԱՐԻՉ
ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ԵՎ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻ ՄՈԴԵԼ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԱՅԳ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

*Ա. Է. ԲԱԲՈՒՐՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ Կապի գորքերի,
Կապի և ԱԿՀ վարչության պետ, Ա. Ա. ՍՈՒՐԱԴՅԱՆ, փոխգնդապետ,
ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ ծրագրավորման բաժանմունքի պետ*

Տեղեկատվական համակարգի (ՏՀ) տեխնիկական վիճակների բազմությունը նշագրենք $S = \{S_i\}$ -ով: Կառավարում ասելով մենք նկատի ունենք բազմաթիվ խաթարիչ ազդեցությունների (ԽԱ) հետևանքով համակարգի տեխնիկական վիճակի փոփոխության վերահսկումը և աշխատունակության վերականգնումը¹:

Համակարգի նորմալ գործառնությունը պայմանավորվում է, առաջին հերթին, նրա աշխատունակությամբ, այսինքն՝ իր գործառնությունները պահանջվող որակով կատարելու համակարգի ունակությամբ: Աշխատունակ վիճակը այնպիսի վիճակ է, որի դեպքում համակարգի կողմից իր գործառնությունների կատարման որակը բնութագրող ցուցանիշների արժեքները համապատասխանում են սահմանված պահանջներին²: Այսպիսով՝ համակարգի S_i տեխնիկական վիճակը որոշ R_i ԽԱ-ի նկատմամբ գործառնության տեսակետից կայուն է, եթե այդ ազդեցության հետևանքով համակարգն անցում է կատարում այնպիսի S_{i+1} վիճակի, որին համապատասխանում է $E_r^{(i+1)}$ աշխատունակ ֆունկցիոնալ վիճակը, այսինքն՝ կատարվում է հետևյալ արտապատկերումը՝

$$\gamma^{(i)} : R_i X S_i \rightarrow E_r^{(i+1)}: \quad (1)$$

Համակարգի տեխնիկական վիճակի փոփոխությունը առաջացնում է ֆունկցիոնալ վիճակի համապատասխան փոփոխություն. համակարգը E_i վիճակից անցնում է E_{i+1} վիճակի: Ընդամեն, եթե E_{i+1} վիճակում բավարարվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են համակարգի գործառնությունների կատարման որակը բնութագրող ցուցանիշների արժեքներին, ապա S_i տեխնիկական վիճակը R_i -ի նկատմամբ կայուն է: Ուստի համակարգի յուրաքանչյուր S_i տեխնիկական վիճակին կարող է համապատասխանել այն $S_i \rightarrow \{E_r, E_0\}$ երկակի ենթաբազմության տարրերից մեկը, որը համապատասխանում է համակարգի կա՛մ աշխատունակ, կա՛մ խափանմամային

¹ Տես *С. А. Клейменов, В. П. Мельников, А. М. Петраков. Информационная безопасность и защита информации. М., 2008:*

² Տես *П. Н. Девянин, О. О. Михальский, Д. И. Правиков, А. Ю. Щербаков. Теоретические основы компьютерной безопасности. М., 2000:*

ֆունկցիոնալ վիճակին: Այն ժամանակ ՏՀ մոդելը կարելի է ներկայացնել $G(A, D)$ կշռյալ գրաֆի տեսքով, որտեղ A -ն գրաֆի՝ համակարգի տեխնիկական վիճակների բազմությունը համապատասխանող $\{a_i\}$ զագաթների բազմությունն է, D -ն՝ a_i վիճակից a_j վիճակին համակարգի անցման հնարավորությունը բնութագրող կողերի $\{d_{ij}\}$ բազմությունը³: Փաստորեն, յուրաքանչյուր կող որոշում է ՏՀ տեխնիկական վիճակի փոփոխման ուղղությունը: Խաթարման ընդհանրացված ցուցանիշը նշագրենք $\pi[a_i, a_j]$ -ով: Այն հավասար կլինի՝

$$\pi[a_i, a_j] = \sum_k \pi_k(a_i, a_j) P(a_i, a_j),$$

որտեղ $\pi[a_i, a_j]$ -ն տեխնիկական վիճակի փոփոխման b_{ij} ուղղությամբ խաթարման ցուցանիշի արժեքն է, $P(a_i, a_j)$ -ն՝ այդ ուղղությամբ խաթարիչ փոփոխության հավանականությունը:

Ժամանակի ցանկացած պահի համակարգը կարող է ենթարկվել ԽԱ-երի $R = \{R_i\}$ բազմությանը, որտեղ $i = 1, 2, \dots, k_d$: ԽԱ-երի հնարավոր տիպերը դասակարգենք հետևյալ կերպ. դրանք կարող են լինել դինամիկական և հաստատուն: Դինամիկական է կոչվում այն ազդեցությունը, որը ՏՀ-ն նպատակաուղղված կերպով և հաջորդաբար փոխադրում է մի տեխնիկական վիճակից մյուսը: Ընդամենը ենթադրվում է, որ անցումների ընթացքում համակարգը աստիճանաբար հետաճում է, այսինքն՝ կորցնում է իր աշխատունակությունը: Այսպիսով՝ R_i -րդ դինամիկական ԽԱ-ին համապատասխանում է որոշ $R_i \rightarrow E^{(i)} = \{E_k^{(i)}\}$ ենթաբազմություն, որի տարրերի թիվը մեկից մեծ է: Մինչդեռ հաստատուն ԽԱ-ն համեմատաբար կայուն է. դրան համապատասխանում է մեկ փոփոխված տեխնիկական վիճակ, որն սպասում է իր շտկմանը:

Եթե ԽԱ-ն գնահատենք ըստ ժամանակի և ազդեցության բնույթի, ապա այն կարող է լինել ակտիվ կամ ավարտված: Տվյալ ցուցանիշն անհրաժեշտ է փոփոխությունների հետագա փոփոխական հնարավորության տեսակետից դրանց վերլուծության համար: Եթե ԽԱ-ն ակտիվ է, չի կարելի համոզված կերպով այն լիովին նույնականացնել, քանի որ միշտ կա հավանականություն, որ դեռ կարող է դրսևորվել մի նոր՝ մինչ այդ չդասակարգված, կողմով: Չնույնականացված ակտիվ ԽԱ-ն ավարտական փուլում կարող է համակարգը փոխադրել այնպիսի վիճակներից մեկը, որոնք առաջանում են միմյանց ոչ համարժեք ԽԱ-երի հետևանքով և իրենց ներուժի վերաբերյալ լիարժեք տեղեկույթ չլինելու պատճառով պահանջում են հետևողական վերահսկում⁴:

Ցանկացած ՏՀ ունի պաշտպանության և վերականգնման միջոցներ: Համապատասխանաբար, ցանկացած R_i ԽԱ-ն կարող է նույնականացվել ըստ $\sigma = \{\sigma_S\}$ հատկանիշների ինչ-որ սանդղակի: Հարկ է տարբերել երկու վիճակ.

³ Տես Ս. Պ. Ю. Белкин, О. О. Михальский, А. С. Першаков и др. Программно-аппаратные средства обеспечения информационной безопасности: защита программ и данных. М., 1999:

⁴ Տես С. В. Глушаков, Р. О. Соболев, Т. С. Хачиров. Секреты хакера: защита и атака. М., 2008:

– համակարգը ենթարկվել է ազդեցության և հայտնաբերել է այն, բայց դեռ չի անցել նոր տեխնիկական վիճակի,

– համակարգն անցել է նոր տեխնիկական վիճակի և միայն դրանից հետո է գնահատել ազդեցությունը:

Կոնկրետ ԽԱ-ի ենթարկված ՏՀ աշխատունակության վերականգնմանը կամ մեծացմանը նպաստող միջոցների և հնարավորությունների (ՄՀ) համակարգված բազմությունը նշագրենք $F = \{F_i(R_i)\}$ -ով: Ընդամին, յուրաքանչյուր F_i -ի կհամապատասխանի այնպիսի կոնկրետ գործողությունների $F_i = \{f_k^{(i)}\}$ բազմություն, որոնց համախումբն առաջացնում է կանոնների, հանձնարարականների, ցուցումների, հրահանգների կոնկրետ հաջորդականություն: Դրանք պայմանականորեն անվանենք վերականգնողական գործողություններ ու նշագրենք Φ -ով, այսինքն՝ $\forall f_n^{(m)} \in \Phi$: Այդ դեպքում (1) արտապատկերումը կստանա հետևյալ տեսքը.

$$\gamma^{(i)} : R_i X S_i \rightarrow E_r^{(i+1)} X F_r^{(i+1)}:$$

Եթե R_i դինամիկական ԽԱ-ն նույնականացվի պատեհաժամորեն, և ձեռնարկվեն համապատասխան $F_i(R_i) = \{f_k^{(i)}\}$ միջոցները, ապա այն կարող է վերափոխվել հաստատուն վիճակի:

ՏՀ-ն կարող է միաժամանակ ենթարկվել մի քանի ԽԱ-երի, և դրանց նույնականացման համար կարող է անհրաժեշտ լինել տեխնիկական վիճակների անցումների հերթականության վերլուծությունը: Այդ վիճակները կարող են կազմել $V^{(t)} = \{v_j\}$, $i=1, \dots, t$ հաջորդականությունը, որտեղ v_j -ն համապատասխանում է որոշ $b_{in} \in B$ -ի, իսկ t -ի արժեքը պայմանավորում է փոփոխված վիճակների թիվը:

Գիցուք՝ յուրաքանչյուր նույնականացված ԽԱ-ին համապատասխանում է ՏՀ տեխնոլոգիական վիճակի փոփոխման ուղղությունների մատրիցը՝

$$R_i \rightarrow M^{(i)} = \|b_{in}^{(i)}\|,$$

որտեղ $b_{in}^{(i)} = \pi[a_i, a_n] = \sum_k \pi_k(a_i, a_n) P(a_i, a_n)$:

Այսպիսով՝ R_i -րդ ԽԱ-ի նույնականացման և չեզոքացման համար անհրաժեշտ է նրա գնահատումն ըստ $(\sigma^{(i)}, M^{(i)}) \rightarrow F^{(i)}$ զույգի: $R^{(t)} = \{R_1^{(t)}, R_2^{(t)}, \dots, R_5^{(t)}\}$ ԽԱ-երի բազմությունն անվանենք ՏՀ տեխնոլոգիական վիճակի փոփոխման t -րդ քայլում առկա համարժեք խաբարիչ ազդեցությունների (ՀԽԱ) բազմություն, եթե դրանցից յուրաքանչյուրի համար կատարվում է հետևյալ հարաբերակցությունը՝


$$(R_f^{(t)} \in R^{(t)}) \& (R_h^{(t)} \in R^{(t)}) \rightarrow (\sigma^{(f)}, M^{(f)}) = (\sigma^{(h)}, M^{(h)}), \quad (2)$$

որը գնահատվում է Ա տարածությունում:

ՀԽԱ-ի հիմնական առանձնահատկությունն այն է, որ $F^{(i)}$ -ի այն արժեքները, որոնք համապատասխանում են նրա տարրերին, կարող են չհամընկնել, այսինքն՝ (2) հարաբերակցության համար կունենանք՝ $F^{(f)} \cap F^{(h)} \neq \emptyset$:

Քանի որ տեխնիկական վիճակների թիվը կարող է լինել անսահման մեծ, ապա ՏՀ-ն կարող է ունենալ ԽԱ-երի միաժամանակյա վերահսկման սահմանափակ

ռեսուրս: Մտցնենք $Z^{(t)}(k_S)$ բացթողման ֆունկցիան, որով պահանջվում է ՀԽԱ-ի t -րդ քայլում բաց թողնել դինամիկ խաթարիչ ազդեցության k_S քայլեր, որպեսզի դրանցից գոնե մեկը լինի նույնականացված: Ընդամին յուրաքանչյուր k_S -րդ քայլում կատարվում են համապատասխան $F^{(EDV)}(V^{(t)})$ գնահատումներ: ԽԱ-երին հակազդեցութ-



Նկ. ԽԱ-երի չեզոքացման և ՏՀ աշխատունակության վերականգնման աստիճանավոր ալգորիթմի բլոկ-սխեման

յան վեկտորը նշագրենք $B^{(t)}=(B_1^{(t)}, B_2^{(t)}, \dots, B_m^{(t)})$ -ով: Գրա ամեն մի տարր պատկանում է՝ $B_j^{(t)}=F_d \in F$: m -ի արժեքը սահմանափակ է և բնութագրում է ՏՀ ռեսուրսը: Այն անվանենք վերահսկման լայնություն: Եթե ՏՀ տեխնոլոգիական վիճակի փոփոխման t -րդ քայլում ՀԽԱ-ի չափողականությունը նշագրենք $n_{EDV}^{(t)}$ -ով, ապա k_S բացթողումների թիվը կլինի ուղիղ համեմատական $n_{EDV}^{(t)}$ -ին և հակադարձ համեմատական վերահսկման m լայնությանը, այսինքն՝ $k_S=f(n_{EDV}^{(t)}/m)$: Այդ դեպքում նպատակային ֆունկցիան կհանգեցվի $\min k_S(t)$ չափանիշի նվազարկմանը: Տվյալ խնդրի լուծումը հնարավոր է դառնում $B^{(t)}$ վեկտորի ձևավորման օպտիմալ եղանակի ընտրության պայմանով:

Դիցուք՝ յուրաքանչյուր նույնականացված ԽԱ-ի, կախված աշխատունակության վրա ազդեցության վտանգավորության աստիճանից, տրվել է համապատասխան կշռային գործակից, այսինքն՝ $R_i \rightarrow W_i$:

Բոլոր ՄՀ-ների համար կառուցենք կապակցվածության մատրից՝ $M_{SV}=\|M_{ij}\|$, որի յուրաքանչյուր տարրի համապատասխանում է $M_{ij}=(F^{(i)} \cap F^{(j)})*(W_i+W_j)$

արժեքը, այն է՝ համընկնող վերականգնողական գործողությունների թիվը բազմապատկվում է դրանց կշռային գործակիցների գումարային արժեքով: Այս դեպքում բացթողումների ֆունկցիայի արժեքի նվազարկման և դրանով իսկ SZ աշխատունակության մեծացման խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրացնել ԽԱ-ին հակազդեցության $B^{(l)}$ վեկտորի արժեքի որոշման օպտիմալացման հետևյալ ալգորիթմը.

– փոփոխված տեխնիկական վիճակների $V^{(l)} = \{v_i\}$, $i=1, \dots, t$ հաջորդականության վերլուծության և $\{R_i(\sigma^{(i)}, M^{(i)})\}$ գույզերի համախմբի գնահատման հիման վրա կառուցել Z ԽԱ, ընդամին, եթե փոփոխված տեխնիկական վիճակն ըստ անցումների գոյություն ունեցող մատրիցների չի նույնականացվում, ապա պետք է գրանցվի նոր ԽԱ-ն,

– ըստ համակարգի տեխնոլոգիական վիճակի փոփոխման t -րդ քայլում Z ԽԱ-ն ձևավորող MS տարրերի արժեքների նվազման՝ կառուցել $K_{SV} = \{K_1, K_2, \dots, K_S\}$ կարգաշարքը, որտեղ՝ $\forall K_j \in K_{SV} = F_n(R_n)$, $R_n \in EDV$,

– ընտրանքի և բազմաար հարաբերությունների կարգավորման ալգորիթմի⁵ միջոցով ձևավորել ԽԱ-ին հակազդեցության $B^{(l)}$ վեկտորը:

Փաստորեն, եթե $Z^{(l)}(k_S) = 1$, ապա կա մի ԽԱ, որն արդեն նույնականացված է և չի կարող հասցնել SZ -ն փոխադրել այնպիսի նոր տեխնիկական վիճակի, որում համակարգն ունենա սակավ աշխատունակություն:

⁵ Տես Ա. Ե. Բաբուրյան, Ա. Հ. Արթյան, Ա. Ա. Սուրադյան, Ռիսկի խմբերի հաշվարկումը և կանխատեսումը ըստ տվյալների տեղեկության թագայի: «ՀԲ», 2006, հմ. 3:

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

МОДЕЛЬ ИДЕНТИФИКАЦИИ И НЕЙТРАЛИЗАЦИИ ДЕСТРУКТИВНЫХ ВОЗДЕЙСТВИЙ НА ИНФОРМАЦИОННУЮ СИСТЕМУ, ПРЕДНАЗНАЧЕННАЯ ДЛЯ ОПТИМАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ ЭТОЙ СИСТЕМОЙ

А. Э. БАБУРЯН, генерал-майор, Начальник войск связи, Управления Связи и АСУ
ГШ ВС РА, А. А. МУРАДЯН, подполковник, Начальник отделения
программирования ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Представлена модель идентификации и нейтрализации деструктивных воздействий на информационную систему, в которой предлагается алгоритм оптимального мониторинга этой системы, позволяющий восстановить ее работоспособность с минимизацией количества пропусков. В основе алгоритма лежат анализ последовательности измененных технических состояний системы, построение эквивалентного множества деструктивных воздействий и соответствующей матрицы переходов, по которым формируется кортеж (упорядоченная последовательность), определяющий очередность процедур по восстановлению работоспособности данной информационной системы.

A MODEL OF IDENTIFICATION AND NEUTRALIZATION
OF DESTRUCTIVE IMPACTS ON THE INFORMATION SYSTEM,
WHICH IS EARMARKED FOR OPTIMAL CONTROL
OF THAT SYSTEM

*A. E. BABOURIAN, Major General, Head of the Communications Troops,
Board of the Communications and ACS of the Main Staff of the RA AF,
A. A. MURADIAN, Lieutenant-Colonel, Head of the Department of Programming
of the Main Staff of the RA AF*

SUMMARY

A model is proposed for identification and neutralization of destructive impacts on the information system in which the algorithm of optimal monitoring of that system is given. The algorithm allows to restore the operability of the system minimizing the omissions quantity. The succession analysis of the modified technical states of the system, formation of an equivalent set of destructive impacts and corresponding transition matrix, on which the tuple (array), determining the procedure queue on restoring the given information system operability is formed,—all these underlie the algorithm.

**ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵԼԱՎՍԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

*Թ. Ռ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, Հայաստանի պետական ագրարային
համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի
«Հաշվապահական հաշվառում և աուդիտ» ամբիոնի ասիստենտ*

Հայաստանի Հանրապետությունում իրագործվող բարեփոխումներում կարևոր տեղ է հատկացվում սոցիալ-տնտեսական ոլորտի բարեփոխումներին և կյանքի նոր որակի ապահովմանը: Պատահական չէ, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ բարեկեցությունը սահմանվում է որպես հիմնարար արժեք¹: Սինույն ժամանակ կարևորվում են տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական զարգացման համաչափությունը, տարածքային համալիր ծրագրերի իրականացումը, հատկապես սահմանամերձ ու լեռնային շրջանների բնակավայրերի տնտեսական ու սոցիալական զարգացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ագրարային հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացումը²: Այդ նպատակով պետությունը վարում է փոխկապված տնտեսական և սոցիալական քաղաքականություններ:

Պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և երկրի տնտեսական աճին: Որպես կանոն, այդ երկու ցուցանիշները գտնվում են դիալեկտիկական կապի մեջ, քանի որ տնտեսական աճը նպաստում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին խթանում է աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու տնտեսական աճը:

Սոցիալական քաղաքականությունը կարող է «բնութագրվել որպես սոցիալական հիմնախնդիրների կոլեկտիվ լուծման ռազմավարություն»: Ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ռազմավարությունը կարևորվում է որպես պետության անվտանգությանը քաղաքացու նվիրվածության էական գործոն³: Սոցիալական քաղաքականության ռազմավարությունը և դրա հիման վրա ծրագրվող միջոցառումներն իրագործվում են մի շարք սոցիալական սուբյեկտների (օրենսդիր մարմիններ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ), սո-

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 14:

² Տես նույն տեղում, էջ 26–27:

³ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «ՀԲ», 2006, հմ. 2:

ցիալական ծրագրեր իրականացնող և ֆինանսական կառույցներ, հարկատուներ), ինչպես նաև սոցիալական ծառայությունների անմիջականորեն սպառողների համաձայնեցված գործակցության միջոցով:

Սոցիալական քաղաքականության հիմնական նպատակը բնակչության առաջին անհրաժեշտության կենսական պահանջմունքների առավել լիակատար բավարարումն է: Այն լինում է պասիվ և ակտիվ: Պասիվ քաղաքականությունը նպատակաուղղված է այն խմբերին, որոնք օբյեկտիվ պատճառներով չեն կարող ինքնուրույն կերպով ապահովել իրենց կենսամիջոցների ստացումը: Դրանք են՝ հաշմանդամները, տարեցները, ժամանակավոր անաշխատունակները, ծնողագուրկ երեխաները և այլն: Տվյալ դեպքում սոցիալական ծառայության շահառուի կողմից որևէ ներդրում չի կատարվում: Ակտիվ քաղաքականությունն ուղղված է այն պահանջմունքների բավարարմանը, որոնք մարդը կարող է և պետք է բավարարի ինքնուրույնաբար: Այս պարագայում սոցիալական քաղաքականության դերն այն է, որ մարդկանց համար ապահովված լինեն իրենց ռեսուրսներն օգտագործելու բարենպաստ պայմաններ: Դա նշանակում է, որ աշխատունակ բնակչությունը պետք է պետության կողմից սահմանված ընդունելի եղանակով ինքնուրույնաբար վաստակի միջոցներ՝ իր հիմնական կենսական պահանջմունքները բավարարելու համար: Պետությունը պարտավոր է քաղաքացիներին ապահովել իրենց հմտություններին ու մասնագիտություններին համապատասխան աշխատանք գտնելու հնարավորություն, օրենսդրորեն սահմանել նվազագույն աշխատավարձի չափը, աջակցել օբյեկտիվ պատճառներով գործազուրկի կարգավիճակում հայտնված քաղաքացիների աշխատանքի տեղավորմանը, վճարել գործազրկության նպաստներ, կազմակերպել մասնագիտական վերաորակավորման դասընթացներ և այլն:

Սոցիալական ոլորտի քաղաքականության իրագործման համար ավելի մեծ պատասխանատվություն պետք է կրեն կառավարման կենտրոնական օղակները, քանի որ մարզի, քաղաքի և գյուղական բնակավայրի սոցիալական վիճակները շատ բանով պայմանավորված են երկրի ընդհանուր սոցիալական վիճակով: Միևնույն ժամանակ, էական դեր պետք է ունենան տարբեր մակարդակների կառավարման օղակները՝ մարզպետարանները, համայնքապետարանները, գյուղապետարանները, որոնք պետք է անմիջականորեն ղեկավարեն և իրականացնեն կոնկրետ բնակավայրում համապատասխան ծառայության մատուցումը:

Ընդհանուր առմամբ, բնակչության սոցիալական վիճակի կարևոր ցուցանիշ է զբաղվածության աստիճանը: Հայտնի է, որ աշխատանքային ռեսուրսները ներառում են բնակչության աշխատունակ հատվածը՝ տնտեսապես ակտիվ (զբաղվածներ և գործազուրկներ) և տնտեսապես ոչ ակտիվ (չաշխատող և աշխատանք չփնտրող աշխատունակ անձինք) բնակչությունը: Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից (ՀՀ-ում՝ 16-ից 63 տարեկան տղամարդիկ և կանայք, բացառությամբ 1-ին և 2-րդ խմբի չաշխատող հաշմանդամների), աշխատող կենսաթոշակառուներից և աշխատող դեռահասներից:

Գյուղական բնակչության զբաղվածության և գործազրկության հարցերը որոշակի չափով շեղվում են կիրառվող ստանդարտներից: Այսօր դեռևս ոչ ոք չի կարող ստույգ կերպով որոշել, թե գյուղատնտեսական աշխատանքներում որ տարիքից է ընդգրկվում գյուղական դեռահասը, կամ՝ ինչ չափով են ընդգրկված թոշակային տարիքի անձինք, երեխաները, հիվանդ խնամողները: Ուստի վիճակագրական ծառայությունները որոշել են, որ եթե գյուղացիական ընտանիքը (տնտեսությունը) ունի 1 հա և ավելի հողատարածք, ապա նա ապահովված է 1,5 աշխատատեղով: Այս սկզբունքով է հաշվարկված ՀՀ-ում գյուղացիական տնտեսություններում զբաղվածների թիվը: Այսպես, 2006 թ. գյուղատնտեսության բնագավառում զբաղվածների թիվը կազմել է 504,3 հազար մարդ (գյուղացիական տնտեսությունների թիվը նույն թվականին եղել է 338 հազար): Ավելացնենք, որ հանրապետության ընդհանուր տնտեսության ճյուղերում գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 46,2 % (զբաղվածների թիվը տնտեսության բոլոր ճյուղերում 2006 թ. կազմել է 1092,4 հազար մարդ)⁴: Ինչ վերաբերում է գյուղական բնակավայրերում գործազրկության հաշվառմանը, ապա այն այսօր գրեթե չի կատարվում: Գյուղական բնակավայրերում աշխատուժը խիստ թերբեռնված է և նրա օգտագործման արդյունավետությունը ցածր է: Գյուղատնտեսության ոլորտում ամբողջ տարին զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 36,1 %, իսկ աշխատուժի մոտ 40 %-ն զբաղված է 7–9 ամիս: Տնային տնտեսությունների միայն 7,0 %-ն է մշակման համար աշխատող վարձել: 2004 թ. գյուղատնտեսությունում զբաղվածները կազմել են ընդհանուր զբաղվածների թվաքանակի 44,4 %-ը, իսկ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը եղել է 23 %⁵:

Սոցիալական հիմնախնդիրների շարքում կարևորվում է նաև բնակարանային ապահովման հարցը: Բնակարանային ապահովումը չի ընկալվում որպես սոցիալական ծառայություն, քանի որ բնակչության մի զգալի մասն իրեն բնակարանով է ապահովում մասնավոր շուկայի միջոցով:

Պետք է նշել, որ մի շարք երկրներում պետությունը հանդես է գալիս որպես բնակարանով ապահովման երաշխավոր, կատարում է կարգավորիչ դեր, տրամադրում հարկային ու վարկային արտոնություններ (այդպես էր նաև Խորհրդային Միությունում): Սակայն նշվածը չի վերաբերում գյուղական բնակչությանը: Խորհրդային Միությունում յուրաքանչյուր քաղաքային բնակիչ, աշխատելով որևէ հիմնարկ-ձեռնարկությունում, հիմնավորելով բնակարանային նորմերին չբավարարելու փաստը, դիմում էր տվյալ կազմակերպությանը կամ քաղաքային կառավարման մարմիններին և որոշակի ժամանակամիջոցում անվճար ստանում բնակարան: Մինչդեռ գյուղացին զրկված էր նման հնարավորությունից: Ավելին, Խորհրդային միաստիճան բանկային համակարգը գյուղացուն նույնիսկ վարկեր չէր տրամադրում (բացառությամբ եզակի

⁴ Տես «Հայաստանի վիճակագրական տարեգիրք»: Ե., 2007, էջ 54–55:

⁵ Տես «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»: Վիճակագրական-վերլուծական զեկույց (ըստ 2004 թ. «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» (այսուհետև՝ ՏԿԱՀ) տվյալների): Ե., 2006, էջ 69:

դեպքերի), թեև նա միշտ էլ միջոցներ էր գտնում սեփական բնակարան կառուցելու համար: Հանրապետությունում թե՛ անցյալում, թե՛ ներկայումս մեկ շնչի հաշվով բնակտարածության մակերեսը գյուղական բնակավայրերում 1,5–1,8 անգամ գերազանցում է համապատասխան քաղաքային ցուցանիշը (տես աղ. 1):

Աղյուսակ 1

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԱՊԷՆՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍՈՎ⁶

Ապահովվածությունը բնակմակերեսով, մ ²	Մեկ տնային տնտեսության հաշվով		Տնային տնտեսության մեկ անդամի հաշվով	
	2004 թ.	2005 թ.	2004 թ.	2005 թ.
ընդամենը.	56,2	55,4	14,44	15,1
քաղաքային բնակավայրերում	47,1	44,6	12,8	12,6
գյուղական բնակավայրերում	74,2	76,6	17,1	19,2

Միևնույն ժամանակ բնակարանային ֆոնդի բարեկարգվածության մակարդակը գյուղում անհամեմատ ավելի ցածր է, քան քաղաքում: Գյուղական բնակավայրերում խոհանոց, սառը ջուր, ողողվող զուգարան, լոգարան ունեցող տնային տնտեսությունները կազմում են 11,1 %, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 58,5 %: Ի դեպ, 2005 թ. գյուղական բնակավայրերում բարեկեցիկ բնակարանների մասնաբաժինը 2004 թ. 30 %-ի համեմատությամբ աճել է՝ կազմելով 42,5 %:

Դրա հետ մեկտեղ վիճակն անմխիթար է սահմանամերձ գյուղերում: Այսպես, Տավուշի մարզում բնակարանային ֆոնդն զգալիորեն տուժել է հրետակոծության հետևանքով: Մարզի 24 սահմանամերձ գյուղերում վնասվել են շուրջ 960 տուն և կենցաղային օբյեկտներ, որոնցից 585-ը հիմնովին ավերվել են, 15 համայնքների 1127 բնակելի տներ (148 882 մ²) դարձել են բնակվելու համար վտանգավոր:

Ըստ Տավուշի մարզի անշարժ գույքի կադաստրի տարածքային ծառայությունների տվյալների՝ մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 430 000 մ², որի բնակելի մասը կազմում է շուրջ 70 %, ինչը այդ ոլորտում հիմնախնդիրների առկայության վկայությունն է⁷:

Բնակարանային ապահովվածության հետ մեկտեղ էական նշանակություն ունի բնակչության համար խմելու ջրի մատչելիությունը, ինչը առողջապահական և կենցաղային կարևոր հիմնախնդիրներից է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների շուրջ 75 %-ը ջրի ծորակ ունի տանը, 20 %-ը՝ բակում, 5 %-ը՝ փողոցում: Ավելացնենք, որ խմելու ջրի մատչելիությունը՝ որպես բնակչության կենսամակարդակը պայմանավորող էական գործոն, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) գերակայությունների շարքում է: Այդ ծրագրով նախատեսվում է մինչև 2015 թ. կենտրոնացված ջրամատակարարումը

⁶ Տես նույն տեղում, էջ 95:

⁷ Տես «Տավուշի մարզ» տեղեկատվական ժողովածու: Ե., 2001:

մատչելի դարձնել գյուղական բնակչության 70 %-ի համար: Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման մատչելիության աստիճանի բարձրացումը մեծապես պայմանավորված է մի շարք ներդրումային ծրագրերի իրագործմամբ: Դրանցից նշենք Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (*KFW*), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (*IFAD*), ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագրերը:

Սոցիալական բնագավառի կարևոր հարցերից է նաև բնապահպանությունը, որն ընդգրկում է անտառատնտեսավարման, ընդերքօգտագործման, ջրօգտագործման, շրջակա միջավայրի պահպանության ոլորտները: Բնապահպանության համար հույժ արդիական խնդիրներ են աղբահեռացման և աղբավայրերի օրինական օգտագործման հարցերը: Աղբահեռացման ճիշտ կազմակերպումը հատկապես կարևոր է գետամերձ համայնքներում, քանի որ կենցաղային աղբը և անասնակերի մնացորդները կարող են լցվել գետերը և սելավատարները:

Սոցիալական բնագավառի կենտրոնական հիմնախնդիրներից են առողջապահությունը և կրթությունը, որոնք ցանկացած պայմաններում ապահովում են տվյալ երկրի տնտեսական աճն ու զարգացումը: Դրանք հատկապես էական են սահմանամերձ գոտիների համար, քանի որ այնտեղ բնակչության ապահովման ամենակարևոր նախապայմաններից են: Մեր կարծիքով՝ ՀՀ-ում վերջին տարիների երկնիշ տնտեսական աճի ապահովման գործոնների մեջ էական դեր են խաղացել հենց նշված ոլորտները: Հայաստանը խորհրդային շրջանից ժառանգել է որակյալ մասնագետներով ապահովված լավ զարգացած առողջապահական համակարգ: Ըստ 1991 թ. պաշտոնական տեղեկատվության՝ 10 հազար բնակչի հաշվով Հայաստանում կար 85 հիվանդանոցային մահճակալ և 37 բժիշկ: Այդ ցուցանիշները բարձր էին միջին եվրոպական ցուցանիշներից, սակայն ԱՊՀ միջին ցուցանիշներից ցածր: 1990-ական թվականներից Հայաստանում կրճատվեցին հիվանդանոցների (հատկապես՝ գյուղական բնակավայրերում), հիվանդանոցային մահճակալների քանակը և բուժտեխնիկական ու սարքավորումները, ինչպես նաև բժիշկների թվաքանակը: 1991–2003 թթ. ժամանակահատվածում հիվանդանոցային մահճակալների քանակը կրճատվեց մոտ 50 %-ով, բժիշկների թվաքանակը՝ 11 %-ով: Համեմատության համար նշենք, որ գյուղական բնակավայրերում այդ ցուցանիշները 2 անգամ, իսկ սահմանամերձ գյուղերում՝ մոտ 4 անգամ գիջում են միջին հանրապետական ցուցանիշներին: Այսպես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում հիշատակված ցուցանիշները համապատասխանաբար կազմում են 18 հիվանդանոցային մահճակալ և 12 բժիշկ: Թեև բնակչության փոքր թվաքանակի պայմաններում, որին վերագրվում են սահմանամերձ գյուղերը, այդ ցուցանիշները պետք է բարձր լինեին:

Հարկ է նշել, որ մահացության ստանդարտ գործակիցները ՀՀ-ում ցածր են, իսկ մինչև մեկ ու մինչև հինգ տարեկանների մահացության և մայրամահացության գործակիցները 1990 թ. համեմատությամբ զգալիորեն նվազել են: Բարձր է պատվաստումների մակարդակը:

2004 թ. կյանքի միջին տևողությունը տղամարդկանց համար կազմել է 70,3 տարի (ղա ավելի բարձր ցուցանիշ է, քան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի շատ երկրներում), իսկ կանանց՝ 76,4 տարի: Այդ երկու ցուցանիշներն էլ գերազանցում են 1990 թ. գրանցված մակարդակները⁸:

Առողջապահական ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը դեռևս բարձր չէ, այն հատկապես ցածր է գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության շրջանում: Համախառն բյուջեում առողջապահության համակարգին հատկացված ծախսերի, ինչպես նաև բժշկական ծառայությունների մատչելիության ցածր մակարդակը (առողջապահական ծառայությունների դիմաց վճարումները հիմնականում «ոչ պաշտոնական» են) այն գլխավոր պատճառներն են, որոնցով պայմանավորված են առողջապահական ծառայություններից աղքատ բնակչության չօգտվելը կամ դիմելը ոչ պաշտոնական բժշկական ծառայությունների:

Առողջապահության պետական ֆինանսավորումը կազմում է երկրի ՀՆԱ-ի մոտ 1,3 %-ը: Թեև բյուջեի այդ գծով հատկացումներն իրական արտահայտությամբ էապես ավելացել են, այնուհանդերձ դրանք ԱՊՀ այլ երկրների համեմատությամբ բավական ցածր են, հատկապես եթե հաշվի են առնվում Հայաստանի տնտեսական զարգացման տեմպերն ու մակարդակը: Առողջապահական նպատակներով բնակչության ծախսերը 3,4 անգամ ավելի են, քան պետական ծախսերը, որոնք կազմում են շուրջ 4,5 % (առողջապահության գծով պետական ծախսերը հիմնականում վերաբերում են պետական պատվերով տրամադրվող ծառայություններին, որոնցից ՀՀ օրենքով սահմանված կարգով կարող են օգտվել ՀՀ բնակչության որոշակի սոցիալական խմբեր՝ համաֆինանսավորմամբ, իսկ աղքատության ընտանեկան նպաստ ստացող և կարիքավորության 38-ից բարձր միավոր ունեցող քաղաքացիների համար պետական պատվերով տրամադրվող բուժօժանդություններն անվճար են): Նշանակում է, որ առողջապահության համակարգի ֆինանսավորումը կազմում է ՀՆԱ-ի 5,8 (1,3+4,5) %-ը:

Համաձայն տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների՝ հիվանդ ունեցող ընտանիքներն իրենց համարում են աղքատ, քանի որ բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմում են բուժօգնություն ստացած տնային տնտեսությունների ոչ պարենային ծախսերի մոտ 20 %-ը:

Հատկապես հիվանդանոցային պայմաններում բուժօժանդությունների համար կատարված «ոչ պաշտոնական» վճարումները բավականին մեծ են, ինչը նույնպես խանգարում է բժշկական օգնության դիմելուն:

Առողջապահության գծով պետական ֆինանսավորման փոփոխությունն արտացոլում է համախմբված բյուջեի ծախսերն ավելի արդյունավետ դարձնելու համար կառավարության գործադրած ջանքերը՝ միտված սոցիալապես առավել անապահով հատվածների (որոնց մեջ մեծ տեսակարար կշիռ ունի գյուղական

⁸ Տես «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»: Վիճակագրական-վերլուծական գեկույց (ըստ 2004 թվականի ՏՏԿԱՀ տվյալների): Ե., 2006, էջ 112:

բնակչությունը) կենսամակարդակի բարելավմանն ու զարգացմանը (տես աղ. 2):

Այսպիսով՝ կարելի է նշել, որ Հայաստանում առողջապահության վիճակը բնութագրող շատ ցուցանիշներ համեմատաբար ավելի բարձր են, քան նախկինում, թեև առողջապահական ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է, հատկապես՝ սահմանամերձ գյուղական բնակավայրերում:

Աղյուսակ 2

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ 1995–2005 ԹԹ.⁹

	1995	1997	1999	2001	2003	2004
Հանրային ծախսեր՝ համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ, %	7,02	6,10	5,35	6,07	5,87	6,86
Հանրային ծախսեր՝ ՀՆԱ-ի նկատմամբ, %	1,85	1,19	1,38	1,34	1,17	1,30
Բնակչության ծախսեր՝ ՀՆԱ-ի նկատմամբ, %	–	–	–	–	–	4,55

Սոցիալական վիճակի վրա ազդող կարևոր գործոն է նաև կրթական համակարգը:

ՀՀ-ում 2006–2007 թթ. ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում սովորողների միջին թվաքանակը 1000 բնակչի հաշվով կազմել է 146,4, գյուղական վայրերում՝ 166,4 աշակերտ: Նշենք, որ գյուղական բնակավայրերում ուսուցիչների ծանրաբեռնվածության աստիճանը մեծ չէ, և գրեթե պահպանվում է ուսուցիչ–աշակերտ նորմալ հարաբերակցությունը: Սակայն շատ գյուղական դպրոցներում նույն ուսուցիչը դասավանդում է մի քանի առարկաներ, ինչը նվազեցնում է ուսուցչի կողմից ծրագրային նյութի մատուցման և աշակերտի կողմից դրա յուրացման արդյունավետության աստիճանը: Ուսուցման մակարդակի վրա խիստ բացասական ազդեցություն է ունենում նաև միևնույն դասաստեղծակում նույն ուսուցչի կողմից դասավանդումը միաժամանակ տարբեր դասարանների, ինչի հիմնական պատճառը աշակերտների թվաքանակի սակավությունն է:

Գյուղական դպրոցների մեծ մասում նկատվում է բյուջետային միջոցների ոչ արդյունավետ օգտագործում: Թույլ է զարգացած նաև ներդպրոցական կառավարման համակարգը:

Կրթության ոլորտի համատեքստում քննարկվում է նաև նախադպրոցական համակարգի գործունեությունը՝ որպես սոցիալական ծառայության բնագավառ: Այն հատկապես կարևորվում է նախադպրոցական կրթության տեսակետից, հանրապետությունը անցում է կատարում 12-ամյա կրթական համակարգի, հետևաբար երեխաները արդեն 5 տարեկանում հոգեբանորեն և ֆիզիկապես պետք է պատրաստ

⁹ Բնակչության ծախսերը գնահատվել են 2004 թ. ՏՏԿԱՀ տվյալների և Համաշխարհային զարգացման ցուցանիշների (WDI) տվյալների հիման վրա (տես «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն» և «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»):

լինեն այդ գործընթացին: Այս ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է առկա ներուժի պահպանմանը, նրա զարգացման համար նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Այդ նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ նախադպրոցական կրթության զարգացման համակարգը և ռազմավարությունը» փաստաթուղթը, մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

Պետք է նշել, որ գյուղական բնակավայրերում նախադպրոցական համակարգը շատ թույլ է զարգացած, ինչի հիմնական պատճառներն են՝

– այն ծանր ֆինանսական պայմանները, որոնցում գտնվում է ընտանիքների մեծ մասը,

– գյուղական բնակավայրերի աշխատանքի շուկայում առկա լարվածությունը, ինչի հետևանքով ծնողների մեծ մասը մնում է տանը և զբաղվում երեխաների դաստիարակությամբ:

Բացի նշված օբյեկտիվ պատճառներից, գոյություն ունեն նաև սուբյեկտիվ պատճառներ: Առանձին համայնքներում ՏԻՄ-երը չարաշահում են իրենց լիազորությունները, վարում են կամայական քաղաքականություն, մանկապարտեզների շենքերն օգտագործում են այլ նպատակներով:

Գյուղական բնակավայրերում սոցիալական վիճակն ավելի են բարդացնում կապի, տրանսպորտի և էներգետիկայի բնագավառներում առկա որոշ թերություններ: Այսպես, կապի բնագավառում հեռավոր և բարձրլեռնային գյուղերում անխափան հեռախոսակապի ապահովմանը համայնքների թույլ աջակցության հետևանքով նկատելիորեն նվազում են ոլորտի զարգացման հնարավորությունները:

Գյուղական բնակավայրերի էլեկտրամատակարարումը իրականացվում է կանոնավոր կերպով, այնուամենայնիվ, այս ոլորտում նույնպես առկա են պրոբլեմներ: Մասնավորապես՝ վթարային վիճակում են գտնվում հենասյուների 70-80 %-ը, տրանսֆորմատորների՝ մոտ 50 %-ը, ինչը դառնում է էլեկտրամատակարարման ընդհատումների պատճառ:

Տրանսպորտային ծառայություններով գյուղական բնակչության ապահովումը ներկայումս մնում է սոցիալ-տնտեսական կարևոր հարցերից մեկը: Տրանսպորտային ուղևորափոխադրումները կրում են գերազանցապես անկանոն բնույթ, ինչը հաճախ դառնում է հատկապես հեռավոր գյուղերի բնակչության արդարացի բողոքների պատճառ: Ավտոկայաններում չկան ուղևորների համար սպասասարահներ, միջգյուղական ճանապարհների մի զգալի մասը բարվոք վիճակում չէ:

Գյուղական բնակավայրերի սոցիալական վիճակի վրա բացասաբար է ազդում նաև ապահովագրական ընկերությունների պասիվությունը: Չնայած գյուղական բնակչության մեծ մասն ունի ֆինանսական դժվարություններ, որոնց պատճառով չի դիմում ապահովագրական գործակալություններին, այնուամենայնիվ, պետք է բնակչությանը բացատրել, անգամ համոզել, որ իրեն ձեռնտու է ապահովագրել իր

տնտեսական գործունեությունը: Հասկանալի է, որ գյուղատնտեսության արտադրության ոլորտը երաշտների, ցրտահարության և բնական այլ աղետների հետևանքով ենթակա է մեծ ռիսկերի: Նման պարագայում գյուղատնտեսության արտադրության ապահովագրումը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Սոցիալական ոլորտում ապահովագրության անհրաժեշտություն առաջին հերթին ունի առողջապահությունը: Սակայն ֆինանսական միջոցների սղության հետ մեկտեղ ոչ պակաս կարևոր դեր է խաղում ազգային բնավորությունը: Այսօր հայ մարդը, առավել ևս՝ հայ գյուղացին, ապրում է օրվա հոգսերով, նա հնարավորություն չունի ֆինանսավորելու վաղվա բժշկական ծախսերը կամ էլ հատուկ կենսաթոշակային ֆոնդերի միջոցով կատարելու կենսաթոշակային կուտակումներ:

Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս գյուղական բնակավայրերի սոցիալական վիճակի վերլուծությունը, այդ ոլորտի մակարդակը բավական ցածր է, ուստի նպատակահարմար ենք համարում հետևյալ առաջարկությունները.

– մշակել ու վարել այնպիսի ներդրումային քաղաքականություն, որը նպաստի սոցիալական ենթակառուցվածքային ճյուղերի զարգացմանը և կարևոր պայման դառնա գյուղական բնակավայրերի աշխատանքային ռեսուրսների ներգրավման համար (ոչ գյուղատնտեսական ոլորտներում),

– նոր ձևավորվող ընտանիքներին, ինչպես նաև այլ բնակավայրերից գյուղական բնակավայր (հատկապես՝ սահմանամերձ գոտի) տեղափոխվել ցանկացողներին արտոնյալ պայմաններով տրամադրել հողատարածք և նյութական աջակցություն՝ բնակարան կառուցելու համար (աջակցությունը կարող է ավելի իրատեսական լինել, եթե տրամադրվեն արտոնյալ վարկեր),

– սահմանամերձ գյուղերում բժշկական ծառայությունների բարելավման նպատակով ստեղծել հատուկ ապահովագրական ֆոնդ, որին իրենց աջակցությունը պետք է ցուցաբերեն ՀՀ առողջապահության նախարարությունը, ՏԻՄ-երը և անհատ բարերարներ: Բուժանձնակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով տեղերում կազմակերպել մասնագիտական դասընթացներ,

– դպրոցներին հատկացվող ֆինանսական և նյութական միջոցները նպատակային օգտագործելու, մեթոդական ծրագրերով նրանց ապահովելու, խնդիրները համատեղ քննարկելու նպատակով ակտիվացնել տարածքային կառավարում–տեղական ինքնակառավարում–դպրոցներ կապը,

– ակտիվացնել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը հանրապետության այն կազմակերպությունների և կառույցների հետ, որոնք կարող են նպաստել սահմանամերձ գյուղերում մանր ու միջին ձեռնարկչության զարգացմանը,

– տրանսպորտի, կապի, էներգետիկայի, կոմունալ-կենցաղային ծառայությունների աշխատանքները բավարար մակարդակով կազմակերպելու համար կատարելագործել վարձավճարների գանձման գործընթացը, համայնքների բյուջեների հաշվին շահագործել երթուղիներ դեպի հեռավոր և սահմանամերձ գյուղեր, եթե

նույնիսկ դա շահութաբեր չէ, այդ կատեգորիայի գյուղերում ստեղծել հեռախոսային խոսակցական կետեր, ստեղծել համատիրություններ, որոնք զբաղվեն այդ տարածքի կոմունալ-կենցաղային խնդիրներով:

Կարծում ենք, որ գյուղական, հատկապես՝ սահմանամերձ գոտում գտնվող, բնակավայրերի սոցիալական վիճակի բարելավումը պետական բոլոր օղակների կարևոր ու հրատապ լուծում պահանջող խնդիրներից է, որը բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և դրա իրականացման ուղղությամբ գերատեսչական ծրագրերի հիմնադրույթներից¹⁰:

¹⁰ Տես «Հայկական բանակ»: 2007, հմ. 2–3:

СОЦИАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

НЕКОТОРЫЕ ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ СОЦИАЛЬНОЙ СФЕРЫ В СЕЛЬСКОЙ МЕСТНОСТИ РА

*Т. Р. ПАРСАДАНЯН, ассистент кафедры «Бухгалтерского учета
и аудита» экономического факультета
Государственного аграрного университета Армении*

РЕЗЮМЕ

В статье обсуждается ряд проблем социально-экономического развития сельских поселений РА. Социальное положение сельского населения во многом обусловлено общим социально-экономическим и политическим состоянием страны. В то же время областные и общинные органы местной власти должны играть активную роль в осуществлении соответствующих мероприятий как по решению жилищно-коммунальных проблем, так и по обеспечению экологической безопасности, здравоохранения, образования, электроэнергией, транспортом, по страхованию от последствий стихийных бедствий и т. д.

Одной из целей социальной политики государства в сельских поселениях должно быть выполнение предначертаний Стратегии национальной безопасности в плане социального развития приграничных и высокогорных поселений, обеспечение сбалансированного социально-экономического развития районов республики. В статье излагаются предложения по улучшению социальной сферы в сельской местности РА, нацеленные на повышение социально-экономического уровня жизни сельского населения и решение социально-бытовых проблем.

SOCIAL SECURITY

SOME MAIN ISSUES OF IMPROVING SOCIAL SPHERE
IN THE RA RURAL AREA

*T. R. PARSADANYAN, Assistant lecturer at the Chair of «Accountancy and Audit»
at the Economic Faculty of Armenian State Agrarian University*

SUMMARY

A number of issues on the social-economic development of the RA rural settlements is discussed in this article. The social state of the rural population is conditioned to a large extent by the general social-economic and political state of the country. At the same time regional and communal local authorities should play an active role in taking corresponding measures both on solving housing problems, and on ensuring ecological security, public health care, education, electric energy, transport, on insuring against aftereffects of disasters, etc.

One of the goals of the State's social policy in rural settlements should be implementing the National Security Strategy requirements in the plane of social development of border and mountainous settlements, ensuring the balanced social-economic development of the republic's regions. Proposals on improving social sphere in the RA rural area are set forth in this article, which are targeted at increasing the social-economic level of the rural population's life and solving social and living problems.

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – ԲՆՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Կ. Ս. ԳԱՆԻԵԼՅԱՆ, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի/ՄԱԿ-ի
Շրջակա միջավայրի ծրագրի ազգային կոմիտեի նախագահ,
Ա. Պ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ»
ռազմագիտական հսկողության տեխնիկական բաժնի պետ*

Մարդկությունն իր զարգացման ընթացքում, առանձնապես վերջին 1-2 դարում, գործելով ծայրաստիճան անհաշվեկատ, էապես խախտել է բնական հավասարակշռությունը: Նման զարգացումն ունի խորանալու միտում, հատկապես՝ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հավասարակշռության խախտվածությունը որոշակի սահման գերազանցելուց հետո դառնում է անհաղթահարելի և անուղղելի: Տվյալ իրավիճակում սուր անհրաժեշտություն է ծագել վերահսկելու բնության վրա մարդու բացասական ազդեցությունը, գիտականորեն հիմնավորված կերպով կարգավորելու հասարակություն – շրջակա միջավայր հարաբերությունները, բնությունը պաշտպանելու անհեռատես գործունեության կործանարար հետևանքներից: Նշված և նմանատիպ այլ հարցերով է զբաղվում բնապահպանությունը (էկոլոգիան^{*}):

Այս գիտաճյուղը բացահայտում է բնության փոփոխության բնականոն ընթացքի և բնական հավասարակշռության համար ծագող մարդածին ռիսկերն ու մարտահրավերները, կազմակերպում է շրջակա միջավայրի մշտազննում և դրա արդյունքների վերլուծության հիման վրա մշակում բնահամակարգերի պահպանման ու վերականգնման հեռանկարային միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր ու միջոցա-

^{*} *Էկոլոգիա* (հուն. *oekos* – կացարան, բնակատեղ, *logos* – ուսմունք, խոսք) տերմինը գիտական շրջանառության մեջ է դրել գերմանացի հայտնի բնագետ, Ենայի համալսարանի պրոֆեսոր Էռնստ Հեկկելը՝ 1869 թ. գրված «Օրգանիզմների համընդհանուր մորֆոլոգիա» իր աշխատության մեջ փորձելով նշագծել օրգանիզմների ու շրջակա միջավայրի փոխհարաբերություններն ուսումնասիրող կենսաբանական գիտությունը, որը հիմնականում վերաբերում էր կենդանիներին: Բուսական աշխարհի առնչությամբ այս տերմինն առաջինը 1895 թ. օգտագործել է դանիացի բուսաբան-էկոլոգ Ա. Վերմինգը: Այժմ *էկոլոգիան* վերածվել է Երկրի կենսոլորտի, բուսական և կենդանական օրգանիզմների ու դրանց համակեցությունների, բնահամակարգերի, մարդ – բնություն հարաբերությունների մասին բազմաճյուղ և ինքնուրույն տեսական ու գործնական գիտական բնագավառի, որը ներառում է բուն տեսական, սոցիալական, էթնոքաղաքագիտական, սոցիոմշակութային, փիլիսոփայական, քաղաքական, բարոյական, տեխնիկական, հիգիենիկ, նորմատիվ-իրավական հայեցակետեր:

ռումներ: Ռիսկերն ու սպառնալիքներն ի հայտ են գալիս ինչպես առանձին պետությունների ու տարածաշրջանների, այնպես էլ համընդհանուր՝ ամբողջ մոլորակի մակարդակներում: Ահա առավել կարևորներից մի քանիսը.

– խմելու ջրի անբավարարություն (ներկայումս 1,1 մլրդ մարդու համար մաքուր խմելու ջուրը անմատչելի է¹, և մի շարք մասնագետներ որպես սպազա գինված բախումների հիմնական պատճառ դիտում են խմելու ջրի պակասը²),

– «ջերմոցային» էֆեկտ (մոլորակի միջին տարեկան ջերմաստիճանը մթնոլորտում ամխաթթու գազի պարունակության 25 %-ով աճման հետևանքով վերջին 70 տարվա ընթացքում բարձրացել է 0,3 C⁰-ով³),

– երկրաշարժների և այլ տարերային աղետների մարդածին հարուցում⁴,

– օզոնային շերտի քայքայում և օզոնային խոռոչների ընդլայնում (դրա հետևանքով մեծացել է մթնոլորտ ներթափանցող և կենդանի օրգանիզմների համար վտանգավոր տիեզերական ճառագայթման ինտենսիվությունը),

– բնահամակարգերի ու կենսաբազմազանության աստիճանական վերացում (մարդու գործունեության հետևանքով խախտվում է ջրային հաշվեկշիռը, կատարվում են զանգվածային անտառահատումներ, տեղի են ունենում անսպասարկում, գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողերի ողողամաշում, դրանց աղտոտում տարբեր թունաբիմիկատներով և այլն),

– բնական ռեսուրսների (հատկապես՝ էներգակիրների) սպառում կամ հանքանյութերի աղքատացում,

– բնական պայմանների փոփոխմանն արագորեն հարմարվող հարուցիչներով առաջ բերված նոր հիվանդություններ ու համաճարակներ (ՁԻԱՀ, «բռնի գրիպ», ատիպիկ թոքաբորբ, «կովերի կատաղություն» և այլն),

– կենսաբանորեն վերափոխված (ԿՎ), այսինքն՝ գենետիկորեն մոդիֆիկացված (ԳՄ), օրգանիզմների ստեղծում (ԿՎՕ-ների մշակման տարածքները աշխարհում կազմում են մոտ 60 մլն հա (որից 60 %-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին), որտեղ, օրինակ, եգիպտացորենի 25 %-ը, սոյայի 38 %-ը տրանսգեններ են, իսկ սննդամթերքի, այդ թվում՝ մանկական, 60 %-ը պարունակում է գոնե մեկ ԿՎ-մթերք)⁵: Չնայած ԿՎՕ-ի մշակման մեծ ծավալներին՝ դրանց օգտակարությունը դեռևս վիճահարույց է:

¹ Տես «Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Հայաստանը՝ կուտակված փորձը, մարտահրավերներն ու ձեռքբերումները»: Ե., 2006, էջ 6:

² Տես «Environment and Security. Transforming risks into cooperation. The case of the Southern Caucasus». UNDP, UNEP, OSCE, 2004:

³ Տես «Человек и стихия (научно-популярный гидрометеорологический сборник на 1991 г.)». А., 1990:

⁴ Այդ մասին ավելի հանգամանորեն տես Ռ. Գ. Գևորգյան, Լ. Ս. Բաղդասյան, Բնական և տեխնածին բնույթի հարուցված սեյսմիկություն: «ՀԲ», 2006, հմ. 1:

⁵ Տես В. А. Авакян. Генетически модифицированные организмы и биобезопасность. «Проблема генетически модифицированных организмов (ГМО) и ГМ-продуктов в свете биобезопасности». «Экологический бюллетень», 2004, № 6:

Նման սպառնալիքների չեզոքացման, վերացման կամ գոնե հետևանքների նվազեցման համար ստեղծվում են միջազգային կազմակերպություններ, մշակվում են համընդհանուր ծրագրեր, կնքվում են բազմակողմ համաձայնագրեր: Դա շատ կարևոր հանգամանք է, քանի որ բնության համար սպառնալիքները լայնորեն սփռվում են՝ «խախտելով» առանձին պետությունների սահմաններն ու վտանգի ենթարկելով հսկայական տարածքներ, միլիոնավոր մարդկանց կյանքը, և առանձին պետություններն այլևս ի վիճակի չեն միայնակ դիմակայելու այդ սպառնալիքներին: Մարդկությունը լրջորեն անհանգստացած է Երկրագնդում տիրող իրավիճակով, և այդ մտահոգությունն իր արտացոլումն է ստացել տարբեր պետությունների ազգային անվտանգության հայեցակարգերում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում (ԱԱՌ) ևս կարևոր տեղ է հատկացված բնապահպանական անվտանգությանը, որը սահմանվում է հետևյալ կերպ. «Բնապահպանական անվտանգությունը ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է, որը բնութագրում է հասարակության և անձի բնակության ու կենսագործունեության միջավայրի պաշտպանվածության վիճակը: Ներառում է վերահսկողությունը շրջակա միջավայրի (բնական ռեսուրսների, ջրի, մթնոլորտի, հողի, կենդանական ու բուսական աշխարհի) վիճակի նկատմամբ և այնպիսի միջոցների մշակումը, որոնցով բացառվեն մարդու և հասարակության բնականոն կենսագործունեությանն սպառնացող բնապահպանական ճգնաժամներն ու աղետները»⁶:

Ահա այս տեսանկյունից ուսումնասիրենք ՀՀ-ում ստեղծված բնապահպանական իրավիճակի ու դրա զարգացման միտումների որոշ հարցեր:

Հայաստանը քաղաքակրթության հնագույն կենտրոններից մեկն է՝ իր ուրույն բնությամբ ու պատմամշակութային ժառանգությամբ: Երկրի աշխարհագրական դիրքը, երկրաբանական բարդ կառուցվածքը, բարձունքային գոտիականությունը, բուսական և կենդանական աշխարհների տարբեր մարզերի սահմանագծում գտնվելը նպաստել են բնահամակարգերի ու կենսաբազմազանության հարստությանը: Այսօր ԱԱՌ-ի տեսանկյունից բնապահպանական անվտանգության ապահովման գերակայություններն են.

– ներկա և գալիք սերունդների կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը, բնության վրա մարդու ամբողջ ազդեցության համապատասխանեցումը բնական համակարգերի ինքնավերականգնման կարողությանը,

– բնական պաշարների պահպանումը և արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,

– բնակավայրերի վերածումը կենսագործունեության համար առավել առողջ ու բարենպաստ բնակատեղերի, քաղաքաշինական համակարգերի անվտանգության, հուսալիության ու կայունության ապահովումը,

– ներգրավումը բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների ժամանակակից մշտագնմամբ ու կանխարգելմամբ զբաղվող միջազգային կառույց-

⁶ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ: Հավելված 1. Հիմնական հասկացություններ և տերմիններ»: «ՀԲ», 2006, հմ. 2:

ներում, բնական և տեխնածին վտանգների հուսալի կանխատեսումը, կանխարգելումն ու չեզոքացումը,

– բնակչության բնապահպանական իրազեկվածության ու կրթվածության պատշաճ մակարդակի ապահովումը:

Հիմնվելով ԱԱՌ-ում սահմանված գերակայությունների վրա՝ կարելի է առանձնացնել բնապահպանական բնույթի առաջնահերթ խնդիրների հետևյալ խմբերը.

– բնական պաշարների, այդ թվում՝ ջրային պաշարների և հատկապես Սևանա լճի բնահամակարգի, վերականգնում, պահպանություն և օպտիմալ օգտագործում, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, անտառների պահպանություն,

– մթնոլորտի և հողի պաշտպանություն թունավոր նյութերից, այդ թվում՝ ավտոտրանսպորտի արտանետումներից, վտանգավոր թափոնների՝ բնապահպանական տեսանկյունից անվտանգ պահպանում և հեռացում,

– քաղաքաշինության պրոբլեմներ⁷:

Փոքր-ինչ ավելի հանգամանորեն ուսումնասիրենք այս խնդիրների որոշ առումներ:

Հայաստանը այժմ գտնվում է սոցիալական և տնտեսական կարևոր կերպափոխումների փուլում: Մեծ թվով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար մարդը դիմում է բնության օգնությանը՝ մոռանալով, որ այն ունի սահմանափակ ռեսուրսներ: Օրինակ՝ աղքատության դեմ պայքարը ենթադրում է լրացուցիչ բնական ռեսուրսների ծախս, և որպեսզի աշխարհի երկրների 80 %-ի ռեսուրսասպառումը հասնի առաջատար երկրների մակարդակին, կպահանջվի 20 անգամ մեծացնել բնական ռեսուրսների օգտագործումը⁸: Նման օգտագործումը առկա պայմաններում արդեն անհնարին է, հետևաբար առաջանում է արտադրության և սպառման կայուն մոդելների մշակման ու ներդրման անհրաժեշտություն:

Տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի շրջակա միջավայրում տեղի ունեցած ու շարունակվող բացասական երևույթները ազդում են երկրի սոցիալական, մշակութային ու քաղաքական ոլորտների վրա՝ ավելի սրելով եղած խնդիրները:

Կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է կազմակերպել շրջակա միջավայրի պահպանություն և բնական ռեսուրսների խելամիտ օգտագործում (կայուն կառավարում): Մակայն Հայաստանում դեռևս թույլ է շրջակա միջավայրի աղտոտման ծավալների նվազեցման գործում տնտեսական մեխանիզմների կարգավորիչ դերը, ձևավորված չէ համապատասխան կազմակերպարավական համակարգ, որը հնարավորություն ընձեռնեք բնօգտագործման և բնապահպանական վճարումների միջոցով հավաքվող ֆինանսական միջոցները ամբողջովին նպատակա-

⁷ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» (այսուհետև՝ «ՀՀ ԱԱՌ»): «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 15, 16, 19, 21, 22, 26, 29:

⁸ Տես «Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը...», էջ 10:

ուղղելու հանրապետությունում առաջնահերթ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը⁹: ՈՒՒՄՄՄՍԻԲԵԼՎԻ միջազգային փորձը՝ կարելի է եզրակացնել, որ առաջիկա տարիներին Հայաստանում բնօգտագործման բնագավառում տնտեսական մեխանիզմների և շրջակա միջավայրի պահպանության ֆինանսավորման համակարգի կատարելագործումը պետք է նպատակաուղղված լինի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառման խթանմանը, բնառեսուրսային ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության և վերականգնվող բնական ռեսուրսների համար անհրաժեշտ ֆինանսատնտեսական պայմանների ստեղծմանը: Այդ նկատառումներով անհրաժեշտ կլինի իրականացնել տնտեսական զարգացման ցուցանիշների «բնապահպանական» ճշգրտում, ինչը կպահանջի բարձրացնել բնապահպանության «մրցունակությունը տեխնոսպաշտական որոշումների դեմ պայքարում»¹⁰:

Հանրապետությունում զգացվում է լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք: Սակայն այս գործընթացում ևս պետք է կիրառվի համալիր մոտեցում՝ հաշվի առնելով տվյալ տեղանքին բնորոշ բնական միջավայրը: Միշտ չէ, որ պետական կամ հասարակական համապատասխան մարմիններն ու կազմակերպությունները ի վիճակի են լինում վերահսկելու անհատ ձեռնարկիչների գործունեությունը, ուստի այս առումով կարևորվում են բնապահպանական կրթության բնագավառում ընթացիկ քաղաքականության բարելավումը, բնակչության բնապահպանական իրազեկվածության պատշաճ մակարդակի ապահովումը:

Հայաստանի Հանրապետությունը մեծ ուշադրություն է դարձնում լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը, մասնավորապես՝ դրա արդյունավետության մեծացմանը¹¹: Արդյունավետությունը առաջին հերթին ենթադրում է շահութաբերություն, մինչդեռ Հայաստանում չկան հզոր ֆլոտացիոն գործարաններ, որոնք հնարավորություն տալին արտահանելու հարստացված հումք, տարանջատելու բավականին մեծ պահանջարկ ունեցող թանկարժեք հազվագյուտ տարրերը (մասնավորապես՝ օսմիումը), ուստի և այդ հումքը վաճառվում է շատ ցածր գներով: Կարծում ենք, որ ճիշտ կլիներ մեկ անգամ կատարել մեծ ծախս ու կառուցել նման գործարաններ, իսկ հետո պետք է մուտք անել մեծ շահույթներ: Միևնույն ժամանակ, գնահատելով իրավիճակը, մասնավորապես՝ մոտ ժամանակներում Քաջարանի հանքավայրի շահագործման զգալի ընդլայնումը, կարող ենք արձանագրել, որ եթե չձեռնարկվեն համապատասխան միջոցներ, ՀՀ-ն կարող է վերածվել զարգացած երկրների հումքային կցորդի ու անուղղելի վնաս հասցնել իր բնական ռեսուրսներին¹²:

⁹ Տես «ՀՀ Բնապահպանության նախարարության 2003–2005 թթ. նախարարական զեկույց»:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տես «ՀՀ ԱԱՌ», էջ 22:

¹² Այս մասին ավելի հանգամանորեն տես Կ. Ս. Դանիելյան, «Արագ փողե՞ր», թե կայուն զարգացում: Թեղուտի հիմնախնդիրը երկրի զարգացման ընդհանուր համատեքստում: «Թեղուտի հանքավայրի հիմնախնդիրը. հասարակական կազմակերպությունների անկախ փորձագետների կարծիքը»: Ե., 2008:

Բնական ռեսուրսների պահպանման հարցը առնչվում է նաև էներգակիրների ներմուծման հարցի հետ: Չունենալով ածխաջրածնային էներգակիրներ՝ Հայաստանը լիովին կախված է այլ երկրների մատակարարումից: Մակայն հնարավորություն կա օգտագործելու էներգիայի՝ Հայաստանում առկա այնպիսի այլընտրանքային աղբյուրներ, ինչպիսիք են արևի, փոքր գետերի հոսանքի և հողմի էներգիան:

Բնականաբար, գյուղատնտեսության, արդյունաբերության, քաղաքաշինության, տրանսպորտի, զբոսաշրջության և հանգստի գոտիների զարգացումը, անտառօգտագործումը նպաստել են Հայաստանում, ինչպես նաև ամբողջ Եվրոպայում լանդշաֆտների ձևափոխմանը: Բարեբախտաբար, մեր երկրում դեռ պահպանվել են չձևափոխված բնական լանդշաֆտներն իրենց բնորոշ բուսական և կենդանական աշխարհով:

Չնայած իր փոքր տարածքին՝ Հայաստանում կան յոթ տիպի լանդշաֆտներ՝ իրենց համակեցությունների, բուսական և կենդանական տեսակների բազմազանությամբ հանդերձ¹³ (հաշվի առնելով նաև առավել արտահայտված ենթալանդշաֆտները՝ մասնագետները երբեմն նշում են անգամ 10 տիպ): Հայաստանի կենսաբազմազանությունը հարուստ է մեծ թվով տնտեսական արժեք ներկայացնող, հազվագյուտ վերապրուկային (ռելիկտային) և տվյալ վայրին հատուկ (էնդեմիկ) տեսակներով, ինչը պայմանավորված է հողակլիմայական պայմանների բազմազանությամբ, երկրաբանական բարդ կառուցվածքով, ինչպես նաև յուրահատուկ աշխարհագրական դիրքով: Հայաստանում լայնորեն տարածված են կենսաբանական ռեսուրսների, ներառյալ՝ բնափայտի և արածեցման նպատակով արոտավայրերի օգտագործումը, վայրի բույսերի հավաքումը, ձկնորսությունը և որսորդությունը: Հանրապետությունում կան մոտ 2000 տեսակի դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու բույսեր: Մեծ թվով բուսատեսակներ օգտագործվում են որպես սննդամթերք և անասնակեր: Որոշ կենդանիներ մորթատու և մսատու են: Կենսաբազմազանության մեջ առկա են զգալի թվով մշակովի բույսերի ու բուծվող կենդանիների վայրի ցեղակիցներ, ինչի շնորհիվ Հայաստանը հնուց ի վեր եղել է անասնապահության և երկրագործության կենտրոններից մեկը: Սի շարք կենսառեսուրսների օգտագործումը դեռևս կանոնակարգված չէ, և որոշ տեսակներին ու պոպուլյացիաներին սպառնում է անհետացման վտանգ, իսկ բնահամակարգերին՝ անդառնալի փոփոխություն: Կենսառեսուրսների գերօգտագործման խնդիրը մինչ օրս մնում է պետության ուշադրության կենտրոնում, և դրա լուծման համար ՀՀ կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են կենսառեսուրսների կայուն օգտագործման ապահովմանը: Բնական լանդշաֆտներում ամեն ինչ փոխկապված է, և դրանց բաղադրամասերի համախումբն առաջացնում է մի ընդհանրական համակարգ, որի պահպանությունը, օպտիմալ կառավարումը և պլանավորումը մարդկանց բարեկեցության երաշխիք են:

Ներկայումս Հայաստանի գրեթե բոլոր բնահամակարգերն իրենց վրա կրում են մարդածին մամլիչի ազդեցություն, որի հետևանքով անհետացման եզրին են հարյու-

¹³ Տես «ՀՀ բնապահպանության նախարարության 2003–2005 թթ. նախարարական զեկույոյ»:

րավոր տեսակների բույսեր ու կենդանիներ: Առավել ուժեղ է ներգործությունը անտառային, կիսաանապատային, տափաստանային բնահամակարգերի վրա: 1991–2008 թթ. կտրուկ վատթարացել է անտառների վիճակը, առաջ են եկել բազմաթիվ պրոբլեմներ՝ կապված անկանոն անտառահատման (մոտ 40000 հա, որից 7000-ը՝ համատարած¹⁴), անտառային բազմազանության հետաճման և ոչնչացման, վնասատուներով և հիվանդություններով զանգվածային վարակման հետ:

Կիսաանապատային գոտում, որտեղ հողերը յուրացված են 80—90 %-ով, բնական լանդշաֆտներին մեծ վնաս են հասցնում չկարգավորված ոռոգման հետևանքով հողերի ոռոգամաշումը, աղակալումը, պնդացումը, կենցաղային, արդյունաբերական և ագրոքիմիական աղտոտվածությունը: Նշված պատճառները հանգեցրել են Հայաստանում անապատացման տարածմանը և տարբեր տիպի լանդշաֆտների դեգրադացմանը: Լեռնատափաստանային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտները, որոնք հիմնականում ծառայում են որպես բնական կերհանդակներ, առավելապես վնասվում են անատունների արածեցման ռեժիմի ու ժամկետների, խոտհունձի պայմանների խախտման պատճառներով¹⁵: Վերջին հարյուրամյակում արոտավայրերը և խոտհարքները զգալիորեն դեգրադացվել են, տարախոտային տափաստաններն ու մարգագետինները փոխարինվել են տրագականտային տափաստաններով, հատկապես՝ Վայքում, Չանգեգուրում, Արագածի լեռնազանգվածի ու Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին:

Արդյունաբերության, էներգետիկայի և տրանսպորտի ենթակառուցվածքների գործունեությունը առաջացրել է օդի, հողի և ջրի աղտոտում, ծանր մետաղների և քիմիական թափոնների առկայությունը հիմնականում նախկինում առաջացած և մինչև օրս պահպանված արդյունաբերական գործունեության ժառանգությունն է: Բարձր մակարդակի աղտոտումն ուղղակիորեն ազդում է տեսակների գոյության և ընդհանրապես բնահամակարգերի վրա:

Գյուղատնտեսական, արդյունաբերական, շինարարական և այլ նպատակների համար մարդու կողմից ակտիվորեն յուրացվել են տարածքներ գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում: Չորացվել ու գյուղատնտեսության համար օգտագործելի են դարձվել 20000 հա ճահճոտ և գերխոնավ տարածքներ, խիստ ընդարձակվել է կառուցապատումների մակերեսը (շինություններ, ճանապարհներ և այլն), ինչի հետևանքով տեղի է ունեցել առանձին բուսա- և կենդանատեսակների բնակմիջավայրի վերացում, առաջ է եկել բազմաթիվ տեսակների անհետացման վտանգ: Այսպիսով՝ կենսաբազմազանությանն սպառնացող հիմնական վտանգները ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով կապված են մարդու գործունեության հետ: Հետևաբար, այս բոլոր հիմնախնդիրների լուծումը պահանջում է տվյալ ոլորտում համապարփակ քաղաքականության մշակում և իրականացում՝ կառավարության, հասարակության,

¹⁴ Տես *Ս. Ռ. Պասյան*, Հայաստանի Հանրապետության բնապահպանական անվտանգության ռազմավարությունը: «ՀԲ», 2007, հմ. 2–3:

¹⁵ Տես *Ս. Ս. Ալեկոբյան*, Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածի ռազմավարության հիմնական հարցերը Ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից: «ՀԲ», 2007, հմ. 2–3:

ոչ կառավարական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: ՀՀ կենսաբազմազանության պահպանության ծրագրերը կառավարվում են հիմնականում պետության կողմից: Որպես առավել արդյունավետ միջոց ստեղծվում են բնության հատուկ պահպանվող տարածքներ, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 311 հազար հա է (հանրապետության տարածքի մոտ 10 %-ը), և որտեղ պահպանվում է հանրապետության բուսական ու կենդանական աշխարհների տեսակային կազմի 60 %-ը: Համաձայն գործող օրենսդրության՝ հանրապետությունում որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ երաշխավորված են պետական արգելոցները, պետական արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները: Կենդանական ու բուսական աշխարհներին մեծ վնաս են հասցնում չվերահսկվող անօրինական որսը և առևտրական նպատակներով հավաքչությունը: Կարծում ենք, որ նպատակահարմար է ուսումնասիրել կենսաբազմազանության պահպանման գործում եվրոպական երկրների, մասնավորապես՝ Գերմանիայի և սկանդինավյան երկրների փորձը ինչպես իրավական դաշտում, այնպես էլ բնակչության դաստիարակության առումով:

Հայաստանի տարածքն աչքի է ընկնում զարգացած, բայց անհամասեռ ջրային ցանցով, որը բնորոշ է լեռնային երկրներին: Այստեղ կան մոտ 9480 փոքր և միջին գետեր՝ 23000 կմ ընդհանուր երկարությամբ, դրանցից 408-ն ունեն 10 և ավելի կմ երկարություն: Մեծությամբ և ժողովրդատնտեսական օգտագործման տեսակետից իրենց նշանակությամբ առանձնանում են Սևան և Արփի լճերը, որոնցից սկիզբ են առնում, համապատասխանաբար, Հրազդան և Ախուրյան գետերը: Կան նաև մոտ 100 փոքր լճեր, որոնք ունեն միայն տեղական նշանակություն: Ջրային բնահամակարգերի համար անչափ կարևոր է ձկնային կենսաբազմազանության պահպանման և վերականգնման հարցը:

Հայաստանի համար միշտ մեծ կարևորություն է ունեցել Սևանը: Քաղցրահամ ջրի այդ հսկայական պահեստարանն զգալի ազդեցություն է գործել նաև կլիմայի վրա: Սակայն տասնյակ տարիներ Սևանի ջրերն անհաշվեկատ կերպով օգտագործվել են ինչպես հիդրոէլեկտրակայանների շահագործման, այնպես էլ ոռոգման նպատակներով, ինչի հետևանքով վերջին 70 տարիների ընթացքում լճի մակարդակն իջել է 19,6 մ-ով, ծավալը նվազել է 25,5 մլրդ մ³-ով, մակերեսը փոքրացել է 188,1 կմ²-ով¹⁶: Այդ պատճառով էապես փոխվել է լճի կենդանական աշխարհը, գործնականում վերացել է Սևանի պարծանք իշխան ձուկը, խախտվել են կենսածին տարրերի հաշվեկշիռն ու սնուցման շղթաները, լճի ափամերձ տարածքներում առաջացել են ճահճուտներ:

Ներկայումս ձեռնարկված միջոցների շնորհիվ լճի մակարդակը բարձրացվել է մոտ 2,5 մ-ով, հանրապետությունում ջրօգտագործման ընդհանուր ծավալի 90 %-ը ներառված է իրավական դաշտում, ինչը էապես նպաստել է ջրային պաշարների խնայողական օգտագործմանը¹⁷: Միևնույն ժամանակ չշահագործվող աղբյուրներից

¹⁶ Տես Ս. Ռ. Պասյան, նշ. աշխ.:

¹⁷ Տես նույն տեղում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՈՒԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

մեծ քանակությամբ խմելու ջուր թափվում է հանրապետության սահմաններից դուրս հոսող գետերը (Ախուրյան, Աղստև, Արփա, Ողջի, Որոտան և այլն): Այսպես. սահմանային գետեր Արաքսից ու Ախուրյանից Հայաստանը տարեկան օգտագործում է 940 մլն մ³ ջուր, մինչդեռ միայն Ախուրյանի տարեկան հոսքը 847,4 մլն մ³ է¹⁸: Այնպես որ այս ոլորտում անելիք դեռ շատ կա: Իհարկե, այդ գործընթացում պետք է հաշվի առնել նաև գործող միջազգային իրավական նորմերը:

Հայաստանի բնապահպանական անվտանգության ապահովման կարևոր խնդիրներից է օդի և հողի աղտոտումը թունավոր նյութերով: Մասնավորապես՝

Աղյուսակ

ՀՀ-ՈՒՄ ՎԵՍՏԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄԸ (ՏՈՆՆԱ) 2004 թ.¹⁹

Հ/հ	ՀՀ մարզեր	Էներգիա- րիկա	Արդյունա- բերություն	Գյուղա- րնկրեսու- թյուն	Ավիր- պրանապորտ	Ընդամենը
1	Երևան	412,374 (0,5 %)	1 762,5 (2,1 %)	200,08 (0,2 %)	82 048,39 (97,2 %)	84 423,38
2	Արագածոտն	—	152,6 (2,0 %)	1 723,58 (22 %)	5 884,56 (75,8 %)	7 760,77
3	Արարատ	—	15055,3 (53,9 %)	1 176,27 (4,2 %)	11 714,56 (41,9 %)	27 946,15
4	Արմավիր	—	88,8 (0,6 %)	1 169,14 (8,2 %)	12 981,83 (91,2 %)	14 239,81
5	Գեղարքունիք	—	286,4 (3,1 %)	2 468,59 (26,4 %)	6 592,97 (70,5 %)	9 347,90
6	Լոռի	—	19182,6 (62,4 %)	1 710,25 (5,5 %)	9 870,99 (32,1 %)	30 763,79
7	Կոտայք	1 538,319 (11,0 %)	1 650,5 (11,7 %)	1 998,04 (14,3 %)	8 822,88 (63,0 %)	14 009,77
8	Շիրակ	—	240,1 (1,8 %)	2 192,23 (16,0 %)	11 239,41 (82,2 %)	13 671,73
9	Սյունիք	—	333,6 (4,0 %)	1 244,03 (14,8 %)	6 813,43 (81,2 %)	8 391,02
10	Վայոց ձոր	—	128,4 (3,2 %)	538,92 (13,7 %)	3 288,89 (83,1 %)	3 956,24
11	Տավուշ	—	116,8 (1,9 %)	1 020,82 (16,5 %)	5 041,30 (81,6 %)	6 178,88
Ընդամենը՝ մարզերով		1 950,063 (0,9 %)	38 997,6 (17,7 %)	15 441,9 (7,0 %)	164 299,21 (74,4 %)	220 689,43

2006 թ. Երևանում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է թույլատրելի նորման 2,3 անգամ, ծծմբի երկօքսիդինը՝ 1,8, ազոտի երկօքսիդինը՝ 2,7 անգամ, Ալավերդում ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան՝ 11,4, ազոտի երկօքսիդինը՝ 1,3 անգամ, Արարատում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան՝ 3,4 անգամ:

¹⁸ Տես «Հայկական տվետական հանրագիտարան», հ. 1: Ե., 1974, էջ 205:

¹⁹ Տես «ՀՀ Բնապահպանության նախարարության 2003–2005 թթ. նախարարական զեկույց»:

Ուժեղ աղտոտվածություն է դիտվում Քուռի և Արաքսի ավազանների գետերի ջրերում, որտեղ բարձր է ամոնիումի և նիտրիտի իոնների, երկաթի, պղնձի, ցինկի, կոբալտի, մանգանի և այլ մետաղների կոնցենտրացիան, խախտված է գետերի թթվածնային ռեժիմը²⁰:

Գյուղատնտեսության համար օգտագործվող հողատարածքներում պահպանվել է ԵԵԵ-ի (Դ-Դ-Տ) զգալի կոնցենտրացիա, ինչը դարձել է մի շարք թունավորումների պատճառ²¹:

Քաղաքաշինության ոլորտում ևս կան լուրջ խնդիրներ, մասնավորապես՝ Հայաստանի տարածքը սեյսմիկության տեսակետից գտնվում է վտանգավոր գոտում, մինչդեռ առկա են բնակչության զգալի կուտակումներ բարձր սեյսմիկությամբ շրջաններում, կան բնակչության համար վտանգավոր տներում ապրող քաղաքացիներ²²: Քաղաքներում որոշակի թվով շենքեր կառուցված են առանց հաշվի առնելու սեյսմակայունության պահանջները կամ դրանց խախտմամբ, ստորգետնյա ջրերի հոսանքները (գետեր, գետակներ) ուսումնասիրված չեն, ինչը հղի է շենքերի հիմքերի քայքայմամբ: Ժամանակակից քաղաքաշինական նախագծերը մշակելիս հաճախ հաշվի չի առնվում գետերի՝ սելավատարի դեր կատարելու հանգամանքը, ինչն էլ զարնանային ձնհալի և աշնանային անձրևների ժամանակ դառնում է մերձակա տարածքներում վնասի հարուցման պատճառ: Օրինակ՝ Երևանում 2004 թ. գետավարարման պատճառով առաջացած վնասները (Հրազդան գետի ափին կառուցված մի շարք ռեստորաններ, սրճարաններ և այլն) գնահատվում էին մոտ 470 մլն դրամ (շուրջ 1 մլն դոլար): Փորձը ցույց է տալիս, որ նման վտանգ է ներկայացնում նաև Երևանի կենտրոնում բազմաթիվ սրճարաններով և ավտոկայանատեղերով ծածկված Գետառ գետի հունը, չնայած այն հանգամանքին, որ գետի վերին հոսանքում կառուցված է կարգավորիչ ջրամբար (ներկայումս չի գործում)²³: Մեծ թվով ավտոճանապարհներ ենթակա են վտանգավոր երկրաբանական պրոցեսների՝ ՎԵՊ-երի (սողանքներ, սողանք-փլվածքներ, քարվեժներ, ապարաթափվածքներ և այլն) ազդեցությանը, որոնց առաջացման և ակտիվացման հիմնական պատճառներն են՝ մակերևութային ոռոգման, խմելու և տեխնիկական ջրերի ներթափանցումը գրունտների ներքին շերտեր, հողամասերի ինտենսիվ և անկազմակերպ ոռոգումը, շինարարության նպատակով լանջակտրումներն ու լանջամաքրումները, երկրաբանակլիմայական, սեյսմատեկտոնական, երկրաբանաձևաբանական գործոնները, գրունտային ջրերը, հորդառատ անձրևները և այլն: ՎԵՊ-երի ֆինանսական և բնապահպանական հետևանքները երբեմն լինում են շատ մեծ, քանի որ մերձակա

²⁰ Տես Ս. Ռ. Պասյան, նշ. աշխ.:

²¹ Տես Ա. Է. Թադևոսյան, Հայաստանի գյուղատնտեսության մեջ ԵԵԵ-ի ապօրինի օգտագործման հարցի շուրջ: «ՀԲ», 2007, հմ. 1:

²² Տես Ռ. Ռ. Ալավերդյան, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության համակարգի կառուցվածքային տարր: «ՀԲ», 2007, հմ. 2–3:

²³ Տես «Состояние окружающей среды г. Еревана. Доклад за 2004—2005 гг.» (Ассоциация «За устойчивое человеческое развитие»/ЮНЕПКом). Է., 2006:

տարածքներում հաճախ գտնվում են գյուղատնտեսական հողատեսքեր, արդյունաբերական ձեռնարկություններ, անցնում են երկաթուղային գծեր, ավտոճանապարհներ, էլեկտրահաղորդման գծեր, գետեր և այլն²⁴: Օրինակ՝ 2007 թ. Խոսրովի սողանքի ցեխաքարային հոսքը անցել է 7-8 կմ տարածություն՝ 40-50 կմ/ժ արագությամբ: Տեղափոխված սողանքային զանգվածի ծավալը հասել է 10-15 մլն մ³-ի: Դրա պատճառով քանդվել է Վեդի քաղաքի և մերձակա մի քանի գյուղերի խմելու ջրի ջրատարը, ամբողջությամբ քանդվել է Վեդի գետի վերին հոսքի հատվածը Արարատյան դաշտավայրի հետ կապող ավտոճանապարհը, ինչի հետևանքով դժվարանում է տվյալ հատվածից վերև գտնվող արոտավայրերի և հանդերի օգտագործումը, գետի ջրի օգտագործումը Արարատյան դաշտավայրում ոռոգման նպատակով, Խոսրովի արգելոցի աշխատանքը, ինչպես նաև աղետալի ազդեցության են ենթարկվել ինչպես գետի, այնպես էլ նրա ափամերձ բնահամակարգերը: Նման դեպքեր գրանցվել են Օձուն–Ալավերդի ավտոճանապարհին (30 մ երկարությամբ), Երևան–Մեղրի մայրուղու Գորիս–Որոտան (10 կմ), Կապան–Քաջարան (15 կմ), Քաջարան–Մեղրի հատվածներում (30 կմ երկարությամբ), Իջևան– Հրազդան երկաթուղու և Հաղարծին գյուղի հատվածում (430 մ երկարությամբ) և այլն²⁵:

Այսպիսով՝ կարելի է գալ այն եզրակացության, որ ՀՀ-ում բնապահպանական անվտանգության ապահովումը, չնայած որոշակի դրական տեղաշարժերի, պահանջում է լուրջ համալիր համապետական մոտեցում ինչպես համապատասխան միջազգային կառույցների հետ ինտեգրմամբ, այնպես էլ ներքին միջգերատեսչական ռեսուրսների համադասաված օգտագործմամբ:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ են բնապահպանական անվտանգության ապահովման իրատեսական համապետական քաղաքականության մշակում ու դրա իրագործման արդյունավետ մեխանիզմների ստեղծում, բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ու կառույցների (այդ թվում՝ ոչ կառավարական) ջանքերի ծրագրված միավորում ու համադասում:

Այս մեկնակետից առավել հեռանկարային են կենսատեխնոլոգիաների, բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցների, էներգիայի նոր՝ ոչ ավանդական, տեսակների (արև, քամի, ջերմուկներ՝ ընդերքային տաք ջրեր, և այլն) լայնամասշտաբ գիտական հետազոտությունները: Բնապահպանական առումով մաքուր էներգիայի տեսակների օգտագործումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն խուսափելու շրջակա միջավայրի աղտոտումից, այլև զգալի չափով խնայելու վառելիքի ավանդական տեսակները:

²⁴ Տես Վ. Վ. Գաբրիելյան, Վ. Է. Սյրեփանյան, Է. Է. Սնգրյան, Լանջային պրոցեսների դրսևորման վտանգի աստիճանը ՀՀ տարածքում փլվածաթափվածքային երևույթների ու քարվեժների օրինակի վրա: «ՀԲ», 2007, հմ. 1:

²⁵ Արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տվյալներ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում բնակչության ֆիզիկական գոյության, ներկա և գալիք սերունդների համար անվտանգ և երաշխավորված ապագա ապահովելու համար բնապահպանության ոլորտում առաջնահերթ կարելի է համարել հետևյալ ձեռնարկումները.

– բնօգտագործման և վերահսկման մարմինների գործունեության համադասում և գործառույթների հստակ սահմանազատում՝ արդյունավետության մեծացման ու կրկնօրինակման բացառման նպատակով,

– բնական ռեսուրսների խելամիտ օգտագործման կազմակերպում, ինչը պահանջում է տեսական և գիտամեթոդական նոր մոտեցումներ, բնօգտագործման հետևանքների հուսալի կանխատեսում, բնակչության բնապահպանական կրթության մակարդակի բարձրացում ու դաստիարակություն,

– բնական միջավայրի աղտոտման կանխում ի հաշիվ արդյունաբերական ու կենցաղային թափոնների պարտականն առնչվող տեխնոլոգիաների անվտանգության աստիճանի բարձրացման,

– արդյունաբերական և այլ կարգի վթարների նվազագույնացում՝ նոր սարքավորանքի ու տեխնոլոգիաների ներդրմամբ,

– ՀԱԷԿ-ի վառելիքի մնացուկների, քիմիական արդյունաբերության և այլ թափոնների բնապահպանական տեսակետից անվտանգ պահման ու օգտահանման կազմակերպում,

– բնապահպանական տեսակետից անվտանգ տեխնոլոգիաների մշակում ու ներդրում, էներգիայի մաքուր աղբյուրների որոնում,

– վտանգավոր տարածքներում անհետաձգելի բնապահպանական միջոցառումների իրականացում:

Բնօգտագործման, բնության վերափոխման և դրանց հետևանքով առաջացող վնասակար երևույթների կանխատեսման գլխավոր խնդիրներից են.

– ծրագրված բնօգտագործման կամ վերափոխման հետևանքով առաջացող միջավայրի զարգացման ուղղությունների ու միտումների կանխատեսում,

– երկրահամակարգերի, առանձին տարածքների բնական ռեսուրսների արտադրական գնահատում, դրանց բնառեսուրսային ներուժի պարզում, բնակչության քաղաքակենտրոնացման սահմանային մակարդակների որոշում,

– երկրի մասին գիտությունների հնարավորությունների ու ջանքերի միավորում բնափիլիսոփայության հիմքի վրա և գիտության նոր ուղղության՝ անվտանգ բնօգտագործման ու բնապահպանության զարգացում, ինչը պետք է ծառայի ազգային անվտանգության ամրապնդմանը:

Կարծում ենք, որ վաղուց ժամանակն է ընդլայնելու նոր բնապահպանական մտածելակերպի մասշտաբները, մեծացնելու դրա ներգործության աստիճանը, համընդհանուր պայքար ծավալելու այն ամենի դեմ, ինչն ուղղակի թե անուղղակի կերպով սպառնում է ներկա և ապագա սերունդների կենսապայմանների վատթարացմամբ: Այս տեսակետից նպատակահարմար է.

– իմաստավորել պատմության ընթացքը և մարդու տեղը բնության մեջ՝ «բնապահպանություն» և «մշակույթ» առանցքային հասկացությունների ճիշտ ըմբռնմամբ,

– հանրապետության բնակչության կյանքի հնարավոր բարձր որակի հասնելու համար սահմանափակել կամ վերացնել արտադրության և սպառման ոչ կայուն մոդելները, ազգային ներուժը բազմապատկելու հարցում վարել համապատասխան քաղաքականություն՝ գիտական ըմբռնումը խորացնելով գիտատեխնիկական գիտելիքների փոխանակման, նոր և նորարարական տեխնոլոգիաների մշակման, հարմարեցման և փոխանցման միջոցով,

– բնապահպանական խնդիրները առավել արդյունավետ կերպով լուծելու համար ընդլայնել համագործակցությունը բնապահպանական միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ,

– ստեղծել զարգացման նոոսֆերային ուղի մտնելու տնտեսական-կազմակերպական կայուն համակարգ,

– նվազեցնել վտանգավոր բնական երևույթների ու պրոցեսների առաջացման ռիսկը, իսկ դրանց առաջացման դեպքում՝ կատարել հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքներ,

– ընթացիկ գործունեության մեջ և ծրագրերի մշակման ժամանակ հաշվի առնել, որ բնության պահպանության գործում խնայողությունը հասարակությանը պատճառում է շոշափելի կորուստներ, հարուցում է բնակչության շրջանում հիվանդությունների տարածում, բնակֆոնդի ու կանաչ զանգվածների պահպանման ծախսերի ավելացում, գյուղատնտեսական, ջրային և անտառային զանգվածների արդյունավետության անկում, տեխնիկայի՝ ժամանակից շուտ մաշվածություն, արդյունաբերության մեջ և տրանսպորտում ընթացիկ ու հիմնովին նորոգումների ծախսերի աճում և այլն,

– արտադրությունը դիտել իր բնական նախադրյալների հետ միասնության մեջ՝ հենվելով այն հավաստի առաջանցիկ հաշվարկի վրա, թե որքանով է շրջակա միջավայրն ապահովում մեր գործունեությունը ոչ միայն արտադրության համար անհրաժեշտ նյութական պայմաններով, այլև խախտված բնական հավասարակշռության վերականգնման հնարավորությամբ:

Վերը շարադրվածից հետևում է, որ ճիշտ բնապահպանական քաղաքականություն վարելու դեպքում՝

– վերականգնվող ռեսուրսների սպառման տեմպերը չեն գերազանցի դրանց վերականգնման տեմպերը,

– չվերականգնվող ռեսուրսների օգտագործումը տեղի կունենա փակ փուլաշրջաններով, իսկ հեռանկարում, ըստ հնարավորության, կփոխարինվի կայունորեն վերականգնվող նմանակներով,

– աղտոտող նյութերի արտանետման ինտենսիվությունը չի գերազանցի շրջակա միջավայրի ինքնամաքման հնարավորությունները,

– կապահովվի կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը:

Կարծում ենք, որ այս ամենը իրականացնելու դեպքում հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը կապահովվի ոչ թե երկրի բնական միջավայրի հետաճման ու աղտոտման ճանապարհով, այլ արդյունավետ բնօգտագործման ու բնապահպանության անհրաժեշտ միջոցառումների իրականացմամբ, իսկ դա մեր ապագա սերունդների կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման լավագույն գրավականն է և բխում է ԱԱՌ-ի հիմնադրույթներից:

ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ВЗАИМООТНОШЕНИЯ ЧЕЛОВЕКА СО СРЕДОЙ: ЭКОЛОГИЯ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*К. С. ДАНИЕЛЯН, доктор географических наук, председатель Ассоциации «За устойчивое человеческое развитие»/Национального комитета ЮНЕП-а,
А. П. НАЗАРЕТЯН, капитан, начальник технического отдела
военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

Решение важнейших политических, экономических и социальных задач современности требует учета множества факторов, в том числе и взаимоотношений общества с окружающей средой. Мир оказался перед реальной угрозой экологической катастрофы, которая обусловлена нарушением естественного баланса. Потребительский характер цивилизации привел к нерациональному использованию природных ресурсов, что создает напряженность как между государствами, так и в них самих.

В статье в свете основоположений «Стратегии национальной безопасности Республики Армения» обсуждаются негативные явления и проблемы, существующие в сферах водопользования, использования недр и земель, охраны воздушной среды, сохранения биомногообразия и различных экосистем.

Для охраны здоровья населения, создания благоприятных природных условий жизнедеятельности последующих поколений предлагается ряд мероприятий по обеспечению как экологической безопасности РА, включая охрану и рациональное использование природных ресурсов, так и биологической безопасности в целях сохранения генофонда биомногообразия от генетически модифицированных растительных и животных организмов.

THE INTERRELATION BETWEEN
SOCIETY AND THE ENVIRONMENT:
ARMENIA'S ECOLOGY IN THE CONTEXT
OF THE NATIONAL SECURITY STRATEGY

*K. S. DANIELYAN, Doctor of Geographical Sciences, President of the Association
«For Sustainable Human Development»/UNEP National Committee,
A. P. NAZARETIAN, Captain, Head of the Technical Department
of the Defense-Academic Quarterly «Haikakan Banak», INSS, MoD, RA*

SUMMARY

The solution to the most important present-day political, economic and social problems requires consideration of a multitude of factors, including the interrelation between society and the environment. The world is facing a real threat of ecological catastrophe which is conditioned by the upset of natural balance. The consuming nature of the civilization led to an irrational use of natural resources creating tension both among states and inside them.

In this article negative phenomena and problems are discussed in light of the fundamental principles of «The National Security Strategy of the Republic of Armenia». These problems exist in the spheres of water consumption, exploitation of the earth bowels and lands, preservation of the air, the biodiversity and various ecosystems.

For the population health care and creation of favourable natural conditions for vital activities of future generations a number of measures on ensuring the RA's ecological security are proposed including the protection and rational use of natural resources. These measures also ensure the biological security for the protection of the biodiversity gene pool from genetically modified plants and animals.

**ԱՐՑԱԽՈՒՄ ԿՈՆԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ԱԳՐԲԵՋԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՉ**

Մ. Ս. ՄԻՐՁՈՅԱՆ, մայրո, ՀՀ ՊՆ Անձնակազմի հետ տարվող աշխատանքի վարչության անձնակազմի հետ տարվող աշխատանքի բաժնի սպա

18-րդ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի հայ մելիքների անհետատես քաղաքակաճության հետևանքով այնտեղ հաստատվեց քյուրքական քոչվոր ջիվանչիլյան ցեղի սարըջալը ճյուղը՝ Փանահ խանի գլխավորությամբ: Այդ ժամանակից ի վեր քյուրքերը մշտապես ձգտել են իրենց ենթարկելու և յուրացնելու այդ տարածքները: Գրա համար նրանց անհրաժեշտ էր՝

– այդ տարածքների նկատմամբ հաստատել իրենց վարչաքաղաքական գերիշխանությունը,

– մեծացնել քյուրքական տարրի տեսակարար կշիռը՝ աստիճանաբար դուրս մղելով բնիկ հայ բնակչությանը*:

Առաջին եղանակի իրագործումը բարդացնում էր այն հանգամանքը, որ քյուրքական ցեղերը իրենք չունեին պետականություն, իսկ Պարսկաստանը և ցարական Ռուսաստանը, որոնց կազմի մեջ հաջորդաբար մտել է Ղարաբաղը, չէին հաստատում նրանց գերիշխանությունը¹:

Երկրորդ նպատակին կարելի էր հասնել երկու ճանապարհով՝ այդ տարածքների հայաթափմամբ և այնտեղ քյուրքական ցեղերի ներթափանցմամբ:

Միայն Խորհրդային իշխանության օրոք ադրբեջանցիներին, որոնք մինչ այդ կոչվում էին կովկասյան թաթարներ, հաջողվեց Ղարաբաղն ու Նախիջևանը բռնակցել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Այս պարագայում հեշտացավ մաս քյուրքական տարրի ուժեղացման քաղաքականության իրականացումը: Հայերը ամեն կերպ փորձում էին հակադրվել այդ միտումներին: Ուստի ադրբեջանական իշխանությունները օգտագործում էին ցանկացած առիթ՝ իրենց մտադրությունը իրականացնելու համար: Նրանք հմտորեն օգտագործեցին մաս Խորհրդային Միությունում համապետական մակարդակով ծավալված համատարած կոլեկտիվացման գործընթացը:

1927 թ. ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարում որոշում ընդունվեց գյուղատնտեսութ-

* 1823 թվականին Ղարաբաղի լեռնային մասի բնակչության 84,6 %-ը կազմել են հայերը, 14,7 %-ը՝ կովկասյան թաթարները (տես «Ղարաբաղի նահանգի նկարագրություն»: Թիֆլիս, 1886, էջ 260 (բերվում է ըստ՝ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994», հանրագիտարան: Ե., 2004, էջ 230)):

¹ Տես, օրինակ, Բ. Բալայան, Ռազմաքաղաքական իրադրությունը Անդրկովկասում XVIII դ. վերջում. Երևանի և Ղարաբաղի ազատագրման գուրովյան նախագիծը: «ՀԲ», 1995, հմ. 4:

յան համընդհանուր կոլեկտիվացման մասին: Այդ գործընթացը դրական նշանակություն ունեցավ չքավոր գյուղացիների համար՝ նրանց ընտանիքները փրկելով սովից: Սակայն կոլեկտիվացման տարիներին ԽՍՀՄ-ում թույլ էին տրվում սխալներ, որոնք հանգեցրին դժգոհությունների: Չնայած այն պաշտոնական կարգախոսին, թե՛ «ամուր դաշինք միջակ գյուղացիության հետ, հենվել միայն չքավորության վրա, անընդմեջ պայքար կուլակության դեմ», կոլեկտիվացման քաղաքականությունը իրականացվում էր գյուղացիության (այդ թվում՝ միջակ) նկատմամբ գործադրվող դաժան բռնությամբ:

Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները իրենց ազգային շահերն առաջ էին մղում ԽՍՀՄ կոմկուսի կողմից առաջադրված գաղափարախոսական դրույթների և մեթոդների շրջանակներում, այդ իսկ պատճառով հայ կոմունիստները գրեթե ոչինչ չէին կարողանում անել ադրբեջանական ոսնձգություններին դիմագրավելու համար: Յավոք, մինչև այժմ հանգամանորեն չի ուսումնասիրվել, թե Ադրբեջանի հայաբնակ տարածքներից կոլեկտիվացման պատրվակով որքան հայ է աքտորվել*:

Հատուկ պատրաստություն ստացած ադրբեջանցի «էմիսարներն» իրենց հետ բերում էին քոչվոր անասնապահ ադրբեջանցիների՝ ստեղծելով ժամանակավոր բնակատեղիներ, որոնք, համարվելով նոր «բնակիչներով», վերածվում էին ադրբեջանական գյուղերի: Չանգեզուրի, Արցախի և Նախիջևանի տարածքներում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով ավերվել էին զգալի թվով բնակավայրեր**։ Ադրբեջանական իշխանությունները, իբր երկրաշարժի «վերբերը բուժելու» համար, կառուցում էին մեծ թվով բնակարաններ, սակայն այնտեղ բնակեցնում էին ադրբեջանցիների: Արցախում կոլեկտիվացման պատրվակով 1931–1937 թթ. ստեղծվեցին ադրբեջանական նոր բնակատեղիներ՝ Գալաչի, Մոլլալար, Սոֆլու, Ռեմուդլու, Չայքենդ, Չարեքթար, Արմալեդ, Դոզլու, Սուս, Չարխալու, Խալֆալի, Դալբալի, Լիսագորսկ, Քյոհնաքենդ և այլն:

Մեկ այլ եղանակ էր հողատարածքների քմահաճ բաժանումը: Բաքվում ստեղծված հողաշինարարական հանձնաժողովը ադրբեջանցիներին հողահատկացումներ էր կատարում հայկական գյուղերի հողերի հաշվին: «Նորովի» բաժանվում էին լեռնային արոտավայրերը. «մի կոլտնտեսությունից յայլադները վերցնում էին, տալիս մյուսին», հայկական գյուղերից «կտրում էին» և գրում ադրբեջանական գյուղերի վրա²: Թեև հայերն անընդհատ պահանջում էին հանձնաժողովում ընդգրկել

* Այս մասին հավաստի տեղեկություններ կարելի էր գտնել Բաքվի արխիվներում, սակայն ներկայումս դրանք մեզ համար անհասանելի են, ուստի ստիպված եղանք օգտվելու հիմնականում տարբեր հրապարակումներից:

** 1931 թ. ապրիլի 27-ին ժամը 16-ն անց 30 րոպեին կործանիչ երկրաշարժ է տեղի ունեցել Չանգեզուրում: Այդ երկրաշարժի ուժեղ ցնցումը, որը գերազանցել է 8 բալը, ընդգրկել է մոտ 100.000 կմ² տարածություն: Լրիվ կամ մասամբ կործանվել են Չանգեզուրի, Արցախի և Նախիջևանի մոտ 100 գյուղեր, եղել են մեծաթիվ մարդկային զոհեր (տես Վ. Սյրեկիսյան, Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում և նրա մերձակայքում: Ե., 1964):

² Տես Ա. Գրիգորյան, Ինչպես եղավ հողերի բաժանումը: «Լենինյան ուղի», 1936 թ. հունիսի 10 (բերվում է ըստ՝ Կ. Ղախրամանյան, «Օջախի գիրք. հողը կանչում է», գիրք Բ: Ե., 2005, էջ 285):

մասն այդ հողերի «պատմությունը իմացողների»³, սակայն այդ պահանջները անուշադրության էին մատնվում: Հայերի մի մասն ստիպված հեռանում էր լեռներ ու անտառներ, զինված խմբեր կազմում և այդ ձևով պայքարում թուրք-ադրբեջանական «կոմունիստների» դեմ: Քանի որ վերադաս իշխանությունն ադրբեջանական էր կամ էլ՝ դրածո, ընդվզող հայ գյուղացիներին անվանում էին կոլտնտեսության թշնամիներ, կամ «դաշաղներ»: Բռնությունների, հալածանքների և քարտի գոհեր էին դառնում մասն այդ «հայ դաշաղների» ընտանիքների անդամները:

Հյուսիսային Արցախի հայկական բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի աճը և հայերի քաղաքական միավորումը կանխելու, ազգային ինքնագիտակցության զարթոնքը խոչընդոտելու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունը որոշեց «շրջանները խոչորացնելու» պատրվակով «տարրալուծել» հոծ զանգվածներով բնակվող հայությանը՝ նոր շրջաններում ապահովելով ադրբեջանցիների գերակշռություն: Մասնավորապես՝ «Որոշվեց Խանլարի շրջանը, որը գերակշռող հայ բնակչություն ուներ և հայ ղեկավարություն, միավորել հարևան Սաֆարալիևի շրջանի հետ, որն ամբողջապես ադրբեջանաբնակ էր: Շահումյանի շրջանն էլ պիտի միավորվեր հարևան Կասում-Իսմայիլովի շրջանի հետ, ինչը կործանարար կլիներ առաջինի համար:

Որոշումների քաղաքական բուն նպատակը հասկանալի եղավ ժողովրդին, և մարդիկ ըմբոստացան... շահումյանցիները վճռականորեն մերժեցին միավորման պահանջը: Նույնիսկ հարց դրվեց, որ եթե խոչորացում է պետք, թող միավորեն Շահումյանի և Խանլարի շրջանները: Բայց դա կնշանակեր Հյուսիսային Արցախի հայության միավորում, ինչը հակառակ էր Բաքվի նպատակներին, և այդ առաջարկը խլացվեց»⁴:

Հետագայում ադրբեջանցի ղեկավարներին հաջողվեց միավորել Խանլարի շրջանը Սաֆարալիևի շրջանի հետ, ինչի հետևանքով Խանլարի հայկական մի շարք գյուղեր դատարկվեցին, իսկ մնացածներն էլ կղզիացան, հատկապես՝ Գետաշենի ենթաշրջանի հայկական գյուղերը, մինչդեռ Շահումյանի շրջանը պահպանեց իր կարգավիճակը, թեև Ադրբեջանի իշխանությունները այստեղ էլ հասան որոշակի հաջողությունների՝ մեկուսացնելով Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ հայկական գյուղերը⁵:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության հրահանգով հանրապետության մամուլը տեղեկատվական-քարոզչական գրոհ ձեռնարկեց Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության և նրա ղեկավարության վրա: Օրինակ՝ Բաքվում տպագրվող հայերեն «Կոմունիստ» թերթում տպագրված հոդվածներից մեկում նշվում էր, որ քողարկված հակահեղափոխականները փորձում են վիժեցնել այդ հաջողությունները, ձեռք են բարձրացնում Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսականների «ունևոր, երջանիկ կյանքի» վրա՝ ձգտելով նորից վերականգնելու կապիտալիզմը: Մեղադրվում էր մարզի ղեկավարությունը, մասնավորապես՝ մարզկոմի առաջին

³ Գ. Մեյրան, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները: Թիֆլիս, 1928, էջ 13–14:

⁴ Կ. Ղահրամանյան, Հյուսիսային Արցախ, գոյության պայքար: Ե., 1993, էջ 43:

⁵ Տես նույն տեղում, էջ 44:

քարտուղար Պ. Պողոսյանը, մարզգործկոմի նախագահ Մ. Բաղամյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Մ. Գրիգորյանը և ուրիշներ⁶: Կուսակցության շարքերից առանց համոզիչ փաստերի հեռացվում էին հարյուրավոր հայեր, և նրանց նկատմամբ ձևավորվում էր բացասական հասարակական կարծիք:

Նման իրավիճակում հայրենի հողի պաշտպանությունը գրեթե անհնարին էր: Նոր կարգերը գործում էին ժողովրդի անունից, և տեղերից բարձրացված յուրաքանչյուր հարց, առավել ևս՝ պահանջ կամ դժգոհություն, կարող էր որակվել որպես



Պլակատ գյուղատնտեսության կոլեկտիվացման վերաբերյալ (1930-ական թթ.)

հակաժողովրդական և համապատասխան հետևանքներ ունենալ: Հաճախ գյուղերի հայ տղամարդկանց փակում էին եկեղեցիներում ու պահում այնքան, մինչև որ զենքերը հանձնեն: Երբեմն դա առիթ էր դառնում նաև անցանկալի մարդկանց պատժելու և մյուսներին «դաս» տալու համար:

Արցախում հայ բնակչությանը մեծ հարված էր հասցվում ճանապարհների և արդյունաբերական կառույցների շինարարությամբ. դա արվում էր այնպես, որ էապես վնասվեն հայկական բնակավայրերը: Օրինակ՝ Կիրովաբադ – Ազբարիտ ճանապարհի կառուցման ժամանակ ավերվեց Բանանցի այգիները ոռոգող երեք կիլոմետր երկարությամբ ջրանցքը՝ առանց վնասի փոխհատուցման⁷:

Երկրամասում լեռնային արդյունաբերության զարգացումը (Չրաղիձոր, Չագիկ,

⁶ Տես «Մինչև վերջ արմատախիլ անել բուրժուանացիոնալիստական գործակալությունը Լեռնային Դարաբաղում»: «Կոմունիստ», 1937 թ. հոկտեմբերի 10 (բերվում է ըստ՝ Հ. Աբրահամյան, Մարանշող Արցախ. 1917–2000, գիրք Բ: Ե., 2005, էջ 103–104):

⁷ Տես Հ. Դսևիկյան, Ջրանցքը վերանորոգվել է: «Լեռնիցյան ուղի», 1935 թ. հուլիսի 30:

Միրզիկ և այլն) շատ դեպքերում օտար էթնիկական տարրերի ներհոսքի պատճառ էր դառնում, իսկ սակավահող հայ գյուղացիների մի մասը հեռանում էր հայրենի գյուղերից⁸: Տեղական մամուլում մտահոգություն էր հայտնվում, որ «չնչերի թիվն ավելանալու տեղ պակասում է: Ծննդաբերություններ գրեթե չեն լինում: Եվ զարմանալին այն է, ով որ հեռանում է այստեղից, սկսում է ապրել մի ուրիշ տեղ, երեխաներ է ունենում»⁹:

Արցախի բնակչության համար աղետալի եղավ Գանձակի օկրուգային կոմիտեի վերաբերյալ ԱդրԿ(Բ)Կ նախագահության 1929 թ. մայիսի 13-ի որոշումը, որ «տեղական բնակչությունից բանվորների ներգրավումն անբավարար չափով է կատարվում»: Ընդունվեցին բազմաթիվ որոշումներ «ազգային» բանվորական կադրեր պատրաստելու, բանվորներին պատասխանատու աշխատանքի առաջ քաշելու մասին: Սակայն երբ փակվեց Կուշչիի կոբալտի հանքը, որտեղ աշխատում էին նաև մոտակա Բանանց, Կիրանց, Խաչակապ հայկական գյուղերի բնակիչները, և հայերը դարձան գործազուրկ, ապա նրանց չտեղավորեցին Քարհատի հանքերում, որտեղ կար աշխատուժի մեծ պահանջարկ: Սակավահող հայկական գյուղերի բնակիչները նախ կտրվեցին գյուղից, դարձան բանվոր, հետո էլ մնացին անգործ ու ցրվեցին տարբեր կողմեր՝ աշխատանք որոնելու: Իսկ Քարհատի հանքերում, որտեղ հմտացած հայ բանվորներին աշխատանքի չընդունեցին, աստիճանաբար աճեց թուրք բանվորների թիվը, և հայկական հողի վրա ծնունդ առավ Գաշքեսան (ոչ թե հայերեն ձևով՝ Քարհատ) քաղաքը, որում գերակշռում էր օտար էթնիկական տարրը¹⁰:

Արցախում աղբբեջանցիների բնակեցումը հատուկ նպատակ էր հետապնդում և կրում էր կազմակերպված բնույթ: Աղբբեջանում այդ նպատակով ստեղծվել էր ոչ պաշտոնական ինստիտուտ, որտեղ պատրաստվում էին կադրեր՝ աղբբեջանական իշխանությունների կողմից երաշխավորված անձինք, որոնք տեղում հայերին պետք է պարտադրեին իրենց պահանջները և օրինականությամբ շղարշված համակարգված լուծումներ տային աղբբեջանցիների անօրինական ներգաղթին: Հայ գյուղացուն իբր «օգնություն ցույց տալու» նպատակով Բաքվում կազմակերպվում էին բանվորական բրիգադներ: Գործուղվողները տեղական մարմինների, կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ բազմակողմանի հարաբերություններ էին հաստատում, նաև ուսումնասիրում էին իշխանական մարմիններում ընդգրկված հայ պաշտոնյաների թույլ և ուժեղ կողմերը: Անցանկալիները վարկաբեկվում ու զրպարտվում էին որպես «խորհրդային երկրի թշնամիներ», «ազգայնամոլներ», «դաշնակցական-մաուգերիստներ», «կուլակներ», «տրոցկիստներ», «բուխարինականներ», «վնասարարներ» և տարբեր մեղադրանքներով գնդակահարվում կամ արտոբվում էին:

Հարկ է նշել, որ, ի տարբերություն ԽՍՀՄ մյուս տարածաշրջաններից, այդ տարիներին Արցախում տեղի ունեցած գյուղացիական հուզումները չի կարելի միանշա-

⁸ Տես Հ. Դավթյան, Ներքին Չայլուն պատասխան է ինդրում: «Խորհրդային Գարաբաղ», 1927 թ. հոկտեմբերի 15:

⁹ Տես Կ. Դահրամանյան, Օջախի գիրք. հողը կանչում է, գիրք Բ, էջ 265:

¹⁰ Տես նույն տեղում, էջ 266:

նակ կերպով որակել որպես դասակարգային պայքարի դրսևորում, որովհետև հայերը փաստորեն պայքարում էին նաև աղբբեջանցի ներգաղթողների հողային գավթումների դեմ:

Հայերի արտագաղթի և աղբբեջանցիների ներգաղթի հետևանքով զգալիորեն փոխվեց մարզի ժողովրդագրական պատկերը: Դեռ 1918–1920 թվականներին նորաստեղծ Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետության ագրեսիայի և թուրքական ինտերվենցիայի, մանավանդ հայերի կոտորածի (1920 թ.) ու Շուշիի հայկական թաղամասի կործանման հետևանքով, հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը նվազեց: Եթե 1913 թ. Շուշիի բնակչության (42400 մարդ) 61,5 %-ը հայեր էին, ապա ըստ 1989 թ. մարդահամարի՝ քաղաքում ոչ մի հայ չէր մնացել: Հաղորթի շրջանում բնակվող 37138 հայերից Գարաբաղյան շարժման նախօրեին մնացել էր ընդամենը 11600-ը¹¹: Ստորև ներկայացվում են Լ.ԴԻՄ-ում 1923–1989 թվականների բնակչության թիվը և ազգային կազմը՝ ըստ մարդահամարների տվյալների:

Աղյուսակ

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԳԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ¹²

Տարեթվեր	1923	1939	1959	1970	1979	1989
Ամբողջ բնակչությունը, հազ. մարդ	157,8	150,8	130,4	150,3	162,2	189,1
այդ թվում՝ հայեր, հազ. մարդ (%-ներով)	149,6 (94,1)	132,8 (88,1)	110,1 (84,1)	121,1 (80,6)	123,1 (75,9)	145,5 (76,9)
աղբբեջանցիներ, հազ. մարդ (%-ներով)	7,7 (4,9)	14,1 (9,3)	18,0 (13,8)	27,2 (18,1)	37,3 (22,9)	40,6 (21,5)
ռուսներ, հազ. մարդ (%-ներով)	0,6 (0,5)	3,2 (2,1)	1,8 (1,4)	1,3 (0,9)	1,3 (0,8)	1,9 (1,0)

Այսպիսով՝ 1923–1959 թթ. հայ բնակչությունը նվազեց 39,5 հազարով: 1979 թ. Լ.ԴԻՄ-ի բնակչության աճը 1923 թվականի համեմատությամբ կազմում էր ընդամենը 2,8 %, ընդ որում, հայերի թիվը նվազել էր 19 %-ով, իսկ աղբբեջանցիներինը ավելացել 4,84 %-ով, ռուսներինը և այլ ազգություններինը՝ 2 անգամ: Նշված ժամանակաշրջանում Լ.ԴԻՄ-ում հիմնովին հայաթափվեց 47 բնակավայր, ստեղծվեց 27 աղբբեջանական բնակավայր¹³:

Տարածքային առումով Հայաստանից անջատված Արցախի և Հայաստանի միջև 1923 թ. ստեղծվեց այսպես կոչված «Կարմիր Քրդստանի» ինքնավար գավառը, որն իր մեջ ներառում էր Քելբաջարի, Լաչինի և Կուբաթուրի շրջանները: «Կարմիր Քրդստանի» ղեկավար նշանակվեց էթնիկ աղբբեջանցի Գ. Հաջիևը (Շուշիից), որը մինչ այդ ղեկավարել էր Կուբաթուրի վարչակազմը¹⁴: Աղբբեջանի իշխանություններն ամեն կերպ նպաստում էին «Կարմիր Քրդստանի» թյուրքացմանը՝ արգելելով քրդական դպրոցների բացումը, քրդական լեզվի ու մշակույթի զարգացումը: Տեղահանու-

¹¹ Տես «Գարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994», հանրագիտարան, էջ 230, 231:

¹² Տես նույն տեղում, էջ 231:

¹³ Տես նույն տեղում:

¹⁴ Տես *Ա. Բակիան*. Աзербայճանսկիե կըրծյ. Բ., 1932, ժ. 50–52:

մից և հալածանքներից խուսափելու համար քրդերը նպատակահարմար էին համարում փոխել իրենց ազգությունը և դառնալ «ադրբեջանցի»¹⁵: 1926 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Ադրբեջանական ԽՍՀ-ում քրդերի թիվը կազմում էր 41,1 հազար, իսկ 1939 թ.՝ ընդամենը 6 հազար¹⁶:

Ադրբեջանական իշխանությունները էթնիկ գոման քաղաքականություն էին իրականացնում ոչ միայն Արցախում: Նրանք նպատակ ունեին թուրք-ադրբեջանցիներով բնակեցնելու անգամ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքը: Վերը հիշատակված երկրաշարժի հետևանքները վերացնելու պատրվակով, ինչպես նաև դասակարգային պայքարի քաղաքականության քողի ներքո ադրբեջանական իշխանությունները ադրբեջանցիներ բնակեցնելու փորձեր ձեռնարկեցին Չանգեզուրի և Վայքի տարածքներում: Տվյալ տարածքները մեծ հետաքրքրություն էին ներկայացնում ադրբեջանցիների համար: Այդ է վկայում, օրինակ, ադրբեջանցի պատմաբան Նազար Հեյդարովը. «Չանգեզուրի ալպիական մարգագետինների լեռնաբերձ անձայրածիր տարածությունները (141.277 դեյալատին պետական հողեր) վաղ ժամանակներից դեպի իրենց էին ձգում քոչվոր անասնապահներին ոչ միայն բուն Չանգեզուրի ցածրադիր վայրերից, այլև Կարյազինոյի, Շուշիի, Սալյանի ու Ջավադի գավառներից»¹⁷: Խորհրդային Հայաստանում՝ ճանապարհներին մոտ ու բերրի հողերով տարածքներում, բնակություն հաստատեցին քոչվոր ադրբեջանցիներ: Այդ չարիքը գրեթե անհնար էր արմատախիլ անել, քանի որ ադրբեջանցիները, հիմնականում՝ հաջողությամբ, փորձում էին խորհրդային երկրի ղեկավարներին համոզել, թե դա արվում է հանուն կուսակցության որդեգրած քաղաքական ուղեգծի հաղթանակի, հանուն «պրոլետարական ինտերնացիոնալիզմի»:

Մինևույն ժամանակ, հայ բնակչությունը միայն արդարություն էր փնտրում՝ մոռանալով, որ այդ «չարաբաստիկ արդարությունը» ուժեղների համար ոչինչ բան է: Այնինչ պետք էր ունենալ լավ մշակված ու ճկուն ծրագիր, որը հնարավորություն տար, հարմարվելով ստեղծվող իրավիճակներին, անշեղորեն քայլելու դեպի գլխավոր նպատակագործումը: Սակայն մենք նման ծրագրեր չենք ունեցել: Իսկ ադրբեջանական բոլոր ձեռնարկումները համահունչ էին պանթյուրքական գաղափարախոսությանը: Ըստ դրա՝ թուրքական կառավարությունը «պետք է կռթնի բացառապես թուրք տարրին վրա և բացառապես ուժ տա անոր: Մյուս տարրերը գոյություն չունին իբրև ուրյն ազգեր, անոնք իրավունքներ չունին: Պետք է թրքանան կամ կորսվին»¹⁸:

¹⁵ Տես *D. Muller*. The Kurds of Soviet Azerbaijan, 1920—1991. «Central Asian Survey», 2000, № 19, P. 62: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների վարած ազգաճովման քաղաքականության մասին հանգամանորեն տես *Г. С. Котангджян*. Азербайджан—антидемократизм и колониализм в перспективе региональной безопасности. «Регнум», 7 февраля 2008 г. (<http://www.pda.regnum.ru/news/issues/953962.html>), *նույնի՝* Азербайджан—«несвободное государство»: мир и война с народами. «Регнум», 29 августа 2007 г. (<http://www.regnum.ru/news/877190.html>):

¹⁶ Տես *Н. Бугай, Т. Броев, Р. Броев*. Советские курды: Время перемен. М., 1993, с. 46; «Всесоюзная перепись населения 1939 года». М., 1992, с. 71:

¹⁷ Ն. Հեյդարով, Չանգեզուրի լեռներում: Ե., 1977, էջ 4:

¹⁸ *Չարխան*, Միացյալ և անկախ Թուրանիա: Ե., 1993, էջ 119:

Ադրբեջանի իշխանությունները լավ մշակված ծրագրով էին գործում և 1988–1992 թթ.: Եվ չկա ոչ մի երաշխիք, որ նման ոսնձգություններ՝ հարմարեցված իրավիճակային հրամայականներին, չեն ձեռնարկվի նաև ապագայում:

Կարծում ենք, որ ոչ այնքան հեռու անցյալի այս համառոտ նկարագրությունը ուսանելի կլինի այն մարդկանց համար, որոնք փորձում են մոռացության տալ անցյալի դասերը՝ հույս ունենալով, որ ապագան միանգամայն այլ կլինի: Ինչպես գրել է մեծ հայրենասեր, գաղափարախոս ու ռազմական գործիչ Գարեգին Նժդեհը, «Մենք պետք է սովորենք մեր և ուրիշների կատարած սխալների վրա, որպեսզի դասեր քաղենք ապագայում չսխալվելու և հաղթանակներ տանելու համար: Մենք պետք է արժեքավորենք մեր պատմությունը, անցած ուղին: Այլևս ոչ մի կաթիլ ջուր չպետք է լցնենք թշնամու ջրաղացը աշխատացնելու համար, մենք մեր ջրաղացը պետք է աշխատացնենք»¹⁹:

¹⁹ *Ալն*, Նժդեհ: Պէյրոս, 1968, էջ 258:

ИСТОРИЯ

К ВОПРОСУ ОБ АНТИАРМЯНСКОЙ ПОЛИТИКЕ АЗЕРБАЙДЖАНСКИХ ВЛАСТЕЙ В АРЦАХЕ В ПЕРИОД КОЛЛЕКТИВИЗАЦИИ

*М. С. МИРЗОЯН, майор, офицер отдела по работе с личным составом
Управления по работе с личным составом МО РА*

РЕЗЮМЕ

Насильственное присоединение Арцаха и Нахичевани к Азербайджанской ССР под диктатом Сталина облегчило осуществление политики Азербайджана по вытеснению армян с этих исконно армянских территорий и обеспечению здесь засилья тюркского элемента. Для осуществления своей антиармянской политики азербайджанские власти использовали любые ситуационные возможности, применяя различные средства и подходы. В частности: наиболее авторитетные армяне подвергались преследованиям под предлогом «борьбы с кулачеством»; на территории Арцаха создавались временные места проживания для скотоводов-кочевников, которые со временем разрастались в азербайджанские поселения; под предлогом ликвидации последствий Зангезурского землетрясения азербайджанцами были заселены не только территория Арцаха, но и Советской Армении; развитие производственной, в частности горно-рудной, и транспортной инфраструктур использовалось для целенаправленного нанесения армянскому населению Арцаха социально-бытового ущерба; созданная в Баку комиссия по землеустройству предоставляла азербайджанцам земельные участки за счет армянских сел и т. д.

Искусно используя в своих интересах процесс всеобщей коллективизации, азербайджанцы под предлогом классовой борьбы на селе достигли

обезармянивания многих армянских сел. В целях предотвращения количественного роста армянского населения Северного Арцаха, пробуждения его национального самосознания и политического объединения, руководством Азербайджана было принято решение об «укрупнении районов», т. е. объединение районов с преимущественно армянским населением с более крупными азербайджанскими.

В итоге, властям Азербайджана удалось существенно изменить демографический облик Арцаха, резко снизив удельный вес армян.

HISTORY

TO THE ISSUE OF THE ANTI-ARMENIAN POLICY BY THE AZERBAIJANI AUTHORITIES IN THE COLLECTIVIZATION PERIOD IN ARTSAKH

*M. S. MIRZOYAN, Major, Officer at the Department on Activities with the Staff
of the Board on Activities with the Staff of the MoD, RA*

SUMMARY

The annexation of Artsakh and Nakhichevan with the Azerbaijanian SSR under Stalin's dictatorship alleviated the implementation of Azerbaijan's policy on ousting the Armenians from those original Armenian territories and on ensuring dominance of the Turkic element here. To implement their anti-Armenian policy, the Azerbaijani authorities used any situation possibilities applying various means and approaches. Particularly, more authoritative Armenians were subjected to persecutions under the pretext of «the struggle against the Kulaks»; temporary places of residence for nomadic cattle-breeders were formed on the territory of Artsakh, which grew into Azerbaijani settlements with time. On the pretext of liquidating Zangezour earthquake consequences Azerbaijanis populated not only the territory of Artsakh, but of the Soviet Armenia as well. The development of industrial, particularly mining, and transport infrastructures was used for targeted social damage to Artsakh's Armenian population. The commission on land-utilization, established in Baku, allotted lands to the Azerbaijanis at the expense of the Armenian villages, etc.

The Azerbaijanis, skilfully using the process of general collectivization in their interests, under the veil of class struggle in the village reached the de-Armenization of many Armenian villages. To prevent quantitative growth of the Armenian population of the Northern Artsakh and to awaken its national self-consciousness and political unification the Azerbaijani leadership adopted the resolution on «the extension of regions», i. e. to join the regions chiefly populated by Armenians with larger Azerbaijanian ones.

Finally, the Azerbaijani authorities succeeded in essentially changing Artsakh's demographic aspect, reducing abruptly the relative density of the Armenians.

Հեռանկարային գրահաբաճկոններ: Ջրահաբաճկոնները զանգվածաբար կիրառվել են 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի կողմից՝ Վիետնամում, և ԽՍՀՄ-ի կողմից՝ Աֆղանստանում: Գնդակից պաշտպանող նյութերի մեծ մասը պատրաստվում էր մեծ ամրությամբ պոլիմերների հիմքի վրա (քելար, տուրան, դինիմա): Գնդակը, բախվելով գրահաբաճկոնին, տեղային ներգործություն չէր ունենում, այսինքն՝ գնդակի հարվածը բաշխվում էր գրահաբաճկոնի ամբողջ ծավալով: Ջրահաբաճկոնը թուլացնում էր հարվածի ուժը, ինչի շնորհիվ էլ մարդը ողջ էր մնում, սակայն առաջանում էին կապտուկներ, որոշ դեպքերում էլ՝ ներքին օրգանների վնասվածքներ:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության հովանավորությամբ այդ բնագավառում հետազոտական աշխատանքներ կատարող մի շարք լաբորատորիաների մասնագետների կարծիքով՝ նպատակահարմար է ոչ թե կատարելագործել գոյություն ունեցող գրահաբաճկոնները, այլ մշակել սկզբունքորեն նոր մոտևներ:

Ներկայումս ԱՄՆ-ում հետազոտական աշխատանքներ են տարվում նանոտեխնոլոգիաների կիրառմամբ այնպիսի գրահաբաճկոնների ստեղծման ուղղությամբ, որոնք իրենց տեխնիկական պարամետրերով էապես գերազանցեն ներկայումս արտադրվող մոտևները: Այդ տեխնոլոգիայով պատրաստվող և փորձարկումներ անցնող գրահաբաճկոնները գործածության մեջ եղածների համեմատությամբ (դրանց քաշը, կախված մոդելից և ձևից, 7,12–10,841 կգ է) զգալիորեն թեթև են և զինվորին ավելի արդյունավետ կերպով են պաշտպանում պայթյունից առաջացած բեկորներից ու գնդակներից:

Ջրահաբաճկոնների պատրաստման համար օգտագործվում են այնպիսի նյութեր, որոնք արտադրվում են նանոմասնիկներից բաղկացած մոլեկուլային շղթաներով կազմված հյուսվածքներից: Մասնագետների նպատակն է արհեստական պոլիմերների ու պոլիմերային նանոթելիկների միջոցով վերարտադրել սարդոստայնի թելի յուրօրինակ կառուցվածքը, որը, ինչպես հայտնի է, պոլիմեր է և բաղկացած է միմյանց հաջորդող փափուկ ու կոշտ հատվածներից:

Հարկ է նշել, որ բրիտանացի գիտնականները ևս հետազոտական աշխատանքներ են կատարում, և մոտ ապագայում այնտեղ նույնպես կարտադրվեն նանոխողովակներից պատրաստված գրահաբաճկոններ: Օրինակ՝ Քենթրիջի համալսարանի լաբորատորիայում ստեղծված սարքը կարող է գրահաբաճկոնի համար արտադրել օրեկան մի քանի կիլոմետր նանոթելիկներ (ի դեպ, դրանք 1 գրամից էլ պակաս են կշռում):


Թեև նանոնյութերը հայտնի են իրենց դիմացկունությամբ, սակայն մեծ ուշադրության չէին արժանանա, եթե չլիներ մի շատ կարևոր հանգամանք ևս. նանոխողովակներն ունեն «գնդակը (բեկորը) հետ մղելու» հատկություն: Գերմանրաչափ սնամեջ ածխածնային թելքը ավելի ճկուն է, քան մինչ այդ գրահաբաճկոնների համար օգտագործվող պոլիմերները: Գնդակի ազդեցությամբ գրահաբաճկոնի նանոխողովակներն սկսում են ճկվել և կլանել հարվածող մասնիկի (գնդակ, բեկոր) կինետիկ էներգիան՝ նվազեցնելով



Նանոտեխնոլոգիաներով պատրաստված գրահաբաճկոն


նրա արագությունը, այնուհետև տեղի է ունենում թեքերի նախկին ձևի վերականգնում, ինչն ուղեկցվում է գնդակին հակադարձ իմպուլսի հաղորդմամբ: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում յուրօրինակ հետմղում, ինչի հետևանքով գնդակի էներգիան նվազում է ավելի արդյունավետ կերպով, և մարդն զգալիորեն քիչ վնասվածքներ է ստանում: Գիտնականները փորձարարական աշխատանքների միջոցով պարզել են, որ մանուածխածնային զրահաբաճկոնի նվազագույն 0,6 մմ հաստությունը խոչընդոտում է հրազենից արձակված գնդակի ներթափանցումը:

ԱՄՆ-ի բանակի անձնակազմը շուտով կարող է ստանալ նոր տիպի հանդերձանք՝ պատրաստված «հեղուկ գրահից», որն իր պաշտպանիչ հատկություններով և էրզոնոմիական բնութագրերով գերազանցում է ժամանակակից քևլարե զրահաբաճկոնը: ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության ղեկավարությամբ մի շարք հետազոտական լաբորատորիաների համատեղ ջանքերով ստեղծվել է նոր տեսակի զրահաբաճկոն, որը հարմարավետ ու ճկուն է: Նանտեխնոլոգիաների կիրառման յուրահատուկ մեթոդի շնորհիվ սովորական թեթև բաճկոնները վերածվում են չխոցվող գրահի:



Ածխածնային մանոխողովակի մոդել

Ջինվորների մարմնի առավել անպաշտպան մասերն են ձեռքերը, պարանոցը, ծնկների և արմունկների շրջանը, քանի որ մարմնի այդ մասերը ծալվում են, և ավանդական զրահաբաճկոններով դրանց պաշտպանելը գրեթե անհնար է: Մինչդեռ «հեղուկ գրահը» հնարավորություն է տալիս պաշտպանելու մարմնի ցանկացած մաս և կարող է ծալվել՝ չկորցնելով իր պաշտպանիչ հատկությունները:



«Հեղուկ գրահը» փորձարկման ժամանակ

Գիտնականները պաշտպանության այդպիսի արդյունավետության հասել են քևլարե հատուկ փաթեթի միջոցով, որը պարունակում է չգոլորշիացող հեղուկում գերկարծր նանոմասնիկների լուծույթ: Երբ քևլարե շապիկի վրա մեծ էներգիայով մեխանիկական ճնշում է գործադրվում, նանոմասնիկներն սկսում են կազմել կլաստերներ՝ փոփոխության ենթարկելով լուծույթի կառուցվածքը, և այն վերածվում է պինդ կազմանյութի: Այդ փուլային անցումը տեղի է ունենում միլիվայրկյանից պակաս ժամանակամիջոցում, ինչը հնարավորություն է տալիս պաշտպանելու զինվորին ոչ միայն դանակի, այլև հրազենային գնդակի կամ բեկորի հարվածից:

Ի տարբերություն ամերիկացի գիտնականներից, ՌԴ ԳՀԻ-ներից մեկի մասնագետներն ստանդարտ բալիստիկական գործվածքի շերտերը մշակել են կորունդի նանոմասնիկներ պարունակող ֆտորի հիմքի վրա ստեղծված դոմդոդե կազմանյութով: Փորձանմուշը մնան է սովորական գործվածքի: Սակայն կտրուկ հարվածի ներգործությամբ դոմդոդը վայրկենապես պնդանում է՝ կանխելով գնդակի թափանցումը: Համեմատվել են բալիստիկական գործվածքի 18 շերտից պատրաստված ստանդարտ նմուշի և փորձանմուշի հատկությունները: Այդ նմուշները փորձել են ծականցել 6,3 մմ տրամաչափ ունեցող 1,04 գրամանոց գնդիկներով, որոնք թռչում էին 526 մ/վրկ արագությամբ: Փորձարկման արդյունքներով հաստատվել է, որ «հեղուկ» զրահն ունի ավելի լավ բալիստիկական բնութագիր և կարող է դիմակայել մինչև 558 մ/վրկ արագությամբ հարվածող մետաղյա գնդիկներին:

Իսրայելական «ApNano Materials» ընկերությունը նաև տեխնոլոգիաները օգտագործում է գերդիմացկուն նյութի ստեղծման համար: Հետազոտությունները կատարվել են Վայցմանի ինստիտուտի մի խումբ գիտնականների կողմից: Խոսքը այնպիսի մետաղական ձուլվածքի մասին է, որի մոլեկուլները կառուցված են անօրգանական ֆուլերենների* սկզբունքով (անօրգանական ֆուլերենում ածխածնի ատոմները տեղակալված են այլ քիմիական տարրերի, օրինակ, մետաղների ատոմներով): Ընկերությունում պլանավորվում է



«Հեղուկ գրահից» պատրաստված հանդերձանք

ստացված նյութի հիման վրա պատրաստել զրահաբաճկոններ և սաղավարտներ, քանի որ ֆուլերեններ պարունակող համաձուլվածքը գերազանց կերպով չեզոքացնում է հարվածային ալիքի ազդեցությունը: Նոր նյութը 4-5 անգամ ամուր է պողպատից և իր ամրությամբ և այլ պաշտպանիչ հատկություններով գերազանցում է զրահաբաճկոնների արտադրման համար առավել օգտագործելի երկու նյութերը՝ սիլիկոկարբիդը և բորակարբիդը:

Վերջերս կատարված փորձարկումների արդյունքները տպավորիչ են. 1500 մ/րկ արագությամբ թռչող հրազենային գնդակի հարվածի ժամանակ 250 տ/սմ² ճնշման դեպքում նյութը չի ձևափոխվել և չի քայքայվել:

Այսպիսով՝ ներկայումս խոցման միջոցների արդյունավետությունը գերազանցում է պաշտպանական միջոցների արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, խոցման և պաշտպանական միջոցների կատարելագործման միջև մրցակցությունը հանգեցնում է առավել արդյունավետ տեխնոլոգիաների ստեղծման: Նոր տեխնոլոգիաների կիրառումը մոտ ապագայում հնարավորություն կտա զարգացած պետությունների ՋՌԻ-երի անձնակազմը հանդերձավորելու որակապես նոր պաշտպանական միջոցներով, մասնավորապես, հուսալի և թեթև զրահաբաճկոններով:

* Ֆուլերեն՝ մոլեկուլ, որը կազմված է բարձր աստիճանի համաչափությամբ բազմանիստի գազաթերթում տեղակայվող ածխածնի 60 ատոմից: Ֆուլերենի մասնիկների տրամագիծը 100 նանոմետր է, այսինքն՝ դրանք մարդու մագից 1000 անգամ բարակ են:

Նյութը պատրաստեց մայրը Զ. Դ. Ասաբրյանը

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, կապիտան,
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ*

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ամբողջատիրություն—тоталитаризм;
totalitarianism
այլասիրություն—альтруизм; altruism,
unselfishness
ապարաբափվածք—осыпь; scree, talus,
debris stream
առաջնորդ—1. вождь, предводитель,
2. лидер; leader, chief
առնակատում—конфронтация; con-
frontation
արտադատական համակարգ—внесу-
дебная система; extrajudicial system
արտածում—вывод; deduction
բարձունքային գոտիականություն—вы-
сотная зональность; high-altitude
zonality
բացթողման ֆունկցիա—функция про-
пуска; omission function
բռնակցում—аннексия; annexation
գետամերձ համայնք—прибрежная об-
щина; riverside community
գերակայություն—приоритет; priority
գերակայում—доминирование; 1. domi-
nation, predominance, 2. prerotency
գերմանրաչափ բեյր—субмикроскопи-
ческое волокно; submicroscopic
fibre
գործառնաբաժնություն—наделение функ-
цией; function vesting
դաշնադրություն—коалиция; coalition
դոնդող—гель; gel
դրույթ—положение; provisions
երկակի ենթաբազմություն—бинарное
подмножество; binary subset
գանգվածեղ ագրեսիա—массивированная
агрессия; massive aggression
ընթացակարգ—процедура; 1. process,

2. order, 3. procedure
ընտրանք—выборка; sampling
թափանցիկություն—прозрачность,
транспарентность; transparency
ժամանակավրեպ կարծրատիպի շրջա-
նակ—рамки анахронического сте-
реотипа; limits of obsolete stereo-
type
իրավախախտում—правонарушение;
infringement of the law, offence
խաթարիչ ազդեցություն—деструктив-
ное воздействие; destructive impact
խափանումային ֆունկցիոնալ վիճակ—
отказное функциональное состоя-
ние; failure functional situation
ծականցում—пробивание; piercing
կազմանյութ—композиция; composite
կանոնագիրք—устав; 1. service regula-
tions, 2. charter
կանոնադրություն—1. положение, 2.
устав; 1. regulations, 2. charter
կապակցվածության մատրից—матрица
связности; connectivity matrix
կարգաշարք—кортеж; tuple
կենսածին տարր—биоогенный элемент;
biogenic element
կշռային գործակից—весовой коэффи-
циент; weight ratio
կշռյալ գրաֆ—взвешенный граф;
weighted graph
հակազդեցության վեկտոր—вектор про-
тиводействия; counteraction vector
հակաիրավական ոսնձգություն—проти-
воправное посягательство; illegal
infringement, encroachment
հակասողականություն—противоречи-
вость; contradictoriness

համակցում—комбинация; combining, combination	ողողամաշում—эрозия; erosion washout
համընդգրկուն մոտեցում—всеобъемлющий подход; comprehensive approach	չափանիշի նվազարկում—минимизация критерия; criterion minimization
հայաբափում—обезармянивание; de-Armenization	չափողականություն—размерность; dimension
հայցորդ—1. истец, 2. соискатель; 1. plaintiff, claimant, petitioner, 2. seeker, applicant	պահանջ—требование; requirement
հանձնարարական—рекомендация; 1. recommendation, 2. reference, 3. advice	պահանջարկ—спрос; demand
հանրային իրազեկում—общественное информирование; public awareness	պահանջում—потребность; need
հաշվանցում—перечисление; transfer, remittal	պաշտպանական հակազդում—защитная реакция; defense reaction
հավաքչություն—собирательство; 1. gathering, 2. collection	պատժաչափ—мера наказания; penalty measure
հարաբերակցություն—соотношение; correlation, ratio	պատճառափրավական հիմք—причинно-правовая основа; causal legal basis
հենք—канва; groundwork	նազնակայան—ставка; headquarters
հետան—деградация; degradation	նազնական կազմակերպվածք—военная организационная структура; military organizational structure
հիմնակազմիչ սկզբունք—основообразующий принцип; thematic principle	նազնականացվածություն—милитаризованность; militarization
հիմնարար արժեք—фундаментальная ценность; fundamental value	սանդղակ—шкала; 1. scale, 2. score
հողահանդակ—земельное угодье; grounds, lands	սողանք—оползень; slide, slip
հուզականային հատկանիշ—эмоционально-волевое качество; emotional and volitional quality	վարքականոց—этический кодекс; ethical code
հումքային կցորդ—сырьевой придаток; rough appendix	վարքի որոշիչ—детерминант поведения; determinant of behavior
ձուլվածք—сплав; alloy	վերազգային հանցագործություն—транснациональное преступление; transnational crime
մեկնարկային փուլ—стартовый этап; starting stage	վերապրուկային տեսակ—реликтовый вид; deleted species
մենաշնորհ—монополия; monopoly	վերտառություն—заглавие; title, heading
միջազգայնացում—интернационализация; internationalization	տարախոտային տափաստան—разнотравная степь; motley grass steppe
մնացուկ—пержиток; vestige	տարանջատում—1. разъединение, 2. разобщение, 3. дистанцирование; 1. disconnection, 2. separation, 3. uncoupling, 4. remoteness
նշագրում—обозначение; designation	տեխնապաշտական որոշում—технократическое решение; technocratic solution
նույնականացում—идентификация; identification	տեղային տեսակ—эндемический вид; endemic type
նույնացում—отождествление; identification	տեղաբաշխում—дислокация; disposition
նույնություն—тождественность; identity	տեսակարար կշիռ—удельный вес; 1. re-

lative density, 2. specific gravity, specific weight
 սննտապարում—хозяйствование; management
 ուղենիշ—1. ориентир, 2. веха; 1. guideline, 2. landmark, 3. marker
 փոխգործելիություն—интероперабельность; interoperability
 փոխգործություն—взаимодействие; interaction
 փորձանմուշ—опытный образец; expe-

rimental model, engineering sample
 փոփոխակ—модификация; modification
 փոփոխակում—модифицирование; modification
 քաղաքական ուղեգիծ—политический курс; policy
 քարվեժ—камнепад; fall of the stones
 օգտահանում—утилизация; utilization
 օտարման գործընթաց—процесс отчуждения; alienation process

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

альтруизм—այլափրություն
 аннексия—ընկալում
 бинарное подмножество—երկակի ենթաբազմություն
 биогенный элемент—կենսածին տարր
 вектор противодействия—հակազդեցության վեկտոր
 весовой коэффициент—կշռային գործակից
 веха—1. նշանոդ, 2. ուղենիշ
 взаимодействие—1. փոխազդեցություն, 2. փոխգործություն
 взвешенный граф—կշռյալ գրաֆ
 внесудебная система—արտադատական համակարգ
 военная организационная структура—նազմական կազմակերպվածք
 вождь—առաջնորդ
 всеобъемлющий подход—համընդգրկուն մոտեցում
 выборка—ընտրանք
 вывод—1. եզրակացություն, 2. արտածում, 3. ելուստ
 высотная зональность—բարձունքային գոտիականություն
 гель—դնդող
 деградация—1. հետաճ, 2. հետաճում
 деструктивное воздействие—խաթարիչ ազդեցություն
 детерминант поведения—վարքի որոշիչ
 дислокация—տեղաբաշխում
 дистанцирование—տարանջատում
 доминирование—գերակայում

заглавие—վերնագիր, վերտառություն
 защитная реакция—պաշտպանական հակազդում
 земельное угодье—հողահանդակ
 идентификация—նույնականացում
 интернационализация—միջազգայնացում
 интероперабельность—փոխգործելիություն
 истец—հայցորդ
 камнепад—քարվեժ
 канва—հենք
 коалиция—դաշնադրություն
 комбинация—համակցում
 композиция—1. կազմանյութ, 2. հորինվածք
 конфронтация—առնակատում
 кортеж—1. շքերտ, 2. կարգաշարք
 лидер—առաջավար, առաջնորդ
 массированная агрессия—զանգվածեղ ագրեսիա
 матрица связности—կապակցվածության մատրից
 мера наказания—պատժաչափ
 милитаризованность—նազմականացվածություն
 минимизация критерия—չափանիշի նվազարկում
 модификация—փոփոխակ
 модифицирование—փոփոխակում
 монополия—մենաշնորհ
 наделение функцией—գործառուրսավորում

обезармянивание—հայաբափում
 обозначение—նշագրում
 общественное информирование—
 հանրային իրազեկում
 оползень—սողանք
 опытный образец—փորձանմուշ
 ориентир—կողմնորոշիչ, ուղենիշ
 основообразующий принцип—հիմնակազմիչ սկզբունք
 осыпь—ապարարափվածք
 отказное функциональное состояние—խափանումային ֆունկցիոնալ վիճակ
 отождествление—նույնացում
 пережиток—մնացուկ
 перечисление—1. թվարկում, 2. հաշվանցում
 политический курс—քաղաքական ուղեգիծ
 положение—1. դրություն, 2. դրույթ, 3. կանոնադրություն
 потребность—պահանջունք
 правонарушение—խրափախստում
 предводитель—սմ. *вождь*
 прибрежная община—ափամերձ համայնք, գետամերձ համայնք
 приоритет—գերակայություն
 причинно-правовая основа—պատճառաիրավական հիմք
 пробивание—1. ծակում, 2. ծականցում
 прозрачность—թափանցիկություն
 противоправное посягательство—հակաիրավական ոտնձգություն
 противоречивость—հակասողականություն
 процедура—ընթացակարգ
 процесс отчуждения—օտարման գործընթաց
 размерность—չափողականություն
 разнотравная степь—տարախոտային տափաստան
 разобщение—տարանջատում
 разьединение—տարանջատում

рамки анахронического стереотипа—ժամանակավրեպ կարծրատիպի շրջանակ
 рекомендация—1. հանձնարարական, 2. երաշխավորագիր, 3. առաջարկություն
 реликтовый вид—վերապրուկային տեսակ
 собирательство—հավաքչություն
 соискатель—հայցորդ
 соотношение—հարաբերակցություն
 сплав—ձուլվածք
 спрос—պահանջարկ
 ставка—1. ռազմական, 2. դրույթ
 стартовый этап—մեկնարկային փուլ
 субмикроскопическое волокно—գերմանրաչափ թելք
 сырьевой придаток—հումքային կցորդ
 технократическое решение—տեխնապաշտական որոշում
 тождественность—նույնություն
 тоталитаризм—ամբողջատիրություն
 транснациональное преступление—վերազգային հանցագործություն
 транспарентность—սմ. *прозрачность*
 требование—պահանջ
 удельный вес—տեսակարար կշիռ
 устав—1. կանոնագիրք, 2. կանոնադրություն
 утилизация—օգտահանում
 фундаментальная ценность—հիմնարար արժեք
 функция пропуска—բացթողման ֆունկցիա
 хозяйствование—տնտեսավարում
 шкала—սանդղակ
 эмоционально-волевое качество—հուզականային հատկություն, հուզականային հատկանիշ
 эндемический вид—տեղային տեսակ
 эрозия—նորոգամաշում
 этический кодекс—վարքականոց

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

advice—1. խորհուրդ, 2. հանձնարարական
 alienation process—օտարման գործընթաց
 alloy—ձուլվածք
 altruism—այլասիրություն
 annexation—բռնակցում
 applicant—see *seeker*
 basis—հիմք
 binary subset—երկակի ենթաբազմություն
 biogenic element—կենսածին տարր
 causal legal basis—պատճառափրավական հիմք
 charter—1. կանոնագիրք, 2. կանոնադրություն
 chief—1. պետ, 2. առաջնորդ
 claimant—see *plaintiff*
 coalition—1. կոալիցիա, համաձայնություն, 2. դաշնադրություն
 collection—1. հավաքածու, 2. հավաքչություն
 combination—1. համակցություն, 2. see *combining*
 combining—համակցում
 composite—1. բաղադրիչ, 2. կազմանյութ
 comprehensive approach—համընդգրկուն մոտեցում
 confrontation—1. տարածայնություն, 2. առճակատում
 connectivity matrix—կապակցվածության մատրից
 contradictoriness—հակասողականություն
 correlation—1. հարաբերակցություն, 2. համահարաբերակցություն
 counteraction vector—հակազդեցության վեկտոր
 criterion minimization—չափանիշի նվազարկում
 de-Armenization—հայաթափում
 debris stream—see *scree*
 deduction—1. եզրակացություն, 2. արտածում, 3. ելուստ
 defense reaction—պաշտպանական հակազդում

degradation—1. հետաճ, 2. հետաճում
 deleted species—վերապրուկային տեսակ
 demand—պահանջարկ
 designation—նշագրում
 destructive impact—խաթարիչ ազդեցություն
 determinant of behavior—վարքի որոշիչ
 dimension—1. չափ, 2. չափողականություն
 disconnection—տարանջատում
 disposition—տեղաբաշխում
 domination—գերակայում
 emotional and volitional quality—հուզականային հատկանիշ
 encroachment—see *illegal infringement*
 endemic type—տեղային տեսակ
 engineering sample—see *experimental model*
 erosion washout—ողողամաշում
 ethical code—վարքականոն
 experimental model—փորձանմուշ
 extrajudicial system—արտադատական համակարգ
 failure functional situation—խափանմային ֆունկցիոնալ վիճակ
 fall of the stones—քարվեժ
 function vesting—գործառութավորում
 fundamental value—հիմնարար արժեք
 gathering—հավաքչություն
 gel—դոնդող
 grounds—հողահանդակ
 groundwork—հենք
 guideline—նղենիշ
 heading—see *title*
 headquarters—1. ռազմակայան, 2. գրակայան, 3. շտաբ
 high-altitude zonality—բարձունքային գոտիականություն
 identification—1. նույնականացում, 2. նույնացում
 identity—նույնություն
 illegal infringement—հակափրավական ոտնձգություն
 infringement of the law—իրավախախ-

- տում
 interaction—փոխգործություն
 internationalization—միջազգայնացում
 interoperability—փոխգործելիություն
 landmark—ուղենիշ
 lands—see *grounds*
 leader—առաջավար, առաջնորդ
 limits of obsolete stereotype—ժամանակավրեպ կարծրատիպի շրջանակ
 management—1. տնտեսավարում, 2. կառավարում, ղեկավարում
 marker—ուղենիշ
 massive aggression—զանգվածեղ ագրեսիա
 militarization—նազնականացվածություն
 military organizational structure—նազնական կազմակերպվածք
 modification—1. փոփոխակ, 2. փոփոխակում
 monopoly—մենաշնորհ
 motley grass steppe—տարախոտային տափաստան
 need—1. կարիք, 2. պահանջմունք
 offence—see *infringement of the law*
 omission function—բացթողման ֆունկցիա
 order—1. հրաման, 2. հերթ, 3. կարգ, 4. ընթացակարգ
 plaintiff—հայցորդ
 penalty measure—պատժաչափ
 petitioner—see *plaintiff*
 piercing—ծականցում
 policy—1. քաղաքականություն, 2. քաղաքական ուղեգիծ
 predominance—see *domination*
 prepotency—գերակայում
 priority—գերակայություն
 procedure—1. արարողություն, 2. ընթացակարգ
 process—1. ընթացք, 2. ընթացակարգ
 provisions—դրույթ
 public awareness—հանրային իրազեկում
 ratio—see *correlation*
 recommendation—1. հանձնարարություն, 2. հանձնարարական, 3. երաշխավորագիր
 reference—1. մեջբերում, 2. տեղեկանք, 3. առնչություն, 4. հանձնարարական
 regulations—կանոնադրություն
 relative density—տեսակարար կշիռ
 remittal—see *transfer*
 remoteness—տարանջատում
 requirement—պահանջ
 riverside community—ափամերձ համայնք, գետամերձ համայնք
 rough appendix—հումքային կցորդ
 sampling—ընտրանք
 scale—սանդղակ
 score—1. սանդղակ, 2. հաշիվ
 scree—ապարաթափվածք
 seeker—հայցորդ
 separation—տարանջատում
 service regulations—կանոնագիրք
 slide—տղանք
 slip—see *slide*
 specific gravity—տեսակարար կշիռ
 specific weight—see *specific gravity*
 starting stage—մեկնարկային փուլ
 submicroscopic fibre—գերմանրաչափ թելք
 talus—see *scree*
 technocratic solution—տեխնոկրատական որոշում
 thematic principle—հիմնականիչ սկզբունք
 title—վերտառություն
 totalitarianism—ամբողջատիրություն
 transfer—հաշվանցում
 transnational crime—վերազգային հանցագործություն
 transparency—թափանցիկություն
 tuple—կարգաշարք
 uncoupling—տարանջատում
 unselfishness—see *altruism*
 utilization—օգտահանում
 vestige—մնացուկ
 weight ratio—կշռային գործակից
 weighted graph—կշռյալ գրաֆ

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
 - Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Ա. Հ. Թռչունյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
 - Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Պ. Մ. Հեղունի*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Վ. Ս. Մուրյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 - Յու. Ս. Չիլինգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Վ. Ս. Սարգսյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
 - Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Ք. Յ. Աղուզումյան*, кандидат психологических наук, доцент;
 - Ն. Ս. Արաքելյան*, академик НАН РА;
 - Յ. Մ. Արությունյան*, академик НАН РА;
 - Գ. Է. Բաղդասարյան*, академик НАН РА;
 - Գ. Ա. Գևորգյան*, академик НАН РА;
- Ք. Գ. Գևորգյան*, доктор геологических наук, профессор;
 - Ս. Մ. Դերունի*, академик НАН РА;
 - Ա. Ա. Մանթաշյան*, академик НАН РА;
- Յ. Գ. Մինասյան*, доктор исторических наук, профессор;
- Մ. Մ. Միրիջանյան*, доктор медицинских наук, профессор;
 - Կ. Ս. Մոսոյան*, доктор технических наук, профессор;
 - Յ. Ս. Տարգսյան*, академик НАН РА;
- Ա. Ս. Տիսակյան*, доктор медицинских наук, профессор;
 - Ա. Ա. Թրչունյան*, член-корреспондент НАН РА;
 - Յու. Ս. Չилингарян*, академик НАН РА

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumetsian*, Candidate of Psychological Sciences, Docent;
 - N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
 - G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
 - Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
 - H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
 - V. M. Haroutyounian*, Full Member, NAS RA;
 - P. M. Herouni*, Full Member, NAS RA;
 - A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
- E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
 - V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
 - H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;
 - A. H. Trchounian*, Fellow Correspondent, NAS RA

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գիտություն և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Չեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры. Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic quarterly «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱՍՏ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ Ա. Մ. Շահվերդյան
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ Ջ. Դ. Ասատրյան
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ Ա. Մ. Մովսիսյան
Տեխնիկական բաժնի պետ՝ Ա. Պ. Նազարեթյան

Հայերեն տեքստերի խմբագիր՝ Ա. Կ. Շահբազյան
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Լ. Հ. Պասյիկյան
Տեխնիկական խմբագրումը՝ Ա. Պ. Նազարեթյանի
Ձևավորող նկարիչ՝ Հ. Գ. Սահակյան
Լուսանկարիչ՝ Ա. Դ. Ներսիսյան

Տեքստերի բարգձմանությունը՝ Ն. Ս. Մկրտչյանի, Զ. Վ. Փիրոյանի
Համակարգչային ապահովումը՝ Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի, Ա. Պ. Նազարեթյանի
Սրբագրիչներ՝ Ն. Հ. Բաղդասարյան, Տ. Մ. Տիրացույան

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝
Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի

Լուսանկարչական ապահովումը՝ ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆեցու փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008 թ.


Հանձնվել է շարվածքի 04.09.2008: Ստորագրվել է տպագրության 08.11.2008:
Թուղթը՝ օֆսերային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 196 էջ + 8 (4+4) էջ ներդիր:
Պայմանական տպագրական 16 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեր:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հանդիպումը
բազմազգ դիվիզիայի հունական գումարտակի կազմում
խաղաղապահ առաքելություն իրականացնող հայկական ստորաբաժանման հետ
Կոստվո կատարած իր երկօրյա աշխատանքային այցի ժամանակ.

Կոստվո, 2008 թ. հոկտեմբերի 29



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ